



Հարգելի՛ ընթերցող.

ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտը, չհետապնդելով որևէ եկամուտ, իր կայքերում ներկայացնելով հայագիտական հրատարակություններ, նպատակ ունի հանրությանն ավելի հասանելի դարձնել այդ ուսումնասիրությունները:

Մենք շնորհակալություն ենք հայտնում հայագիտական աշխատասիրությունների հեղինակներին, հրատարակիչներին:

*Մեր կոնտակտները՝*

*Պաշտոնական կայք՝ <http://www.armin.am>*

*Էլ. փոստ՝ [info@armin.am](mailto:info@armin.am)*

«Ես հասարակ գյուղացի մըն եմ, իսկ դուք  
համալսարանական մարդիկ: Դուք կարդացած  
եք այս մատյանները, ես չեմ կարդացած, բայց  
կը ճանչնամ եայ ժողովուրդը, կը զգամ անոր  
ցավերը»:

«Ըլլանք իմաստուն գեթ ասկե հետո— առանց  
կուսակցական խտրության եւ կուսակցական  
մտահոգությունների: Նիզիկական գոյությունը  
վերապրող ժողովուդին—ահա բարձրագույն  
հայրենասիրությունը զօր եիմա մենք ի հայտ  
կրնանք բերել: Արյունաքամ, ջարդված ու  
փշրված ժողովուրդ մըն ենք, իսկ այս  
վիճակին մեջ գտնվող ժողովուդի մը  
վերածնունդին եամար պետք է համարական,  
անխոնչ ջանքեր, եավաքական  
կամք, փոխադարձ վստահություն եւ  
անկեղծություն»:

**ԱՆԴՐԱՆԻԿ**

Hambartsum Karapetian

ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

# ANDRANIK

*There are sons, who represent in the name of the nation, and there are sons, in whose names the nation is represented.*

FAMILY AND THE ENVIRONMENT

HAIDUK (GUERRILLA) AND HAIDUK'S CHIEF

COMMANDER AND THE WARS

POLITICAL STRUGGLE AND POLITICAL CONVICTIONS

OBJECTIONS AND OBJECTORS

PERSON AND COMMANDMENT

# ԱՆԴՐԱՆԻԿ

Որդիներ կան, որոնք ազգի անունից  
են ներկայանում, եւ որդիներ՝ որոնց  
անունով ազգն է ներկայանում:

ԸՆՍՆԻՔԸ ԵԿ ՄԻԶԱԿԱՅՐԸ

ՀԱՅՂՈՒԿՆ ՈՒ ՀԱՅՂՈՒԿԱՊԵՏԸ

ՀՐԱՄԱՆԱՄՐԸ ԵԿ ՊԱՏԵՐԱԳՈՒԹԵՐԸ

ԲՈՒԱՐԿԱՆ ՊԱՅՉԱՐՆ ՈՒ ԲՈՒԱՐԿԱՆ ՀԱՄԱԳՈՒԹԵՐԸ

ԱՌԱՐԿՈՒՄՆԵՐԸ ԵԿ ԱՌԱՐԿՈՂՆԵՐԸ

ԱՆՁՆ ՈՒ ՊԱՏՎԱԱԾ

YEREVAN "Haiastan"

1992

ԵՐԵՎԱՆ «Հայաստան»

1992



## ՄՈՒՏՔԻ ԽՈՍՉ

Հ. Ա. Կարապետյան:  
Ա 583 Կ Անդրանիկ — Եր.: Հայաստան, 1992:

Գրքում XIX դարի վեջին եւ XX դարի սկզբին հայ ժողովրդի մղած ազտամարտի հերոս Անդրանիկ Օզանյանի (1865-1927) կյանքի ու գործունեության համակողմանի պատմությունն է: Նրանում հերոսը ոչ միայն զինվոր է ու զրոյավոր, այլև հասարակական-քաղաքական գործիչ՝ իր ինքնառվու հայացքներով եւ ուրույն անհատականությամբ: Առկա են հերոսի կյանքի ուրախ ու տխուր եջերը, նրան առարկողներն ու առարկությունները: Պատմության ատաղձք հրատարակված ու անտիա վավերապերն են, հուշերն ու մամուլի ընձեռած նյութերը:

Ամբարձում Հովհաննես Կարապետյան  
ԱՆԴՐԱՆԻԿ  
(Հայոց ազգային լեզու)  
ԵՐԵՎԱՆ “Այստան” 1992

0503020913  
Կ 701(01)-92

ԳՄԴ 63.3(2<sup>հ</sup>) 52

ISBN 5-540-01571-1  
© Հ. Ա. Կարապետյան, 1992

Լուս ու մուսջ զայրույթով նա հետեւում էր ընթացքին: Նրան կարող էր թվալ, թե խոսողները գործով շահագոգիո մարդիկ չեն, եւ հավաքույթն էլ, հենց այսպես, հուտորական խոսքի բասակճա է, պերճախոսության մրցույթ:

Թիֆլիսում էր, 1917 թվականի հոկտեմբերին: Դեռ չափարտված աշխարհամարտի Կովկասյան ճակատից հայ ժողովրդին նոր՝ անցյալից ոչ պակաս զանգվածային, արիակիութեր էին սպասվում: Մինչդեռ հայոց ազգային քաղաքական կուսակցությունների համախորհրդակցության եկած երեւելիները Հայաստանի եւ Անդրկովկասի ընդհանուր հարցերը քննելով, քաշօշում էին, առանց սպասնակի դեմ անհապաղ միջոցներ նշելու: Չորրորդ նիստի ժամին չսպասելով, թե երբ իրեն ձայն կտան, Անդրանիկը ոտքի է ելնում: Հիշում է գիշով անցած օրերը եւ, ասես, մյուսների պես, ջանում է խոսք հուտորական տեսքի բերելու:

— «Ես Անդրկովկասի հարցերի մասին ինձ իրավունք չեմ վերապահում խառնվելու, սակայն ճակատի պահպանութեան եւ այլ ուղամական գործերու եւ պարեսավորման խնդիրներ մեջտեղ ողբեկով համախորհրդակցութեան մեջ՝ եկա այս ժողովին իմ պարտականութեանս բաժինը բերելու»:

Ո՞ր էր լինելու այդ «պարտականության բաժինը»: Նախ այն, որ ներկաներին ասեր.

«...Մեր առջեւ ցցված է հայ ժողովրդի ֆիզիկական գոյութիւնը պահպանելու հարցը: Դուք այս մասին կարծես չեք մտահոգվիր... Դուք հավաքված եք այստեղ, իբրև մեր ժողովոյի ներկայացուցիչները, անոր իղձերուն եւ ակնկալութիւններուն թարգման հանդիսանալու համար, բայց անոր ցավերով չե, որ կառաջնորդվեք, այլ զուտ կուսակցական հայեցողութեամբ եւ մտահոգութեամբ»:

Հիշելով վաղընթաց օրերում թուրքական բռնապետության դեմ մղված կորիվներում զոհված իր ընկերներ Գուրգենի, Սերոբի, Գեւորգ Չափուշի եւ մյուսների անունները, ասում է, թե այդ նրանք էին, որ ընկան հանուն ազգի եւ հայրենիքի, իսկ այստեղ, համաժողովում, ոչ

\* Միաւան եղի բացակայության պատճառով շարվածքով օգուագործվում է երկիր:

ՄԵԿԸ ՆՐԱՆՑ ԱՆՈՒՆԸ ՀԻ ԻԻՉԱՏԱԿՈՒՄ: ԵԿ ԻՐ ԽՐՈՂՍԻ ՃԱՅՆՈՎ ԻԽԱ-  
ՄԱՐՈՐՈՎ Է.

-«Քանի որ մինչեւ հիմա ուրեմն ճառախոս ինկուզող զնիքը ու իսապատճենը մը չըսավ. Ես պարտականութիւն կզգամ անոնց հիշատակը հարգել ոտնկայս»:

Դահլիճը ուղիղ է կանգնում: Սատելից հետո տիրող քար լուսված  
մեջ Ասդրանիկի խոսք հնչում է որպես սուր պարսպակար:

-«Ուշ եկած եք ոչ թէ ժողովրդին ցավերուն մասին մտածելու, այլ մեկամեկու հոր փորելու եւ գոյություն ունեցող խրամատը պատի լայնացնելու, մինչդեռ այս կրիտիկական րոպեին մոռնալով կուսակցութեան հաշիվսեր եւ մտահոգութիւններ. պետք է մտածեք միմիայն հայ ժողովրդի անհետաձգելի պահանջներուն մասին համերաշն եւ միաբան ոգիով»:

Սույն օրերին ազգային ղեկավարությունը քննում էր. թե ուս նշանակի ստեղծվելիք հայկական գորաբանակի կազմում ձեւափոր- վող այն դիվիզիայի հրամանատար, որը նախատեսվում էր ուղարկելու ռազմաճակատի ամենաթշվար հատվածը՝ սպահանային երգորում քա- ղաքն իր շրջակայթով: Ձևադրությունը կատարվել է Անդրանիկի թեկնածությունն եւ Վիճակաբանության առարկա էր: Իբրև թե հրամանատար նշանակ- վելու նոր համար պատվի հարց էր ու մեծարանք. չհասկանալով կամ ցույց չտալով, որ իբրև բոլորն եւ շատ լավ գիտակցում են, որ Անդրանիկը բարի ոչ սովորական իմաստով էր զինվոր. ոչ եւ կուգեր առաջին հրամանատար լինել:

Զինվորին կանչում են, հրամանատարին՝ նշանակում: Խոկ նա ինքն էր մղվում. մի հրացան կամ ատրճանակ եղավ՝ լավ. չեղավ՝ պետք էր օջախին տեր կանգնել ինչով հնարավոր էր. ինչպես կարելի էր: Այդպիսին նա եղել էր մինչ այդ պահը. ինչո՞ւ պետք է այսուհետեւ ուրիշ լիներ: Հեսց այդ էլ նա առիթ է ունեցել ասելու արեւելահայոց ազգային խորհրդի երկօրյա նիստում. որտեղ ընդդիմախոսներ շառունակում էին իրենց հակածառությունը.

— «Ես հասարակ գյուղացի մըն եմ. իսկ դուք համալսարանական մարդիկ: Ես չեմ կարդացած. բայց կը ճանչնամ իայ ժողովուրդը. Կը օգամ անո՞ զավերո՞:

Եվ կը մերժեմ ձեր հրամանատարութիւնը. Կը մերժեմ ձեր զորավարութիւնը: Վաղը առավոտ կանուխ ես կը հագնիմ հասարակ գիւղորդ լարեր. հրացանը կը ձգեմ ուսիս. Կերթամ գեներալ Նազարբեկովին քով եւ կը մեկնիմ ճակատը ու պիտի մեռնիմ հոն. չտեսնելու համար այս խայտառակութիւնը: Շարունակեցեք ձեր բյուզանդական վեճեր միևնույն առշաւուս... շարունակեցեք»:

Դահլիճում, ուր նա ավարտել է իր այս խոսքը. փոխանակ տեղում նստելու, ուղիղ գնացել է դեպի դուռը: Հաջորդ ելույթ ունեցողը՝ հայոց երեւելիներից Նիկոլ Աղբալյանը. եթե նա այլևս դահլիճում չէր, հայտարարել է.

— «Հայ ժողովուրդն է. որ կը խօսի Անդրամիկի թերևով. ան իրավունք ունի»!.


## 1 ՀԱՊԻՆԿԱՐԱՎԱՄ:

Այս ո՞վ պետք է լիներ Եւ ի՞նչ գործերի տեր, որ Ասատոլիական թերակղզու խորքերում թաքնված քաղաքի նժվարահունչ Շապինկարահիսար անունը աշխարհ հաներ. Երբ եղել էին ու Կային Վան, Մուշ, Տիգրանակերտ, Բաղեց ու Կարին ոյորդին անուններով հայոց հևաղարից ի վեր իրենց Նշանավոր գործերով հոչակ հանած քաղաք-Ները: Համենայն դեպս. Անդրանիկին՝ որպես հայուոկ-զինվորի, ասպարեզ գալու օրից ով լսել-իմացել է Նրա անունը. Նաեւ ցանկացել է գիտենալ, թե այդ որ տեղի ծնունդ է Նա Եւ ինչ ընտանիքի զավակ:

Շապինկարահիսարը Հռոմի տիրապետության ժամանակներից հայտնի քաղաք էր՝ Արեւապոնտական լեռների հարավակողմ պատմական Փոքր Հայքի Սեբաստիա և ահանգում<sup>2</sup>: Կանա լճի արեւուտքում գտնվող Սասուն լեռներկիդը, որի հետ կապված են Անդրանիկի հերոսամարտերի վաղ պատմությունները, ծննդավայր Շապինկարահիսարից հեռու հարավ-արեւելք էր: Ինչպես որ հայոց աշխարհն ամբողջությամբ, այդ նահանգը նույնպես Անդրանիկի ծննդից արդեն հազար տարի առաջ բախվել էր թուրքերի սելջուկ և ախսնիների բերած արհավիրուներին:

Սելջուկ-թուրքերը տասներորդ դարի վերջին հեռավոր Ալբայի կողմերից, Աֆղանստանով ու Թուրքեստանով արշավել են դեպի արեւմուտք ու Երկրներ Նվաճելով. հասել Հայաստան: Այդ ժամանակ Հայաստանի Փոքր Հայք աշխարհամասում, որտեղ նաեւ Սեբաստիա նահանգը էր, քանի դար առաջ ընդհատումից հետո հաստատված Բագրատունյաց տոհմի նոր թագավորությունն էր դեռ շարունակվում: Կարս մայրաքաղաքից Նրանք իրենց նստավայրը տեղափոխել էին հոչակավոր Անի քաղաքը. եւ այդ պատճառով էլ թագավորության հետագա տարիները կոչվում են Անիական, որոնք քաղաքաշինության, մշակույթի ու արհեստային արդյունագործության ծաղկման

1 «eliptus». J. 09. 1927: St'u luebte unvnpkt. tg 426-427: 2 «Lwspbtshp». A., 1927p., N 4.  
tg 119:



## ԾԱՊԻՆԿԱՐԱՀԻՍԱՐ

Ժամանակ եղան եւ հարուստ քաղաքակրթություն պարզեցին ոչ միայն հայերին: Մեջուկների «այցը» եւ հայերի արեւմտյան թիկունքում դեռևս գոյատեսող Բյուզանդիայի Վարած քաղաքականությունը լուրջ բարդություններ ստեղծեցին Հայոց աշխարհում: Ծայր առավ երկու ներսում մի գավառից մյուսը բնակչության գաղթը, որը վերածեց տեւական արտագաղթի: Անին այլեւս չեր կարող մնալ նստավայր: Վասպուրականի թագավոր Մենեթերիմը հարկադրված իր երկիրը հանձնում է բյուզանդական Վասիլ Կայսրին եւ փոխարեւը ստանում Սեբաստիան՝ հայոնակ այնտեղի կառավարիչ: Անկումային այս ժամանակներում հայոց աշխարհում տարածվեց IV դարի հայ Եկեղեցու գլխավորներ Ներսէս Մեծին ու Սահակ Պարթևին վերագրվող գուշակությունը<sup>1</sup>: Իբր վաղ թե ուշ Հայաստանի թագավորությանը Վերջ են դնելու «Արեւելից Եկած դժոնդեմ եւ անողորս ազգերը»<sup>2</sup>: Այսուամենայինք. Բյուզանդական գերիշխանության օրոք հայ մարդ եր. Երեկա թագավորը. Նահանգի կառավարիչը: Հիմա. Մեջուկներին հաջորդած նոր. օտարածին տիրակալների օրոք. այդ եւ եր բացառված: Այս փաստը. Նախնիներին վերագրվող գուշակության հետ միասին, այն դասերից մեկն եր, որոնք Վկայակոչվում են սեբաստացիների զավակներին տանը. թե վարժարանում հայրենապաշտություն ուսուցանելիս՝ հեռավոր Նախնիներից մինչեւ Անդրանիկին հետ աշխարհ Եկած սերունդը:

Ծապինկարահիսարը հեռու չեր Նահանգի Սեբաստիա կենտրոնից. որը թուրք իշխանության օրոք Սկազ անունն էր ստացել: Քաղաքը

<sup>1</sup> Առ. եւ. հ. 2. էջ 631-632 և 761:

սովորական չեր, այլ բերդամրոց. այն էլ հին ու հերոսական իր պատմությամբ: Մեջքով հենված եր քարածայոր մի ցից բարձունքի եւ փոփած եր նրա առջեւ տարածված հարթավայրի վրա: Քարածայուն էլ դատարկ չեր, այլ վրան պահապան բերդը՝ ապառաժների վրա ամբարձված պարիսպներով<sup>3</sup>: Ծապինկարահիսարը սերունդները մանկության օրերից երազել են սուլթանի սարսափի դեմ այդ լեռան ու բերդամրոցի պատվար ունենալ, որին զարսկելով ջարդությունը լինեին իրենց գոյությանն սպառնացող թշնամու ժանիքները: Սակայն Անտրանիկն ու իր ընկերները Վաղ գիտակցեցին, որ մի հայածվող ժողովորի համար այրափի պարփակ կարող են լինել միայն նրա զավակները եւ ուրիշ ոչինչ. ուրիշ ոչ ոք:

Անդրանիկի հայրը՝ Թորոս Օզանյանը. Երկաթագործ եր ու ատաղձագործ եւ մի փոքրիկ արիեստանոց ուներ քաղաքային շուկայում: Օզանյանները մեծ ու բարեհամբակ գերդաստան էին, որ Անդրանիկի ծննդից մոտ երկու հարյուր տարի առաջ էին տեղափոխվել քաղաքից չորս ժամվա ոտքի ճանապարհ հեռու գտնվող թուրքերն հորչող մամբ Օզանլը դարձած պապեսական Օզան գյուղից: Ծապինկարահիսար տեղափոխվածները որպես օգանցի դարձան Օզանյան<sup>2</sup>:

Տունը. ուր ծնվել է Անդրանիկը. բերդի ստորոտում եր: Չունենալով իսկությունը հաստատող որեւէ փաստաթուղթ. պես ու ընդունենք նրա կյանքի օրոք ամենից շատ Վկայակոչված տարեթիվը: ծնվել է 1865-ին. թեւել հիշատակվել է նաեւ 1866-ը: Նույն ձեւով էլ փետրվարի 25-ն է նշելու որպես ամիս-ամսաթիվ:

Սայոր՝ Սարհամը, համարձակ ու հայրենաստր կին եր, մահացել է. երբ Անդրանիկը բոլորովին երեխա էր: Անդրանիկը ունեցել է եղբայր եւ երկու քույր: Ավագը Եղբայրն եր, որն ամուսնացել է ապրել է գյուղում, այստեղ էլ վաղ հեռացել կյանքից: Բռյուրը. մեծը՝ Նագելին, կրտսեր՝ Պահարը. ունեցել են մեկը երեք եւ մյուսը՝ Երկու զավակ<sup>3</sup>:

Օզանյաններից ուրիշ ոչ մեկը գինվոր ու զորավար չի եղել: Բոլորը արիեստերի եւ ապրուստի հայրայրման. այլ աշխատանքի մարդիկ էին: Նրանց մեջ լավ ճանաչվածը Գագիկ Օզանյանն եր.

• Գուց թե երա աշխարհում արդարությունը հաստատվի. հետ բերդամրոցի բարձունքը կամ կանունակին կամ հոգարձակ:

<sup>1</sup> Հակոբ Տեր-Հարությունակ. Ծափակ Գարտիքարի ապատամբութիւնը. թ. 1917թ. էջ 16-19:

<sup>2</sup> «ՊԿՊԱ. ֆ. 370. ց. 1. գ. 94. Անդր Ընդհանուր հոգածը: 3 Առ մասին եղած տայալները զանազան եւ գործադրեցին Անդրանիկի կող առոց Ազգի Թաշշակի տուեկությունը. ՀՀ ՊԿՊԱ. ֆ. 370. ց. 2. գ. 4. թ. 35. ան: և ան. ց. 1. գ. 92: Հակոբանելութերը բորսով Անդրանիկը հետապայուն պատմական մատուկ կապահ մօց է եղած նաշելին եւ կրա մօց դուռադր կրթանուն հան. որին գործ. պահպանած եղբոր և մորեղոր միոր ու կարուոր կառագախ խորհությունը:

գավառի Սարգսան քաղաքի ազգային դպրոցի տեսուչը, մանկավարժ ու գրող, որին իբրև հեղափոխականի թուրքերը կախաղան են բարձրացրել 1915-ին<sup>1</sup>: Աշխատանքի ու խաղաղության համակիր, պատվազգաց շահինկարահիսարցիները գիտեն ինչպես պատասխան տալ իրենց արժանապատվությունը վիրավորողներին: Դրա շատ առիթներ էին եղել, բայց ամենից համոզիչը թերեւս նրանց դիմադրությունն էր 1915-ի գարևանն ու ամոհանը, եթե նրանց վրա հարձակում գործեց թուրքական կանոնավոր զորքը: Զաղաքի երիտասարդները նախապես բանակ էին կանչվել, իսկ հետո զինաթափելով, մեծ մասին կոտրու էին: Թուրքական բանակը Շահինկարահիսարն իր մերձակա գյուղերով շրջապատել է: Զաղաքը լիովին, նրա ամեն մի թաղամասը, բակն ու տունը դառնում են պաշտպանական կետեր՝ թղթանոթային ու հրացանային անդադար կրակի դեմ<sup>2</sup>

Կոհվերի այդ օրերին Անդրանիկը հայրենի քաղաքում չեր: Այստեղ, ուր երկու կողմում էլ բանակներն են մարտնչում. շապին կարահիսարցու որդին ոուսական բանակի կազմում հայերի մի ամբողջ գունդ էր առաջնորդում թուրքական գործերի դեմ: Դա 1914-ին սկսված աշխարհամարտի Կովկասյան ճակատն էր: Թուրքերը բացականչում են, թե իրենք Անդրանիկի Կովկասյան ճակատում մղած կոհվերի Վուժն են լուծում: Եթե մարդկանց տներն են մտնում, եթե գողանում են, թալանում ու հալածում, հոլորտում են. թե գեացեք ձեր Անդրանիկին կանչեք. թող նա գա եւ ձեռ մոկի<sup>3</sup>:

Համաշխարհային կովի ճակատներից ոչ մեկում այսպիսի մարդաշնջում չկար, ել ուր մնաց, որ թիկունքում լիներ. Ռուսաստանում գերմանացիներ կային, Գերմանիայում՝ ռուսներ. Գերմանիայում ֆրանսիացիներ կային. Ֆրանսիայում գերմանացիներ. բայց ոչ մի տեղ հակառակորդ երկոր բնակչության ազգակիցներին չհավաքեցին. չկոտորեցին. Նույնիսկ չաքսորեցին. ԲԵ ՃԵՐ ազգակիցները ՄԵՐ ԴԵՄ ճակատային կոփկ ԵՎ ՄՐՈՒՄ ԵԼ ԿՈՏՈՐՈՒՄ ԵԼ ՄԵՐ ԳԻՆՎՈՐՆԵՐԻՆ: ԵԿ ԴԵՐ ՄԻՆԵՑ ՕՐՍ ԵԼ ԵՐԿՈՐ ՎՐՈ ՊԱՄՄԱԲԱՆ ՈՒ ՔԱՂՋՔԱԳԵՏ ՄԱՐԴԻԿԱՆ, ՈՐՈՌՈ ՃԵՆ ՈՎՈՒՄ ԱՍԵԼ. ՈՐ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏԻ ԲՈԼՈՐ ՃԱԿԱՏՆԵՐԻց ամենից ծանրը Կովկասյանն էր ԵԼ ԱՅՆ ԵԼ ՈՇ ՋՈՐՃԵՐԻ համար այլ թուրքական զորքերի թիկունքում ապրող հայության համար որոնց տերությունը ոչ թե պատժում էր. ինչպես որ լինում թիկունքային. դիցուկ թԵ, անհուսալիների հԵՏ. այլ բնաշնջում եր

1 Ա. Ա. § 370. զ. 1. գ. 92: 2 Կրոյ Հայոց. Ըստի Գործադրություն իշխակության պահպանի. «Հայոց պահպան» Բ. 1927թ., Խ 6 / 54. էջ 90-97: 3 «Դաշնակ» թ. 370. զ. 2. գ. 4. Առաջին. պահպանի. Ա. 1927թ., Խ 6 / 54. էջ 90-97:

գլխովին, պատերազմը առիթ ու հարմար պահ ճանաչելով հայությանը երկրի երեսից Վերացնելու, թերակղզու լիակատար թուրքացման վաղեմի ծրագրերը վերջապես հրականացնելու համար: Բայց այդ մասին հետո: Շարունակենք մեր պատմությունը Անդրանիկի կյանքի վաղ օրերի մասին:

Սուլթանի սահմանած կարգով էին 1895-ին շապինկարահիսարցիներից՝ թե՛ քաղաքի, թե՛ մերձակա գյուղերի բնակչությունից գեները Վերցրել։ Անդրախիկի մանկության օրերից ի վեր Շապինկարահիսարում տարածված լուրերը Վերաբերում էին նրա հայրենակիցների պատվազգացությանը եւ մահմեդականների հայատյացությանը. դրանցից բխող գործողություններով հանդեռը:

Սահմեդականներից մեկը հրիկնամուտին արտի ճամփին հասդիպում է վզներից խաչ կախած երեք հայ երեխայի: Սոտենում է, ատելությունից քարով ջարդում նրանց գլուխները եւ ալլահին փառ տալով հեղանում:

Սահմեդական հարկահավաքը տներից մեկում տեսնում է հայի հարսին, Երեք զավակներին կերակրելիս: Երթին էլ սպանում է: Ապա մոր հետ բարբարոսի իր գործը տեսնելով, դաշույնը կոխում է Նրա փոռո՞ւ:

Պատմում են բերնեբերան այս ամենը, իսկ շահելները դեռ պետք է համբերեին եւ կու տային ամեն ամոռանո՞ւ ու հասառառանո՞ւ:

Բայց այն սերունդը, որ Արեւմտյան Հայաստանում կյանք էր Մտնում XIX դարի 60-70-ական թվականներին. Մանկության օրերին լոկ համբերելու. Վիզը ծուելու եւ մեջքը կորացած քայլելու փիլիսոփայությանը չէ, որ ունկնդրել էր ու խոնարհել: Նոյն այդ ժամանակ, երբ Անդրանիկը 12-13 տարեկան էր. 1877-ին սկսված ողուս-թուրքական պատերազմի Կովկասյան ճակատում ողուսների ու նրանց հետ հայ գիևվորսերի հաջող մարտերի լուրերն էին հասնում սովորանի լծի տակ տառապող հայությանը: Պատանուն, ինչպես եւ նրա դասի ու խաղի ընկերներին, ոգեւորում եւ ուրախացնում էր հատկապես այն, որ այդ ճակատում զորքերի ընդհանուր իրամանալուր հայ գեներալ Լոռիս-Մելիքովն էր. որի ազգանվան հայերեն «Կյան» Վերջապորությունը ողուսերեն «Կով»-ի եռ փոխանիւներ:

Հայերը. ՄԵԿ է. դարձյալ ՍԵԼԻԹՅԱՆ ԵԽՆ ԸՆԿԱՊՈՒՄ. լավ իմանալով, որ Նրա «Լոռիս» մասն է լոռեցին է. որ Նշանակում եր. թէ՝ այսինքն Հայաստանի Լոռի գավառից են: Լոռիս-ՍԵԼԻԹՅՈՎ ՍԵԼԻԹՅԱՆ մարզու մարտա մարտեր ուստանան առևանդու հաջողութափա-

<sup>1</sup> Πρωτοπατηρική αρμόδιωρη ρυθμωτική πετυχήσεως αρχής (ΠΑΙΔΕΙ). Φ. Κ. Αργυρίου πληρωματισμού σε  
17 (α). 1805ρ. φ. 3161: 2. *C. Sto—Ζωργοφίλεως, Ιερά θέρη, ταχ. 23—24:*

որակելով որպես «Եր՝ հայոց ազգի զավակներից» գոհուսակության արտահայտություն։ Դրանից հետո, կարծես «ի նշանավորումն» այդ պարզեի երկրում ծայր են առնում հայության նոր հալածանք-ները։ Վարժապետյանին, որը հայությանը սուլթանին խոնարի մնալու դասն եր տալիս, մնում էր հրաժարական տալ եւ Բարձր Դուռ հղել իր պատճառաբանությունը։ «Հեր խոստումներով մինչեւ հիմա ազգս խաբեցի, ա՛լ այսուհետեւ չի խաբվիր. ուստի չեմ կրնար պաշտոնս խաբեցի։ Եվ սրանից հետո թուրք պատմաբանը գոիչ է վերցնում ու գրում, իսկ թուրք քաղաքացւուները ի լուր ամենքի հայտարում են, թե հայերը խոնարի չեն եղել. թե զմբուտացել են եւ դրա համար են իրենք հաշվեհարդար տեսել։ Բայի՝ տարի. քանի՝ տասնամյակ ու քանի՝ դար կարող էր ոսկորը կոկորդում մնալ։ Մի՞ն պետք էր ընդմիջտ, հար ու հակիտյան համբերել. թողնել, որ լինի տասնապատիկն ու հարյուրապատիկը։ Եվ միթք՝ այդ մամլակի տակ այլեւս ծիլ կմնար ու ծաղիկ։ Անդրանիկն ու Նրա սերունդը կյանք մտան հենց այն պահին, երբ հալածանքն եր բազմապատկվում եւ ծիլն ու ծաղիկն էին տոչորվում արմատի վրա։

Հայոց ազգային այն կուսակցությունների ծրագրերում, որոնց ասպարեզ իշան (1885–ին՝ արմենականները, 1887–ին՝ Սոցիալ-դեմոկրատ հնչակյանները, 1890–ին՝ Հայ հեղափոխական դաշնակցությունը), անշուշտ, ազգի ազատագրության խնդիրներն են հոչակել, եւ դա է եղել Նրանց բոլորի երազանքը։

Ազգային ազատագրությունը Նրանք պատկերացրել են որպես ժողովուրդների հրավահավասարություն։ Մեկի կողմից մյուսի բոլության վերացում։ Եվ ոչ պակաս, քան հայությանը, Նրանք նույնը կամեցել են նաեւ սուլթանի լին տակ տառապող թուրք աշխատավորությանը, երկրի հալածվող մյուս բոլոր ժողովուրդներին։ Գործնական ժամին Նրանց տեսական, ծրագրային հոչակումները հանգել են հիմնականում սուլթանյան բոևակայության դեմ ինքնապաշտպանական գործունեության ծավալմանը։ Ինքնապաշտպանությունը տարեր էր։ Ասպարեզում դեռևս ոչ մի քաղաքական խմբակցություն չկար, եւ մարդիկ դրան չեն. որ պետք է սպասին, բայց որդիներն արդեն պատահած գենքով թե անզեն, իրենց օջախին պատուեց եին կանգնում հարձակվող, ներխուժող բարբարոսների դեմ։ Որդիները վերստին հիշում էին, որ իրենք այն ժողովրդի զավակներն են. որը հեռու հեռվում պետություն է ունեցել ու բանակ, ժողովուրդ. որը սրտի խորցում պահում-պահպանում էր ազգային արժանապատվության երկիազարամյա զացումը։

Գործել են ժողովրդական Վրիժառուները. որոնք հայդուկ ու Ֆի-  
ւ Կահան Շահրիման. և. ու. էջ 137. 177:

Դայի անուններով են կոչվել, եղել է Նրանց անձնապաշտպանական. դիմադրական կոիվը՝ պատշաճ քաղաքական պատրաստության բացակայությամբ հանդերձ։ Հենց դա էլ ֆիդայական կոիվների հեղինակությունը օրվա եւ գալիք սերունդների աշջում բարձրացնելու կարեւոր պայմաններից մեկը եղավ։

Ժամանակի թե՛ թուրքական մամուկի եցերում, թե՛ դիվանագիտական բազմալեզու փաստաթղթերում հայդուկային խմբերը գերազանցապես ավագակային, խոլվարարական։ Երեմսն է՛ ապստամբական ու հեղափոխական բառերով են կոչվել։ Իրարամերժ էին, բայց ոչ պատահական։ Ավագակայինը քաջերի կոիվը որպես քրեական հանցանք նսեմացնելու եւ վարկարեկելու համար էր, ապստամբականն ու հեղափոխականը՝ դեպքերն ուոճացնելու եւ որպես սովորական հակաբետական գործունեություն նենգափոխնելու։ Երկու դեպքում է նպատակը նույնը եր՝ կոծկել. իմաստագրկել ընդվզման բուև ակունքները եւ շինծու պատճառաբանությամբ համոզիչ դարձնել ժողովուրդ բնաջնջելու ծրագրերն ու գործնական քայլերը։ Այդպես էլ թշնամական ճամբարում աստիճանաբար դուրս մղվեցին «ազգական» ու «խոլվարարը», իրենց տեղում զիջելով «ապստամբությանը», «հեղափոխությանը», որոնք էլ փոխարինեցին «դավաճանություն» բառով. որպես ցեղասպանությունը աղդարացնող պատրվակ։

Ազգային արժանապատվությունը վիրավորող սուլթանական ուժի ներքո Անդրանիկը դպրոցում դասերն էր սովորում, տանը եւ շուկայում գտնվող հոր արհեստանոցում՝ Նրա արհեստը։ Տասնութ տարեկան չափահաս որդին ե՛ւ գրագետ էր. ե՛ւ ձեռնահաս։ Ապրուսի գուցե թե ավելի հուսալի մի միջոց գտնելու նպատակով գնում է Կոստանդնուպոլիս եւ աշխատանքի անցնում զինագործական արհեստանոցում։ Անցնում է եւս մեկ տարի։ Արհեստի մեջ արդեն կարող էր եւ հմուտ։ Փայտի գործ էր անում որպես ատաղձագործ, հետև է՛ երկարի. եթե հարկ լիներ։ Վերադառնում է հայրենի քաղաք։

Վերոնիկան, կողմի թաղի բնակիչ Սողոմոն Թաշյանի դուստրը. լինում էր, որ Վեհերու քայլվածքը անցնում էր Անդրանիկենց տան մոտով, անցնում էր. բայց կանգ չեր առնում, որ կանոնավոր տեսնել լիներ, ուր մնաց հետո խոսել։ Ազնիվը, Վերոնիկայի քույրը, պատմում է. թե ինչպես Անդրանիկն ու իր Նազելի քույրը տեսնելով, որ Վերոնիկային հանդիպելու, հետո խոսելու առիթ չի ստեղծվում, իրենց կորած հակը փնտրելու պատրվակով մտնում են Վերոնիկայինց բակը՝ Նրան զնելու։ Տեսել, հավանելու հարցը լուծելուց հետո գալիս են խնամախոսության։ Մի շաբաթ անց նշանադրեն է, ապա

\* Ուսուելում «ազգություն» և «քանդակ».

հարսանիք՝ քաղաքի պատվարժան մարդկանց մասնակցությամբ<sup>1</sup>:

Հարսանիքից հետո Անդրանիկը Կ. պոլիս չի վերադարձել, մնացել է հայրենի քաղաքութ Եւ բարեկամներից Մեկի հետ աղևնագործական է արհետանց, կողքին էլ տնային մանր գործիքների խանութ է բացել, հետև էլ աշխատելով քաղաքային կանքին օգտակար լինել: Շապինկարահիմարում Եկեղեցու նոր շենք էր կառուցվում: Վերսատունը կիսատ էր: Անդրանիկը հանձն է առնում հյուսնի գործը անվճար կատարել, որպես պարզել հայրենի քաղաքին: Ըստ կցւուր տեղեկությունների, սա է նրա առաջին քաղաքացիական բարեգործությունը, որով եւ ճանաչվում է քաղաքութ որպես պարտաճանաչ աշխատավոր է հայրենակիցների գոհունակության արժանանում: Կառուցում ավարտելուց հետո նա կանոնավոր կերպով այցել է Եկեղեցի: Աստվածապաշտ էր, բայց ոչ մոլեռանդ, եւ հայոց հեավանդ խոսի ու երգի սիրահար: Եկեղեցու խոսքը հարգել գիտեր եւ նրա կամքին՝ Եւթարկվել:

Ապրում էր քաղաքը, արտաքուստ խաղաղ ու անվրդով: Եկ կարող էր այդ կերպ շարունակվել: Այդ խաղաղությունը ամեն Մեկի կյանքում յուրովի է խախտվել Եւ տեղի տվել ողբերգությունների շարքին:

Անդրանիկի ողիսականը, նրա իսկ հուշերի համաձայն, այսպես է սկսվել: Հայոց Սուրբ Աստվածածնի տոնին նախորդած շաբաթ օրը նա ուշադիր լսում է Եկեղեցու պատգամը, որ Վաղը, կիրակի օրը, խանութները փակ պետք է լինեն Եւ ամեն ոք պիտի մասնակի Աստվածածնի պատարագի մատուցման արարողությանը: Առաջնորդը հատկապես խանութներն է շեշտում, որովհետեւ կիրակի օրը, Երբ խանութները սովորաբար փակ էին լինում, պատահում էին անկուտաներ. որոնք չեն փակում Եւ խախտում էին Եկեղեցական տոնին կարգը: Կարծես թէ Անդրանիկին էլ հենց այդ էր պետք, որպեսզի կատարեր Եկեղեցու պատգամին հավատարմության իր պարտը:

Հաջորդ օրը Եկեղեցի գալու ճանապարհին տեսնում է հայ Վաճառականի մի բաց խանութ. աճապարում է այստեղ Եւ զարմանք հայտնում, որ խանութպանը Եկեղեցու կարգին հավատարիմ չի մնացել: Համար խանութպանը անարգում է հանգիստ ասված խոսքը, իսկ Անդրանիկը նրան ուժով դուրս է բերում խանութից Եւ պահանջում դուռը փակել: Կոիկ է սկսվում: Խանութպանը անզգույթ մի շարժումով վեսասում է իր քիթը: Անդրանիկը հեռանում է, իսկ խանութպանը շտապում է դեպի ոստիկանն ու դատախազը: Սկսվում են անախորժ բարդությունները<sup>2</sup> սկզբում բանտ նետելով ու գումար կորզելով այստեղից դուրս թողնելով, հետաքայում դատ բացելու Եւ նորից բանտ նետելու սպառնալիքներով ու նոր-նոր գումարների պահանջ

<sup>1</sup> «Պառ. թ. 370, գ. 2, գ. 4»:

դնելով, Երբ արդեն սպառվում էին արհետավոր հոր ապրուտի միջոցները<sup>3</sup>:

Վշտանալու ավելի լուրջ առիթներ են եղել: Կնոջ առաջին ծննդաբերությունը զուգադիպում է քաղաքում տիֆի տարածմանը: Արու զավակը Երկար չի ապրում: Չի ապրում նաև Երկրորդը, որին հայոց վերջին թագավոր (1375թ.) Լեռնի անունով էին կոչել<sup>4</sup>:

Տարիները ստուգ հայտնի չեն, բայց հայտնի է, որ ոստիկանի Եւ դատախազի անընդհատ հետապնդումից հետո քաղաքում մնալը նրա համար դառնում է անհետար: Հարկադրված էր հեռանալ Եւ դարձյալ Կ. պոլիս տանող ճանապարհը բռնել: Հավաքվում են բարեկամները Եւ արցունքները հազիվ զապելով՝ ճանապարհում արդեն ձի հեծած Անդրանիկին: Ամենից տխուրը Վերոնիկան էր: Անդրանիկը քաջալերց նրան, խոստացավ շուտ վերադառնալ, քաջ գիտենալով, որ մեկընդիմիշտ զրկած է լինելու քաղաքում հանգիստ ապրելու հնարավորությունից: Տարիներ են անցելում: Մահանում է հայրը, ծանր հիվանդությունից հետո՝ նաև Վշտանակ կինը:

Հուշագիրներից ոմանք ասում են, թէ Անդրանիկին չվշտացնելու համար, գուցե թէ նաև հնարավորություն չչունենալով, որդուն չեն հայտնել ոչ հոր, ոչ էլ կնոջ մահը. մյոււներն էլ պնդում են, թէ Անդրանիկը իմացել է Ե՛ւ մեկը, Ե՛ւ մյոււնը, Եկել է հայրենի քաղաք. մասնակցել թէ՝ հոր, թէ՝ կնոջ հուղարկավորությանը:

Մեկ է, Անդրանիկը այդ ընթացքում հայրենի քաղաք Եկել է, թէ չի Եկել. Նա արդեն հեռուներում էր Եւ ու ուրիշ գործերում ընկղմված, որոնց Վերոնիկան չէր կարող անսեղյակ մնալ: Ժամանակ առ ժամանակ Անդրանիկի հետքով իրենց տուն խուզարկու ոստիկանների այցերից նա իմանուժ է, որ մեկը մատնել է ամուսնուն Եւ ոստիկանությանը լուր հասցել, թէ իրենց տանը գենք է պահվում: Ոստիկանները խուզարկում են, տակն ու վրա անում տան ամեն Մի անկյունը: Ոչինչ չզտնելուց հետո Վերոնիկան պահանջում է հայտնել մատնիչ-զրպարտչի անունը, որը հազիվ է պրծնում նրա ձեռքի ատրճանակից: Ներկա գտնված հայրը՝ Սողոմոնն է, որ աղջկան չի թողնում կրակել, զնդակն անզամ արժան չզտնելով մատնիչին<sup>5</sup>:

<sup>1</sup> Անդրանիկի տուքը, Ռդյանց, 1935թ., թ. 10-12: <sup>2</sup> «Պառ. թ. 370, գ. 2, գ. 4»:

## 2 ՀԱՅԴՈՒԿԸ ԿԱՄ ՖԻԴԱՅԻՆ

### Ա Նախընտրելին քաղաքականն է եղել

Հայդուկ կամ ֆիդայի, մեկ է: Գուցե թէ աշխարհի շատ երկրների մարդիկ կարդան կամ լսեն այս բառերը եւ զարմանք հայտնեն. ի՞նչ բառը են սրանք. եւ ո՞րն է դրանց հմաստը: Եվ եթ նրանք իրենց լեզվով այդ բառերը կամ դրանց համարժեքները չունեն. նշանակում է նրանց կյանքի պայմանները երբեք այնպես դաժան չեն եղել. ինչպես Անդրանիկի ժողովրդինք:

Արեւմտյան Հայաստանում հայդուկը կամ ֆիդային հենց նրանք են, որոնցից մեկն էլ իր կոփվների առաջին փուլում Անդրանիկն էր. սուլթանի գրոհների դեմ իր ու իր հայրենակիցների ընտանիքներին ու նրանց պատվին կրծքով պահապան կանգնող զավակը՝ մեկ է, անհատապես. թէ խմբովին: Ֆիդայիները կամ տան. գյուղի ու քաղաքի մոտակայքում են զօր ու գիշեր շրջում. կամ գյուղից ու քաղաքից դուրս՝ անտառում. լեռան ստորոտում ու լանջերին թաքսոնցից թաքսոնց անցնում. որպեսզի անզեն բնակչության վրա հարձակվող թուրք ու քուրդ ավազակախմբերն ու սովորանի զինավարժ բանակները հանկարծակի չբերեն մարդկանց. չառեւանգերին աղջիկներին. չթալանեին ու չավերեին քրիստոնյա բնակիչների տները. չկոտորեին:

Հայդուկը գիևվորն է. բայց ոչ բանակային կազմի. այլ ինչպես պարտիզանը: Շատ դեպքերում նա հենց այդպես էլ պարտիզան է կոչվում. ինչպես Անդրանիկը ուսական մամուկի եցերում. նաեւ կամավոր կամ ուազմիկ: Նա ինքնակամ է գենք վերցնում ձեռքը. գենքն էլ ո՞րն է. ինչ ինքն է ձեռք բերով ընկերների ու բարեկամների միջոցներով. ինքն հոգալով. իր եւ հագուստի. եւ սննդի հարցերը: Ամեն ինչ ինքնակամ է եւ ինքնուրույն: Նրա գործը հարձակվելը. թալանելը. մարդ սպանելը չէ: Դրանք նրա համար անընդունելի, պատժելի արարքներ են: Նա պետք է քաջ իինի. անվախ. բայց միայն բարի գործերի մեջ. որպեսզի օրինակ ծառայի յուրայիններին. տմարդի հարեւանի մեջ իր անձնականով մեղոնի չարագործությունների կիրքը:

Հայդուկը արթուն. անքուն պահապանն է: Հայդուկներ եղել են նաեւ Բուլղարիայում. Հուսաստանում. Հարավսլավիայում եւ Ալբանիայում՝ սովորանի նվաճած երկրներում ամենուր. որտեղ նրա յաթաղան կոչված կեր սուրն է աջ ու ձախ կոտորել:

Այդպես Անդրանիկն էլ ի ինքնակամ եղել. առանց մեկի թելադրության ու պահանջի: Ինչո՞ւ նա խանութապանի հետ վեճի մտավ. ով

սովորեցրեց: Ուրիշ մի անգամ էլ տեսնելով. որ հայրը ծեծված ու դեմքը արյունաներկ է գործատեղից տուն դարձել. դուրս է թուել եւ կովի մեջ մտել ոստիկանի հետ:

Ի՞նչ եր պետք այսուհետ:

Այդ եւ նման բազում այլ հարցերի պատասխանն է իր պատմությունների շարքում Անդրանիկը տվել 1905 թվականին՝ իր հուշերի գրքում:

Շապինկարահիսարում պատկառելի մարդիկն են եղել՝ Սիմոն Ծըգնավորյանը եւ Ապրո անունով հայտնի Սկրոտիչ Սահակյանը: Կար եւ Կոմշապուհ քահանա Թիգարյանը: Բոլորը նախապես ուրեզ հոգի: Նրանք բացատրող են եւ ուսուցիչ. մարդկանց ուժերը ի մի բերող եւ գումարող<sup>1</sup>: Ապրոն նաեւ մարտիկ եր. ֆիդայական շարժման ակունքներն սկզբանավորող. ինքնապաշտպանական խմբեր ստեղծող: 1891-ի մի օր գրուցի են հրավիրել պատվազգաց ատաղձագործին: Համոզել են. որ միայնակ գործել չի լինի: Եվ նա հանձն է առել ընկերներ գտնել: Հաջորդ անգամ վարպետ Սակարի եւ մի խումբ հավատարիմ ընկերների հետ է եկել գրուցի: Սեղանի վրա խաչն է եղել ու ավետարանը: Երդեկ են ազգին հավատարիմ մնալ: Սա էլ համարվել է 1887-ին ստեղծված Սոցիալ-դեմոկրատ հնչակյան կուսակցության շարքերը նրանց ընդունելու արարողությունը<sup>2</sup>: Առանց բացատրելու. առանց խնդիրները թի թէ շատ պարզաբանելու: Միայն թէ կուսակցություն լինի. նրա շարքերում երիտասարդ կարող ուժերի միավորում. «առանց մեզի ըսելու. թէ ի՞նչ կուսակցության կը պատկանինք. մենք չմ գիտեինք ալ թէ կան զանազան կուսակցություններք». հիշել է Անդրանիկը հետագայում: Իսկ ընդունողներն ամեն ինչ իմացել են: Այդ ժամանակ Սեբաստիայի հայության մեջ գործողը ընդամենք այդ մի կուսակցությունն եր. այնպես որ հարկ չի եղել պատմելու. բացատրելու: Լուսնաբես է հիշել այդ պահը նաեւ Կոմշապուհ քահանան. «Մի միայն Հնչակյան կուսակցությունն կար Շապին Գարահիսարի մեջ. եւ ես Անդրանիկին ուխտը կնքել տվի եւ մտավ ի շարս Հնչակին»<sup>3</sup>:

Տերության մյուս վայրերի համեմատ հալածանքների դեմ ընդգրություններն ամենից ավելի ուժգին ու տեւական են եղել Սասունում՝ Կանա (ճի արեւմտյան լեռնոտ հատվածում: Այդտեղ հայության բնօրորաններն են՝ երեսուն դար առաջ ձեւավորված իրենց վաղնջական պետության ժամանակներից ի վեր: Հարյուրավոր գյուղերը. գրեթե բոլորը գուտ հայ բնակչությամբ. բազում դարերի. շատերը հազար-

1 «Հայրենիք», Բ.՝ 1927թ., Ա. 4, էջ 120: 2 «Անդրանիկի աշխարհ», էջ 5-7:

3 Առանց ժամկետան. Տունյան Անդրանիկ կը պատասխան իր հակառակորդներուն Գործ. 1945թ., էջ 37:

Մյակների պատմություն ունեին: Ըստանեկան օջախներից ամեն մեկը, հնավանդ կարգ էր, գիտեր իր գերդաստանի արմատները ապուապից սկսած: Ապրել ու ապրում էին նրանք իրենց մայր հողին ու արհեստներին փառված, իրենց աղ ու հացով, պիտուքներով՝ տեստուն եւ թշ դեպքերով՝ հարեան գյուղերի հետ փոխանակությամբ, հազվադեպ նաև կապելով ճնշ մոտ ու հեռու ընկած կան. Բիրին ու Մուշ քաղաքների հետ: Վերջին ժամանակներում դուրս էին գալիս նաև դեպի Մերատիա ու Երգրում, որ նոյն Կարինն է, եւ ել ապելի, հեռու, որտեղ սահմանի այն կողմում ապելի վաղ ու 1826—1828 թթ. ուսու-պարսկական եւ 1877—1878 թթ. ուսու-թուրքական պատրազմներից հետո Ռուսաստանին անցած Հայաստանի Կարս. Ալեքսանդրապոլ ու Երեան քաղաքները տանող ճամփաներն էին:

Սասունցիները Վարժվել են տերության հարկերը ժամանակին եւ պարտաճանաչ մուծելուն, ձգտելով հեռու մնալ անախորժություններից, պետության ու Նրա տեղական վարչիների հետ զժութելուց: Բայց այդ ձգտումը երկկողմանի չի եղել: Ինչպես ասում են, մարդկանց համեստությունը քայլ առ քայլ չարաշահվել է: XIX դարի վերջին տասնամյակում պետության ճնշող քաղաքականությունը հայ բնակչությանը համբերությունից հանում է եւ տանում դեպի անզեն ու զինված ըմբուտացում: Բազմաթիվ են փաստերն ու փաստաթղթերը: Բայց վկայակոչենք միայն այն, ինչ ժամանակին գրել են Վանա ճիշտակայքի եւ մոտ ու հեռու մյուս քաղաքների ուսուական հյուպատությունների աշխատակիցները:

Երգրումի գլխակոր կայսերական հյուպատոս Վ. Մաքսիմովը ցարական արքունիքին տեղյակ պահելու համար Կ. պոլսի ուսուական դեսպան Ալեքսանդր Նելիկովին հստակ գեկուցագիր է հղել՝ 1893 թվականի առաջին տարեկեսի մանրամասն նկարագրություններով: Նա պարտը է համարում բացառել հյուպատյան ընդվզման ապստամբական բնույթը, չժխտելով ընդվզումը: Դա եղել է ինքնապաշտպանություն, ընդգծում է նա: Պայքարը եղել է ի պատասխան իրենց նկատմամբ կիրառվող վայրագությունների: Նա չի բացառում, որ հայ մտավորական երիտասարդներ կան. որոնք խոռվահույզ տրամադրություններ ունեն: Այդուհանդեմ, հեղինակը դիվանագետի իր պարտը է համարում ավելացնել, որ իրեն «լավ հայտնի է եւ այն,



ԱՊՐՈ

որ հայության զանգվածը բավական դոջամիտ է, որպեսզի չբաժանի նման մտցերը»: Ապաւ Նկարագրում է հյուպատյան վիճակը սուկթանի լին տակ. Նրանք շրջապատված են, մինչեւ իսկ՝ սեղմված թուրք-քըր, դական թշնամական տարրերի կողմից եւ կտրված իրենց բարեկամ Սեղրկովկասից ու Պարսկաստանից: Այնպես որ, ինչպես հավաստից ացնում է դիվանագետը, թե՛ քաղաքների եւ թե՛ գյուղերի հայ բնակչությունը, որը մի կերպ հայթայթում է իր ամենօրյա ապրուստի սուր միջոցները, գիտակցում է իր գորության անելանելիությունը, այն, որ «անհապաղ եւ դաժանորեն բնի մեջ կխեղդվի անկախություն ձեռք բերելու իր ամեն մի փորձը»<sup>1</sup>: Նա խոր համոզմունք է հայտնում, որ հյուպատյան ըմբուտացումը նրանց նկատմամբ ճշշման գործողությունների արդյունք է: Եվ ոչ միայն չի հավատում, այլև հերցում է իր մի կարճատեր բացակայության ժամանակ Կ. պոլսի ուսուական դեսպանությունից իր գործընկեր Ֆիմերմանի հաղորդումներն այն մասին, թե հայերը վաղուց են պատրաստվում իշխանության դեմ ապստամբելու: Ընդվզման տարերայնությունը, ինքնապաշտպանության անխուսափելիությունը շփորվում էն ապստամբության տեւական նախապատրաստության հետ, որը որքան եւ ցանկալի լիներ, փաստ է, որ իրապես չի եղել: Ֆիմերմանի հաղորդման մասին Կ. Սաքսիմովը գրել է, որ այն «կառուցված է սխալ մտքի վրա» եւ որ Նրանում չկա «որեւէ ճշմարտացի տեղեկություն, քանի որ Նրանում բոլոր տվյալները ուղացված են, խեղաթյուրված կամ մտացածին»:

Մաքսիմովը պետում է, որ հայերը սուկթանի գերիշխանության ներու քրոնի առջեւ ճորտական վիճակի մեջ են ողված եւ դա ոչ միայն տեղաբնիկ քրոնի, այլ մինչեւ իսկ Նրանց այն ցեղակիցների առջեւ, որոնք ամուսնը իրենց զոյզ Դիարբեքիրից (Տիգրանակերտ) բերում են հայերի արոտավայրերը<sup>2</sup>:

1894 թ. օգոստոսին նոյն Նելիկովին հղած գրությամբ ուսուդիվանագետ փոխհյուպատոս Գիպտուսը, ճիշտ է, չի թաքցնում, որ եղել են ընդվզման եւ քարոզիչներ, եւ քարոզ: Ընդվզման հորինված պատճանների վերաբերյալ իր տարակուսանքը հայտնելուց հետո նա անարդարացի է համարում, որ բնակչությանը գենք կրելու արգելման օրենքը կիրառվում է միայն հյուպատյան նկատմամբ: «Մինչդեռ քրոնը բոլորը գինված են դաշույնով եւ բացահայտորեն գենք են կրում»: Եվ գտնում է, որ հենց «միայն այդ փաստը քրիստոնյա բնակչությանը կախման վիճակի մեջ է դնում քրոնի նկատմամբ»<sup>3</sup>: Սա խոր վիրա-

<sup>1</sup> Կ առաջ ուսուականուն գ. 517/2, գ. 3176, թթ. 12—14: 2 և ա:

<sup>2</sup> Կ առաջ ուսուականուն գ. 143—144:

Վորանք էր: Անդրանիկի գիևակիր ընկերներից Սմբատը հիշում է, որ իր մասնության օրերին այդ փաստը «ևախանձ զրգույու աստիճան» ազդում էր իր վրա<sup>1</sup>:

Հայերի նույն ստորադասվող վիճակը վկայում է նաև Մաքսիմովը իր մի այլ գեկուցագրում. սասունցի շատ հայ ընտանիքներ իրենց դույքով եւ հողով գտնվում էին քուրդ որեւ աղայից ճորտական կախման մեջ<sup>2</sup>: Այս աղան տարրին երեք անգամ հայի ընտանիքից «փեշ» կոչված հարկն է վերցնում. դրանից բացի՝ գարնանը մի ոչխար, ամոանը՝ մյուսը, աշխանը՝ թերքի մեկ տասներորդը եւ ես մի գերի ոչխար: Դիվանագետը շարունակում է երբ հայն աղջկան ամուսնացնում է, պարտավոր է դարձյալ իր աղային մեկից—երեք թուրքական ոսկի դրամ տալ: Բայց եթե, քուրդը իր հայ ենթակայից գոհ չէ, նա կարող է նրան վաճառել ուրիշի: Այս դեպքում նրա գինը այսքան ավելի թանկ կլինի. որքան որ նա երեխա կունենա: Դիվանագետը գտնում է, որ Կառավարությունը այլիւս ոչ թե հայերից աետք է իր նշանակած հարկերը՝ հավաքի. այլ քրողուց. որոնց աետք հայրը հարկ են մուծում: Այս բոլորից զատ, քրողը արոտավայրերից հայրը հարկ են մուծում: Այս բոլորից զատ, քրողը արոտավայրերից հայրը քշում—տանում էին հայերի ոչխարների հոտը<sup>3</sup>: Նշված եւ հայման մյուս փաստերն ու դեպքերն են, որ դիվանագետների միահամուռ պեղմամբ. հանգեցրել են Սասունի հայ ընակչության տեղական ինքնապաշտպանական այն քայլերին. որոնք 1894—ին վերածվեցին հուժկու ինքնապաշտպանական—դիմադրական շարժման. որի մասին խոր կլինի ստորեւ: Որտե՞ղ էր այս ընթացքում Անդրանիկը: Շուրջ մի ամբողջ տասնամյակ ինչո՞ւ է նա զբաղված եղել: Դեպքը ոչ թե օր առ օր ու ամիս առ ամիս, այլ մինչեւ իսկ տարիներով է անհնար ստույգ փաստաթղթերի միջոցով՝ պարզել: Որովհետեւ չկան այդպիսիք: Անդրանիկի հուշերի եւ եղած սակավաթիվ այլ նյութերի կցկոտոր տվյալների համադրումը համոզում են հետեւյալում:

Հավանաբար 1884—ին էր նորապասակ ատաղձագործը դուրս եկել հայրնեին քաղաքից. զնացել Կ. պոլիս. մոտ մի տարի աշխատել այստեղ, ապա տեղափոխվել, ապրել ու աշխատել Ռումինիայում. որը ամենայն հավանականությամբ Վերադարձերով, տեւել է շուրջ հինգ տարի: 1891—ին, զստ իր վկայության, եղել է Շապինկարահիսարում: զբաղվել իր արիստոնվ: Որոշակի է, որ 1894—ին Սասունում է, թեժ մարտերի վերջին փուլում կամ դրանցից անմիջապես հետո: Ապա երկու անգամ դարձյալ գեւը հայթայթելու. հետոք կորցնելու կամ ուրիշ այլ պատճառներով ու նպատակներով ելել է Երևան դուրս.

1 Ակունք Երևանց. Զօրավար Ամբարդ լուշեր. և համար. Փ. 10. 2 ուսում ա. թ. 142—143. 3 և. ա. թ. 22—25:

Եւ բոլոր միասին. մինչեւ վերջին դուրս գալը (1904—ին). քան տարվա ընթացքում. տեւել է ութուկես տարի<sup>4</sup>:

Անվիճելի է, որ նա սկզբից էլ լուր ու անդեմ չի եղել. վերջին շարքում եւ անտեսանելի: Ծիշտ է, դժգոհության առաջին իսկ պահից չի գենք վերցրել ձեռքը եւ ֆիդայական խումբ մտել: Իսկ թե ուրիշ էլ որտեղ էր. ինչ էր. այդ մասին թերթ կարդացող ամեն ոք կարող էր իմասնալ. եթե ուշադիր լիներ Անդրանիկ անվան նկատմամբ:

Հնչակյան կուսակցությունը «Հնչակ» թերթ էր հրատարակում: Հենց 1891—ին. ամոռն վերջին. աշխանը Անդրանիկը այդ թերթի տեղից պատմել է հայրնեին քաղաքի մյուս քաղաքների ու գյուղերի հայ ընակչության կյանքի ու դիմադրության մասին:

«Հնչակ» իր գրագետ ու բանիմաց հեղինակային կազմի տեսանկյունից բացատրում էր սոցիալիզմի գաղափարախոսությունը: Երկու բառով դա Արեւմտյան Հայաստանի վերաբերյալ հանգում էր հետեւյալին: Սոցիալիզմը աշխատավոր մարդկանց. ճնշվող ու շահագործվող ազգերի ու ժողովուրդների համար փրկարար գաղափարախոսություն է: Այս կիրառելի է նաև Թուրքիայում: Այդ ձեւով կարելի կլինի համերաշխություն հաստատել Երկրի բոլոր ազգերի միջեւ, հաստատել հավասար եւ արդար սոցիալական կարգեր: Անդրանիկը հետագայում առիթեներ է ունենալու արտահայտելու իր պատկերացումները սոցիալիզմի մասին. որոնք նախ եւ առաջ «Հնչակի» մնայուն հետքն են նրա հիշողության մեջ: Թերթի 1889—ի տարեսկզբի առաջնեկ համարում. ասես Անդրանիկի մտավոր տառապանքին ընդառաջող. «Ի՞նչ անել» հարցու էր: Պատասխանը զստ եւրիթյան Անդրանիկի կատարելիք քայլերն են. «Մենք ուզում ենք գործել: Բայց ինչպես սկսել հենց այսօր գործը, ինչի՞ն սկսել այդ գործը...»: Եվ ապա նոսիրը. «գիտակցական հեղափոխականներից հեղափոխական կուսակցություն» կազմել<sup>5</sup>: Թերթը հաջորդ համարում հոչակում էր. «Կեցցե՛ սոցիալական եւ քաղաքական հեղափոխությունը»<sup>6</sup>: Այս փիլիսոփայությունը օդում կախված մնաց: Իսկ Անդրանիկը զնաց ժողովրդի զավակի կենցաղային իմաստնության նշած ճանապարհով:

Անդրանիկը թերթին իր հոդվածը հղել է 1891—ի սեպտեմբերի 5—ին՝ Սեբաստիա նահանգի Մարզվան քաղաքից: Թերթում այն հրապարակվել է հոկտեմբերի 20—ին: «Հայտնում է՝ Խոռվահույզ հայ ընակչությունը հարկադրված է եղել ըմբոստանալ ընդեմ տեղական հշիսանության: Նրա դեմ զինված ոստիկաններ են ուղարկվել: Թերթը Մենես օդում զինված ընդհարումը երեք ժամ է տեւել: Եղել էն զոհեր: Ոստիկանները ետ են 2 արտվել: Նրանք հեռացել են՝ զյուղում թողնելով իրենց գենքերի մի մասը: Շուտով պարզվա տասնիկնազ

5 «Անդրանիկի լուսնը» թ. 14—15. 6 «Հնչակ». Ա. 1. 1889թ.: 7 և. ա. թ. 2:

ոստիկանների փոխարքն երեսուն են ուղարկվել. Իրենց հետ բերելով բազմաթիվ լազ «Քաշիբողութեր»: Նրանց նույնպես հակահարված է տրվել:

Երեւում է Անդրանիկը շրջել է Նահասգի Մյուս Բազարականութեան հետեւել իր հայրենակիցների ինքնապաշտպանական ջանքերին: Սուլքանյան գինվորներն ու ոստիկանները հանկարծակի ու անդադար հարձակումներով հայածում են խաղաղ, անզեն հայ բնակչությանը. թալանում են Նրան. Ճերքակալում անմեղ հայ օյուղացիներին դաշտային աշխատանքի ժամփին, որտեղ պատահեր: Ակամայից առողջում է այն. ինչն այլեւս անհետար եր կուլ տալ:

«Առ այժմ այս կացութիւն ինչ վախճան կունենա հայտնի չէ. սակայն անկարելի է չը նկատել, որ կառավարութեան հայոց վրա ի գործ դրած հարստահարութիւններն ու ճնշումները ահ ու սարսափ կազդեն ժողովրդեան վրա. որ չը գիտե թէ ինչ պետք է ընե եւ ինչ կերպով ախտի վարկի ընդդեմ բռնւրեան. եւ սակայն միայն սա հայտնի է. որ այս վիճակ չէ կարող երկար տևել եւ ժողովուրոք թող գիտնա. որ իրեն համար միայն երկու ելք կա՝ Սահ Կամ Ազատութիւն»:

Ահա որոնող Անդրանիկը: Թախծուն է Նրա խոսքը: Առոք է պատճեն և կապա եւ խոր ցանումն է եռուս երակներում:

Բայց չշտապենք: Եթե անպայման ուզենանց Անդրասիկին տեսնել վաղ օրերից ի վեր անդադար սուրբ Ճեռքին, ատրճանակը գոտուց կախ, հրացանն ուսին եւ փամփշտաբները մարմինը պատած. ապա իսկապես դա կիսին կանխական:

**Ինչո՞ւ:** Որովհետեւ նա հենց սկզբից էլ ֆիդայի կամ հայդոկ չի եղել. որովհետեւ իր որոնումների եւ ձեւակորման ընթացքում նա միշտ էլ, որ գեւք է կրել ու զինակիրների մեջ եղել. այլ նախապես համոզելուն է հավատ ընծայել. հավատացել է վերառասին պահանջանելուն և համոզնունք է ունեցել. որ ճշմարտությունն ասելով ու արդարությունը բացատրելով կարելի կիսին զազանի գութը շարժել:

Պատահական չեր «Հնչակի» հետ հաղորդակցվելը: Վերջինս զգայակում նրա առաջին ու միակ գրագրությունը չեր: Ակսում էր այսպես. «Կը փութամ հաղորդել ձեզ նոր դեպք մը»: Այս թղթակցությունից առաջ եւ հետո «Հնչակի» էտրում Սեբաստիա նահանգի կյանքին վերաբերող մի շարք անհամեմատ ծավալուն եւ նույնչափուրիշ հոդվածներ կան՝ ոճով. գրեակերպով միմյաց և մասն: Բացականապես չեր, որ հետեւ որաց մեջ եւ «յոյուս դեպքերի» մասին Անդրանիկի գրածները լինեն: Դրանք, ինչպես նկատվեց, թղթակցություններ եւ ընթացիկ դեպքերի մասին: Կի՞ց գետեղված հոդվածներում Մողե

ալ-ըեմոկրատ հնչակյան կուսակցության ծրագրում ամփոփված զաղափարներն եին սոցիալիզմի մասին. «Սոցիալիստական կազմակերպությունն իրապես կը պահպանէ մարդկային բնական ու անհերթելի իրավունքները. լիառատ կերպով կը նպաստէ յուրաքանչյուր անձի բոլոր ուժերի. ընդունակությունների ու կարողությունների լիակողմանի ու լիակատար զարգացման. կը հիմնե հավաքական (կոլեկտիվ) սեփականություն՝»:

Այսպես որ առաջին գաղափարախոսությունը, որը Անդրանիկին ուսուցանել էն իր պայքարի ուսուցիչները, եւ պայքարի մասին առաջին պատկերացումները, որոնք նա կազմել է, կարող են լինել եւ եղել են սոցիալիզմն ու սոցիալիզմի միջոցով: Այլ կերպ ասած, պայքարի գանազան ձեւերի մեջ սկզբում նախընտրելին քաղաքականն է եղել: Դրանք նրա մտքում եւ հոգու խորքում հետո են թողել, որպես ջահել օրերի երազային պատկերացումներ: Հետո նա առիր է ունենալու իրենց սոցիալիստ կոչող որոշ հայ քաղաքական գործիչների պարսավելու, եւ դա ոչ թե այդ ինքնակոչման համար, ո՛չ, այլ որպես սոցիալիստ հանդես գալու նրանց հավաքնությունը ինքը համազոր չեն գտնելու սոցիալիզմի եւ սոցիալիստի մասին վաղընթաց օրերին իր կազմած պատկերացումներին:

1892 թվականին Անդրանիկը՝ ինչպես այդ գրվել է Նրա կյանքի օրոք<sup>2</sup>, անցել է Հայ հեղափոխական Դաշնակցություն կուսակցության շարքերը։ Որեւէ տեղ նա այս տարեթվին չի անդրադարձել, չի բացատրել տեղափոխության հանգամանքները։ Բայց միշտ, հարկ եղած դեպքում նույն միտքն է արտահայտել, եթե ինըն ու իր սերնդի մարդիկ ոտքի վրա էին, դեռ կուսակցություններ չկային, եւ որ ինըը կուսակցություններից որեւէ մեկից կախում չի ունեցել, ապրել, մտածել ու պայքարել է իր ինքնաբուհն կամըով. այլ ոչ որեւէ մեկի թելադրանքով։ Ինչ կերպ էլ բացատրած լինի. փաստը առկա է։ Գուցե թե համոզվել եւ հույս է ունեցել, որ Դաշնակցության շարքերը մտնելը ավելի հարմար կիխի իր ներքին ուժը ասպարեզ հանելու եւ կամքը կատարելու համար։ Գուցե թե նրան ձգել էր Դաշնակցության «Ղորշակ», առաջնեկ թերթի անդրանիկ համարի միտքն այն մասին, որ Հայաստանը պետք է վստահի միայն իր սեփական ուժերին։ Պարզ էր դառնում, որ խոսք միայն ուզամի դաշտում կովելու մասին չէ, այլ այն ամենի ամբողջության, որը հաղթանակ պիտի դառնա. Կովի նյութական պաշարները, քաղաքական հանգամանքները՝ ներքին ու արտաքին ուժերի ի մի բերումով, ապստամբական ու

1 Типпнурхан У. Г. ыңаштың Чокиашыларбыш. №.. 1962. № 32. 2 Студ «Кавказская мысль» №.197, 19.07. 1913 г., въю: «Тифлисский листок» № 100, 26.07 1913 г.

մարտավարական արվեստը... ամբողջը: Գուցե թէ լսել ու իմացել եր նաեւ, որ նոյն 1892 թվականին Դաշնակցության ընդհանուր ժողովին ներկա են եղել գործիչներ, որոնք ինքըսապաշտպանական կորպուսի արվեստը զուգակցում էին քաղաքական գործելակերպի հետ, ինչպես Շենին, Պետոն, Արաբոն, Սիկոլ Դումանը<sup>1</sup>: Օրինակը ուժ էր: Դրանից առավելը հր մեջ խմորվող համոզմունքն էր, որը ասես բառ առ բառ հոչակել էր նոյն «Դրոշակը» անցյալ տարի. <...Մեր կոհին ժողովրդի կորպ է նրա դարավոր բռնակալերի դեմ: Իբրև ժողովը դական կորպ. նա չի կարող կանոնավոր գործողի վարած պատրազմի ձեւ ունենալ... Ստախաբություն է երեւակայիլ, թէ Տաճկա-Հայաստանում կամ նրա սահմաններում կարելի է պատրաստել ու կազմակերպել մարտնչող գնդեր, նույնիսկ ամբողջ գորք. որ մի օր առաջ կերպել մարտնչող գնդեր, նույնիսկ ամբողջ գորք. որ մի օր առաջ կը խաղա վճռական ճակատամարտ տալու, եւ այդախոսվ կը սկսի եւ կը կերացնի հայրենիքի ազատության գործը:

Ո՞ւ, հայ ժողովրդի կոփէս պետք է պարունակած առաջ լի մենք մեր այժմյան դրության մեջ ուրիշ կերպ կովել չենք կարո՞ւ կանոնավոր պատերազմ. իսկական ճակատամարտը անհնար են մեզ համար»<sup>2</sup>:

համարո՞ւ։ Ավելի պարզ դժվար էր ասել։ Պարտիզանական կոիկը ինչունապաշտպանական կորիւն է։ Այն նաեւ, որպես փիլիսոփայություն կամ յարտակարական ուսմունք, բացասումն է համաժողովրդական գիւղած ապատամբության գաղափարի, ուստի նաեւ՝ նման ապատամբության մտածված եւ համակողմանի գործողությունների կազմակերպման։ Ժամանակի մտայնությունն էր սա. Անդրածիւն էլ՝ ժամանակի ծնունդ։ Մտայնությունը դառնալու էր եւ արդեն դառնում էր ոդքորոշում. ոդքորոշումն էլ՝ ծագալուն եւ տեւական գործելակերպ։ Իսկ գործելակերպը ոչ թե գաղափարն էր պարտավորեցնում, այլ ժողովորդի նկատմամբ կիրառվող բռնությունը։

Համենայն դեպս հնչակյանությունից դեպի Դաշնակցություն Արքանիկի տեղաշարժը օրվա համար անևկատ, անարձագանք մի քայլ է եղել: Նշանառումն ու արձագանքը հետագայում էր լինելու, երբ Անդրանիկ Օզանյանը ամբողջ հասակով Անդրանիկ էր: Այդ այն ժամանակներն էին, երբ նրան անդադար հետամտում էին անհամացայնությունն ու գծուությունները կուսակցությունների ու նրա գործիչների հետ: Որովհետեւ ևս միշտ նույն ձեւով հաստատ է մնացել սուլքանական լծից իր ժողովրդի արեւմտյան հատկածին ազատներու իր անփոփոխ ուխտին: Մինչդեռ կուսակցությունները այդ ընթացքում

1 Միջ. Վարանդեան. Հ. Զ. Դ.  
2 Հայոցակ. N 2. 1891. էջ 1:

2 ՀՐԱՄԱԿ. N 2. 1891. ԷՊ 1:

Եթե հայրենակիցների կյանքին ամեն օր ու ամեն ժամ սպառնացող վտանգը նրան կամա թե ակամա զենք վերցնելուն չմներ. Նա մէկընդմիշտ կգերադասեր քաղաքացիական գործունեությունն ու քաղաքական պայքարի ասպարեզը: Մրա վկայությունը նաև գրեթե մի քառակուսի մետր ծավալով մի փաստաթուղթ է՝ Շապինկարահիսարի բնակչության ողջ հայ զանգվածի դիմումը Կ. պոլսի ուսւաց դեսպան Նելիդովին:

Դրանից առաջ Սասունի բնակչությունը տեւական արյունահեղ կոիվ էր մդել սովորանի կանոնավոր բանակների դեմ: Անսկարագրելի կոիվ, հնչածն որ կարող է լինել Մայրերի, քույրերի, հայրերի ու որդիների կոիվը օրորոցային մանկան վրա հարձակված բազմապատկեր գորեղ ու գինված զորաբանակների դեմ՝ հանուն կյանքի Եւ գոյատեման:

Սիցամտել Են Ռուսաստանի, Ֆրանսիայի Եւ Անգլիայի դեսպանները Կ. պոլսում, որոնք 1895-ի մայիսին՝ սովորանին Ներկայացրել Են հայկական Նահանգներում բարենորոգումների ծրագիր: Բարենորոգումները սովորանին, որպես 1877—1878 թթ. որւս—թուրքական պատերազմում պարտված կողմին՝ պարտավորեցրել եր դեռևս 1878—ին Բեղլինում կայացած մեծ տերությունների վեհաժողովը: Սովորանը ցուց տալով, թե բարեփոխումներին համակիր է, հոչակել է այդ մասին Եւ ինքը էլ կարգվել բարեփոխումների գործի վերակացու: Շապինկարահիշարցիները դուսաց դեսպանին զարմացական գրում Են, թե որքան էլ օրենքները լավ լինեն, եթե դրանք «անտրամադիր կամ անհարմար» անձերի Են վերապահվում, մնում Են որպես մեռած տառ: Եկ զավեշտ Են համարում, որ բարենորոգումների ծրագրի կատարումը հանձնված է ո՞ւ—ու՞մ, իրեն՝ արյունաբերու սովորանին: Նամակի հեղինակների խնդրանքն է Եւ պահանջը՝ բարենորոգումների կատարման նկատմամբ բարձրագույն վերատեսուց նշանակել ոչ թե օսմանյան հպատակ կամ մինչեւ իսկ օսմանյան ծառայության մեջ գտնվող ուրիշ երկրացու, այլ բոլորովին անկախ մի եվրոպացու, որը այդ պաշտոնում կընտրվի «հաստատուն պայմանաժամով, եվրոպական տերությունների կողմից Եւ իր գործառնությունների համար միայն Նրանց առջեւ պատասխանատու կիլիմ»: Փաստաթղթի տակ հարյուրավոր ստորագրություններ Են: Վերջում Նօշ-վում է, որ խնդրագրի պատճենը ուղարկված է Կ. պոլիս, հայոց պատրիարքին, այս հավաստիացմամբ, որ եթե չինտեին սովորանի կառավարության ահաբեկում ու խստությունները, ապա խնդրագրի տակ կիլինեին ոչ թե հարյուրավոր, այլ հազարավոր ստորագրություններ:

\* Արակեց էլ՝ «Մայիսյան քարեւորութեան»։ «Մայիսյան ծրագիր» պրատիկայութութեանը։

Փաստաթղթի եզրափակման մասում կարդում էնք «Անդամք ծերակույտի ժողովոց» բառերը, որից հետո առաջինը «Անդրանիկ» ասորագրությունն է. Նրա բնորոշ ձեռագրով<sup>1</sup>: Սա երեւութ է: Անդրանիկը, երեսուն տարեկան աստղագործ արհեստավորը, աշխատավոր քաղաքացին իր քաղաքի ու գավառի բնակչության ծերակույտի անդամ է եւ առաջինն է ստորագրել սովորանի դեմ ուղղված բողոքի փաստաթղթի տակ: Մենք միայն այս գիտենք. իսկ ինչ չգիտենք մեր ձեռքի տակ փաստաթղթեր չունենալու պատճառով. մնում է, որ

Engls. Gambeson 25. Jan. 1875

*L*-*fl-**t-x*  $\rightarrow$

Went to see Mr. Smith, State Librarian, and obtained his  
assistance in finding the original title page of the book.  
He was kind enough to let me copy it.

244-9 44-9-28 Secy

1895 June 25 +  *George C. Jones*

Ծապիսկարահիսարցիների ղիմումը  
Եւ Անդրանիկի ստորագրությունը

1 Ուսում. Տ. Կ. պոլիտ. դեպարտամեն. զ. 517/2. գ. 3181. թ. 15:

**Կոնահենք:** Կոնահենք, թե Նա ինչպիսի եռանդով է աշխատել բնակչության մեջ, ինչպես ժողովներ ու ցուցեր է գումարել, ջանացել է, որ բողոքի այս տեքստը գրվի, որ այս ստորագրեն ինարակորին չափ շատ մարդիկ. Զանի դեռ սուլթանի տեղական լիազորները չեն միջամտել ու խանգարել ստորագրությունների բազմացմանը: Անդրանիկը բացատրող է ու քարոզիչ. Անդրանիկը կազմակերպի է Նա այս պահին գործում է քաղաքական միջոցներով. Նա արդեն քաղաքական պայքարի հունի մեջ է: Այդպես Նա կարող էր առաջ զեալ ու խորամուս լինել, զարգացնել խաղաղ, անզես պայքարի իր կազմակերպչական ձիրքը, հմտանալ հոետորական խորքի մեջ: Փաստաթղթի Վերին մասում, ստորագրությունների բազմության մեջ, ութ անզամ Օզանյան ազգանունն է. Օզանյան գերդաստանի զավակներ՝ Պետրոս, Ալեքսան, Սրապիոն, Սկրոտիչ, Կարապետ, Խաչատուր. Եղուարդ ու Եւս մի Անդրանիկ: Երկիրը Երկիր լիներ, պայքարը՝ ստվորականի նման. հարկ չէր լինի գենք վերցնելու. Եւ որդիներն ել կյանքի ու գործունեության ուրիշ ճանապարհ կնախընտրեին: Այսպես որ, զինավարժ մարտիկ եւ ուազմի գործի դեկավար գառնալը չի եղել Անդրանիկի փայփայած նպատակն ու տարերքը: Նորից ընդգետներ. Օզանյանների գերդաստանից ոչ մեկը ոչ զինվոր է եղել, ոչ էլ կամեցել է, որ իր գործը գենք կրելը լինի եւ կոիվների գործին վարժմէլը: Երբ սուլթանը արհամարհում էր ժողովրդի բոլորի ձայնը, չէր հարգում նրա դիմումն ու խնդրագրերը. Նույն այդ ժողովրդի ծոցից եւնում էին ոչ միայն ստվորական զբաղմունքի, այլև պայքարի ուրիշ ձեւերի մարդիկ: Ուստի փոխենք մեր պատմության վերնագիրը:

Բ Ճանապարհը տարրավ դեպի Ֆիդայական խմբերը

Անդրանիկին մտտիկ կանգնած հնչակյան ղեկավարը վկայում է, որ նա 18 տարեկանից է խմբերի մեջ եղել. Շապինկարահիսարում: Իսկ արդեն 1893-ին Սուրադ անունով հայտնի Ֆիդայի Համբարձում Բոյաջյանի հետ մտել է հալածիչների դեմ հերոսական դիմադրության արծվաբոյս Երկիր Սասունց<sup>1</sup>: Եվ հետեւ այս պենդան կապակցությամբ բորբոքվել է առաջնեկ Երկու հայ կուսակցությունների ինքնափրությունը: Թանի որ Անդրանիկը նախապես Հնչակի շարժուն է մտել, հնչակյանները նրա կյանքի վաղ փուլի գործերը իրենց կուսակցության են վերագրում եւ համարում իրենց նախաձեռնությունը: Իսկ դաշնակցականները, ընդհակառակը, Ալեքրանիկի վաղ օրերի

<sup>1</sup> «Հայությօ», Բ. 1927թ., №4; Levon U. Կիոնցը. Ալեքսակի: Եղբ եւ ինչպէս մարդ Խառնու, «Արքան», 3. 06. 1967թ.:

Տեսնելով զենք ձեռք բերելու դժվարությունները, հայդուկային խմբերի գործողությունների դիմաց կառավարության բազմապատիկ վրիժառությունը. Հրայրը հանգում է հայդուկային կոիվները դադարեցնելու եզրակացության: Փոխարենը առաջարկում է ժողովրդի ամբողջական զանգվածով տեւականորեն, հանգամանորեն ապստամբության նախապատրաստումը: Իսկ մինչ այդ նա անսրող արտահայտվում է խմբերը մինչեւ իսկ զինաթափելու օգտին, այլեւ նրանց գործը համարելով զենքի սոսկ տեղափոխում—ամբարումն ու բոլորին ապստամբության նախապատրաստելը. մինչեւ որ պայթելու ժամը հարմար լիներ եւ հուսալի:

Անդրանիկի համար Հրայրն այստեղ անհասկանալի էր ու անընդունելի: Բայց եթե Հրայրին կարող էին օժանդակ լինել գոյություն ունեցող թվաքանակով ոչ այնքան շատ մտավորական մարդիկ, հաղթական պայքարի տեսությանը տեղյակ անձինք, Անդրանիկին թիկունք էին կանգնում ոտքի ելած զինված ու անզեն երիտասարդները, մանավանդ Սասունի՝ ըմբոստության պատրաստակամ եւ մարտի ձգտող ոչ միայն ռամիկ ժողովուրդը. քաղաքների ու գյուղերի արիեստավորները. այլեւ իշխանավոր մարդիկ, ցածր ու միջին պատույանները, կրթության գործի մարդիկ, հոգեւորականությունը. դանակը ոսկորին էր հասել, թշնամին իր հարձակումներով դրդում էր ու մղում ինքնապաշտպանության, բանք այստեղ ու այստեղ մինչեւ իսկ հասցելով հակահարձակման: Եվ Անդրանիկը ըմբոստացած հրաժարվել է կատարել ձեւագործած պատասխանատու մարմնի այն պահանջը, որը ոչ միայն զինվելն էր, այլեւ զենքերը հանձնելը:

Ասել թե՝ Անդրանիկը անգեն, նույն էր, թե՝ զինաթափ: Հրայրը պետք է ուրիշ միջոց գտներ: Միջոցը հանկարծակիությունն է լինում, որը Սմբատը խորամանկություն է անվանում:

Սասունի Շենիկ գյուղում խաղաղ քուն էին մտել Անդրանիկն ու իր խմբի տղաները: Հենց այդ պահին էլ Հրայրն իր մարդկանց միջոցով անհետացնում է նրանց զենքերը:

Անդրանիկը ծանր է տանում կատարված փաստը: Նա հարգում էր եւ գնահատում Հրայրին: Բայց վճռական պահին կարող էր ընդհարման գնալ: Անդրանիկը նամակներ է գրում Սասունի տարբեր կողմում, գտնվող հայրուկապետերին, նրանցից ոմանց մինչեւ իսկ

ժողովի է հրավիրում եւ քննարկում փաստը: Հեղինակավոր մարդկանց այս տարակարծությունն ու գաղափարական տարանջանումը նոյնահան դատողությունների տեղից են տալիս խմբերում: Ճեղքում է նրանց միասնությունը, ովքեր տեղյակ էին այդ վիճակին. ոմանց հարում են մեկի, մյուսները՝ երկրորդի կարծիքին: Զինաթափ հայդուկները վիրավորված ու Նվաստացած էին: Կատարվածը չէին կարող կուլ տալ ու մոռանալ: Հայտնի է դառնում, որ զինաթափման լուրը հասել է կառավարությանը: Ահարեկված գյուղացիք սոսկում էին: Ի՞նչ էր լինելու վերը: Գտնվում են հաշտարար հեղինակություններ, որոնց Անդրանիկին հավաստիացնում են, որ զենքերը ետ կբերեն: Ժամկետ են նշանակում: Անդրանիկը մեղմանում է: Զենքերը. իրոք, ետ եւ բերվում: Վերագիտնելով մարտիկներին, Անդրանիկը նրանց հետ հեռանում է դեպի Գելիեգուզան մեծ գյուղը, համալրում, ընդարձակում է իր խմբի կազմը. որը հասնում է մինչեւ վարսուն հոգու<sup>1</sup>:

Սիայս Հրայրը չէր զենքը կար դնելու պահանջ դրել: 1894-ի Սասունի ինքնապաշտպանության օրերին ու դրանից հետո Կ. պոլսի դրսերկրյա դեսպանները կոիվների մեղմացման ու վերացման միջոցը նրա մեջ էին տեսնում, որ հայությունը հրաժարվի կովից, որ նրա զավակները զենք չվերցնեն ձեռքները: Արյունահեղությունների ժամին շատերին էր դա հուսալի թվում եւ համոզիչ կոիվ չի լինի. Եւ ամեն ինչ հաշտ ու խաղաղ կվերցանա: Բայց ժամանակ անգամ չի անցել եւ պարզվել է, որ դա կոչ է ոչ թե խաղաղության, այլ հայության կոտորումն ու բնաջնջումը հեշտացնելու: Սասունում այդ եղանակով պետք էր շուտափույթ խնդիրը լուծել, ուրիշ մի տեղ սկսելու համար: Փաստն այնքան ցայտուն է եղել, որ դեսպանները գուց թե անհարմարությունից կամ իրենց լիովին խայտառակ չանելու համար ետ եւ վերցրել իրենց խոսքը եւ լուրջան մատնել իրենց երեկո պահանջը: Այդ էլ չի մոռացել Անդրանիկը եւ իր ապամուռելուների հետ հանձնել է սերունդներին. «Ենց այդ ատենները. երբ օտարազգիք զենք կար դնելու մասին այլաբես կըսեին, հեռագիր եկավ, թե Բաղեց կոտորեցին»: Այս է, որ դեսպանները շտապել են հակառակն ասել. «Եթե զենքերը վերցրե՞ց...»: Սրանից հետո է լարված հրավիճակ ստեղծվել նաև Սուշի հայության համար: Այստեղ կարող էին կոտորածներ սկսվել: Կոահել է դա Ապրոն եւ Անդրանիկին. մի խումբ զինված մարտիկների հետ, ուղարկել Սուշ. ուր նրանք ստիպված են եղել տասնվեց օր արթուն պահապանի հերում գտնվել<sup>2</sup>:

Այսպես ընթացքում, իր հետ իրենց բախտը կապած մարտիկների, իր տասնապետության տակ կովել ցանկացողների թվի ավելացումով մի տասնյակը բազմատաս է դառնում, տասնապետը՝ խմբապետ:

1. Ս. Երիտեան, Խճ. Ժորժ. էջ 70-75. 2. Անդրանիկի ուշերժ. էջ 26-28.

Երեւում է խմբապետերն էլ զանազան են եղել: Աստիճանաբար Ներքին կարգ է դարձել, որ ամեն գյուղ իր խումբն ու խմբապետն ունենա, այսինքն՝ ամեն գյուղ հանկարծական պատուհասից պաշտպանվելու կամ Ներքին կարգապահական նկատառումներով հավաքական ուժ ունենա կիրառելու համար: Եվ եթե այս տեսակ խմբերին գյուղապահ անվանենք, մյուսներին էլ ճիշտ կիմի երկրապահ անունը տալ: Վերջիններս հասուկ հետևում էին իշխանության կազմակերպած հարձակումներից բնակչությանը պահպանելուն եւ նրանց հիմնական գործը կառավարության խորումներն ու գործողությունները կասեցնելն եր, նրանց հետ ուղղակի մարտերի մեջ մտնելու զանազան այն ձեւերով, որոնք կոչվում էին հայդուկային կամ ֆիդայական: Գործի ժամին, խմբերի այս պարտականությունների միջեւ անանց սահմանագիծ չի եղել, քանի որ խնդիրներն ու գործելակերպի ձեւերը վերջին հաշվով թելադրվել են դեպքերի ընթացքով ու ընույթով: Խմբերը միշտ չե, որ մնայուն, հաստատուն կազմ ունեն եւ կարող էին միայն մի գործի, մի խնդրի համար ստեղծվել եւ կոնկրետ այդ գործի ընթացքում էլ մի խմբապետ ունենալ: Խմբերը կարող էին գործել թե առանձին-առանձին, թե հարկ եղած դեպքերում, մի քանի խումբ միասին: Եվ այդ դեպքում կիմենին մի քանի խմբապետ միատեղ: Սան դեպքերում լինում եր, որ մեկն առաջ եր մղվում՝ որպես զեղանուր խմբապետ: Այդպես Անդրանիկը գենք բերելու վերադարձ ճանապարհին հիշատակում է «Խմբապետ» բառը, հիշում է Միջոյին, Սիմոնին եւ Վազգենին, որոնք խմբապետը են, եւ հանձնարարություններ է տալիս. քանից վկայակոչելով Գորգենին, որը ավելի լայն հրամաններ էր արձակում եւ որից որոշ է, որ նա, այսպես ասած, ընդհանուր կամ, ասենք. մեծ խմբապետ է: Ինքը, Անդրանիկն էլ, իր հիվանդության օրերին, Կծվակ գյուղում եղած ժամանակ, ճանաչվել է որպես հրամանատար-խմբապետ, որը տեղի մյուս խմբապետերին ցուցումներ է տվել եւ հանձնարարություններ. «Կանչեցի խմբապետը եւ գյուղի յոթը տասնապետերը», ասում է նա, «յուրաքանչյուրը հանեցի բարձր տանիքների վրա, որպեսզի հըսկեն»<sup>1</sup>: Եվ այդպես քանի նա գյուղում է, մարդիկ գործերով նրա մոտ են գալիս, իսկ ինըն էլ կարգադրություններ է անում խմբերին: Վերջապես, խմբապետ կամ տասնապետ լինելը ճակատագիր չեր: Ոչ թե նշանակելով եր, այլ դառնալով: Դառնալը մարդկանց տվյալ կազմում անձի կարեւորությամբ եր ու հատկապես կոնկրետ անհրաժշտությամբ: Եթե գործը խմբի հետ եր, ուրեմն տվյալ ընթացքում խմբապետ եր նա՛, որից խորհուրդ ու հրաման էին ակնկալում տասնապետերը: Բայց եթե եղած մի տասնյակ եր, ուրեմն՝

<sup>1</sup> «Անդրանիկի յուշերը», էջ 63, 87-91:

տասնապետ: Ուստի չպետք է զարմանալ ֆիդայական կոիվներին նվիրված հուշագրքերում ու գործերում սման ելեւէների հանդիպելիս:

Գորգենին մահից հետո Անդրանիկը պարզ ու որոշակի խմբի պետ է եւ խմբապետ: Նրա խումբը իր կազմով ստվար է, միշտ պահպան ու պաշտպանի դերում, հաճախ հարձակումների ենթակա ու կոիվների մեջ: Սա անտարակույս տեսանելի է: Զենքերը Հրայրի վերցնելու պատմությունից հետո, երբ եկավ Գելիեգուզան, նրա խումբը, Սմբատի վկայությամբ, 50-55 հոգի եր: Դա արդեն մեծ բազմություն եր, հետո չեր բոլորին մի գյուղում գտնելու եւ սննդի գործը հոգալ: Եվ խումբը նա ցրել, բաշխել է մերձակայքի գյուղերին, ինքը միայն, 10-15 հոգով, մնացել Գելիեգուզանում: Սմբատը յոթ հոգով ամփոփվել է Ալոճիկ գյուղում<sup>1</sup>: Բայց եղել է յուրօրինակություն. խմբերը, մեծ թե փոքր, եթե ինքնուրույն մն եղել, այլ ոչ բաղկացուցիչ, անկախ մարտիկների թվաքանակից, խումբ են կոչվել, հրամանատարն էլ՝ խմբապետ: Տասնյակն ու տասնապետն էլ մեծ խմբերի կազմից դուրս գալու կամ անջատ հանդես գալու դեպքում նույնպես խումբ են կոչվել ու խմբապետ: Զարմանալու չե, կամավոր եին, ինցնակամ ու գործի բերումով, այլ ոչ պետություն, քանակ եւ ի վերուստ կնքված հաստատված գորամաս ու հրամանատարություն:

## Գ. Հայդուկային կոիվների ընկերներն ու Ժամանակակիցները

Չունենալով պետականություն, ի մի բերված կարգավոր կենտրոն կամ դեկավարություն, տարբեր խմբերի հայդուկներն ու նրանց դեկավարները կապված էին իրար, ճանաչում էին եւ խորհրդակցում միմյանց հետ եւ փոխադարձաբար համաձայնեցնում իրենց գործությունները: Շատ բան դրանում դարձյալ պատահմունք եր ու տարերային, որովհետեւ երբեք էլ ուժերի համախմբան կազմակերպումն ու արդյունքը ցանկալի հիմքի ու բարձրության վրա չղրվեցին: Խնդրի նպատակային կողմը ոչ ոք չմշակեց, իսկ ոտքի վրա գործադրված շանքերը բավարար չեղան: Մինչդեռ սուլթանն ու նրա բանակը, ոստիկաննությունն ու լրտեսները, նրանց թեւ-թիկունք կանգնած բազմաքանակ սեւագործ աջակիցները տարածում էին իրենց մագիլները եւ ամենից առաջ գենքերն եին բազմապատկում, որ

<sup>1</sup> Ա. Եղիշեան, էջ 75:

այսուհետ կոտորածներն պատճի զանգվածային լինեին եւ դիմադրական շարժումը բնի մեջ անգամ չխմրվեր, այլ միայն առիթ ծառայեր ու պատճառաբանություն:

Սուլթանի այդ խորամանկությունը վաղ նկատեց Միհրան Թամադյանը: Համենայն դեպս, գոյն Սասունում, մարդակիզման մյուս կաթուածանությունը բնակչները այդպես գտնեին նրան: Ճիշտ է, նա զենք չուներ եւ երեք չեր կրում: Եվ դա պատճի լավ: Այդպես նա ազդեցիկ էր ու տապակորիչ խոսքի ու մտքի մարդ էր: Նրա շեշտին, համոզչությանը, նրա ազդեցիկ կեցվածքին զենքը կարող էր բիծ լինել ու թուլացնող: Նա սոցիալիստ էր, նորածագ Սոցիալ-ռեմոնտարա հինչակյան կուսակցության նորապասկ քարոզիչ: Նա ուսուցիչ էր եւ գաղափարական մարտիկ ու մարտնչող, բայց ոչ երեք զինվորական:

Թամադյանի անձնը, անձն /ու գործը հայտնի էին թե սուլթանի իշխանության մարմիններին, թե Կ. առևում գտնվող դեսպանատերին: Սուլշի ուսաց հյուպատոսը Կ. պոլսի իր դեսպանին 1893-ի հոկտեմբերի 5-ին հայտնում էր, որ Թամադյանը եռանդուն քառոզչությամբ է զբաղված Սասունում: Նա հայոց դպրոցի ուսուցիչ է, ասվում էր որպես կենսագրական ծանուցում, երեք տարի առաջ Կ. պոլսից աքսորվել է Մոլշ, որտեղից հայերին «ապստամբության կոչ է անում ընդդեմ թուրքական կառավարության, եւ նրա քարոզչական բացատրությունների ազդեցությունը գնալով իրեն զգացնել է տալիս»: Հյուպատոսը այս համոզմանն է, որ Թամադյանի Սասուն գալը լրջորեն նպաստել է այստեղ դրության քարդացմանը, որը նշանակում է, թե Է՛լ ապելի է բռբրգվել հայերի իշխանապաշտպանական եռանդը<sup>1</sup>:

1893-ի հոկտեմբերի թուրքական իշխանությունները Թամադյանին ձերբակալելու հրաման են արձակել, որը հաջողացնելը նրանց համար մի մեծ դժվարություն չի եղել:

Իսկ հրավաքի՝ է արդյոք հյուպատոսը դեսպանին գրելով, թե Թամադյանը ապստամբության է կոչվէ: Ըստ հյուպատոսի, ապստամբության կոչն այս է, որ դպրոցական ուսուցիչը իր հայրենակիցներին ասում է, թե թուրքական իշխանություններին հարկ մի· մուծեք, քանի որ դուք հայերդ հարկ եք մուծում նաեւ քրդերին<sup>2</sup>: Հարց է ծագում՝ քանի կտոր պետք է լինեին հայերը: Եվ մի՛թ հարկ չմուծելու կոչը եւ բուն իսկ հարկ չմուծելը արդեն ապստամբություն է, այս էլ, եթե մարդիկ արդեն մի երես իրենց հարկը մուծում են:

Թամադյանին շատ անգամներ է հանդիպել, լսել Անդրանիկը: Երկու տարով էր ընդմենը Թամադյանը մեծ Անդրանիկից: Բայց ֆիդայու հարգանքը ուսուցիչ նկատմամբ տարիթից չեր, այլ նրանից:

1 ուսում գ. Կ. պոլսի դեսպանառու գ. 517/2, գ. 3176, թթ. 3-7: 2 և առ. թթ. 12-14:

որ նա իրոք ուսուցիչ էր, Ե՛ւ ուսուցանող, Ե՛ւ ուսանելի:

1888-ից արդեն Թամադյանը ինքնապաշտպանության գաղափարն էր առաջ մղում: Նա Մուրադի հետ միատեղ ուժերը պահպանելու, գումարելու եւ բազմապատկելու քարոզն էր կարդում, գտնելով, որ հույսը սուսկ ֆիդայական խմբերի, թեկուզեւ քաջերից քաջերի վրա դնելով չի կարելի սուլթանյան զրահապատը ետ մղել. Էլ ո՛ւր մնաց փշուն ու դեն շպրտել: Ամեն քայլափոխի, քրդերից էր թուրքերից ամեն ոք, պաշտոնատար թե նրան ենթակա անպաշտոն, հանձնարարությամբ թե կամովին կուզենար մարդկանց խառնիճաղանց բազմության մեջ զանազանել Թամադյանի լայնեղու գլխարկն ու սեւաթուր ակնոցները. ձեռնափայտն ու փողկապը, որեւէ կերպ իմանալ նրա տեղը եւ հապճեպով մատենի նրան, ոստիկանության ձեռքը գցել. Մեծ վարձ կստանար եւ վերադասի պատվին կարժանանար: Պատկերացնել է պետք, թե ո՛ր աստիճան պետք է ազդեցիկ եղած լիներ Թամադյանը, որքան բարձր ու գուցե թե ահազդու հեղինակություն, որպեսզի Սասունի բնակչության 1894-ի հուլիս-օգոստոսյան դիմադրական ընդվզումը ժամանակի դիվանագիտական բացատրություններում կապվեր նրա անվան հետ: Փաստաթղթում այսպես է, քուրդ ցեղապետերից Դերվիշ աղան, անցյալ տարի, 1893-ին բռնել եւ թուրքական իշխանություններին է հանձնել Թամադյանին, եւ դա բավական է եղել, որ Սասունի բնակչությունը ոտքի ելնի եւ ապստամբի<sup>3</sup>:

Նաեւ բանաստեղծական ջունչն էր նրա քաղաքական մարտի կոչող փիլիսոփայության խորքում: Այդ այս Թամադյանն է, որի գրչին են պատկանում Սասունի՝ ծեր ու մանուկ բնակչության՝ «Տալվորիկի կտրիճը» սիրված երգի բառերը.

Տալվորիկի զավակ եմ դորդ,  
Քաղցու պես չեմ թուլամորք,  
Սարի զավակ, քարի որդի,  
Հին քաջ հայոց եմ մնացորդ:  
Երբ իմ աչեր բացի աշխարհ,  
Ազատ տեսա մեր սարն ու քար,  
Մինչեւ փակեմ աչքս ի խավար,  
Պիտ չկոխե հոս ոտք օտար...

Հնչակյան կուսակցության կյանքից անբաժան գործիքը իր մասնակցությունն է բերել նաեւ նրա վերակազմությանը, որը եղավ 1896 թվականի լոնդոնյան համագումարում: Հետագայում նա եղավ հիմնադիր եւ խմբագիր մի շարք թերթերի: 1919-1922 թվականներին

1 և առ. թթ. 18-21:

ազատագրական կովի ոգեկոյեց Կիլիկիայի հայությանը. ինքն է դառնալով 1920 թվականին Կիլիկիայի անկախության եւ Կիլիկիայի հայկական հանրապետության ազդարարը: Երկար տարիներ նա եղավ հայոց կենսամարտի մասնակիցը. իր մահկանացուն կներկով 1945-ին, կյանքի ութսուներկուերորդ տարում<sup>1</sup>:

Եկ այսպես. ֆիդայական-ինքնապաշտպանական շարժման երկու Նշանավոր հենախուներ՝ Ակրտիչ Սահակյան (Ապրո) եւ Միհրան Թամայյան: Նրանց կողմին. նույն շարօնում է վերեւում քանից հիշատակած Արաբոն: Գրականության մեջ նշվում է միայն, որ նրա անունը Առաքել է. չտալով ոչ նրա ազգանունը. ոչ էլ ընտանիքի ու հարազատների մասին որեւէ փաստացի տեղեկություն:

Արաբոն նույնպես Թամայյանի գործընկերն էր: Դարձյալ մեկը՝ զաղափարական ու քարոզիչ, մյուսը՝ ոպազմիկ էր մարտավար:

Կասկած չի հարուցում այն, որ Արաբոն իր մարտընկերների հետ գործել է Մուշ եւ Տիգրանակերտ տանող ճամփաներին. որպես հետախուզ եւ թշնամիների Վրահասի ահազանգող. Նրանց ընթացք կաշկանդող կամ շեղող: Միաժամանակ հայ աղքատներին օգնելու եւ հայ կտրիճներին գինելու քայլեր է կատարել: Հսեռները. իրշում է Անդրանիկի ընկեր Սմբատը. Կանի ծովափնյա քաղաքներում զանազան աշխատանքներ է կատարել. ամառները նվիրվել բնակչության ինքնապաշտպանության կազմակերպմանը: Նրա գործունեության սկիզբ համընկել է գենքի ամենասուր ժամանակներին եւ առաջիններից մեկն էլ նա է բացել Կովկաս տանող ճանապարհը: որպես գենքի հայթայթման եւ այնտեղից ապահով Երկիր Բերելու ուղի: Եղել է նա Կարսում. Թիֆլիսում. ուր կապվել է Դաշնակության կովկասյան ղեկավարության հետ եւ նրա հետ բանակցել. միջոցներ է մշակել խմբերը գինելու վերաբերյալ<sup>2</sup>: Պատահաբար չեր 1893-ի հոկտեմբերի 5-ին Կ. առլիս ոուսաց դեսպանին հեղած իր գեկուցագրում Մուշի հյուպատոսը Թամայյանի անվան կողքին հիշատակում Արաբոյին եւ պատմում նաեւ նրա գործերը: Նրանք միասին են եղել Տալվորիկ գյուղում: Բացատրել են ու կազմակերպել.

<sup>1</sup> Հայաստանի սու հիմքեան կուսակցութեալ. Դ. 1962. էջ 135 եւ այլէ: <sup>2</sup> Ա. Եղի-



ԱՐԱԲՈ

եւ այլեւս ամբողջ գյուղի բնակչությանը հարկահան հալածիչների դեմ մարդկանց արժանապատվության ըմբոնումն է ըմբոստացրել:

Որպես առաջիններից մեկը, ինչպիսին էր Եւ Ապրոն, դեռ 1880-ական թվականներին Արաբոն խումբ է ունեցել եւ խմբապետ է եղել<sup>3</sup>: Սկզբնափուլում խմբերի ձեւավորումը ոչ գրագրության հետ է աղընչվել եւ ոչ էլ գրավոր որեւէ հետք թողել: Այս պատահիկ տեղեկությունները քաղում ենք Կ. առլիս ոուսաց դեսպանատան գրագրություններից, որոնք պահպում են Մոսկվայի համապատասխան արխիվում:

Տասնինգ մարտիկների հետ միասին Արաբոն քաղաքական հանցագործ է որակվել եւ մեղադրվել 1890 թվականին Երկու քուրդ սպանելու համար. երբ քուրդ ցեղապետը փորձ է արել Վարդենիս գյուղում առեւանգել հայկական օջախի նորապսակ հարսին: Դատավճուից հետո Արաբոն կարողացել է Երեք ընկերների հետ փախչել՝ թուրքերի գինյալ հսկողության տակ իրենց Մինոպ աքսորելու ճանապարհին: Այստեղից փախուստ տալով, Վերադարձել է Մուշ. սպանել այն մատնիչներին, որոնք իրեն թուրքերի ձեռքն են գտել. եւ ապա Երկար ժամանակ թաքնվել է ու Մուշի գավառում ծայտալ գյուղից անցնելով. հայ բնակչության ըմբոստացման ուժերն է ի մի բերել: Վարդենիչում ոստիկանները նրան ճանաչել են. փորձել են բռնել. բայց դա. մի գինվոր էլ գոհ տալով. նրանց չի հաջողվել: Արաբոն թաքնվել է մոտակայքի սուրբ Կարապետ Վանքում, որի պատճառով էլ հշիսանությունները ձերբակալել են Մուշի Վարդապետ Ներսէս Խարախանյանին. որը, մատնության համաձայն, իմացել էր զաղտնի և պահել Արաբոյի որտեղ գտնվելը: Հետո Արաբոն հավաքել է տասնյոթ կտրիճների. հագցրել նրանց սուլթանյան բանակի զգեստ եւ հիմա էլ այդ ձեռն է. շրջագայելով Մուշի մոտակայքի Խնուսի եւ Բոլցանի գավառներում, հաշվեհարդար տեսել հայ ժողովրդի թուրք եւ քուրդ դահիճների հետ<sup>4</sup>:

Տալվորիկ գյուղում, որը նույնպես իրեն թաքստոց էր ընտրել Արաբոն, ապրում էր եւ գործում Թամայյանը: 1893-ի հունիսին հրաման է տրվել ձերբակալելու թե՛ Արաբոյին եւ թե՛ Թամայյանին: Արաբոն դարձյալ ճողովրել է ծուղակից եւ ձերբակալվել է միայն Թամայյանը, որի մասին արդեն ասել ենք վերեւում:

Արաբոյին եւ նրա խմբի տղաներին ձերբակալելու համար Տալվորիկ է ուղարկվում զափթիների (հեծյաների) գինված մի ջոկատ, որին Սասունի հայերը դիմավորում են այսպիսի թշնամանքով. որ նա այլեւս չի կարողանում մոտենալ գյուղին: Իշխանությունները նորից, այս անգամ ավելի մեծացանակ, զորք են ուղարկում Տալվորիկ:

<sup>1</sup> Հ. Ա. Պողոսյան, Սասունի պատմություն. Ե. 1965թ. էջ 3-7: <sup>2</sup> ուստ. ֆ. Կ. առլիս ոուսակության պատմություն. թ. 517/2. էջ 3176. թթ. 3-7:

Բնակիչները դիմավորում են քաջար եւ մեծ թվով զոհեր պատճառելով. հարկադրում են հեռանալ իրենց գյուղի սահմաններից: Կերջապես տայպորիկցիներին ընկճելու համար ուղարկվում են երգնկայից 19-րդ, Սուշից՝ 22-րդ հեծալ գընդերը, Երգումից՝ 4-րդ կորպուսի 25-րդ հետեւակային գնդի առաջին գումարտակը եւ երկու թնդանոթ: Բոլորը մի անգեն գյուղի դեմ: Բայց, մեկ է, ոչ մեկը չի կարողանում մոտենալ գյուղին նրա անմատչելի լինելու պատճառով. թեեւ բավական ժամանակ չորս կողմից պահում են պաշարման մեջ: Կերջապես, օգոստոսին, Տավորիկ ուղարկված զորքերի հրամանատարը, ուրիշ եւթ չգտնելով, փորձում է բանակցությունների մեջ մտնել իրեն իսկ՝ Արաբոյի հետ, տեսակցության համար. սասունցիների պահանջով, Նախապես պատաստ ուղարկելով չորս Նշանակոր քողի: Հանդիպումը կայացել է, բայց հայտնի չի դարձել. թե ինչ են պայմանավորվել: Համենայն դեպս զորքերը Սասունից հեռացել են:

Ահա այսպես գործ է Սուշի ուսաց գլխավոր հյուպատոսը իր դեսպանին: Չորս խմբերը սկզբում մի հոգու կամ մի խումբ մարդկանց դեմ, իսկ ապա բազմաքանակ զորամասեր՝ գյուղի խաղաղ ընակչության դեմ: Փոքրամասնության ուզածը ապրելու հրավունքն է, մեծամասնությանը՝ այդ պահանջն իսկ ընում խեղդելը: Մրանից հետո Արաբոյի օրինակը դառնում է քաջության դպրոց. նրա անունը՝ սրբություն: Թուրքական հետաքննող հանձնաժողովը Երկար ժամանակ նիստեր է գումարում եւ 1895-ի տարեսկզին Եզրակացնում. որ Սասունի հայ բնակչության ըմբռստացումը «Սուշում եւ Սասունի սարերում տարգած հեղափոխական պրոպագանդայի արդյունքն է», այդ հեղափոխականների թվում հիշատակելով Թամադյանի եւ Արաբոյի անունները<sup>1</sup>:

Խմբակորիվների՝ օրերին տպավորիչ է եղել եւ ազդեցությամբ մնայուն Սերոբը. ազգանունով Վարդանյան, որը հայտնի դարձավ որպես Աղբյուր Սերոբ: Նա բարիս բուն իմաստով հայոց օջախների պահպան էր. թուրք-քրդական զավթիչների՝ դեպի հայկական բնակավայրեր տանող ճամփաները պատեշող: Եթե ի մի բերենք եւ թվարկենք տպագիր ու անտիպ հուշերում եւ փաստաթղթերում նրա՝



ՍԵՐՈԲ

կոիվներով եղած բոլոր վայրերի անունները, ապա կստացվի Սասուն լեռնաշխարհի հայ բնակավայրերի ծավալուն քարտեզը: Նա հասնում էր այստեղ, որտեղ զինված զոհերն ու թուրքերը գնում էին հայերի դաշտերն իրկիցելու. դաշտերից ու զոմերից ոչխարեների հոտն ու կովերի նախիրը փախցնելու:

Եղել է այսպիսի մի կոիվ: Ամառվա կեսին երեսուն քուրդ հեծյալներ հարձակվում են. որպեսզի թեղուտ գյուղի արոտավայրերից հրեց կողմը քշեն հայերի ոչխարեների հոտը: Հայտնվում է Սերոբը իր չորս ընկերներով: Երկու կողմն էլ զինված: Կոիվը տեւում է մինչեւ լուսնյակ գիշերվա կեսը: Թրդերը զոհեր ու վիրավորներ են ունենում. իսկ ինչ հայ քաջերը մարտնչում են մինչեւ ուժասպառ թշնամին անհետանում է իր դիրքերից<sup>2</sup>:

Սերոբը Տարոնի Ախլաթ գավառի Սոխորդ գյուղի հայտնի գերդաստանից էր, որ Խչենց էր կոչվում: Չորս եղբայրների մեջ նա կրտսերն էր: Ընդամենը մի տարով էր մեծ Անդրամիկից: Նա զահել տարիքից ընդհարվել է մարտերի մեջ և մտել տեղական կառավարիչների հետ, որոնք հետամուտ են եղել նրան ձերբակալելու: Ստիպված է եղել նրանց հետ տեւական հակամարտության մեջ լինել. մինչեւ որ կյանքի քսանվեցերորդ տարում հարկադրված թողել է գյուղն ու գավառը եւ գնացել պատսպարվել է Կ. պոլսում: Նորից հետապնդումներ: Գնացել է Ռումինիա, բնակություն հաստատել Սուլինա քաղաքում, այստեղից էլ անցել սահմանը, եկել Բարում: Նրա նպատակն էր թերակղու հակառակ ծայրից մտնել Երկիր: Ծանոթանալով գենքի աղբյուրներին, 1894—1895-ի ձմռանը, երբ Սասունի մարտերի հրդիները հանդարտվել էին, գայիս է հայրենի Ախլաթ: Նա են քարոզիչ էր, են մարտիկ, են մարտիկների հավաքառու, են խմբեր ձեւավորող ու խմբապետ: Բնավորությամբ մեղմ էր, մտքով՝ ազդող ու աղինքնող: Երբ արդեն ձուլվում էր կովի գաղափառը, հմայիչ ու հեղաքարո Սերոբը դառնում էր կտրիճ ու աժդահա: Երբ արդեն երեսունը լուցած այր էր նա, հայտնվում է նրա կյանքի սիրեցյալ ընկերուի Սոսեն՝ Ֆիդայիների հոգատար ջույրն ու խնամողը, հարկ եղած դեպքերում նաեւ մարտական ընկերը: Ահա թե ինչու Սերոբ անվանը ժողովրդական տարերքով համակցվել էր Աղբյուր անունը՝ աղբյուր խիզախության, աղբյուր սիրալիրության, աղբյուր ջերմության եւ արդարության... Ախլաթ գավառի ողջ մարտական դիմադրական ուժը խմբված էր Սերոբի շուրջը. որի շնորհիվ գավառը վեր էր ածվել Ներխուտող ուժերի ճանապարհ փակող անանց ամրության<sup>2</sup>

<sup>1</sup> Ա. Նորեան. Դրվագներ.... էջ 324—326: <sup>2</sup> Ըստ «Աղբյուր Սերոբ և Գերո Զալու» գրքի (Կատալ. 1933թ.) Աղբյուր Սերոբի պատմության աշխատ մասի՝ էջ 5—20:

Մինչեւ Ե՞րբ սկսում են հարցնել սովորանին շոջապատող մարդիկ, մինչեւ եթք պետք է նրանց երկոր տիրակալը լինեին, իսկ մի Աղյուր Սերոք հարցականի տակ զներ իրենց ազատ, անկաշկանդ գերիշանալոյնը եւ երկոր այդ մասում ճամփաները փակեր իրենց առջեւ:

Իր կոհկմերի ընթացքում Անդրանիկը Սերոբին հանդիպելու, Նրա հետ գործակցելու շատ առիթներ է ունեցել: Եկ հուշերի հր գորում նկարագրել է թե՝ լսած եւ թե՝ իր մասնակցությամբ եղած բազմաթիվ կոհկմերից նաև հետեւյալ պատմությունները, որոնցում կենտրոնական դեմքը Սերոբը է:

1896-ի ձմունը Սերոբը, որ Ախլաթի գյուղերից մեկում էր, լուր է ստանում, թե իրեն մատնել են եւ ոստիկանության զինված ջոկատը գալիս է իրեն բուելու: Լուրը տեղ հասնելուն պես հայտնվում են 25 ոստիկաններ ու նրանց հրամանատարը: Հրացանն ուսն առնելով, Սերոբը միայնակ մարտնչում է եւ Նեմրութ սարն ի վեր անհետանում թշնամու աչքից: Մյուս անգամ Սերոբը փոքրաթիվ իր խմբով, 1897-ի գարնանը, մարտի մեջ է մտնում քանակինզ ջուրդ զինվորների հետ, որոնք Կծկակ գյուղի ոչյարներն են եկել թալանելու: Ջոդերը թողնում-հեռանում են, թալանի ախորժակը կոհկրդում: Զանիցս Սերոբը, Գուրգենը, նրանց հետ նաև Անդրանիկը ու մյուս հայուկները հետամտող ջուրդ ու թուրք զինվորներին կամ քաշել են դեպի սարերն ի վեր եւ ձորերն ի վար. կամ ել հարկադրել են, որ փախուստ տան դեպի վեր ու վար: Միասին, Սերոբի հետ, բարձրացել են Նեմրութի կատարը, դիտել են վերեւից թշնամու ուժերի չափն ու դասավորությունը, ստիպված են եղել գիշերները անցկացել երկնաեր բարձունքներում, մինչեւ որ լրացուցիչ ուժեր են ստացել, եւ կովի հարմար պահ է ստեղծվել: Հետո չի եղել եւ այն, որ Սերոբի հետ հրացան ու փամփուշտ են տեղափոխել: Միասին հայուկների ժողով են գումարել եւ ծրագրեր մշակել<sup>1</sup>: Սերոբը իր խմբով զարնվել է զինվորների թվով ու զենքով քանից առավել կանոնավոր գործերին: Մեծ հոչակ է հանել Բաբշենի կոհկմը նոյսանուն գյուղի մոտակայքում՝ 1898-ի հոկտեմբերին: Նկատել է Սերոբը զորքի մոտենալը, շտապ կարգադրել է տղաներին դուրս գալ հարթությունից, բարձրանալ սարն ի վեր եւ դիրքոր գրավել: Երկու ժամ հրացանաձգությունից հետո թշնամին զգում է, որ Ներքեւից վեր կրակելով արդյունք չի լինի: Նրան օգնության են գալիս թնդանութերը: Բայց վերեւից տեսանելի են հրետանավոր զինվորները, սկզբում դրանց հրամանատար Նշանառուին, ապա եւ մի քանի կրակող շարքայինի լուցնելուց հետո թշնամու կրակոցները դառնում են ապարդյուն: Կոհկմ ավարտվում է երեսյան մութին, եթք թշնամու

<sup>1</sup> «Անդրանիկի աշխարհ», էջ 95, 96, 108-111, 124:

երեսունի դիմաց մեկ զոհ տված հայերը բարձունքի անվատելի եգերքով հեռանում են: Թուրքերը կարծելով, թե ինչպես իրենք, մուրի պատճառով են Վերեւիններու դադարեցրել կոհկմը, միայն առավոտյան են տեսնում, որ Խմբին «Ճեղողից բաց են թողել»:

Հայ քաջորդիների կովի լուրը տարածվելով, ամորանք էր բերուաթուրի թե բանակին, թե հշխանություններին: Անում են, թե դրանից հետո է, որ մտերիմների համար Աղյուր Սերոբը դառնում է նաև Սերոբ Փաշա, որպես նրան կոչում են նաև թուրքերը: Փաշան ոչ թե շարքային զինվորի, այլ հրամանատարի պատվելի կոչում էր, որին նրան արժանացրին իր քաջության եկ հմտության համար, որքան եւ ինքը չուզենար եւ դեմ լիներ նման կոչման. ինչ է, ասել է նա, իմ կոհկմ փաշաների դեմ է, իհմա ես պետք է Փաշա կոչվեմ:

Զանի որ Փաշա էր, Բաղեցի վալին ել հարմար է գտնում նրա հետ իր մարդկանց միջոցով բանակցել եւ խմանալ, թե ինչն է նրա ուզածը, որ խաղաղի եւ վերջ տա կոհկմերին: Ինչը պետք է լիներ Սերոբի պատասխանը՝ թողնել, որ իր ժողովուրդը խաղաղ ու հանգիստ ապրի<sup>2</sup>: Ինչ լինելու բան էր դա մեծ մարդասապան սուլթանի գենքի ներք:

Բարձենի կոհկմը բարձրացրեց Սերոբի հեղինակությունը Խմբաթուրի մեջ ու հայոց աշխարհում: Սուլթանից մինչեւ Վերջին թօւրք պաշտօնեան պարտը են համարում սրբել իրենց երեսից: Բարձենի կովի հասցրած ամոթանքը եւ Սերոբին, ինչ զնով ուզում է լինի, շարքից հանել: Կար Նենգությունն ու խորամանկությունը: Դաշնակցության «Ղորշակ» թերթը Սերոբի մասին 1901-ին գոել է. «Հայերը կորինենին Սերոբի անունը եւ անոր համբավին թեւեր տված, հրաշագործ սուրբի պես կը պաշտեին զայն»<sup>3</sup>: Սասունում, եթք գործում էր Աղյուր Սերոբը, Ֆիդայաատերից ամենից ավելի նշանակությունը, ըստ եղած մի համոզմունքի, Սերոբն ու Գուրգենն են<sup>4</sup>: Եկ առավել պատկերավոր թնութագիր. ախլաթից Սերոբը «հայ հեղափոխական դյուցանավելի ամենեն հմայիչ դեմքերն մեկն ե, որը կը իհշեցնե հելլեն դյուցանավորության բապտիստները եւ բոլոր ապստամբ ազգերու լեգենդական հերոսները»<sup>5</sup>:

Գուրգենի մահից հետո Սասունի ժողովուրդը Սերոբի հետ է իր հույսները կապում եւ նրա կրա է բեւռում իր ուշադրությունը<sup>6</sup>:

Սերոբը կոհկմերի մեջ էր միրճակը իր եղայրների՝ Միտի էւ

<sup>1</sup> «Անդրանիկ Սերոբ և Գուրգեն Զայնից», Արտկ., 1933, էջ 26-31: <sup>2</sup> «Դրոշակ» N. 2, 1901 թ., էջ 38-40: Տառ անձ և առ. N. 3, էջ 56-57, N. 4, էջ 72-73, N. 5, էջ 88-89, N. 6, էջ 119-121: <sup>3</sup> Ա. Սասունի, «Պատմություններ անդրանիկ Զայնիցի», Պ. 1, 1957թ., էջ 593, 605-606:

<sup>4</sup> Զ. Լազենի, Իրվան պարունակությունը, էջ 294-298: <sup>5</sup> Ա. Վարանեան, Հ. Զ. Դաշտակը, թագավորությունը, էջ 294-298:

Չաքարի հետ, Նրանից անբաժան էին, թե կովի, թե խաղաղ ժամանին, կինը՝ Սոսեն եւ որդին՝ Հակոբը: Ողջ գերդաստանը, թե հայրը, թե հորդեբայրները, թե մոտ ու հեռավոր մյուս ազգականները, բոլորը Նրա հետ էին, որպես ինքնապաշտպանության գինվորներ ու այս կամ այս կերպ, ջուրդ ու թուրք հարձակվողներին սաստող: Անդրանիկը իր հուշերի գրքում գրել է. «Ախահեն» Սերոբը, իր կինը, եղայրիները, տղան եւ 4-5 գինվոր գնացինք Սպաղան»\* («Անդրանիկի յուշերը», էջ 151): 1898-ի ձմռանն է եղել, Նրանց հանգրվանը՝ եղել է ոչ թե ընտանեկան տաքուկ անկողինը, այլ գյուղերից հեռու մի վանքում կամ բարեկամի ու թշնամու աշքից հեռու ապաստարանը: «Չմեր կես եղավ. — պատմում է Անդրանիկը: — Սենք կը թափառեինք զանազան գյուղեր, փորութիւն կշտացնելու համար...»

Չմեր անցած եր' Սերոբին եղավ մի զավակ: Գարնան մոտերն եր, անունը դրին Սամսոն: Կնքահայրը եղավ սպաղանցի Մակարի եղայր Խաչոն:

Ինչպես ըսի, փող չըկար, ուտելիք չկար»: Եվ սա է Ֆիդայական կյանքի ոռմանտիկան՝ թե առօրյա տառապանքը, թե այն սխրանքը, որից պատմագրի մեջ բացառիկ հերոսության էջեր են ծնվում:

Կապված եր Անդրանիկը Սերոբի հետ: Կիսում եր Նրա թե՛ տառապանքը, թե՛ սխրանքը, որը եւ հոգս եր եւ ուրախություն, բայց ոչ երբեք՝ Վիշտ: Վիշտը այս կյանքն էր, որը Նրանց գենքի եր կոչել եւ լեռները բարձրացրել: Եվ տառապանքը, որը ամենօրյա եր ու անընդհատ, Նրանց համար հենց այն եր, ինչը կատարյալ ուրախությունն է ու երջանկությունը: Այդ պայմաններում ուրիշ երջանկություն չեր կարող լինել: Ի՞նչ եր ուզում ասել Գուրգենի զոհվելոց հետո Սերոբը, դիմելով Անդրանիկին, թե «Տերանք մեռան, մենք մնացինք. սրանից վերջ մենք գործեր պիտի շարունակենք», եւ ասել է հենց այն ժամին, երբ պարենը սպառվել եր եւ առջեւում էլ հայտնի չեր, թե ինչ է սպասվում. «Ոչ հաց, ոչ ուտելիք: — Վերիիշում է Անդրանիկը Սերոբի ասածը: — Պետք է Դաշտ գնալ»: 17 հոգի հանձնեց ինձ Սերոբը, եւ ես Դաշտ պիտի գնայի: Դաշտը եւ բարձունքի ստորոտն եր, հարթավայրը, եւ այն գյուղերից մեզը, որը Ֆիդայիների կարիքն ուներ եւ որտեղ, ըստ լուրերի, սովորական գործ գնալու եր Խուզարկության, ասել եր՝ թե թալանի ու ձերքակալության, եթե ոչ ավելի (էջ 152, 159): Եվ զորք, 250 գինվորներ, եկել է, դարան մտել գյուղերից հեռու, սպասելով հերթական արշավի հարմար ժամի: Այդ պահին Անդրանիկի խումբը հասել է Վարսուն հոգու՝ մոտակայի տարբեր գյուղերի երիտասարդներ: Ի՞նչ կարող էին անել:

\* Զուտեր Սառում:

Անդրանիկը եւ Սերոբը նստել են խորհրդի: Անդրանիկը առաջարկել է Նախահարձակ լինել, քանի որ իրենց դիրքերը հարմար են. իրենք՝ Վերեւում, թշնամին՝ ցածում, եւ փախուստի ճամփան էլ՝ փակ: Սերոբը չի համաձայնել, գտնելով, որ քաղաքական իրավիճակը իրենց օգտին չէ: Եռեք օր դիմաց կանգնել են զորքն ու խռումքը: Ի Վերջ թուրքերն իրենք են զիտել եւ թողել, հեռացել: Նրանց հեռանալուն պես կենտրոնից նոր զորք է ուղարկվել, այս անգամ՝ 300 հոգի: Անդրանիկը նորից վճռել է Նախահարձակ լինել: Իրենց դիրքը հարմար է, թշնամուն՝ ոչ. իրենք տեղանքը լավ գտնեն, թշնամին մինչեւ իսկ անտեղյակ է ուրաքանչ ու դասավորությունից: Սերոբը դարձյալ դեմ է եղել: Նա նայել է թիկունքին, գյուղացին խուսափում էին կովից ու արյունահեղությունից: Նրանք մինչեւ իսկ հրաժարվում են սեռնդ ուղարկել ֆիդայիներին եւ դա այն դեպքում, երբ ուտելու ոչինչ չեր մնացել: Սերոբը դարձյալ համառում է՝ թիկունքը պատճառ բռնելով, թե՛ւ Անդրանիկը մեկնաբանում է, թե Սերոբի հետ կինն է նաեւ եղել. որը Նրան զգուշացնում էր կովի զաղափարից:

Անդրանիկը խոստովանել է, թե ինչ լավ հաս է տվել Սերոբն իրեն: Սարհամիշում, երբ ինը կարող էր ոտաքորիկ մնալ, Սերոբը տրեխ է կարել եւ հազցրել իրեն. «Մինչեւ Վերջին շունչը ինձ իրեն զավակեն պի ավելի կը սիրեր». — Իիշել է հետագայում Անդրանիկը: Կարդում ես այս տողերը եւ մտածում. ինչո՞ւ են, ապա, Անդրանիկի հուշերի խմբագիրը կամ հրատարակիչը տողատակում գրել, թե իբր Անդրանիկը բարյացակամ եւ ուղղամիտ չէ Սերոբի նկատմամբ: Մինչեղե բերված խոսքերը, առավել եւս դրանից հետո ասվածը, ինովին հերքում են ամեն մի նման տարակուսանց. «Մինչեւ Վերջին շունչը ինձ իրեն զավակեն պի ավելի կը սիրեր: Ես հոգով հավատացած եի այդ բանին: Ինչ որ ալ հարցնեի իրեն բացակայության քրած գործողության, նա միշտ կըսեր. «Ինձնից մի հարցներ, ինչ որ խելք կտրե, եւ ըրե»: Սերոբը վատահել է Անդրանիկին, նվիրել իր մատանին, որը դրոշմելիք ուներ որպես կնիք. եւ դրանով էին կնքվում հայողուկային թոթերը (էջ 162, 164):

Ի Վերջ Անդրանիկը Սերոբի մահվան պատմությունն է անում: Երեւում է, թուրք զորացետ Ալին եւ զուրդ ցեղապետ Խալիլը վաղուց եւ խնամքով Նախապատրաստել եւ ծուղակը: Գործի մեջ խառն է եղել գյուղաշենցի մատնիչ Ավոյի մատը: Թաքստոցից, առանց իր անձը ցուցաբերելու, բարեկամ մեկի միջոցով թունալից ծխախոտ է ուղարկում իբրեւ Նվեր Սերոբին, գտնենալով, որ նա սիրում է ծխախոտը, եւ այս էլ՝ թունալի ու դառը: Չի սպասում ծխախոտը, բայց թաքայում, հյուծում է Սերոբի առողջությունը: Այդ օրը Սերոբը

Գելիեգուզան գյուղում է լինում: Զուրդ Բշարե Խալիջ գալիս է քրդերի իր զինված ուժով. Այի փաշան՝ 600 հոգինոց զորքով, որից հարյուրը ձիավոր: Չորքը մաս-մաս է արվում՝ մի մասը ճանապարհին, մոտակայի Շենիկ եւ Սեմալ գյուղերում է մուտք, մյուսը գալիս է Գելիեգուզան: Հայուկներին հայտնի է դառնում այս բոլորը. Միայն թէ արդեն զորքերի առաջանալու ժամանակ: Տեսնող գյուղացիք լուրը հասցնում էն ում որ հնարավոր է լինում: Դրանից օրեր առաջ Անդրամասիկը Մխիթար գյուղում է եղել: Արդեն երկար ժամանակ ևս էլ հիվանդ էր. Նորից՝ մերթ անկողնում, մերթ ոտքի վրա: Հիվանդին այցի է Եկել Սերոբը՝ միանգամից տասնիներ տղաներով: Սերոբը ոտքի վրա էր. Կոհիվների մեջ: Եկել էր կամ առողջ Անդրամասիկին հետը տանելու, կամ, թթ ևս չէր կարող. Նրա գենքերը վերցնելու: Չմոռանակը, թէ որքան դժվար էր մի հրացան ու մի փամփուշտ անզամ ձեռք բերելը: Ներկաները առարկում են գենքը տալուն, Անդրամասիկը միջամտում է՝ «Խուլոց կեցեք տեղներիդ.... ևս հրավունք ունի մեր գենքերը առնելու, մենք ընկերներ ենք, եսօր կառնե, Վաղը նորեն կուտա» (էջ 188): Սերոբը շարունակում է իր ճանապարհը դեպի Գելիեգուզան: Երեւում է Սերոբը տնից դուրս գալուց հետո զջացել է, Անդրամասիկի հրացանն ու փամփուշտները են է ուղարկել: Բայց Անդրամասիկը, մեկ է, վատառողջ է, թույլ, չի կարողանում վրան կապել: ճամփան տանում էր Գելիեգուզան: Սերոբը տղաներին խնդրում է առաջ անցնել, ասել որ իրենց գալիս են, թող անկողին պատրաստեն Անդրամասիկին. մինչեւ տեղ հասնելը: Երեւում է Անդրամասիկը խմբի հետ առաջ չի գնացել, դարձել է նորից Մխիթար:

Սերոբը հասել է Գելիեգուզան: Ծխախոտի թույնը իր դերը խաղացել է. «Օր մը առողջ, օր մը հիվանդ անցուցեր է: Կերցին օրերը հիվանդությունը սաստկացած է եղեր».— Վկայում է Անդրամասիկը. ավելացնելով, որ օրը տասն անգամ մեռնելն է ցանկացել: <Ես այդ օրերից մեկում էլ խալիս ու Ալին գալիս են մերեւից իրենց տրված հանձնարարությունը կատարելու: Չորքը Մխիթար գյուղով է անցել: Հիվանդ, անկողնային Անդրամասիկն իմացել. շտապ լուր է հասցել Գելիեգուզան գյուղից մի ժամվա ոտքի ճանապարհի վրա կնոջ. որդիների, եղբայրների եւ մի խումբ զինվորների հետ ապրող Սերոբին, որ զորքը գալիս է:

Ուժեղ ցավի տակ Անդրամասիկին մի կերպ ոտքի են հանում, հրացանը գցում ուսց եւ ոուրս բերում մոտակա բարձունքը: Այս միջոցին Սերոբն ու Նրա հետի մարդիկ երկուական. Երեքական բաշխվում են, դիրքեր գրավում, եւ երեք ժամ անդադար կոիվ է մղվում: Բարձունքից Անդրամասիկը տեսել է, թթ ինչպես զորքը թշքել է դեպի Սերոբի գտնված վայրը. տեսնելով էլ այս, թթ ինչպես Նրանք

դուրս են գալիս գյուղից, իրենց խնդիրը կատարած: Գյուղացին շտապով Անդրամասիկին են հասցնում գույժը. Խալիջը, առանց լուրք դժվարության. Վրա է հասել, կտրել Սերոբի գլուխը, ապա նրա կնոջ՝ Սուսի ծնկների վրա մորթել է որդուն՝ Հակոբիկին եւ ավարը խուրդի մեջ դրած. Սուսին էլ ձիու թամբի վրա անցել է հայկական գյուղերի միջով. գեացել Սուշ: Սերոբը ընկերներից նույնպես ոմանք զոհվում են, ոմանք Վիրավոր ու անզեն կարողանում են ծուղակից դուրս գալ:

Այսպես են հուշագիրներն ու հեղինակները. Նրանց թվում նաեւ Անդրամասիկն ու Սմբատը. իրար լրացնելով եւ տեղ-տեղ, մանրուցներում, իրարից տարբեր նկարագրում Սերոբի մահը:

Անդրամասիկն այն կարծիքին է, թթ թթ իրենց գենք ունենային. Երբ զորքը դեռ տեղ չէր հասել, կհարձակվելու, թյուրիմացություն կստղեթին, թե, ուրեմն, այդտեղ է Սերոբը. որի ընթացքում նա դուրս կգար Գելիեգուզանից:

Այս պատմությունից հետո սկսվող իր կյանքի փուլը Անդրամասիկը անվանել է «խմբավետության շրջան»: Համբերենը:

Ընկերների մահվան վասի շատ առիթներ է ունեցել Անդրամասիկը: Բայց Նրա հետ շիված բոլորն են նկատել, որ այս մեկը խորն է խոցել Նրա սիրտը. եւ ոչ թէ տեւական. այլ ցմահ: Սմբատը Սերոբի մահվան դեպքին հաջորդած օրերին է տեսել Անդրամասիկին.

«Տխուր եր: Իր առնական դեմքը կը մատներ մտահոգութիւն մը. որին գաղտնիքը մեզ հայտնած էր գյուղացիներու հետ խոսակցութեան ընթացքին: Խոսելու տրամադրութիւն ցույց չէր տար ու մենք կը զգուշանայինք հարցեր ուղղելեմ»<sup>2</sup>:

Ամուսնու սպանությունից հետո Սոսեն, որ բանտ էր նետվել, ազատվելով, իր որդի Լեւոնի հետ ընկալում էր հայրենի Սողորդ գյուղում: Հայուկների համար սրբություն է դառնում այդ տունը. գյուղով թե մոտակայքով ամեն անզամ անցնելիս Նրանք պարտք են համարել այցելել Սոսեն եւ Նրա հարկի տակ հարգանքի տուրք Մատուցել ազգի անձնվեր զավակի հիշատակին:

Այդ միջոցին սուլթանը շտապում է շքանշաներ պարգևել Սերոբի սպանության մասնակիցներին եւ ամենից մեծ պարգևել՝ շքանշանը տալ Բշարե Խալիջին. որը շքանշանը կրծքին է Սերոբի գլուխը

1 Անդրամասիկ. Ինաւու պատճեցաւ Խալիջ Պեկ. Սոյոյու Սերոբի ոժագործը: Տես L. Լինենան, Անդրամասիկի բնույթը Անդրամասիկ կոմիս և Խալիջ Պեկի սպանությունը. Պայուսակ, 1960 թ., էջ 123: Խալիջ՝ «Անդրամասիկի լուծքը», էջ 191-199; U. Երիցեանց... հ. Ա. էջ. 117-121: Խալիջ՝ «Անդրամասիկ Սերոբ և Գելիեգուզան», Արեւ. 1933 թ.: Սերոբի սպանության բանահարկ. Բայց առեւ Խոյնական. Անդրամասիկների մեջուն խոյն է տառերին՝ 1899-ի հոկտեմբերի 25-ը. Բացահայտված անձ. որ առ եղաւ է Գորգեկն Խալիջ սովոր վեց ամսն անց. ցանալով որուտ առաջը (Խալ. Գ. Խանեան. ... էջ 215): 2 U. Երիցեանց... էջ 88:

ցցի վրա, ձիուն բազմած ճեմել է հայ գյուղերում, որպեսզի մեկընդ-միշտ ահով ու դողով լցնի հայության սրտերը<sup>1</sup>:

Հայոց հնջնապաշտպանական կոիվների քաջարի դեկավարներից Դրաստամատ Կանայանը իր մայր լեզվին մի բառ է պարզեւել, վկայակոչենք՝ «Պատանի հասակից, երբ մտա մարտական խմբի մեջ, մեզ համար երեք մեծություններ գոյություն ունեին. Մեկը Սերոք Աղբյուրը, որին կոչում էին հայուկապետ, Անդրանիկը, որի ձայնը գալիս էր Սասունից, եւ Նիկոլովումանը: Այս երեքը հեղափոխության եւ հերոսության մարմացումներն էին այդ ժամանակավա երիտասարդության աջքին»<sup>2</sup>: Բառը հայուկապետն է:

Անդրանիկի հուշերի գիրքը կովող մարտիկների /մի պատկերասրահ է, որում բազում անուններ են առկայթում, մեկ ավելի լուսակոր ու համախակի, մի ուրիշ անգամ հպատակի, առանց գովասական պաճուճաւքի: Զգուռմը վերլուծական չէ, այլ պարզապես՝ ինչ որ եղել է, ինչպես որ եղել է:

Որպես Հրայր Դժոխք հայտնի Արմենակ Ղազարյանի մասին Անդրանիկի պատմածը միայն վերեւում բերված չէ:

1893–1894 թվականների Սասունի դեպքերի կապակցությամբ նա Հրայրին Միհրան Թամադյանի եւ Համբարձում Բոյաջյանի (Սուրան) ընկերուն է համարում: «Կոտորածների ժամանակ. – հիշում է, – եղել է Ռումինիայի Սուլիսա քաղաքում» (էջ 15): Եկա այդտեղ էլ Հրայրը ի մի է բերել երիտասարդների, որոնք Կարսով անցել են Երևան: Այս փաստը Անդրանիկը վերագրում է 1895 թվականին, անցումը՝ հուկիս 16–ին, որի մասին վերեւում խոսք եղավ:

Անդրանիկն այսպես է հիշում ել պատմում, որ ստացվում է, թե ինքը Հրայրի ոումինական այդ օրերի հետ եւս առնչություն է ունեցել: Կ. պոլսից դուրս գալուց հետո, դա պետք է եղած լինի ոչ վաղ, քան Հնչակյան կուսակցության շարքերն իր մտնելը, այսինքն՝ 1891 թվականը, ըստ իր վկայության, հինգ տարի եղել է Պոլսում եւ Ռումինիայում: Ապա ասում է, թե խումբը, որը հովհանին Կարսից անցել է սահմանը, բաղկացած է եղել քսանվեց հոգուց, հենց այդ տեղում էլ օգտագործելով «մեր այդ խումբը» բառերը: Ստացվում է, որ Անդրանիկն ինքն էլ այդ խմբում է եղել: Դա

<sup>1</sup> «Արդիք Սերոք եւ Գեղոր Չափոց», Արթուր, 1933: Էջ2 և այլէ 2 «Արթուր», 25. 07. 1964թ.:



ՀՐԱՅՐ

տարակուտելի է, որովհետեւ տեղում էլ առանձին ձեռով ասում է, թե իրենց («մեր») մեկնելուց առաջ որոշում է եղել, որ 12 օր հետո պետք է անցներ Հրայրի խումբը, որն այդտեղ է եղել Սերոբի եւ Թաթուլի<sup>\*</sup> խմբերի հետ միասին: Հեշտ չէ առանց լրացուցիչ փաստաթղթերի ու վկայությունների ստուգաբանել, բայց դժվար չէ համոզմունք հայտնել, որ Անդրանիկը Հրայրի հետ առնչվել է դեռեւ Ուսմինիայում (էջ 15, 16):

Հրայրը Սասունի Խուլք գավառակի Անարոնք գյուղի 1866–ի ծնունդ էր, բայց հայտնի էր դարձել որպես Մշո դաշտի Ղըզը Աղաճ գյուղացի. ուր նա իր գործի բերումով հաճախ էր այցելում: Խնչան հայտնի էր, որ Սերոբը Անար գավառի Սոխորդ գյուղից էր, Անդրանիկը՝ Շապինկարահիսարից. Ղըզը Աղաճն էլ հայտնի էր որպես Հրայրի հայրենի գյուղ<sup>1</sup>:

Երկիր Վերադարձից հետո Անդրանիկը կապը չի խզում ոչ Սերոբի, ոչ էլ Հրայրի ու Թաթուլի հետ: Գործի բերումով մի անգամ հարկ է եղել նամակ գրել Ջյոփրիքյոյ, որտեղ գտնվելիս են եղել Հրայրը ու Թաթուլը: Անմիջապես ստացվել է պատասխանը. «Վերցրե Անդրանիկին եւ ընկերներին, եկեք Եղան. մենք ալ հոն կուզանք. Կը տեսնվինք»: Գնացել են: Եկել են Թաթուլն ու Հրայրը եւ ինչ են տեսել. Անդրանիկը, ընկերները պատառոտված հագուստների մեջ՝ «Հագուցին մի քանի հին ու մին շորեր, մինչեւ նորի պատրաստվիը» (էջ 58–59):

Եղել է եւ հետեւյալը: Անդրանիկի հասցեով նամակ է ստացվել Սուշից: Ծառակ գործ կար այնտեղ, իրավիրում էին: Հրայրը, որ Ներկա եր ծրարը բացելին, խորհուրդ չի տվել, որ Անդրանիկը գնա: Տեղի հարուստների հետ պետք էր բանակցել, նրանց առջեւ պահանջներ դնել: Որոշվում է, որ Հրայրը գնա. որը չի մերժում: Միայն թե պետք էր, որ Անդրանիկը իր ձեռքով նամակ գրեր եւ իր փոխարքն Հրայրին ուղարկելու մասին նշեր, որը եւ նա կատարում է: Պատճառաբանել է, թե հիմա ինքը իր խմբի գործերով է գրադկած, չի կարող գալ, իսկ դրանից անկախ. «Հրայրը, – գրել է Անդրանիկը, – ավելի հմուտ եւ փորձառու է, քան թե ես, եւ որը կը խոսա ամեն բան ձեզի»: Սերոբն էլ այդ պահին Ներկա է գտնվել: Ուստի Անդրանիկը, 2արունակելով խոսքը, գրել է. «Ինչ որ խոսա (Հրայրը) մեզնից խոսացած կըլլա եւ ինչ համաձայնության գագ՝ գրավոր

<sup>\*</sup> Անդրանիկն ասում է, թե այդ Խուլք ժամանակ անհակեց պետք է անցնեն նաև Թաթուլը և Սերոբի խմբերը: Սերոբը մասին խոսվեց: «Հարկ է եղել, որ Թաթուլը, որին կրցան երս աշուա-Թաթուլ, Խուլքակը եղել է Անդրանիկի ֆիդայական օրերի ընկերը, հայունային շարժման սկզբանից անմահ ումբերից մեջ, որին Անդրանիկը վկայակում է եւ հարգանքի տուրք յատուցում ներ հիշատակին (տե՛ս «... յուշերը». էջ 86):

<sup>1</sup> Ա. Կրացան. Հրայր (Արմենակ Ղազարյան). «Ակիր», 13. 04. 1964թ.:

տեղեկացրեք Սերոբին Եւ ինձ»:

Հրայրը չի ցանկացել Անդրանիկին գործից կտրել, գուց թե՛ Նրա կյանքը Վտանգի Եւթարկել: Լուել է Անդրանիկը Հրայրի պնդումները Եւ չի հավատացել իր ականջներին: Միթե այդ մտքերը ևա՛ է ասում, ով ինքն է Ներշնչել, Ներգրավել իրեն կովի մեջ: Անդրանիկը վկայակոչում է իր Եւ ընկերների պատասխան խոսքը. «Այ մարդ, դուն Եկար Շումինիա 94-ին, կազմակերպեցիր բավական տղա, 50 հոգի բերիր Կովկաս. այդ տղաներուն մեծամասնությունը գրեթե սպասվավ, դուն բռնվար, բանտարկվեցար, ազատվեցար... Հիմա ալ դուն նստած հեռուն մեզ վրա կը խնդաս. Մենք կիսնդրենք քենե, որ ընդհանուր ազգի շահը քո անձնական Եւ տնային շահերուդ հետ չփոխես, գաս անցնիս գործի գուլս: Ես գրիչեն տկար Եմ, Իսկ Սերոբը գրել-կարդալ չգիտե» (Էջ 174-175):

Ծիծու է, համերաշխ էին, Վտանգի պահին անձնուրաց ընկերներ. բայց ամեն մեկն իր կարծիքն ուներ, իր դիրքորոշումը: Կերեւուս ասացինք, որ եղել է մի պահ, երե Հրայր փորձել է հարկադրել Անդրանիկին գենքերը վար ունել Եւ զինակովին Վերջ տալ, գտնելով, որ հայութուկային խմբերի այդ կորիվներն են պատճառը. որ հայ գյուղերը ընկնում Են ատուրյան գործերի հարկածների տակ: Իսկ դա հենց այն կարծիքն էր, որը ամենից շատ Անդրանիկի մտածածի հակառակն էր:

Հրայրը ազդեցիկ էր Եւ հեղինակավոր թե՛ Սերոբի, թե՛ Անդրանիկի. թե՛ Գեւորգ Չավուշի Եւ այլ հայութուկապետերի համար: Հրայրի կառծիքն ու նպատակը այն էր, որ պայքարը գաղափարական ու քաղաքական բնույթ ստանա. Ընդգրկի ավելի մեծ զանգվածներ. այլ ոչ ամեն ինչ հանգեցվի զինավարժ մարտիկների պաշտպանական կամ նույնիսկ հարձակողական տարածատ կորիվների: Ուստի ինքն էլ, թեեւ քաջ Եւ զինակովի մեջ հմուտ, իր եռանդը նվիրում էր Նրան, որ ժողովրդական լայն խավերին ընդգրկի. պայքարը դարձնի պակաս հիվանդագին. բայց Եւ կազմակերպված էր հուսալի: Մի խոսքով, Հրայրը լայսախոհ հեղափոխական էր, այլ ոչ թե սովորական ժողովրդական վրիժառու. ինչահին ֆիդային էր. Եւ Նրա հիեալը հեղափոխուրյունն էր. Վերջինիս հաղթական ձեւը՝ ժողովրդական միահամուռ ապստամբությունը<sup>1</sup>:

Եկ այսպես՝ անուններ. որոնք իմաստավորվում էին. իրենցով արտահայտելով ազատության ձգտումն ու պայքարի կամքը. Գուրգեն, Հրայր, Սերոբ, Անդրանիկ... Այս անունների շարքում էր նաև Մուրադը, բնանվամբ Համբարձում Բոյաջանը: Արսեն Կիտուրը, ինչակայան դեկապար. ինչպես հիշատակվեց Վերեւում, գրում է. թե

1 Գ. Լաթեան, Խաչ. էջ 315.

Երիտասարդ Անդրանիկը Մուրադի հետ է Ծապինկարահիսարից առաջին անգամ անցել Սասուն: Այդ այն ժամանակ է Եղել, եռ Մուրադը Նոր Եր վերադարձել գենք բերելու համար իր կովկասյան ճանապարհորդությունից<sup>2</sup>: Իսկ Անդրանիկը Մուրադին Հրայրի Եւ Թամադյանի ընկեր է անվանում՝ Նրա միաժամանակ Եւ հետազույն, Եւ առօքատար հայդուկապետ լինելը ընդգծելու համար:

Կ. պոլսի ոռւսական դեսպանին դեպքերի վայրերից հյուպատոսների գեկուցագրերում Սասունի բնակչության 1894 թվականի գարնան ինքնապաշտանական ըմբուտացման կազմակերպչի դերում նաև Մուրադի անունն է տրվում: Դեպքերից հետո Թուրքիայի ոռւսատանչյան հյուպատոսությունների հաղորդումներում նշվում է, որ հայերը Մուրադի դեկապարությամբ Են մարտնչել կառավարության գործերի դեմ: Ըստ նույն հաղորդումների, Մուրադը 1894-ի գարնանը Եկել է Սասունի Տալվորիկ գյուղը. որտեղեւ շրջակա գյուղերում քրդերը ուժագին հալածանքներ էին սկսել հայերի դեմ: Միաժամանակ ոտքի Եւ Եկել հյական մի շարք գյուղերի՝ Սեմալի, Գետաշենի, Իշխնձորի, Շենիկի, Գելիեգուզանի բնակչիները: Ֆիդայիները հարձակվող բանակային ուժը բնակչությունից հեռու քաշելու համար բարձրանում Են սարերը, որտեղ Եւ Տալվորիկ գյուղի մոտ, Զարայրներից մեկում բռնվում է Մուրադը<sup>2</sup>:

1895-ի տարեսկզբի մամուկի եցերում, Նկատի ունենալով ֆիդայական պաշտպանական կոիվն ու դրանում բնակչության եռանդուն մասնակցությունը Սասունում, 1894 թվականը ընութագրվում է հայության ազատագրական կովի դարագլուխ կազմող տարի. Նշանակոր թե իր տված հերոսական զոհերով Եւ թե այն ոգետրությամբ. որով բռնված էր համայն հայությունը: Կենտրոնում Մուրադն է՛ որպես քառողիչ, զինվոր Եւ հրամանատար:

Դեպքերը 1894-ի գարնան են Եղել. ասվում է հյուպատոսական գեկուցագրում: Տալվորիկ. Կավառ Եւ շրջակայի գյուղերը հեղափոխական տրամադրություն Են ներշնչել բարձունքում ապրող հայությանը, որն առանց այդ էլ աչքի էր ընկնում իր ըմբուտությամբ: Պատճառն այն էր, որ անցյալ տարի ամուսնը քրդական ցեղերը միացյալ ուժերով հարձակվել. քշել-տարել էին Տալվորիկ. Շենիկ Եւ Մյուս հյական գյուղերի անասունները: Եւ ահա այդ ժամանակ հայ բնակչությանը պաշտպան է կանգնել Մուրադն իր խմբի անդամներով. որոնք գրության մեջ կոչվում Են պարզապես ավազակներ: Լա՛վ է, հարձակվողները զինվոր Են ու գործ. պաշտպանվողները՝ պակասներ: Համենայն դեպք այսպես չպատկերացնենք. թե հայերը

1 «Կրաքան», 3. օգ. 1967 թ. 2 ուսւ. ֆ. Կ. պոլսի դեսպանատուն, գ. 517/2, գ. 3176, էջ 122-125:

վիզները ծոած սպասել են, թէ երբ պետք է քրոերը գան, որ իրենց թալանեն ու կոտորեն: Այդաւս չի եղել, այդաւս չէր էլ կարող լինել: Հայերն էլ են դիմադրությունը դարձել է կազմակերպված, երբ հայտնվել է Սուրաղը: Նա շոգել է գյուղերում, մարդկանց, գլուխները խոնարհելու փոխարեն, գենքի է կոչել, եռք նրանց տունն ավերել են, ունեցվածքը թալանել եւ այլեւս մահվան վտանգն է կախված եղել: Հյուպատոսական գեկուցագիրը հայ գյուղացիության քաջության հետ մեկտեղ նկարագրում է Սուրաղի անվեհեր կոիվը: Հայերի դիմադրության միջոցները սակագ եին, պակաս էր գենքը, սպառվում էին փամփուշտները, գյուղերը, շրջափակման մեջ, սպառում էին սննդի պաշարները: Վրա է հասնում այն պահը, երբ նրանք ստիպված են լինում թողնել իրենց հայրենի օջախները, թողնել գույքն ու անասունները, կիսավար ու կիսացան արտերը եւ փախուստի դիմել դեպի Անդր լեռն բարձունքները: Հապճեպով իշխակությունները այստեղ կոտակում են 27 հազար կանոնավոր զոք՝ հրաձգային եւ իրենանային:

Թուրքական զորքերը վրան են խփում հայոց գյուղերի շրջակայքում: Անզեն բնակչությունը ահ ու սոսկում մեջ է: Ակսվում է բնակչության գաղթը ամենից ավելի վտանգի ենթակա կամ անպաշտապան՝ Շենիկ. Սեմալ, Ալիհանց, Գելիեգուզան գյուղերից: Իսկ թուրք-քրդական զորքի թիվն ավելանում է՝ հասնելով մի քանի տասնյակ հազարի: Դաժան, անմարդկային կոիվ է սկսվում եւ հաշվեհարդար: Դեպքերից մազապուրծ ականատեսները ժահրոտ փաստեր են հիշել, սպանվածներին ու ողջերին միատեղ թաղում են, մասնուկներին ողջ-ողջ այրում ու ձողերի վրա բարձրացնում՝ ի տես եւ ի սարսափ ողջ մնացած հայերի: Ֆերի վրա բարձրացված դիմելու մաս-մաս կտրատում եւ շարտում են սովոր հայերին. «ահավասիկ ձեր սիրելի կանաց միսը, կերեք եւ ոգի առեք»<sup>1</sup>:

Մի՞թէ սրանից հետո դժվար է պատկերացնել, թէ ինչ թալան է սկսվում, կոտորած ու մահ հայոց գյուղերում<sup>2</sup>:

Սուրաղը Կիլիկիայի Հաճն քաղաքի 1860 թվականի ծնունդ էր: Բժիշկ դառնալու երազ է ունեցել: Այդ նպատակով քահել օրերին գնացել է Կ. պոլիս, բայց այստեղ ականատես է եղել Բարձր Դուռն Վայրագություններին եւ տարերայնորեն մասնակից դարձել սուլթանի դեմ բնակչության բողոքի ելույթներին: Ուսումն ու մյուս բնականոն երազանքները մոռացության են տրվում: 1892-ից նա արդեն Սասունի դաշտերում էր, որպես բացատրող եւ կազմակերպիչ՝ դառնալով խմորվող ինքնապաշտպանության դեկավարներից մեկը՝ Թամադյանի

<sup>1</sup> «Եր ըներոց հիշանակառակից», տես «Պրազմա», N1, 1895 թ., էջ 4-7: <sup>2</sup> ուսւա.

«Կ պոլիս դեսպանատուն, ց. 517/2, գ. 3176, թթ. 68-69: Լաեւ՝ «Հայ ազա-

եւ Արարոյի հետ միասին: 1894 թվականի նշված կոիվներից առաջ եւ կոիվների ընթացքում Մուրաղը զինված մարտիկների հայդուկային խմբեր է ձեւավորում եւ հանձնարարականներով գործի ուղարկում: Նրանց համար շատ կարեւոր էր, որ հայոց գյուղերը պաշտպանվեին թուրք-քրդական ավազակներից, որոնք հարձակվում, քըշում-տանում էին հայերի անասունները, գողանում էին նրանց գույքը եւ գրադաւում իրենց համար սովորական դարձած վայրագություններով:

Տակվորիկի մոտ, 1894-ի նշված կոիվներից հետո, Մուրաղը մի քանի ընկերների հետ քարայրում ծուղակն է ընկնում: Տարվելով Մուշ՝ բանտ է նետվում, այդտեղից էլ փոխադրվելով Բաղեց է Կ. պոլիս: Բայց մինչեւ իր նկատմամբ կիասցնեին դատաստան տեսնել, բանտից փախուստ է տալիս. թեեւ հետագայում կրկին ձերբակալվում է Կ. պոլուում եւ դատապարտվում ցմահ բանտարկության: Այնուամենայնիվ ազատվել է եւ ի վերջո 1915 թ. Թիրտուրքերի կախադանին արժանացել<sup>3</sup>:

Ժողովրդապաշտպան մարտիկները միայն Արեւմտյան Հայաստանի զավակներ չեն: Նրանց մեջ եր նաեւ Արցախ (Ղարաբաղ) նահանգի Խաչեն զավաոի Ղշլա գյուղի 1867 թվականի ծնունդ Նիկողայոս Տեր-Հովհաննեսիսանց, որն էլ հայտնի է որպես Նիկոլ Դուման: Ժամանակակիցներն ու գործակիցները նրան գիտեին որպես հեղափոխական եւ ուազմական կարգապահության հակված խոհուն անհատականություն: Նրա մասին հուշագիրներն ու կենսագիրները հաստատում են, որ հայոց քահանա է եղել եւ նա էլ որդուն ուսման է տվել Շուշու թեմական դարրոցում, որն ավարտել է 1887-ին: Մի քանի տարի ուսուցչություն է արել Հյուսիսային Կովկասում եւ Թավրիզում: Այստեղ, Թավրիզում էլ նա Արեւմտյան Հայաստան անցնելու եւ պայքարի ծրագրեր է կազմել, իր աշակերտներին գենքի գործը ուսուցանելով: Նույն գործը ավելի լայն նա կատարում է Սալմասուում՝ բոլոր 1889-ից մինչեւ 1895 թվականի սկիզբը:

Զինավարժ մարտիկների մի խումբ է ունեցել, որի հետ փոխադրվել է Կան: Մի պատմություն է Սամսոնն արել: 1895-ի հոկտեմբերին Նիկոլը Սալմասուի իր 45 տղաների հետ գենք է փոխադրել Կան: Կես ճանապարհին, երբ գյուղերից մեկում խումբը հանգստանալիս է եղել, քրդերը հարձակվել են եւ կրակ ուղղել այն մարազի վրա, որում Նիկոլը եր պատսպարված: Հանկարծ Նիկոլը բացականչում է՝ «Ես զարկեցի, բայց դու կամ. երբ որ ընկնեմ, դրամն ու թղթերը կառնեք վկայից ու կերթաք»: Իրականում պկված մի քար է կապած եղել

<sup>1</sup> Ուսւա. ֆ. Կ. պոլիս դեսպանատուն, ց. 517/2, գ. 3176, թթ. 68-69: Լաեւ՝ «Հայ ազա-

կրծին: Զբոքեն էլ վատահ մոտեցել են, եւ նա շարունակել է կրակը. փախուստի մատնել հարձակվողներին: Այս քաջությունն է, որ նրա անվանը Դուման (փոթորիկ) բառն է գումարել<sup>1</sup>: Ավելի ուշ, Վանից դուրս գալուց հետո՝ Նիկոլ Թուրք-քրդական Միացյալ ուժերի ուժ կոիկ է մոլու պարսկական սահմանագլխին գտնվող Դերեկի վանքում<sup>2</sup>:

Պարսիկները ձերքակալել են Նիկոլին: Բանտից դուրս գալուց հետո նա եկել է Թիֆլիս, ապա նորից Արեմտյան Հայաստանում մասնակցել հայուսկային կոիկներին: Հիսնյակ գինվորների գլուխ անցած՝ քաջությամբ է աչքի ընկել «Խանասորի արշավանք» հայտնի ճակատամարտում<sup>3</sup>:

1897-ի ամռանն է եղել, հուլիսին: Դաշնակցության գործիչներն են խնամքով նախապատրաստել կոիկը: Կազմվել է երդման տեքստը, որը հանդիսավոր կերպով ընդունվում էր հայոց ազգային եռագույն դրոշի ներքը.

«Երդվում եմ, որ... չեմ դավաճանի... »:

Ընդհանուր հրամանատարը արցահացի Կարդան Սեհրաբյանն է եղել, նրա հետ են սեւքարեցի Սարոն, Իշխան անունով հայտնի Հովսեփ Արդուրյանը<sup>4</sup>: «Ամիդեական» ջոկատները դիրքեր էին մտել լեռնալանջերում, որպեսզի թալանի, բռնաբարության եւ կոտորածի հրեսց արշավն սկսեին շրջակայքի հայ օյուղերի դեմ: Ֆիդայիները հուկիսի 24-ի ուշ երեկոյան հասնում են եւ ամրանում համիդեական վրաններից հրացանի կրակոցի հեռավորության վրա: Սա «հանդուզն մի ձեռնարկ» էր, որը, պատմաբանի հավաստիացմամբ «Նիկոլի տեսդագին աշխատանքներու արդյունքն էր»<sup>5</sup>: Հանկարծակի եւ ուժգին հարձակումից թշնամին գլուխը կրոցնում է, ջարդի տակ ընկնում: Սուլթանյան մամուլը անհարմար է զգում իրական վիճակը նկարագրել. մի՛թ հայերը ընդունակ էին այդպիսի հաղթական կովի: Եվ բանն այնպես է ներկայացվում, իբր եղել է պարզապես ավազականմբերի հանկարծակի հարձակում<sup>6</sup>:

Ժամանակ անց Նիկոլ Դումանը Բարվում է: համագործակցում է Դաշնակցության պարագալուս Թրիստափոր Միքայելյանի հետ: Առաջ անցնելով ասենք, որ այստեղ Նիկոլ Դումանին այցի է եկել Անդրանիկը, միանձմանակ թաքնված ապրել է նրա տանը, որտեղից էլ ճանապարհվել է ծեսե: Դա 1904-ի տարեվերջին է եղել: Հաջորդ

\* Ա Լորութ իր «Պովազեր...»—ում փասու վերաբու է 1894 թվականի հունիսին. 9. Տայալու «Եղանակական դժբակ» գրքու 1898-ին: \*\* Համիդեական այսպես էին կոչում հայերի ուս սովորակի ուղարկան գորակումերը:

1 Միթ. Կարանետան. Խշած գիրք. էջ 137: 2 Ըստ Ա. Լորութի գրքի. էջ 110–118:

3 «Իրիշակ», N 9–12, 1914թ.: 4 «Ակիր», 25. 07. 1904 թ.: 5 Միթ. Կարանետան. Խշած. աշխ. աշխ. էջ 176–177: 6 Տե՛ս Հինգին բորակությունը «Հորեսպունեան պունիկ» թերթի 1897-ի համարներում:

տարի Նիկոլ Դումանը հաշտարար քարոզչի ու մարտիկի դեր է խաղացել Երեւանի նահանգում խմորվող հայ–թաթարական կոիկները կասեցնելու համար: Նա այս դեպքում գենքը պատյան դնելու կոչ է անում, թե՛ւ հայտնի է որպես գենքն պատշաճ նշանակություն տղվող գործիչ եւ հենց ինքն է ասել թե՝ «Եվ մի ազգ, եթե ուզում է մնալ հարգված, եթե չի ուզում կորչել, պետք է լինի գենքի ընդունակ. միշտ պետք է լինի կազմ ու պատրաստ ինքնապաշտպանության... »: Առավել ճշմարիտ էր նա, պնդելով, թե միմիայն ինքնապաշտպանությամբ չի կարելի պաշտպանություն ապահովել:

Նիկոլ Դումանի հետագա գործունեությունը քաղաքական ասպարեզում է դարձյալ Բաքվում, ապա՝ Կ. պոլսում, Եգիպտոսում, Բուլղարիայում: 1910–ից Հայ հեղափոխական դաշնակցություն կուսակցության պատվիրակն է եղել Կոպենհագենի միջազգային սոցիալիստական համագումարում: Այսուհետեւ նա Տրապիզոնում է, Երգուսում է Վանում ու Թավրիզում, ապա դարձյալ Թիֆլիսում, ուր նա Վերադարձնում է թոքերի ծանր հիվանդությամբ. 1914-ի սեպտեմբերին իր մահկանացուն կնքելով այդտեղ, թաղվելով Բաքվում<sup>7</sup>:

Վերը թվարկված անունների մեջ Անդրանիկի անձի ու Ֆիդայական փուլի գործունեության հետ ամենից ավելի տեւական ու մտերմական կապեր է ունեցել Գեւորգ Կարդանյանը. որը նույն ինքը՝ հանրահայտ Գեւորգ Չափուշն է:

Եղած հրապարակումների համաձայն Գեւորգը Անդրանիկից տարիով փոքր է եղել: Բայց դա չի նաև գարու նրան. որ նրանք լինեն մտերիմներ, որպես ընկերներն են լինում՝ թե՝ փոխըմբռնմամբ. թե՝ զործով: Ամենադժվար մարտերը Անդրանիկը մրել է Գեւորգ Չափուշի ընկերակցությամբ: Բայց դա սոսկ իր կոիկների առաջին, հայուսկային փուլում: Այստեղ էլ ընդհատվել է նրանց ընկերությունը. քանի որ Գեւորգը 1907 թ. մայիսի 27-ին ընկել է թշնամու գնդակից:

Գեւորգը, ճիշտ է, քիչ է սովորել, ընդամենը, հավասարար ընդհատումով, չորս տարի, բայց հնավանդ մի դպրոցում, ինչպիսին Առաջարկության կամացին էր. Առաջ քաղաքից մի ժամկա ոտքի ճանապարհի կրա: Այստեղ ոչ միայն հայոց լեզվի ուսուցումն էր պատշաճ, այլև

1 Ըստ Գ. Լայակի «Եղանակական դժբակ» գրքի. էջ 323–331.



ԳԵՎՈՐԳ ՉԱՓՈՒՇ

հայոց պատմությանը՝ ժողովրդի ծագման ակունքներով. թագավորների ու թագավորական տների, թշնամիների դեմ մղված պատերազմների ու ազատագրական հերոսների կյանքի պատմություններով հանդերձ: Ոչ միայն այդ մեկը, այլև հայոց մյուս բոլոր կանցերին կից եղած ռարողները հայրենիքի ճանաչողության եւ հայրենասիրության դպրոցներ էին<sup>1</sup>:

Գեւորգի կողմնորոշման համար պակաս կարեւոր դեր չի խաղացել եւ այն, որ ուսումնառության օրերին վասքում ու նրա շուրջը հանդիպումներ է ունեցել Արաբոյի եւ նրա զինակից Լեւոնի հետ. լսել նրանց խոսքը, որը կենսակոչ էր ըստ եւրյան եւ կողմնորոշում: Իր մասին նա այսպես է գրել. «Տարիքս անհայտ է. թվական չունիմ: Հայրս ու մայրս շատ կը փափագեին, որ ես կարդալ սորվիմ. որպեսզի վերջը տերտեր դառնամ ու իրենց օգտակար ըլլամ»: Ուսման հետ մեկտեղ պատասին վասքի չորս կողմն է նայել. «Հասկացա, որ այդ կողմերը հայեր կային, իոն եին Արարոն ու Լեւոնը, որոնք երբեմն կը հանդիպեին մեր վանքը. իսկ ես ամեն առիթ չեմ փախցներ անոնց փողքիկ ծառայություններ ընելու համար: Անոնց մով գիտուցեր էի: 1878 Մայիսի ամսո 7-ին հրաժարվեցա վանքեն եւ գնացի տունս. այնուհետեւ իմ գործը շարունակ գենքերը եղան»: Չի զլացել իհշել նաեւ իր ուսումնասեր լինելը. «Մեր տան մեջ կային հորեղբայրներ, երկու աշխարհական, մեկ քահանա... բոլոր գերդաստանով կը սիրեին գիս, որովհետու այր ու բժն գիտեի»: Բայց, մեկ է, գենքի ձառնականը ավելի է եղել: Երկու տարի սովորելուց հետո ընդհատել, տուն է Վերադարձել, բայց նորից է գնացել վանք. որովհետու, ինչպես նկատել է ինքը, նորից կարող եր տեսնել Արաբոյի հետ եւ գնալ իր ընտրած ճանապարհով<sup>2</sup>:

Սասուն աշխարհի Բսանաց գավառի Ակտինը գյուղից եր: Թե գյուղը, թե գավառը ինքնապաշտպանական կոիվների ծագման օրերից ի վեր իրենց լավագույն, քաշերից քաջ զավակներին եւ նվիրել ֆիդայական խմբերին, խմբապետերին: Ախալված չենք լինի. Եթե ասենք, որ նրանց մեջ ամենից ավելի համբավավորը Գեւորգն է եղել, որովհետու նա բոլորից հանդուգնք. մարտունակն ու դիմացկունն էր:

Արաբոյի հետ շփումները, դպրոցի դասերն ու հայության կյանքի ծանր պայմանները հարկադրեցին Գեւորգին ավելի վաղ մտածել գենք ձեռք բերելու մասին: Դրա համար հարկ եղավ, որ նա փող վաստակելու համար Հայեաց գնա, որտեղից վեց ամիս հետո վերադարձ ոչ թե իր զգեստը բարեփոխած կամ գրապանները ուսկիով ու ձեռքին հարազատների համար նվերներով, այլ ուսին ողորկ մի հրացանով, որը նա ամուր պահեց ձեռքում, իր բոլոր մարտերի ընթացքում:

<sup>1</sup> Կ. Սասունի. Գեւորգ Զավուշ. Փ., 1939 թ.: 2 «Թուշակ», 1914 թ. №-10:

Սուածին մարտը եղավ 1892 թվականին. Տալվորիկի մոտ, որտեղ Գեւորգը թամադյանի եւ Հրայրի հետ էր ու նրանց դեկավարությամբ. առյուծասիրտ երիտասարդի հսկայական եռանդ, իրոք աներեւակայելի քաջություն հրապարակ հանեց թվով շատ եւ զենքով առավել թշնամու դեմ մղված գոտեմարտում: Հենց այս կովով Գեւորգը հոչակեց եւ իր վրա ուշադրություն հրավիրեց: Հայդուկապետերից ամեն մեկը կուզենար, որ իր հետ, իր թիկունքում եւ իր խմբի առջեւում լիներ Օթերոգը եւ՝ որպես քաջ մարտիկ, եւ՝ որպես ոգեշնչման անձնական օրինակ բոլորի համար: Այդպես նրան թերեւ ամենից շատ Անդրանիկն է գնահատել ու մերձեցել, եւ այդպես էլ Անդրանիկը ու Գեւորգ Զավուշ անունները ժողովրդի հիշողության մեջ ի մի եւ ձուլվել, որպես ազատամարտի պատմության անբաժան կերպարներ:

Գեւորգը իր առաջին իսկ կոիվներից ուշադիր էր, որ խմբերը հաստատ լինեն ու կայուն, որ ոչ մեկը վախկոտ չինի. Եւ դեմ հանդիման կանգնած կամ թաքստոց մտած թշնամուն իրենց ծրագրումների, գործի գլուխ կանգնած մարդկանց ու մյուս մասնակիցների մասին մտածված կերպով կամ պատահականորեն լուր չիասնի: Իր սկզբնամարտի օրերից ի վեր միշտ ու անընդմշտ նրա կոիվը եղել է նաեւ թուլամորթների ու մատնիչների դեմ: Միաժամանակ հետեւ այդ էլ ժողովրդի հիշողության մեջ իմաստավորեց Գեւորգ Զավուշ հանրահայտ անունը. Մատնիչների դեմ անվարան պիտիառու:

1894-ի գանգվածային կովի ժամանակ Գեւորգն իր փոքրիկ խումբն ուներ, որը թեեւ հիմնականում Սեմալ զյուղում էր ու զյուղի շրջակայում. նաեւ շարժվում էր տեղից տեղ եւ սրջնթաց հասնում այստեղ. ուր քաշերից քաշերի կարիքն էր զգացվում: Եվ շատ հատկանշական է, որ Սուրադի քարայրում շրջապատվելու, ծուղակն ընկնելու պահին նրա հետ եր հաստատակամ Գեւորգը: Նրան չէին վախեցնում ոչ քարայրի ժեռ պատերը, ոչ էլ դրսում կանգնած թուրք ու զուրդ գինվորների բազմությունը: – Մեր ունեցած փամփուշտները բավական են, որ մեզ համար ճանապարհ հարթենք եւ դուրս զանք ծուղակից. – ասում էր նա: Սուրադ Գեւորգի խոսքերի մեջ կարդում էր նրա կամքի բացառիկ ուժը, թեեւ միշտ չէ, որ նա կարող էր լիովին հավատ ընծայել նաեւ ծուղակից դուրս գալու հնարավորությանը. չորս կողմը փակ էր ու վիճակն անելանելի: Սուրադի հետ միասին ձեռքակալել է եւ Սուշի բանտն է նետվել Գեւորգը: Դատավճիռ Սուրադի նկատմամբ 101 տարվա, Գեւորգի նկատմամբ՝ տասնինգա տարվա բանտարկությունը եղավ: Սուրադ բանտի երկրորդ հարկում էր, Գեւորգը՝ երրորդ: Մտածեց փոքրիկ պատուհանի անցքը ընդարձակել, պարան շինել եւ հարմար մի օր վերից վար



ՊԵՏՈ

Ներքեւում ընդառաջ եկած տղաների հետ դուրս գալ ծուղակից: Իր մտադրությունը կատարեց, ցավելով միայն, որ իրեն չհաջողվեց իր հետ դուրս բերել նաեւ Սուրաղին: Դրանից հետո արդեն, երբ Կովկասից հերթական զինահայթայթումից Վերադարձան Գուրգենն ու Անդրանիկը, Գեւրգը գումարվեց նրանց խմբին, ապա դարձյալ Անդրանիկի հետ միասին եղավ Սերոբի խմբում, որպես նրա քաջ ու հուսալի մարտիկներից մեկը: Այն աստիճան քաջ ու այն աստիճան հուսալի:

որ գալու էր մի օր, եւ այդ օրը Սերոբի եղերական մահիվան վրեժը լուծելուց հետո եր լինելու, երբ չկար այլևս նաեւ Գուրգենը, հայրուվանը նաեւու էին մերթ Անդրանիկին. մերթ՝ Գեւրգին: Ո՞վ եր ստանձնելու խմբապետության գավազանը: Այդ մասին հետո: Խակ առայժմ թվարկենք մյուսների անունները<sup>1</sup>:

Տարիներ անց, երբ պետք էր անցյալների օրինակով սերնդին պատգամ հաղորդել. Անդրանիկը հիշել է նաեւ Պետրոսը, հայրուվանը նաեւու էին մերթ Անդրանիկին. մերթ՝ Գեւրգին: Ո՞վ եր ստանձնելու ուսուցանողի պաշտոնը, նա մտնում է ժողովրդի խորք՝ քարոզիչ է դառնում ու հանգանակող, ինչպես ասում է նրա միակ եւ այն էլ համպոտ կենսագրության հեղինակը. «Եկեղեցիների դոներում եւ մեծ փողոցներում նստած՝ «ողորմություն» եր խնդրում է միաժամանակ իր հեղափոխական պրոպագանդը առաջ տանում, խրախուսում եւ սրտապնդում ժողովրդի հուսահատ տարրերին»<sup>2</sup>: Ողորմություն հայցելու եղանակը հերթարային էր: բայց եւ իրական թե ինում, թե այդ ժամանակներում:

Պետու սահմանի արեւելյան կողմից էր. Ալեքսանդրապոլից: Նրա երազանքն էր՝ լինել արեւմտյան կողմում, տեսնել իր ժողովրդի այդ հատվածին եւ օգնել նրան: Այստեղ է, որ նա, ահա, առաջայի ծառայալ այդ պաշտոնն է ստանձնել: Կենտրոնի դեր խաղացող դեկապար գործընկերները նրա միջոցով լուրերն ու հանձնարարականներն էին տեղ հասցնում: Ընթացքում նրան հաջողվում է հիմնավորվել Կանում եւ այստեղ երիտասարդներ հավաքագել, օգնել նրանց գաղափարական աճին եւ զինմանը: 1896-ին Կանի վրա հարձակված թուրք-քրդական գերակշիռ ռազմական ուժի դեմ հա-

<sup>1</sup> Փառական պատմությունը ըստ Զ. Լազարի Խուճանցիք. էջ 303–311 եւ՝ «Հետոր Զա- պուշ». Բեյրութ. 1967թ., էջ 9–21; <sup>2</sup> Ա. Նորեան. ԽՀԿ. Ժողով. էջ 190–195:

յության հնքնապաշտպանական կոիվների կենտրոնում էր՝ գենքը ձեռքին եւ կոիվների մեջ միարձկած: Մոտ մի շաբաթյա կովից հետո, մարտիկների մի խմբի գլուխ անցած, նա ստիպված է լինում դուրս գալ քաղաքից եւ պատսպարվել Կարահիսար լեռան մի բարձունքում: Եվ այդտեղ էլ հետեւում է թշնամու նոր գրոհը, որում քաջի մահով զինվում է, թողնելով անհայտ շիրիմ եւ ուրիշ ոչինչ՝ իր հիշատակից բացի<sup>3</sup>:

Ընդարձակ է քաջերի այս պատ-

կերասրածը: Ընդարձակ է եւ իր բնույթով հազվագյուտ: Ուրիշ ե՞րբ եւ որտեղ են եղել այսպիսի յուրատեսակ դեմքեր:

Որպես Խան հայտնի Բարսեղ Թիրաքյան: Այն խմբի պետն է եղել, որը կոիվ է միեւ 1899-ի հոկտեմբերի 16-ին Ալաշկերտի Խաստուր գյուղի վրա հարձակված քրդական համիդեական զորամասի դեմ: Հետագայում իրեն հոչակ բերող մասնակցություն է ունեցել նույնատիպ զորամասերի դեմ Բասենի. Բարքենի եւ Գոմաձորի կոիվներում: Զոհվել է 1903-ի սեպտեմբերի 17-ին, թվագետ քանից առավել թշնամու դեմ մղվող կովում վերջին գնդակը արձակելուց հետո<sup>2</sup>:

Բոլորի շարքերում եր նաեւ Զարգանդը, որը Հըլդար Հովհաննիսյանն էր, ծնունդով Բուլանդ գավառի Լիզ գյուղից: Խնչան մյուսները, նա էլ Մանկության օրենին դպրոց է հաճախել: Սա երեւութ է: Արցանի մեջ դրված, բոլոր տեսակի պետական իրավունքներից զրկված ժողովուրդը, այնուամենայնիվ, ինչ զնով էլ ուզում է լինելո. մասնուկ սերնդին դպրոց պիտի տար. այբուբենը պիտի սովորեցներ՝ իին քաղաքակրթությունը պահպանելու. այլեւ առաջ տանձնու եւ վեր բարձրացնելու համար: Բայց հազիվ մի քանի դասարան սովորելուց հետո Զարգանդը ինչո՞ւ պետք է թողներ գյուղի վարժարանը. ինչո՞ւ պետք է անունը փոխեր եւ որպես Սելքոն Մինիթարյան անցներ Ուումինիա, այստեղից էլ Օդեսա, ապա Վերադառնար Կ. պոլիս եւ երթուղի ընտրեր դեպի Ամերիկա, երկուսուկես տարի Նյու Յորքում լինելուց հետո միայն ճամփա ընկներ դեպի հայրենիք, որտեղ էլ զոհ գնար միջկուսակցական բանավեճերին հաջորդած տեռորին<sup>3</sup>:

Անդրանիկը սերնդին պատգամախոս հուշերի իր գրքում, ինչպես

<sup>1</sup> Ա. Նորեան. ԽՀԿ. Ժողով. էջ 190–195; <sup>2</sup> «Հայ պատագական ազգային հիմնա- մյա (1870–1920)», Փ. 1954թ., էջ 95; <sup>3</sup> Ա. Ա. Ա. էջ 89–90:



ԽԱՆ



ՎԱԶԳԵՆ

տեսանք, հիշատակեց նաեւ Վազգեն անուն: Դա իր՝ Կովկասում լինելուց հետո Պարսկաստանի վրայով Երկիր վերադարձի առիթով էր: Ինչը քառասուն հոգուց բաղկացած խմբի մեջ էր, որի ղեկավարներն էին Վազգենն ու Գուրգենը: Ճանապարհը թերում էր մինչեւ Սպահան լիճը: Բայց ափով անցնելու հետապորություն չունենալով, որոշում էն լիճը գտնելորող բարձունքով անցնել: Այդտեղ էլ հենց նըրանց ճանապարհը կտրում էն զինված քրդերը: Հայերը բարձունքի վրա ոչ աջ կարող էին գնալ, ոչ ձախ: Մնում էր հենց տեղում դիրքեր բռնել: Դա էլ լինում է Վազգենի վճիռն ու իրամանը: Կովկաս սկսվում է եւ տեսում մինչեւ մուրն ընկենելը: Հայերը հյուծում են հարձակվողներին եւ առաջընթացի ճանապարհը 2արունակում: Այդ ընթացքի մեջ էր, ինչպես ասվել է, նաեւ դեռևս իր փորձաշրջանի մեջ գտնվող Անդրանիկը<sup>1</sup>: Նրա հոգու խորօս տպավորվել է Վազգենը: Գուցեւ նրա կերպարի մի գիծ էլ թափանցել է նրա եռթյան մեջ:

Վազգենն էլ, բնանվամբ Տիգրան Դերոյանը, վանեցի դերձակի աշակերտ է եղել: Թուրք ոստիկանները հարձակվել, ծեծել էին դերձակ վարպետներին: Աշակերտը կովկաս մեջ էր մտել եւ «քոռունքներով հարվածել անսիրտ զինվորների գլխին»: Այս էր եղել նրա ֆիդայության ակունքը<sup>2</sup>:

Անդրանիկի գործընկեր Ժամանակակիցների անունները հիշատակում ենք ոչ թե նրանց բոլորի թվարկումը սպառելու, այլ հերոսության միօրինակությունը ընդգետելու համար: Ինչնապաշտպանությունը միայն Սասունում չէր: Հուշագրությունների տվյալներով 1894-ից մինչեւ 1899-ը Անտոլիհական թերակղզու հայկական բնակավայրում թուրք-քրդական ուզմական ուժերի դեմ եղել են հայութային խմբերի երեք տասնյակից ավելի ընդհարումներ, չհաշված մյուս կարգի ըմբոստացումները, որպիսից կարող էին լինել ամեն առիթով եւ անհամեմատ հաճախակի:

### Յ ԳԱԼՎԱԿՈՐ ՀԱՅՈՒԿԱՊԵՏԸ

#### Ա Սպանողը անպատիծ չպետք է մնար

Սերոբի սպանությունը ամայություն չստեղծեց, բայց լուրջ խորհրդածությունների տեղի տվեց: Փրկության Հույսն ու հավատը կարող էին սպառվել եւ սրտեր կանգ առնել: Ոչ միայն հայդուկապետին, այլև շարքային զինվորին անգամ այդպես հեշտ չպետք է լիներ շարքից դուրս բերել: Անդրանիկի հաշվով Սերոբի սպանության կովում զոհվել է ուրեմն հայդուկ զինվոր եւ մեկը վիրավորվել, իսկ թշնամին տվել է ընդամենը մեկ վիրավոր: Ուրիշ ե՞րբ էր այսպես եղել: Սերոբի հետ եղած մյուսները մարտիկներ չեն եղել, այլ ընդամենը երեք-չորս ամսվա զինակիր երիտասարդներ (էջ 198): Խաղը ու խայտառակությունը էր սա ամոքա՞նք. թէ՛ օրվա ու վաղվա անհետաձգելի դաս:

Նաև մատնիչին պետք էր շարքից դուրս բերել: Մատնիչությունը պետք էր արմատախիլ անել, որն սկսում էր ճյուղեր արձակել: Մատնիչությունը Սերոբի սպանությամբ չսկսվեց: Նա ինձն էլ ականատես էր ու զգուշացնող, որ կառավարությունը իր կողմը հայերի ընդերքից մարդիկ էր քաշել, ծառայակատար զանգված էր հյուտել, որի միջից ենում էին մատնության ու լրտեսության փորձ ակնկալող անհաներ: Եկ ահա այս ժամին, երբ Թամայյանը, Ապրոն, Հրայրն ու Սուրահը դեռ չեն հասցրել խոնարհության քարոզները հաղթահարել, հիմա էլ հյուսվում էր մատնիչների ցանքը: Մատնության կիրքը բորբոքվում էր եւ ցանցը տարածվում, երբ իշխանության զինված ուժերի դեմ դիմադրության քայլերն անհաջողությամբ էին ավարտվում, երբ այդ քայլերի պատրվակով զորքեր էին մտնում հայոց շենքները եւ տակնության անում, կոտորում ու բնացնում մեկի դիմաց ոչ միայն տասը, այլև հարյուր, տասի դիմաց հազարը ու ավելին: Նման պատմության եզեր շարադրող գրել է, թե Ֆիդայական կովկի յուրացանցյուր անհաջող ելքից հետո «հասարակությունը ենթարկվում էր ուսակցիայի, որի արդյունքն այս էր լինում, որ ստոր տարրերի թիվն ավելանում էր, մատնիչները բազմանում էին եւ այդպիսով անբարոյականացնում հասարակական մթնոլորտց»<sup>3</sup>: Նոյնպես եւ 1894-ի արհավիրքներից հետո: Եղել է բոնությունների ու հարձակումների խաղաղեցման միջանցիկ մի հատված: Բայց այժմ էլ, կառավարական զորքերի ու քրդական զինված զոկատների հարձակումների փոխարեւ, մատնություններուն են տարածում ստանում: Հայ

1. Ա. Նորեան, Դրվագներ < 2. ոաշխակութեան գործութեանից, էջ 116:

գյուղապետերն էլ են սկսում անհանգստացնել հյուծված ու ցավի տակ կը քած բնակչությանը, իրահրելով մատնիշների՝ իրենց համար շահավետ բանարկությունները:

Անդրանիկը զայռությով դեպքը է հիշել: Իր տառնապետ ընտրվելու ժողովը նոր է ավարտված եղել: Սասունի Հեղին գյուղից երեք հոգի են գալիս եւ գյուղացիների անունից զանգատվում մեծահարուստ Մխո-Վարդանի դեմ, որից դժգոհ էին նաեւ մոտակայքի Խշնձորի եւ Ընկուզնակի գյուղացիները: Անդրանիկը Գուրգենի հանձնարարությամբ, իինզ Ֆիդայու գլուխ անցած ուր ժամկա ճանապարհ է կտրում: Անհաջող ժամի են տեղ հասնում: Երեք օր մնացել են գյուղում, ուսումնասիրել: Կրո են հասել այն պահին, երբ Մխո-Վարդանը քրդերով շրջապատված է եղել: Բացված հրաձգությունից երկուական հայ ու քուրդ է գոհկել, իսկ վիճակը դարձյալ մնացել է նույնը<sup>1</sup>:

Պետք էր վիճակը փոխել, ուժերի տարանջատումից անցնել միավորման, խմբերի կապը ամրապնդել եւ «հետաքրքրատեր» մատնիշի սոլոսկման անցքերը փակել: Եթե հարկ չէր, որ խմբերը ձուլվեին, ապա առիթ կար, որ ի մի բերվեին որպես ուժերի գումարում էլ գործի ու գործելակերպի ներդաշնակում: Հենց այդան էլ սկզբնափուլում միավորող էին եւ ի մի բերող Ապրոն, Գուրգենը, Սերոբը... Այժմ ով Սերոբին փոխարիխող հայդուկապետ դառնար, նույն դերը պիտի խաղար: Բայց ոչ տառացիորեն նույնիմաստ եւ նույնաձեւ: Հայդուկապետի դերն ու Նշանակությունը գնալով մեծանում էր: Առավել եւս՝ կենտրոնացման կարեւորությունը:

Դարձյալ հայդուկապետ դեկավարի ընտրությունն է որպես հարց եւ լուծում ծառանում: Նայած թե ով կը նորվեր: Իսկ ասապրեզի վրա դեկավարի արժանի մարդիկ էին՝ Գեւորգ Զավուշ, Հրայր Դժոխը, Սմբատ, Անդրանիկ: Նրանց հետ նաեւ Ֆիդայական խմբերում հաստատուն եւ հեղինակավոր դիրք գրաված Սուրադ Խրիմյանը, որը ծննդով սեբաստացի լինելով, հենց այդան էլ հայտնի էր: Եկ նորից մարդիկ կշուռ էին ու կշուռատում նրանց արժանիքները:

Գեւորգը հզոր էր, ահարկու: Ոչ մեկը կովի մեջ նրա աւել հանդուս ու համարձակ չէր, ո՛չ մեկը: Նրա հմացածն ու փորձը մարտերն էին, մարտերի մեջ հարձակվողին ընկճելն ու տապալելը: Հրամանն ու հանձնարարականը եթե նրան էին տրված, ուրեմն աետք է ի կատար ածվեին եւ կատարվում էին: Նրա կոհիկը խորհրդակցական չէր, այլ մահու եւ կենաց՝ կա՞մ, կա՞մ: Գործը կեսից չէր բռնում եւ կիսատ էլ չէր թողնում: Զկար Սերոբը, խոսքը Գեւորգին դեկավար նշանակելու

<sup>1</sup> «Աղուակներ», էջ 137-141:

մասին էր: Իսկ նա վճռապես մերժել է: -Չէ, -ասել է, - իմ գործը կոյիվն է, - ասել ու նայել է Անդրանիկին:

Բայց դեկավար եւ դեկավարել կարող էին թե՝ Հրայրը, թե՝ Սեբատացի Սուրադը: Կարող էին: Երկուսն ել հակում ունենալու, քաղաքական խնդիրներ առաջ քաշելու, վերլուծելու եւ ծրագրեր կազմելու: Բայց հարկավոր էր, որ նրանք ոչ միայն առանձնանային ու դատողություններ անեին, այլեւ զօր ու գիշեր կովող մարտիկների հետ լինեին. Կողք կողքի, թե՝ կովի ժամին, թե՝ դրանից առաջ ու հետո, լինեին գյուղերում, տոնից տուն, թաքսոնից թաքսոն մտնեին, բարձրանային լեռներն ի վեր, գիշերեին դաշտում՝ փոքրիկ քարակուլի թիկունքում... լինեին այն, ինչ ֆիդայական մարտարվեստն էր պահանջում, մի բան, որի համար աչ ոք հատուկ դպրոց չէր անցել եւ չէր էլ կարող անցնել, որովհետեւ նման բան ոչ եղել էր, ոչ էլ կար: Միակ եղածը մարտերի դպրոցն էր, որից հնչապես մյուսները, իր դասերն էր քաղել նաեւ Անդրանիկ Օզանյանը:

Հայդուկ գինվորները մի որոշ բնավորություն էին ու ներքեաշնարի: Նրանք կանոնավոր բանակ չէին, որ հատուկ սպայակազմ ունենային եւ հրամանատարների բազմություն: Նրանց կոհիկը խմբերով էր, խմբերի անդամների թիվը՝ սահմանափակ: Թ՛ող դեկավարը հանձնարարի, թ՛ող պահանջի, ուղարկի ու կանչի, առանց դրա չի լինի, բայց թող մեջ հետ լինի, այլ ո՛չ հեռավորության վրա: Բոլոր այս գերեզ ասես լինեին Գեւորգինը, որը վերջին ժամանակները միշտ Անդրանիկի հետ միատեղ էր՝ որպես ընկեր ու գինակից: Արդեն ընթացքում Գեւորգը խորհրդակցում էր Անդրանիկի հետ եւ ուսկընդուռ նրա խոսքին. Անդրանիկը հաշվի էր առնում նրա կարծիքն ու գնահատում նրան որպես մարտական գործին գիտակ ընկերոց: Բայց երբ Գեւորգը կտրականապես մերժում էր, եթե Հրայրն ու Սուրադը առաջնությունը Անդրանիկին են տալիս, այլեւ բոլորին մեկ առ մեկ ընսարկության հարկ չի լինում: Դեպքերի ընթացքով ու ընկերների միահամուտ համաձայնությամբ Անդրանիկը ընդունվում է ճանաչվում և որպես հայդուկապետ այն խմբում, որը Սերոբի օրոք էր ձեւավորվել, ապա նաեւ հոչակ հանում որպես Սաառու լեռնաշխարհում գործող բոլոր խմբերի կենտրոնական դեկավար դեմք, որպես ընդհանուր հայդուկապետ: Դրանից ոչ մեկը չնսեմացավ: Կոհիկը մտավ նրա փուլի մեջ:

Տարիներ անց նույն այս օրերի քաղաքական գործին ու պատմաբանը գրելու է: «Սերոբի դերը ստանձնեց Անդրանիկ», Սերոբի համեմատ «ոչ նվազ կտրիճ եւ ոչ նվազ կարող՝ խելքով ու բնագոյվ: Ի ծնե ուազմագետ, քաջածանոթ Հայաստանի լեռ ու ձորերին, անզու-

զական առաջնորդ ու հրամանատար, նույնքան հանդուգն ու անվեհեր, որքան շրջահայաց եւ հեռատես»<sup>1</sup>:

Որպես հայդուկապետ առաջ մղված Անդրանիկի առաջին հանձնարարականներից մեզը եղավ հաշվեհարդարի գործը գլուխ բերելը: Պետք էր մատնիչներին շարքերից հանել: Անդրանիկը անձամբ ինքն էր հետախույզներ կարգել. «Ավելի սպասության վերաբերությամբ, — հիշել է նա, — լրտեսներս են Ավելի հորենոր տղա Մանուկը եւ շուշնամերկցի Սոսո—Դոնեն»:

Եկ ինչ են պարզել հետախույզները: Պարզել են, որ Ներքեւում մատնիչն է, Վերեւում՝ իշխանությունը: Կարձատրությունն է՝ առաջ: Ավել եղել է Սուշում, Ավել անձամբ կապ է ունեցել Մուշի կուսակալի հետ: Այցելել է նրան, հանդիպել, խորհրդակցել, հանձնարարություններ է ստացել: Անդրանիկն իմացել է, որ կառավարության վարձատրած փողերը Ավել «կենօց գոյակի տակն է կարած» եղել: Իմացել է նաեւ մատնիչի գործընկերներին: Եկ բոլորը, ամբողջ շղթայով, վերցվել են հսկողության տակ: Պարզվել է, որ սպասության շանցեր են գործադրվել նաեւ Անդրանիկի նկատմամբ: Իմացել են հետախույզները եւ հաղորդել Անդրանիկին նամակով, ծրարով. «Որ հաց ուտես, տանուտերը հետո նստեցես, զանազան տեղերից ուտելիքներ նվերներ կուտան՝ չուտես: Կառավարությունը ասոր անոր ծրագոռով կուզետ ձեզ թունավորել»: Մի ուրիշ նամակ. «Խիստ զգուշություն ձեռք կառնես, պիտի թունավորեն ձեզ. երկու օր մի տեղ չմնաս, ամեն մարդ տեղի չգիտնա»:

Եկ Անդրանիկը խոստովանում է, թե ինչպես ինքը զգուշացել է, ոչ ոք իր տեղը չի իմացել եւ կերակուրն է ոչ ոքի հետ չի կերել: Իսկ եթե թաքստոցում եղած ժամանակ մեկի տանն էր եւ ուզեր-չուզեր պիտի ուտեր, միշտ մեկին կանչել է. ճաշը, սեղանի հացը միշտ խառնել է. նոր կերել: Այլեւս զգույշ է եղել նաեւ իրեն ընծառակած սննդի նկատմամբ: Գիտակցել են ուղարկողները եւ, ինչպես հիշում է Անդրանիկը, այլեւս նրան ամեն մարդ նվեր չի ուղարկել:

Այսպես սպանվել են եւ Սերոբին սպանող Ավելն, եւ նրա աջակից Կրպոն: Դրանից հետո մատնության գործին են նվիրվել Ավել կնոջ երբայրները: «Հակահետախույզոյնը նրանց հարցն էլ է լուծել»<sup>2</sup>:

Հայտնի է դառնում Անդրանիկին եւս թունավորելու եւ սպանելու ծրագիրը: Ֆիդայիները Անդրանիկի ցուցումներով հետախուզում են չորս կողմը. մտովի քննում իրենց հետ շփվող եւ շփկել կամեցող ամեն մեկի անցյալը. սկսած 1894-ի դեպքերից, նրանց մտադրությունները: Անդրանիկը հաշվել է, որ կարճ ժամանակամիջոցում

1 Մին. Կարանեան. Խչ. էջ 234: 2 «Անդրանիկի լուցեր», էջ 202, 208, 210:

բացահայտվել եւ շարքից դուրս է բերվել յոթ մատնիչ: Այս բոլորը 1899-ի ուշ աշնան եւ հաջորդած ձմռան ամիսներին: Անդրանիկը սկզբում, ընկերների հետ գյուղից «զյուղ անցնելով, թաքստոցում էր անցկացնում, զարնանից» Նեմրութ լեռան պատսպարաններում. «Պահ հով մը կը փէռ. լեռան առատ ցիսներեւ վառված կրակը հազիկ մեր թմրած արյունը կը տաքցներ քիչ մը». — Վերիիշել է Մբատը<sup>3</sup>:

Թանի դեռ Խալիկը առող-փառող շքում էր Սարունի գյուղերում եւ ահ ու սարսափի մեջ եր պահում հայ բնակչությանը. Անդրանիկը մատնիչներից բացի հսկողություն էր կարգել նաեւ Խալիկի վրա, սպասելով Սերոբի մահվան վրեժը լուծելու հարմար պահի: Ինքը եւ զիսակիր ընկերները բաշխվում են, բաժան-բաժան ու իրար լրացնող հանձնարարություններ ստանում այն գյուղերում, որոնք ընկած են նրա անցման ճամփաների վրա: Ի վերջո հայտնի է դառնում, որ Խալիկը Մուշից դուրս է եկել եւ անցնելու է մոտակայքի Մարնիկ գուղով: Դեպի այդ կողմ է աճապարում են Անդրանիկն ու իր ընկերները՝ զինված. կովի պատրաստ: Թաքստոցից կրակում են. Խալիկն անվասա է մնում, բայց խփվում, վայր է ընկնում ձին. իր հետ գտնին տապալելով տիրոջը եւ իր ծանրության տակ պահելով նրա ոտքը: Դրանից հետո վերջին հարվածը դժվար չէր մոտեցող Անդրանիկի համար: Բայց այդ պահին նա հապաղելու պահանջներ է լսում: Չ՞է որ մինչ այդ Անդրանիկը, նրա հետ Գեւորգ Չափուշը եւ յոյւնները որոշել են սպանելուց առաջ իմանալ լրտեսների անունները. որինեւ հաջորդում է գլուխը կտրելը, խուրչինից պիտանի հրեցը վերցնելը, որոնց մեջ եր նաեւ սուլթանի այն շքանշանը, որը տրվել եր որպես Սերոբի սպանության վարձ: Այդ շքանշանը Անդրանիկն ինքն է հետո կախում իր վահց. ի ապացուց եւ ի ոգեւորություն այն բանի, որ չկա դահիճը եւ որ հայության վրա սուրբարացնող ամեն որ այսուհետ նույն բախտին կարժանանա:

Խալիկը քրդական խարզանցիք կոչված ցեղից եր: Նա ազեցիկ հորեղոր տղաներ, նշանավոր զինակիցներ ուներ, որոնք լավ գենք ունեն ու զորք: Նրանց բոլորի սրտերն այրվում էին վրեժի թունդ կրակից: Անդրանիկին հետամուտ են նաեւ նրանց բարեկամ մյուս ուրուց ցեղերը: Ամեն տեղ են որոնում նրանք Անդրանիկին: Իսկ Անդրանիկը իր հետքը կորցնում էր, միսալ գնացողներն էլ մտնում են գյուղերն ու եկեղեցները, ճողովն ու ահաբեկում՝ «Անդրանիկ, անձնատուր եղիր»: Բացառված չեն եղել վախկուտ երկերեսանի հայերը: Այսպիսից եղել են գյուղապետերի մեջ, կառավարության եւ նրա տեղական իշխանությունների հետ գործ ունեցողների մեջ: Նրանցից մեկն էլ. Անդրանիկի պատմածով, թոռ Ալոն է: Շրջել է նա գյուղերում եւ բարձրածայն կանչել.

1 Ակր. Եղիշեան. Խչ. էջ 202: 2 «Անդրանիկի լուցեր», էջ 202, 208, 210:

«Հայե՛ր. Եկեք ցուցուցեք Անդրանիկը. զոնե մենք ել են սպանենք. որ կառավարության քով պատիկ ունենանք»<sup>1</sup>:

Զարմանայի պատմություններ է անում Անդրանիկը եւ այն մասին. թե ինչպես մատնիչների հետ. այսպես ասած. դաստիարակչական աշխատանք է տարել. համոզել. բացատրել է. որ նրանք թողնեն այդ ստոր գործը: Եվ միշտ չէ. որ սպանությունն է որպես հաշվեհարդար կիրառել:

Նվազաթիկ մատնությանը հակառակ էր ժողովրդի համատարած անձնվիրությունը հայդուկներին: «Հայ երիտասարդները գյուղերում ու քաղաքներում հակադրվում են ու մարտի մեջ մտնում բոլոր տեսակի հալածիչների դեմ: Եվ քիչ չեր պատահում. որ մատնիչներին նրանք քաջարար գինաթափ են անում ու գենքերը շտապով հասցնում խմբագետներին: Սմբատը պատկերավոր է հիշել. «Հեղափոխության փոթորկակի շունչ մը վարակեր էր հայ երիտասարդները. որոնք իրենց սովորական խոհեմությունը մոոցել են: Օր չեր անցներ. որ չստիշը թե երիտասարդներ ոստիկան մը գինաթափ ըրած են եւ անոր գենքը շակած՝ Սասուն ապաստանած են: Չենք հայթայթելու ամեննեն ոյուրին միջոցն ալ այդ էր. բայց ամեննեն ալ վտանգավոր»:

Եղել են դրանից ել հոգիչ եցեր: Սմբատը ասում է՝ «Պատիկ օրինակ մը հազարներուն մեցեն» եւ պատմում է հետեւյալը: «Հայդուկների խումբը Դարս գյուղում է եղել: Հետաքրքրասեր ընակչությունը երեկոյան խմբել. հակադրվել է տեսնելու իրենց պաշտպաններին: Հարցեր են տվել եւ պատասխաններ ստացել: Վերջում սկսվել է հանգանակությունը: Չմոռանանք. որ վերջին հաշվով ժողովուրդն էր պատսպարում ու խնամում հայդուկներին: Հավաքութք մոտենում եր իր ավարտին: Այս պահին անկյունից վեհերոտ մի ձայն է լսվում.

«— Եղբայրնե՞ր, զիս ալ լսեցեք»:

Կողոքից մեկը վիրավորական բացականչում է.

«— Գրողը տանի քեզ ալ. ըսելիքդ ալ: Եկեր ենք քե՞զ զսելու: Ժողովի հեկավար Հաջին սաստում է նրան:

Սմբատը շարունակում է իր պատմությունը:

«Անկյունը մը. դանդաղ քայլերով սկսավ հառաջանալ կույր աղջիկ մը. որ մուրացկանությամբ կապրեր. մոտեցավ Հաճիին ու դողդու ճայնով ըսավ.

— Մի մերժեք եղբայրս. աս ալ իմ ներս թող ըլլա: — Ու սեղանին կրա դրակ 5 դրու մասրուց. զույգ մը գուլպա. մաս մը ցորեն եւ գարի՝ տոպրակի մը մեց»<sup>2</sup>:

1 Անդրանիկի յուղերը. էջ 222. 224:

2 Ակր. Երիցեանց. Խմ. էջ 203-204:

\* \* \*

1900 թվականի ամուսնը Կորիվը մի կողմից մատնիչների դեմ եր՝ զյուղերում ֆիդայական խմբերի ամուր հենարաններ ստեղծելու համար. մյուս կողմից՝ պաշտպանական ընդհարումներ են հարձակող ոստիկանական գորախմբերի եւ քրդական զինված թալանչիների դեմ: Նախազգուշական ընույթ ունեն: Կարեւոր խնդիր էր դաշտում հավաքած բերքին պահպան կանգնելը. դաշտից մինչեւ ամբարները տանելիս հարձակվող թալանչիներին սաստելը: Թալանը այդ տարի առանձին ծագման ստացավ: «Հանկարծակի վրա էին տալիս թուրք ու զուրդ զինախմբերը: Պետք էր հակահարվածի պատրաստ լինել:

Սուլթանն իր տեղական իշխանությունների հետ խորամասեկության է դիմում: Իբրև թե հայոց գյուղերի հանգստության. նրանց հարձակումներից ապահով պահելու համար նրանցում կարգվում են զուրդ եւ թուրք. այսպես ասած. պահպանները: Եթի տեսակետից կարծես թե վատ չեր. պետք է հետեւին. որ անակնկալներ չինեն: Բայց. գործ բռնողների ուզածի պես. հակառակն է ստացվում: Բացի այն. որ գյուղացիների ուսերին այդ նոր պաշտոնյաներին վարձատրելու բռն է ավելանում. պարզվում է նաև. որ դրանց գլխին նոր վերահսկիչ—վերակացուներ են. որոնց գյուղերունը. որոնց նշանակում ու գրադմունքը հայդուկային խմբերին սպառնում են լիովին դադարեցնել իրենց գործերը. որին եթե նրանք հակառակեն. որքան էլ թաքնված ձեւով գյուղերը մտնեն ու դուրս գային. մեկ է. դարձյալ լինելու են մատնիչներ եւ դարձյալ նրանք հալածվելու են ու ձերբակալվելու»<sup>3</sup>:

Զգուշանալու նկատառումներով Անդրանիկը գյուղերում կամ խմբերի մարդկանցից էր պահպաններ դեռւմ. կամ տեղացիներից էր ումանց առանձնացնում. զինում եւ հանձնարարականներ տալիս: Պահպան էր զինում գյուղի ներսում. գյուղի մոտակայքում եւ սարերի կատարին ու դեպի բերող ճամփաներում: Ոչ ոք այցից չափություն է վրիպեր: Հարձակվող. թալանի եկող մարդկանց դեպի գյուղերը շարժվելու դեպքում պետք էր անհապաղ ահազանգել: Իսկ Անդրանիկը գյուղից գյուղ էր անցնում. հավատարիմ մարդկանց միջոցով տեղյակ պահելով իր ուր լինելու վայրն ու ժամը:

Անդրանիկի համար մշտապես կարեւոր ու բարդ խնդիր էր գյուղերին գենք տալը. զյուղացիներին զինելը: Հայդուկները գենքը կամ տեղում են հայթայթում. կամ զնում հեռուներից են բերում: Հեռուները դարձյալ Ուսւաստանն էր՝ Սեւաստոպոլը կամ Սիմֆերոպոլն ու Յալթան. Կովկասն էր՝ Կարսով դեպի Բաթում. Ալեքսանդրապոլ. իսկ այդ տեղերում կպարզվեր նաև թե դարձյալ ճանապարհը դեպի ուր

1 Լ. Լուսեան. Անդրանիկի բորբոք Անդրանիկ Կոնկու. Դ. 1980թ.:

շարունակել: Զինելը թե՛ զենք տալն էր, թե՛ փամփուշտ, թե՛ արճիճ ու վառող, որոնցով գյուղացիք իրենց էին պարկումները լցնելու:

Ժողովրդաբություն էր: 1900—1901-ի ձմռանը ժողով է գումարվել: Հայուկների ջանքերով արճիճի պաշար է ստեղծվել: Անդրանիկն իիշում է՝ «ժողովի միտքն այս էր. մենք մոտ 90 լիտր արճիճ ունեինք, որ պետք է բաժնենք ժողովրդի վրա...»: Արճիճը պետք է տրվեր գյուղերին՝ ըստ նրանց ունեցած հրացանների թվի: Բաշխման գործի վրա պետք էր հսկողություն սահմանել:

Չենք տվյալը նաեւ զինվոր էր պահանջում: Զինվորներից ոմանք ուղղակի մտնում էին խմբերը, մյուսները պետք է պահեստային լինեին: Ամեն գյուղ պետք է տար իր բնակչության թվի համեմատ: Թե՛ զինվորների, թե՛ պահեստայինների հագուստի հարցը խմբերի պարտականությունն էր. «Մենք պարտական էինք տարին մի ձեռք զգեստ տալու», պատմում է Անդրանիկը: Խմբերի ու նրա դեկավարության պարտըն էր նաեւ զինվորներին զենքի եւ մարտական գործի ուսուցումը. «Դրանց զենքի վարժեցնելը... մեզի կիյանը»:

Այս բոլորը վերաբերում էր Սասունին: Անդրանիկը թվարկում է գյուղերը. Գելիեգուզան, Շենիկ, Սեմալ, Իշխնձոր, Տալին, Աղբակ, Աղբերմ, Թոփ, Երիցանք, Շուշնամերկ, Գյուղաշեն... կարգուկանոն էր հաստատված: Գյուղերից ամեն մեկին մարդիկ էին ամրացված, ամեն մի գյուղ գտներ իր պարտը Երկրապահ պաշտպանական գործում: Այլևս պարզ էր, որ եթե ոչ այսօր, ապա վաղը հարձակում է լինելու, գտնեին, որ այլևս զենքն ու հարձակումն էին գյուղերի նկատմամբ սուլթանի ու նրա տեղական պետերի վերաբերությունը զինավոր միջոցներու ու ձեւերը: Ազդեցությունը բնեցնում էր համապատասխան հակազդեցություն: Իհարկե, այստեղ համապատասխան բառը ամենից ավելի անհամապատասխան բառն է, որովհետեւ՝ ինչպէ՞ս կարող էր անտեր, անտիրական գյուղերի ինքնազնումը հշեսանության զորքը գումարելու եւ զինելու չափերին համապատասխան լինել: Համենայն դեպք սա նոր երեւությ էր: Անդրանիկի հայուկապետության բնորոշ կողմերից մեկն էլ հենց այդ եր՝ հաստատել կարգուկանոն. Մատուցնել մանրակրկիտ կազմակերպածություն: Սա նոր երեւությ էր եւ նոր մակարդակ, որ արքուն էր բոլորովին ժողովրդավար հիմունքներով. Նախ եւ առաջ բնակչության կամքով ու համաձայնությամբ: Անդրանիկը գոհունակությամբ է իիշում՝ «Հասարակությունը ուրախությամբ ընդունեց մեր բոլոր առաջարկները... Մեր ներկայացրած պատրաստի ծրագիրը բոլորն ալ ստորագրեցին»:

Չի գունագարդում Անդրանիկը եւ թողնում է, որ սերունդներն իմանան, որ եղել են նաեւ տարակարծություններ, որը հիշենք եւս հաշվի եւ առել: Սա, այս մանրակրկիտ կազմակերպումը, պաշտպա-

նական: Գործի ըստ հնարավորին բոլոր կողմերի հաշվառումը եւ դրանք հոգալը, անդրանիկյան հայուկապետության նորամուծությունն էր, առանձնահատկությունն ու առավելությունը: Գյուղացիների տներում պետք է լիներ որոշածին համաձայն ե՛ արճիճ, ե՛ հրացան, ե՛ հագուստ:

Ոչ միայնակ եր գործում Անդրանիկը, ոչ էլ ինքնազնում: Նրա մեծ խորհրդատուն Հրայրն էր: Ինքը խոստովանել է. «Մենք ինչ որ կը նեինք. Հրայրի հետ կը թղթակցեինք»: Կերզ Նշված գործերից առաջ նամակ է գրել Հրայրին. «Եկուոր Շենիկ, պէտք եղած գործերու մասին թիվ մը մը խորհրդակցինք»: Նամակի ոճը խորհրդակցական է. «Եթե չես կրնար գալ, մենք կուզանք»: Իսկ Հրայրը պատասխանել է. թե ավելի լավ է ինքը գեն. քանի որ ճանապարհը նրանց համար վտանգավոր է:

Հրայրը հեղինակություն էր եւ դեկավար դեմք: Նա խստապահանց եր կարգապահության նկատմամբ: Եթե որոշվում էր մի քան, ուրեմն պետք է կատարվեր: Ի պատասխան Անդրանիկն ասել է. 1895 թվականից մեզ ճանաչում ես. «Գու գիտես, որ մենք դիսցիպլինայի կենթարակնվինք»<sup>1</sup>: Ասել է թե՝ ինքն ել կարգապահության պակաս կողմնակից չէ:

Անդրանիկը չէր զլանում ասել, թե ինքը լոկ հայուկապետ դառնալու համար չի զենք վերցրել ձեռքը: Եվ նա ինքը, այլ ոչ թե ուրիշ մեկն է գրել ու պատմել հետեւյալ դեպքը:

Տերկեւանք գյուղում ժողով է կայացել: Ներկա են եղել Սասունի տարբեր գյուղերի խմբապետերն ու բնակչության ներկայացուցիչներու: Ներկա է եղել նաեւ Հրայրը: Երկար ու բուռն վեճ է բռնկվել: Եղրակացվել է, որ այսուհետ «խմբապետը ինքը Հրայրը ըլլա»: Հրայրը համաձայնել է, բայց եւ խնդրել, որ իրեն 15 օր ժամանակ տրվի, ուրիշ գործեր ունի, վերջացնի եւ կստանձնի խմբապետությունը: Անդրանիկն ասել է. թող լինի 25 օր. միայն թե չզլանա, ձեռնամուկն լինի: Բայց չի վերադարձել ոչ 15, ոչ էլ 25 օր հետո. «Անցակ տարի մը՝ ելի չեկավ»: — հիշում է Անդրանիկը<sup>2</sup>:

Սասունի հայուկապետը շարունակում էր իր սիրած գործը: Շարունակում է դժվարին կացության մեջ՝ ոչ թե գյուղերում եւ այս էլ ըստանեկան կյանքը ու կենցաղով, այլ գյուղերից հեռու սարերի թաքսոնցերում՝ թե զօր, թե գիշեր: Եվ ի՞նչ է տեսնում. Մեկ ամիս հետո, 1901-ի մայիսին, 1500 հոգի կառավարական գործ է գալիս, որպեսզի Սասունի Շենիկ, Սեմալ եւ Տալինի գյուղերի մոտակայքում գորանցներ պատրաստի, գյուղացիների նկատմամբ հսկողությունը մշտական դարձնելու, հարձակումը, նրանց սաստելն ու ճնշելը՝ հեշտ: Եվ դա բացարկվում էր որպես հոգատարություն հայ:

1 անդրանիկի լուցքը. էջ 250: 2 և. առ. էջ 262—263. 265:

գյուղերի նկատմամբ: Գյուղացիք բռնկվում են եւ դիմադրում զորանցներ շինելուն: Երեւում է, գյուղերի որոշ ներկայացուցիչներ սկզբում փափկաշիրտ են գտնվել եւ համաձայնել են: Բայց Անդրանիկի ըմբռուտացում ու բացատրությունները բոլորին մի կարծիքի են բերել, որ չաետք է թույլ տալ: Իշխանության ներկայացուցիչները, կարծես թե չիասկանալով, զարմանում են բացատրելով, իբր Անդրանիկն է պատճառը, որ գյուղացիք մտքները փոխել են: Անդրանիկի գլուխ Վտանգ է կախվում: Այդ Միջոցին Հրայրը նամակ է գրում, որ Անդրանիկը հեռանա Վտանգավոր Վայրից, գտնելով, որ Անդրանիկին կարող են մատնությամբ որսալ եւ զրանցներն ել շինել: Անդրանիկը ինձնակամ չի կատարում Հրայրի ցուցումը, իենց այնպես թողնել ու հեռանալ: Շէ. Անդրանիկը դա չէր: Նա ուզում է, որ իր քայլը մարդիկ իմանան, հայտնեն իրենց կարծիքը: Կանչում է գյուղերի ներկայացուցիչներին խորհրդի: Որոշվում է, որ Անդրանիկը ոչ թե առհասարակ հեռանա, այլ մոտակայքում թագածոց մտնի, իսկ գյուղացիք, որքան կարող են, հակադրվեն ու արգելեն զրանցների կառուցմանը, եւ երբ այլեւս նրանց ուժերը չբավարարեն, այն դեպում թող Անդրանիկը հասնի: Ի վերջո զրանցներ շինելու հարցը մեջտեղից դուրս է գալիս:

\* \* \*

Նոր դարի առաջն տարին կիսվում, գյորվում եր դեպի երկրորդ տարեկեսն ու տարեկերջը: Ի՞նչ երազանքներ, ծրագրեր ու սպասելիքներ ուներ երեսունվեցամյա կենսունակ մարդը, որը այլեւս ոչ ընտանիք ուներ, ոչ էլ՝ բարիս սովորական իմաստով, անձնական կյանք, ոչ նոյն ձեռնու աշխատանքի մի վայր ուներ, ոչ էլ ապրուատի ապահով միջոց: Եվ մտածո՞ւմ եր արդյոք նա այդ ունենալ-չունենալու մասին: Նա, որ հաստատուն մահճակալ ու անկողին անգամ չուներ, նա, որի ոչ ցերեկն եր ցերեկի նման, ոչ էլ գիշերը՝ գիշերի: Կար՞ող եր նա շեղվել իր ևախընտրած հուսից, մտնել մի հարկի տակ ու սպասել, թե՛ ով գիտ, գուց թե իր տուսը հեռու մնա հարկահաններից, թալանից ու ավերից: Թե չէ՝ ինչի՞ նման է այս կյանքը՝ ամեն օր է մահկան վտանգը եւ ամեն ժամ, բայց ոչ մահն է գալիս քեզ տանում եւ ոչ էլ ապրելո է ապրելու նման: Կարող եր, եւ այն էլ շատ շատերից ավելի լավ: Նա անձարակ չեր, որ չկարողանար մի ընտանիք ու մի գերդաստան ապրեցնել ու ապահով պահել: Բայց արժե՛ր արդյոք մի գերդաստան երջանկացնելու համար աչքերը փակել մի ամբողջ ժողովրդի ողբերգության առջեւ: Նրա բոլոր սխրանքների մեջ այս փիլիսոփայական եզրահանգում եր մեծագույ-

1 և. ա. էջ 285-289:

նը, բայց ոչ այդ երեւույթի՝ որպես փիլիսոփայության հայտնագործումն ու ըմբռումը, այլ այն որպես կենցաղ ու առօրյա ապրելը: Անդրանիկը՝ Փիլիսոփան, ո՞վ կիավատար, եւ արդյոք ինքը թույլ կտա՞ր, որ Մեկն իրեն այդպես անվաներ, մյուսն էլ դեռ մեծարեր ու գովերգեր որպես այդպիսին: Նա ինքը կարհամարհեր, կծաղրեր փիլիսոփային էլ, փիլիսոփայելն էլ եւ ինքն իր աչքում կընկեն. Եթե հաշտվեր նման խոսքերի ու այդպես խոսդուների հետ:

— Ինձ ծաղրելու ուրիշ ալ բան չտա՞՞ք. պարապ բաներին վերը տվեք. — հավանաբար, կասեր:

Սա չի նշանակում, թե նա հեռու եր մարդկային թուլությունից, ինչն իր անձը մեծարելուն ունենուի լինելն է, իր նախընտրած գործի մեջ իր հմտությունն ընդգծելը: Եթե համբերատար հետեւեց նրա կյանքի պատմությանը, անպայման առիթներ կունենանք տեսնելու, թե ինչպես իր ոչ այնքան քաջությունը, որքան ուազմի գործի մեջ հմտությունն է ընդգծում: Սա էլ իր պատճառն ուներ:

Տարին շարունակում եր գլուխել դեպի տարեկերջը, որ 1902 թվական դառնար, իսկ Անդրանիկին կարող եր թվակալ, թե կայութք է, սպասում ու աղքատացում, հույսերի խափանում, որովհետեւ իղձերը, որ կային տարեսկզբին, չէին իրականանում, հալածանցները, որուց կրեցին մարդիկ անցնող տարի, ոչ թե նվազում. այլ բազմապատկում են:

Ի՞նչ աներ թեկուցել հզորագոր անհատը, ի՞նչ կարող եր անել: Ինչպիսի հաճույզն սուլքանին մեսամարտի կիրավիրեր, ինչպես որ հեթարքային հնում եղած կարգերն են, ինչպիսի հաճույզը: Ինչպես նա մեծ բանակում գինվոր կիխեր կամ հրամանատար, եթե հնանար, որ ժողովրդի աղատագրական կովի վերջնական նպատակը որոշվում է բանակների բախումով, ինչպես նա ձեռնամուխ կիխեր գենքի գործին եւ ինչպես նկարժեցներ իր գինվորներին, եթե բանակ ունեցող կամ ունենալու հնարավորություն ունեցող երկրի ու ժողովրդի զավակ լիներ: Հայդուկաբետը կարող եր 1901 թվականի ընթացքով դեպի 1902 թվականը բարձրացող օրերին ու ամիսներին այդպես խորհել եւ գարձալ հույսը միայն իր ջլապինդ բազուկների վրա դնել ու հիշել իր անդապաճան, նվիրյալ հայդուկ ընկերներին: Ի՞նչ անիրազ աշխարհ է, քիչ է, որ սուլքանը նվաճել է հայոց պատմական հողերը եւ նստել նրանց վրա, ծնկի բերել իր ժողովրդին: Այդ բոլորից զատ նա ուներ բանակ՝ նվաճվածին, ծնկի բերվածին հոգսի բեռան տակ պահելու, որ նա չկարողանա ոտքի ելնել, հազիվ հասցնի օրվա սեւ հացը վաստակել, որպեսզի ուրիշ բարիցների մասին այլեւս պահ չմնա խորհելու: Ինչպես այլեւս պահ չմնա խորհելու: Ինչպես այլեւս պահ չմնա խորհելու այս

անհրավության դեմ, որպեսզի մահին հանդիման կանգնած իր ժողովուրդը շարժեր մարդկային գուրքը: Եկ մի՞թե լուեն ու համբերելս եր ավելի լավ լինելու: Գուցե թե ժողովրդի ջղարձակումն ու բազուկների տարածումը հիմա էլ պատրվակ դարձվեր հալածանքի մամլակները սեղմելու համար: Բայց մի՞թե անցյալ դարերում լուս ու անտրուսչ չեր եղել նա. նորից քանի՞ դար ու հազարամյակ պիտի անձայն քարշ տար իր բեռք, իսկ աշխարհի զորավորները, որոնք չեին զլանում կարեցանք ուղերձներ հոգել իր ժողովրդին, շարունակելին քար անտարերությունը: Եկ Անդրանիկի ուղեղում արթնանում ու կրկնվում են «սթափեցնել», «ահազանգել», «ուշադրություն բեւեռել» բառերը:

Մեն-մենակ սուլթանի զահը կործանել չեր կարող. պետք եր ժողովուրդ ոտքի հանել. պետք եր քաղաքակիոթ մարդկության ուշադրությունը գրավել:

Եղելությունը Անդրանիկն ինքը պատմել է դեպքի օր անց. նախ որպես հոդված. իսկ մի քանի տարի հետո՝ որպես հուշերի գիրը եւ ավելի ուշ. շատ տարիներ անց. հրապարակագիրն է Անդրանիկի պատմածով գրի առել եւ հրատարակության հանձնել<sup>1</sup>:

1901 թվականի հոկտեմբերին Սասունի Գելեգուզան գյուղում Անդրանիկն իր զինակից ընկերների հետ խորհրդակցություն է գումարել: Նպատակն է եղել հայոց հալածանքները մեղմելու միջոցներ գտնելը: Անդրանիկն այդպես էլ ասում է՝ «Հայ ժողովրդի վրա ծանրացող տառապանքը մեղմել եւ թուրքական ու քրդական հարաբերություններն ու հալածանքները դադարեցնել»: Դրա համար պետք եր մի այնպիսի գործ կատարել. բացատրում է իր միտքը Անդրանիկը. որը «ցեսեր բուրք բարձրագույն մարմինը», շարժեր դեսպաններին, եւ թուրք-քուրդ հարձակողներին ցույց տար. որ հայը նաեւ պաշտպանվել գիտ ու հարձակվել. իր արժանապատվությունն անաղարտ պահել: Եկ այդ գործը պետք է կատարելին հայուկները. նրանց ղեկավար Անդրանիկը:

Նպատակահարմար է ճանաչվում Սուշից ոտքի մեկուկես ժամվածապարհի վրա զնուվող Սուլը Անաթելոց վանքը: Զգուում էինց նոր ընկերներ ձեռք բերել. ներգրավել գործի՝ բացատրել է իր մտադրությունը Անդրանիկը: Զգուում է եղել նաեւ որոշ մարտական պատրաստություն ձեռք բերել: Այս բոլորն էլ հենց այն էին. ինչո ահազանգելն եր. լայն հասարակայնության ուշադրությունը հայոց խնդրի վրա բեւեռելը<sup>2</sup>:

<sup>1</sup> Տե՛ս Անդրանիկի հոդված «Իրոշակ» թրոքան. հունի 1902-ի հունվար 7-ին. տպական առարկին (N4). ապա՝ մասնակիկ յուղուց. Խուե՛ Լ. Լիլեթեան. Անդրանիկի թրոքան Անաթելոց վանքի կողմէ... Պ. 1966թ.: <sup>2</sup> «Իրոշակ». ապիլ. 1902թ.. էջ 51-52:

«Նամենի՝ ավելի քան մեկուկես հազարամյա. բավական մեծ ու շքեղ շինություն էր Սուաքելոց վանքը. հայ շինարկեստի ու ճարտառապետության նշանավոր պատմական հուշարձան: Կանքում նաեւ շուրջ յորանասուն որբեր են ապրում, որոնք նույն տեղում էլ կրոնի ու լեզուների դասեր են անցնում եւ արհեստների մեջ վարժվում: Կանքն ուներ իր բնափակ տնտեսությունը՝ այգիներ. արտեր ու արոտավայրեր. պահում էր կովեր. եղներ ու ոչխարներ. ուներ գոմեր. պահեստարաններ. ջրաղացներ ու թուրատուն. վանականներին, աշակերտներին, ուսուցիչներին ու տնտես աշխատողներին ապաստանող սենյակներ ու մոտ քառասուն այլ՝ հատուկ ուխտավորների համար հատկացված կացարաններ:

Եկեղեցին Անդրանիկը պետք է ամրոցի վերածեր. այստեղից իր վրա հրավիրեր իշխանությունների ուշադրությունը եւ մարտահրավեր նետեր նրանց զինական ուժերին: Անդրանիկն իր գործակից զնկերների հետ մոտակա գյուղերի երիտասարդներին հրենց ունեցած գենքով հանդերձ վանք հրավիրելու միջոցներ է ձեռնարկել. ձգտուով. որ հրենց գործը ընկալի ոչ թե որպես մի խումբ մարդկանց կրթիչների ընդունում. այլ որպես. ինչպես ինքն է ասում. ժողովրդական շարժում. որպես ողջ հայության սպառված համբերության պողոկում. որը տեղից տա ժողովրդի վիճակը ամորող բարենորոգումների: Այդ նպատակով հոկտեմբերի վերջին. նոյեմբերի առաջին օրերին վանք են եկել ինքն ու իր ֆիդայի տղաները. ընդամենց երեսուն հոգի. որոնց տեղում միացել են հազիկ մեկ տասնյակ երիտասարդներ Ֆրոնք գյուղից: Կմիանալին ավելի շատ. եթե հշխանությունները շուտ չկոահեին եւ վանքը հենց գործի սկզբից ել չպաշարեին<sup>3</sup>:

Նոյեմբերի 3-ին թուրք զինվորների փոքրիկ մի խումբ. հետախուզական նպատակներով. զալիս. պահանջում է. որ դուները բացեն. իբրև թե պարզապես ուզում են վասք մտել: Դրսում մնացած տղաներին վտանգի չենթարկելու նպատակով դուները բացվում են. թուրքերը մտնում. բայց եւ շուտով հեռանում են վանքից: Հաջորդ օրը. կառավարությունը. իմասալով հայուկների վանքում հաստատվելը. անուշադրության է մատնում. ենթադրելով. թե այդ ձեւով գուցե նրանք հեռանան վանքից: Բայց արդեն ամսի 5-ին լուր է հասնում. որ կառավարությունը պատրաստվում է հրացանով ու թղանառներով զինված զորք ուղարկել վանքի դեմ: Պետք եր դիմանալ եւ դիմադրել. յանապահն որ վանքում մի ամսվա ջուր կար ու պարեն: Դրանց ավելացվում են բերու կերս բերած կովերը. մոտակա բերդակ գյուղից եւ ուղարկված այլուրով լի ապրերը: Սոտակայքի գյուղի տղաները.

<sup>1</sup> և առ.

թեւ չհասցրին վանք մտնել, հեռվից համերաշխության համազարկ էին տալիս հրենց հրացաններից:

Եւս երկօրյա խաղաղությունից հետո, նոյեմբերի 7-ին, տարբեր կողմերից գործեր են զալիս. «Թուրք կանոնավոր հազարավոր գիւղուներ», — հիշել է Անդրանիկը: Վանքի դեմ նրանց հրացանային կրակ են բացում: Այդ օրը, երբ վանքն արդեն պաշարված էր, նրա պատերի տակ զոհվում է երկու հայ գիւղոր:

Նոյեմբերի 12-ին, երբ արդեն ե՛ւ ցուրտ էր, ե՛ւ քուք, վանքը պաշարում են բավական ստվարաթիվ թուրք զինվորներ: Նրանք, հավանաբար ենթադրելով, թե դեռ երկար են այդտեղ սառչելու, ցուրից պատսպարվելու համար սկսում են «գետնափոր տներ ու դիրքեր շինել»: Ինչպես պատմում է Անդրանիկը: Գետնափոր տների թիվը վեց օրվա ընթացքում հասնում է 190-ի, որոնք վանքի պատերից 200-250 քայլ հեռավորության վրա են: Հրացանաձգությունը անդադար էր: Թուրքերը ցցերի վրա հրենց ֆեսերն են ամրացնում, դրդելով կրաքել դրանց վրա եւ այդ կերպ փամփուշտներ պարպել տալ զուր տեղը: Կոահելով, Անդրանիկը վճռապես արգելում է ֆետերի վրա կրաքել: Հրացանաձգությունը համատարած է ուժգին եղակ նոյեմբերի 17-ի օրը, երբ վանքի մի քանի տասնյակ հրացանի դեմ ճարճատում էին թուրքերի, ըստ Անդրանիկի, փաստորեն անհաջիվ հրացանները: Ահա նրա խոսքը.

«Վեց հազար հրացաններ ամեն կետեր ահավոր ձայներով կուրգային կը զարնվեին վանքի պարհապին եւ գմբեթին, հրենց պատասխան ընդունելով միմիայն քանի մը հրացաններու համրված փամփուշտները: Ոչ թրքական հրացանները, ոչ ցուրտն ու քամին կրնային սարսափեցնել եւ մարտել կրաքը մեր սրտեն... Սենք երբեք չթերացանք, երբեք չընկճպեցանք. այլ Մեր խիզախ կեցվածքով թօշնամիին թուցած եւ վիատած բազուկներուն հուսալքում պատճառեցինք, զոհեր խլելով»<sup>1</sup>:

«Պաշարումը տեել է քասն օր», — գրել է Անդրանիկը դեպքից անմիջապես հետո հրապարակած իր թթակցությունում: «Պաշարումը եղել է չորս կողմից, թշնամին զոհեր է տպել, թէ չեն եղել նաև սկսված ձմռան ցրտից սառածները: Այդ պատճառով արդեն պաշարման ընթացքում վիրավորները փոխադրվել են տարբեր հիվանդանոցներ, որտեղ ավելացել է մեռնողների թիվը:

Արդեն չորրորդ օրը հշխանությունների ներկայացուցիչները տեսնելով հայերի անընկետի ոգին, դիմանագիտության են դիմում: Դյուսում մասցած վասահայր Հովհաննեսի եւ մի կնոջ միջոցով նամակ են ուղարկում: Բաղեցի ու Սուշի թուրքական իշխանությունների դեկավարները եւ Սուշի հայոց թեմի առաջնորդն ու քաղաքական

ժողովը գրում են, որ եթե երեք օրում անձնատուր չինեք, բոլորդ էլ կկոտորվեք: Անդրանիկը հայտնում է, որ երեք օրից շուտ պատասխան չի կարող տալ: Թուրքերը զայրացած նորից են մարդ ուղարկում եւ շտապ պատասխան պահանջում: Անդրանիկը նույն է հայտնում: 5-6 օր անց թուրքերի ներկայացուցիչը դարձյալ զալիս է: Այս անգամ Անդրանիկն ավելի վճռական է: «Երբ մայիսյան ծրագրի ուժորմները երկորի մեջ մտնեն, մենք այն ատեն եստեղից դուրս կուզանք»<sup>2</sup>:

Կոիվը շարունակվում է: Նոյեմբերի 19-ի գիշերը, ժամը 3-ին, դարձյալ 37 հրացանների դեմ սկսվում է բանակի ճարճատյունը: Անդրանիկը վանքի պատերի վրա վստահ էր: Կասկածում էր միայն երկիրկն զոան ամրության վրա: Ուստի այն էլ քարով ամրացվում է եւ Վերանում է նաև այդ վտանգը: Բայց թուրքերը գոմի պատն են փորձում ծակել եւ այնտեղից ներխուժել: Խսկույն հասնում են Անդրանիկն ու Գետրագը: Երեսոց դիմուկ կրակով նրանք թուրք զինվորներին հարկադրում են հրաժարվել այդ մտքից: Այդ ժամանակ կովի հենց այդ հատվածին է մոտենում մի թուրք զինվոր եւ հայեղյական խոսքը շարտում դեպի հայերը: Գետրագը պատասխանում է հարկադրին պես. իսկ թուրք զինվորը լսելով նրա ծանոթ ձայնը, գոյզում է: «Գետրագ Չառչ, դո՞ւ ես»: Անդրանիկը հավաստիացնում է, որ ահա, այդ պահից «Գետրագի անունը մնաց Գետրագ Չառչ»<sup>2</sup>:

Նոյեմբերի 23-ի օրվա վերջին փողերը ինչում են, կրակոցները՝ լոռում. եւ պատվիրակությունը զալիս է դեպի վանք. երկու հայ վանական եւ երկու թուրք քաղաքացիական պաշտոնյա:

Բանակցություններն ընթանում են այդ չորսի եւ Անդրանիկի. Գետրագ Չառչի ու նրանց զինակիցներից Հաջի Հակոբի ու Վաղարշակի միջեւ: Անդրանիկը թվարկում է հրենց պահանջները, իսկ թուրք պաշտոնյա Սուլթանը էֆենդին գրի է առնում.

Թոլոր հայ քաղաքական մեղադրյալների ներուում.

Գյուղացիներն իրենց են տասանորդի հարկը մուծելու, առանց միջնորդ պաշտոնյայի.

հայկական գյուղերի վրա հարձակվող քրդերի զինաթափում կամ այդ գյուղերը վերցնել պաշտպանության տակ,

զինված հարձակումներից զոհված հայերի եւ տուժած հայկական գյուղերի կորուստների դիմաց հատուցում,

քրդերի գրաված հայկական գյուղերը վերադարձնել հայերին.

հրապարակել կառավարական օրենք, ըստ որի գյուղը չի կարող վաճառվել.

\* Տե՛ս սույն շարադրակի 32-րդ էջը:

1 Անդրանիկի յուշերը. էջ 282-283. 2 Լ. Լիւթեան. էջ 54-55.

Վերացնել քուրդ ցեղապետերի կողմից հայկական գյուղերից հարկ հավաքելու կարգը:

Այս պահանջները եկած պատվիրակները համարել են օրինական եւ խոստացել այդ մասին անհապաղ հայտնել Կ. պոլիս՝ սուլթանին եւ հայոց պատրիարքին: Անդրանիկն ու իր հետ բանակցության Ներկայացած ընկերներն ասում են, որ մինչ այն ժամանակ, քանի դեռ իրենց բողոքների կապակցությամբ չի ստացվի սուլթանի եւ Եվրոպական երկրների Կ. պոլիսի դեսպանների կնիքով հաստատված պատասխանները, իրենք վանքից դուրս չեն գավ<sup>1</sup>:

Անդրանիկի հասցեագրած նամակից վաղ, «Դրոշակի» յարտյան համարում, Վերլուծված էին սուլթանի պատվիրակության հետ բանակցությունները: Իր մարտիկների անունից Անդրանիկի Ներկայացրած պահանջները անվանվում են որպես «զմահաճ բոնստիրության դեմ բողոքող գաղափարական գինվորի մը արժանի գիտակցությունով» կազմված: Ապա թերթը հրապարակում է իր ոգեւորությունը.

«Սեր թշքառությունը արգասավոր ահտի ըլլա հերոսներով, Մեկը կը մեռի, երկուր կը ծնին: Մարգար վարժապետը կախեցին, Գուրգեններ, Սերոբներ նահատակեցին. Անդրանիկն ու անվեհեր ֆիդայիները երեւան հորիզոնին վրա»<sup>2</sup>:

Անդրանիկը վիրավորանք է հայտնում, որ սուլթանի թուրք ու քուրդ հալածիների դեմ կովոր հայերին ավագակներ են կոչում: Եվ թուրք պատվիրակներին բացատրում է, որ իրենք անմեր մարդկանց ձեռք չեն տալիս: Ուրիշ բան, ասում է, որ սպանել ենք Սերոբին սպանող Բշարե Խալիլին, ընդգծելով, որ ինքն է սպանել եւ ցույց տալով ձեռքի դաշույնը, որով կտրել էր նրա գլուխը: Խալիլը անհաշիկ հայերի էր սպանել, այդ թվում՝ բազում կանանց ու երեխաների: Նա հանցագործ էր, բացատրում է Անդրանիկը. իսկ սուլթանի մարդուն այդ հանցագործին սպանելու դիմաց բանտարկել են երեսունմեկ անմեր հայերի եւ անլուր չարչարանքների եւնթարկել: Եվ ապա թվարկում է հայության նկատմամբ գործադրված բազմաթիվ ուրիշ մահացու բնությունները: Հիշում է եւ այն, որ թուրքերն են սպանել նաեւ ուրիշ շատ ֆիդայիների: Իրենք էլ, ահա, վանքում հաստատվել են իրենց պատաներին, մահվան հագուստների հետ միասին եւ պատրաստ են դեռ վեց ամիս ել դիմադրել. Եթե իրենց վերը նշանապայմանները չկատարվեն:

Երեք ու կես ժամ են տեւել բանակցությունները: Անդրանիկը վերջում հաշվել է, որ իրենց պահանջների պատասխանները հազին տանըներեք օրում Կ. պոլիսից ուղարկվեն: Հակառակ դեպքում, բա-

ցատրում է, մի երկու օրում պատասխան թուրք բերելը կնշանակի շինու է եւ հաշվի չի առնվի. Կոիկն էլ կշարունակվի:

Դեպքերից չորս տարի հետո գրած հուշերի գրքում Անդրանիկը պատմում է, որ ինքը պահանջել է, որ թուրքերի պատասխանը ոչ թե հենց այնպես մի թղթի վրա բերվի. այլ անպայման հաստատված լինի վեց տարբեր երկրների դեսպանների կնիքով:

Անդրանիկը բացատրել է, թե ինչու է պատվիրակներին խալիի սպանության պատմությունն արել՝ որպեսզի իր վրիժառության օրինակով ընդգծի. որ ոչ մի սպանող իրենց ձեռքից չի արծնի եւ պահանջի. որ թուրքական բանտերից ազատվեն երեսունմեկ այն երիտասարդները. որոնք կասկածվել են եւ ձերբակալվել որպես Խալիին սպանողներ. «Պատմությունս ակնկալած արդյունքը իսկույն թրավ: Եթե օր վերջը այդ 31 անձերուն հեռագործ ներում եկավ Կ. պոլիսն»<sup>3</sup>:

Մեկ է. Անդրանիկը դարձյալ համոզված է եղել. որ բանակցելը խաղ է եւ իր հիմնական առաջարկները չեն ընդունվելու: Մինչեւ իսկ գինադադարի մասին խոսակցությունը սուտ դուրս եկավ: Հենց հաջորդ օրը թուրքերը կրակ բացեցին վանքի վրա:

Կարծես թե կողմերի համբերությունը սպառվում է: Սուլթանը վերջին ճիգն արդեն գործադրել էր. Սուշի թեմի առաջնորդին եր ոիմել Անդրանիկին ընկճելու: Այդ մասին 1901 թվականի նոյեմբերի 29-ին Վառանայի թերթը գրել է, որ մինչ այդ, նոյեմբերի 27-ին, սուլթանը արդեն գիտենալով հայոց եկեղեցու ուժը ժողովրդի վրա, որոշում է այդ ճանապարհով մոտենալ: Հարկադրում է Կ. պոլիսի պատրիարք Օրմանյանին, որն էլ խնդիր է դնում Սուշի թեմի առաջնորդի վրա: Վերջինս Անդրանիկի հասցեով համապատասխան բացատրական եւ պահանջագիր նամակներ է պատրաստում եւ մարդու ուղարկում նրա մոտ: Բայց այդ այցը նույնպես ապարդյուն է եղել: Թերթը իրապարակում է փաստը եւ Անդրանիկին Սասուն աշխարհի IX դարի հերոս Դավթին նմանեցնում: Անդրանիկն, այն մարդն է, զարմանքով ու հիացմությով գրում է թերթը. որը չի խոնարհվում մինչեւ իսկ պատրիարքի առջեւ: Ինչո՞ւ որովհետեւ հաստատ գիտի, որ եթե հայոց հոգեւոր դեմքը բռնակալի հետ համերաշն է գործում, ապա դրանից հայ ժողովուրդը ոչ մի օգուտ չի կարող քաղել. վնասից բացի<sup>4</sup>:

Անդրանիկը նոյեմբերի 27-ի օրը թուրքերի ուղարկած պատասխանը համարել է «ձեւականության համար գրված բան մը»: Նրանում ասվում էր, թե իրենց բոլոր պահանջներին բավարարություն տրված է. միայն թե դրանք մի օրում իրականացնելու բան չեն: Նրան ցանկացել են բացատրել, թե կարեւորն այն է, իբր, որ սուլթանը

1. «Դրոշակ», ապրիլ, 1902թ., էջ 51-52: 2. Ա. Խ. Խաչատրյան, Առաջնական համար, ԱՀՀ, 1901թ., էջ 72:

«խոստացել է ամեն բան կատարել», որ վանքում պաշարվածներին էլ «ներում է շնորհված», եթե նրանք «անձնատուր լինեն»: Անդրանիկը զայրացել է՝ «դուք երեխա մը խաբելու համար՝ թոթի վրա գրել եք քանի մը բառեր, ստորագրել եւ դրկել եք: Պատրաստ եւս կովկելու, ինչ կուզեք գրեցեք» («... յուշերը», էջ 292):

Երես առ երես այսպես պատասխանել է դիվանագետներին Անդրանիկը եւ նրանց գնալուց հետո ընկել մտորումների մեջ: Ե՞թ է ուրիշ պատասխան գալու եւ գալու՝ է արդյոք: Չլիսի՞ թէ հավատան իր խոսքին, թէ դեռ վեց ամիս էլ կարող են պաշարված մնալ եւ քաշըն պատասխանը, եթե իրենք սպառում են իրենց թե կովի, թէ ապրուստի բոլոր պաշարները: Իսկ եթե մինչեւ իսկ զան եւ բերածները արդյոք դարձյալ մի սուտ թուղթ չի լինելու, եւ հազիկ թէ սուլքանի կառավարությունից որեւէ մեկը համաձայնի իրենց պահանջներին:

Գլխավոր խորհրդակիցը Գեւորգ Չավուշն էր: Կանչում է նրան, նրա հետ նաեւ Վաղարշակին եւ Հաջի Հակոբին: Հայտնում է իր տարակուսանքներն ու վճիռը. պետք է պատրաստվել վանքից հեռանալու: Բացատրում է խումբը մասերի է բաժանվելու, հագնելու են սահիտակ պատանքները եւ ամսի 27-ի ուշ երեկոյան վանքից դուրս են գալու որպես թուրքական զինվորներ եւ հենց նրանց խրամատների կողով հեռանալու են դեպի առջեկի հայկական գյուղերը: Սուրբություն չի լինում: Անդրանիկը ինքը զբաղվում է դուրս գալու վարժություններով: Մեկ առ մեկ բացատրում է, թէ ինչպես է ամեն մեկն իր դերը՝ կատարելու:

Ամսի 27-ի գիշերը վասքի դուները բացվում են: Անդրանիկը որպես նրանց հրամանատար, հարցուփորձ է անում՝ որտեղացի են, ով ում տղան է, հանդիմանում է քնած մի զինվորի եւ պոազ անցնում: Այս ընթացքում երբ ինքն ու Գեւորգը զբաղեցնում են թուրք զինվորներին եւ իրենց վրա հրավիրում նրանց ուշադրությունը. Խմբի մյուս անդամները խավարի միջով հեռանում են վանքից ու նրա շուրջը թուրքերի փորած խրամատներից՝ հասնելով մոտակա գյուղը տանող ճանապարհին:

Անդրանիկը հիշում է, որ թուրք զինվորներից մեկը ծուղակից իրենց դուրս գալու պահին իրեն հարցրել է:

— Դուք ո՞վ եք:

— Չի ճանչար զիս, հարյուրապես. Սահմեդ էֆենիին եմ, կես ժամ է, որ ինս կը խուզարկեմ եւ դուք կը քնանաց, այսպե՞ս պիտի պահեք ու հսկեք քան ֆիդայիները, արգելելու անոնց փախուստը...

Ասել է ու խոսքը ուղղել Գեւորգ Չավուշին.

— Սահմեդ Չավուշ, այս մարդը կը քնանար, այնպես չէ:

— Այո, էֆենիի, կը քնանար, — ասում է Գեւորգը:

Եղել է, որ հարկ է եղել խիստ պատասխան տալու: Թուրք զինվորներից մեկը ասել է.

— Աստված, աստված, չեմ գիտեր դուք ի՞նչ տեսակ մարդիկներ եք:

— Կտրե ձայնո, — կտրուկ պատասխանել է Անդրանիկը, — թէ ոչ շան աւս պիտի սատկիս, — ասել է ու հրացանը ուղղել թուրք զինվորի կրծքին:

Սովորյան վաղ, անտեղյակ թուրքերը անցնում են հարձակման, մոտենում են լուռ, պապանձկած վանքին եւ տեսնում են դուները բաց:

Բացարձակ խայտառակություն: Ինչպե՞ս են ֆիդայիները ծուղակից դուրս եկել: Եկ միթե դա խոստովանելու բան է: Չէ՛, որոշել են թուրքերը եւ շտաբել են հասարակությանը թյուրիմացության մեջ զցել: Նրանց զինվորները արդարանալու համար լուրեր են տարածում, թէ իրենց հրամանատարը ֆիդայիներից մի քանի հարյուր ոսկի կաշառը է վերցրել. իսկ հրամանատար Ֆերիի փաշան էլ իշխանություններին եւ իրեն արդարացնելու համար իբր բանտ է նետել այդ լուրերը տարածող մոլլային: Մի բան պե՞տք էր հորինել Անդրանիկի եւ նրա ընկերների սխրանքը նսեմացնելու, թուրք զինվորի փառքը բարձր պահելու համար<sup>1</sup>:

«Ուսասկոյ սլովո» թերթը տարիներ անց, 1915-ի նոյեմբերին, ուրիշ կերպ է գրել: Այս է՝ Անդրանիկը վանք է մտել մի շառ հերոսական մարտերից հետո: Նրա խումբը եղել է 50, թուրքերի գործը՝ 1000 հոգի: Թուրք փաշան երեք օր անընդմեջ վանքը զնդանութել է: Վերջապես զայրացած փաշան հրաման է արձակել ինչ զնով ուզում է լինի. գրոհով գրավել վանքը: Եկ գրավվում է: «Բայց, ավաղ, — գրում է թերթը, — առանց նրա պանծակի պաշտպանների: Այդ պահից Անդրանիկի փառքը տարածվում է թուրքիայի սահմաններից հեռու: Նրա մասին սկսում են խոսել ոչ միայն Կովկասում եւ Ուստաստանում, այլև Արեւմտյան Եվրոպայում»<sup>2</sup>:

Անաքելոց վանքի կողմէ ահազանգ էր: Բայց ոչ զանգերի դողանց, այլ ազատության ոգու ներքին ձայն: Որքա՞ն ավելի գորակոր կլիներ այս, եթե բոլոր այս ազգերի միաձույլ ընդգառնում լիներ, որոնք նույնպես տառապում են սուլթանի լծի տակ:

Սմբատն ասում է. Անաքելոց վանքի անդրանիկյան կողմէ հավաստիացնում էր, որ «ողջ եր հայուկը, հայ տանջահար գյուղացու պահապան հրեշտակը, կենդանի եր նրա մարտական ոգին»: Ոգեւո-

<sup>1</sup> «Դրոշակ», 1902, ապրիլ, էջ 54-55: <sup>2</sup> «Русское слово» առև «Պառ», Տ. 43, գ. 47, թ. 10:

բությունը համատարած էր: Բոլորը կուզեին, ասում է Սմբատը, ոտքի ելնել, օգնության հասնել: Եվ բերում է օրինակներ: Զանի որ ցուրտ ձներ էր, ճամփաները անհնար, վանքի մարտնչողներին օգնության հասնելու միակ ձեւը միաժամանակ այլ Վայրերում եւս կոիվ բորբոքելն է եղել: Հիշում է Նման փորձեր: Զեւավորվել է մի խումբ, որը Սասունի Սեմալ գյուղից ճանապարհ է ըսկել դեպի վանք, Նպատակ ունենալով գիշերային մթության ժամանակ ճեղքել ապշարողների շղթան եւ օգնության հասնել վանքում գտնվողներին: Սակայն ցուրտը ուժգին է եղել, վատ հագնված տղաների ոտքերը չեն դիմացել, կես ճանապարհից հազիվ ետ են վերադարձել: Սոտակայի տարբեր գյուղերի ուժերով վանքին երկու հակառակ կորմերից մոտենալու եւ այդ ձեւով թուրքերի հարվածը թուլացնելու մտադրությունն էլ է եղել: Բայց մինչ դա կիրականացվեր, Անդրանիկն արդեն ճեղքել էր շղթան:

Այսպես որ սխրանքը հոգեբանականից բացի, գործնական արձագանք չստացավ: Ավելին, կային ու եղան նաև տարակարծություններ: Սմբատը Հրայրին է հիշում, «հայողութերու եւ ոստիկաններու հաճախակի բախումները աննապատակ կը նկատեր, դեմ էր մասնակի ըմբռոտության...»: Եվ Սմբատը քննադատական ու ինքնաքննադատական դատողությունները եւ անում, եթե մեկն սկսել էր, մյուսները պետք է աջակցեին, անջատ-անջատը պետք էր գումարել ու ի մի բերել: Դա պետք է անեին նախ եւ առաջ ազգային կուսակցությունները: Դրանքին շահագրգիռ քաղաքետներն ու պատմաբանները, հակառակը, հայերին քննադատում եւ ընդգումներ ու պաստամբություններ հրահելու համար, շատ դեպքերում ուղացնելով եղածը եւ հորինելով չեղածը, կարծես չնկատելով ու չըմբռնելով, որ եղած-չեղածը տերության ճնշմամբ թելադրված բողոքի ու պաշտպանական ընդգումներ էին, մինչդեռ հարկավոր էր, ինչպես ուրիշ ժողովությունների օրինակն է ասում, միասնական, իսկական ապստամբական շարժում: Նոյն է ապացուցում նաեւ Անաթելոց վանքի կոիվը, եղածների մեջ բոլորովին ոչ երկրորդականը:

Անդրանիկն անում էր ավելին, քան մի հոգու համար կարող էր կանխորոշված լինել: Ժամանակի մամուլը այդ էլ է նկատել: Եվրոպացիները մեծարել ու փառարանել են իրենց հերոսներին, գործ է «Դորշակը» 1902 թվականի ապրիլյան համարում: Եվ այնուամենայնիվ նրանց հիացնում է Անաթելոց վանքի կովում Ֆիդայիների սխրագործությունը: Եթե Անդրանիկն ու Գետրոցը ունենային եվրոպական քանակների ուժի մեկ հարյուրերորդն անգամ, նրանք թշնամուն վաղուց հաղթած եւ իրենց ժողովրդին

<sup>1</sup> Ակր. Երիտասար. Խց., էջ 123-124:

ազատագրած կլինեին, եզրակացնում է թերթը.

«Այո, պետք է որ այս տեսակ մաքուր հերոսները պահպին ու պահպանվին, ապագային պետք պիտի գան անոնք հայրենիքի սըրազան ու արյունոտ դատին հաջողութեան համար»<sup>1</sup>:

## Բ Սասունի ընդհանուր հերոսամարտը

Անդրանիկի ըմբռմամբ, առանձնահատուկ ապագա չկար: Նրա համար ամեն վաղվա օրը ապագա եր: Ապագա եր յուրաքանչյուր օրվա երկրորդ կեսը: Որովհետեւ այնպէս չեր կարծում, թե պետք է նստել ու սպասել, թե երբ կբացվի ժողովրդի լուսավոր առավոտը: Մա ոչ շտապողականությունն է, ոչ էլ հապճեպությունը: Պարզապես նա դեմ էր այսօրվանը վաղվան գցելուն, մտածելով, որ վաղը կարող է ուշ լինել:

Անաթելոց վանքի ծուղակից դուրս գալուց հետո Անդրանիկը խոր թաքստոց է մտել, որը այս դեպքում սովորական ընդհատակը չէ: Պարզապես նա խուսափել է ուղղակիորեն իշխանությունների մարդկանց հետ հանդիպելուց, իսկ մնացած դեպքերում զննել է, թե գործակիցը, ևա՛, ում տանը որ գիշերէ է, հուսալի մարտ է թե ոչ, չի՞ կարող արդյոք պատահել, որ մատնիչ է եւ նրանց հանդիպումն իր հետ ոչ թե պատահական է, այլ մտածված ու կազմակերպված: Մյուս դեպքերում նա շրջել է այլուրում, հանդիպել յարդկանց եւ մի միտք է ամենուր տարածել, կովին վերջ չկա, այսուհետ պակէի շատ մարդկի պետք է զենքի տակ հավաքել, ուրեմն, ավելի շատ պետք է հոգալ զենք ձեռք բերելու մասին եւ ոչ թե առանձնապես պատրաստվել մի որեւէ անակնկալի, այլ միշտ եւ ամեն դեպքում կազմ ու պատրաստ լինել կովի մեջ մտնելու: Որովհետեւ կոիվը ոչ պատվերով է, ոչ էլ հստակ ու ճշգրիտ նախատեսված ժամանակի ու տարածության մեջ: Այդպես էլ, ոչ որոշակի դադարի, ոչ էլ արյունահեղ մարտերի միջով անցավ 1902 թվականը: Այս ընթացքում Անդրանիկը քարոզիչ էր, վերլուծող ու կազմակերպիչ, ուժեր հավաքագորդ եւ գումարող, թեեւ թիջ ժամանակ չեր տրամադրում նաեւ զենք ձեռք բերելուն, նորապասակ հայրուկներին զինելուն եւ վարժեցնելուն:

Իր հուշերի գրքում Անդրանիկը պատմում է, որ 1903-ի գարնանը, երբ դեռ ձյուն էր ու ցուրտ, որոշ փոփոխություններ են տեղի ունեցել խմբերի կազմում: Ազդեցիկ դեմքերից ովանք՝ Կոտո Հաջին, Թեոփին եւ Սպաղանաց Մակարը, թողնում, հեռանում են, իբրև թե Ալյաքը գնալու եւ այնտեղից զենք փոխադրելու համար: Այստեղ, Ալյաքում էր այդ ժամանակ Հրայրը, բացատրելով, որ զենքի համար

<sup>1</sup> Մորշակ, ապրիլ, 1902, էջ 55:

Ալիւար պետք չէ գալ, հանձնարարում է կրկին վերադառնալ խումբ, հարմար գտնելով, որ անցումային, համեմատարար խաղաղ այդ միջնաժամին նըրանք ստանձնեն խմբի դեկավարությունը, իսկ Անդրանիկը միահօժամանակ հանգիստ առնի: Ու այդպես էլ գրում, հանձնարարում է նա Անդրանիկին: Անդրանիկն ասում է, որ ինքը՝ հոգնած ու հանգստի կարոտ, ուրախությամբ ընդունել այդ առաջարկը: Բայց երբ դրա մասին իմանում են (Վաղարշակ Բաղդասարյան) Գետրդ Չավուշն ու նրա անքաֆան քաջ ընկեր Կայծակ Վաղարշակը, շատ վատ են ընդունում այդ լուրը: Նոյնպես եւ Սասունի Տալվորիկ, Ախափի, Իշխնձոր, Գելիեգուզան, Մեմալ եւ Մյուս գյուղերի գյուղացիները, որոնք եւս զայրանում են: Նրանք առարկում են Հրայրի առաջարկին եւ մերժում Անդրանիկի խմբապետությունը ուրիշ մեկի կամ միանգամից մի քանիսի վրա դնելու նրա լուծումը:

Անդրանիկը պիտի հանգստանա՛ր, իսկ մյուսները պետք է ոտքի վրա լինեին ու խմբապետ: Հարցը ընելու համար եկած տարբեր գյուղերի ներկայացուցիչները այդ ուրիշներին ցուց տվին իրենց գյուղերից դուրս տանող ճանապարհը. «Մենք բոլորս, հոս գտնվածնիս, ո՞չ ձեզի թևակարան կուտանք, ոչ ալ կը թողնենք մեր սահմաններուն մեց: Գնացե՛ք, թող սեմալցիք ու շենիկցիք պահեն ձեզ»: Եկ նրանք ստիպված գնացել են: Ուս ել է մի բան ասում, ամեն մարդ չէ, որ կարող էր խմբապետ դառնալ, եւ պատահածին չէ, որ ժողովուրդը ընդունել է: Խմբապետին, ճիշտ է, կարգ չի եղել, որ անուն-ազգանունով, մեկ առ մեկ գյուղացիք գային փակ ու գաղտնի բվեարկեին: Դեռ ձեւական քաղաքակրթության երկրներում անզամ այդ ձեւը ամբողջական չէր: Կիսանահապետական թուրքական լիի տակ ի՞նչ պետք է լիներ: Բայց կար ինուց ի վեր եկած, ժառանգված բանականության կարգը. ժողովրդի համար մարտերի դեկավարները պետք է ժողովրդի կամքով լինեին. մեկ է՝ ընտրության գրավոր թե բանակոր ձեւով, բվեարկության կարգուկանունի, թե՝ միասնական փոխըմբունյան, ներքին ցանկության միջոցով: Ոչնչով վատ չեին Հաջի Կոտոռն, Թերին կամ Սպաղանաց Սակարը: Եկ քաջ էին ու անձնուրաց, եւ միշտ կոհվերի մեց: Նրանց մասին Անդրանիկը մի բառ անզամ չի ասել բացասական: Բայց այդ հարցը չի ընկել, այլ այն, թե ով պիտի լինի կամ մնա հայդուկապետ:



ՎԱՅԾԱԿ

Գնացին խմբապետության, այսպես ասած, հրայրյան թեկնածուները, եւ եկակ Դաշնակցության կենտրոնի ներկայացուցիչ Վահանը: Ինչպես երեւում է՝ Դաշնակցությունը երկրի տարբեր մասերի հարցերով ու հոգսերով գրաղվող հանձնախմբեր է ունեցել: Անդրանիկն ասում է, թե՝ Վահանի ձեռին եղած լիազորաթղթում գրված եր՝ «Դաշնակցության կամքը ներկայացնող մարմնի կողմից՝ Բարձրավանդակի համար»: Բարձրավանդակը Սասունն է: Վահանը ժողով է գումարել: «Հաշվետվություն պետք է լիներ: Եկել են բոլոր հայդուկները, գործի հետ կապված մարդիկ: Կարծես թե՝ հաշվետու ժողով էր ու վերջնտրություն պետք է լիներ: Զննվելու եր, փաստորեն, խմբապետի գործունեությունը, այդ թվում եւ այն, թե ինչ դրամական ու նյութական միջոցներ են դրանք գործադրվել, ծախսվել: Անդրանիկն ասում է. «Ոչ մի գաղտնի հաշիվ չունեինք՝ ոչ հացի, ոչ գեներու, ոչ փողի»: այսինքն՝ ամեն ինչ բոլորի աշեի առաջ է եղել, բոլորի գիտությամբ ու համաձայնությամբ. «Բոլորը յանրամասն գիտեին, թե ո՞ւր ինչ ենք առեր, ի՞նչ ենք տվեր»<sup>1</sup>: Իսկ ինքը բոլոր գրավոր փաստաթղթերը, որպես հաշվետվություն, հանձնել է Վահան Փափազյանին, որը Կոմս անունով հայտնի կուսակցական գործիչն էր:

Չի լինի այստեղ չպատմել այն, ինչ պատմել է ինքը Անդրանիկը: Աերը պատմած դեպքից մի երկու օր հետո Սասուն է եկել անձամբ Հրայրը: Պարզ է, հեռվից նա է ցուցումներ տվել Վահանին, որ Անդրանիկն իբրև թե հանգստի անցնի, եւ խումբն էլ այսուհետ ուրիշները դեկավարեն: Անդրանիկի պատմածից պարզ չի երեւում՝ ինչն է պատճառը: Աշխանք, շուրջ վեց ամիս անց, Սասուն է եկել Հրայրը: Եկել է «գործի սիրույն համար» խաղաղություն հաստատելու, եկել է անցյալը մոռացության տայու եւ համերաշնուրացն նպաստելու: Հրայրը ասել է, թե ինքը ոչ մի հանդիմանություն չունի եւ իր ցանկությունն այն է միայն, որ հանուն գործի եղած-չեղածը «գերեզման հետքի եւ վրան խաչ դրվի»: Անդրանիկը, ճիշտ է, զապել է իրեն, չի ըմբռստացել, բայց երեւում է՝ Վիրավորված է ու վրդովված. ինչո՞ւ պետք է Հրայրը հեռվից մարդ ուղարկեր եւ այն է՝ խմբապետին փոխելու առաջարկով: Հրայրն ուղարկել է արդարանալ, Վիճակը շտկել, ասելով, թե ինքը ոչինչ չունի Անդրանիկի դեմ, որ նրան ոչ ոք դիտողություն չի անում եւ կուզենա, որ ինչ եղել է մոռացության տրվի ու գործերն ել առաջ տարկեն:

Անդրանիկը այլու իրեն չի զապել, ու, ասել է, որ ոչ մի դիտողություն չուներ «Ես այսչափ տարի է հոս եմ, հիվանդ եմ, թույլ տվեր».

<sup>1</sup> «Անդրանիկի լուցքը», էջ 310, 312: Նաեւ՝ Վ Գրիգորյան, Խ լուցքը և հասոր, 7.. 1950, էջ 301:

որ հեռանամ արտասահման»: «Հավանաբար Նոր Միայն Հրայրը գիտակցել է իր անզգության հետեւանքի Վտանգավորությունը»:

«Եթե դու հեռանաս, այս ատեն ես թեզնից առաջ կը հեռանամ», — ասել է նա Անդրանիկին: Ուրեմն, պետք եր այդ մասին Վահորոց իմանալ եւ հաշվի նստել այս իրողության հետ, որ Անդրանիկը տակ մի անհատականություն չէր, այլ բնակչության հսկայական զանգվածի կամքի մարմացում: Թող հանգստի գնա Անդրանիկը: Եվ մի՞՛տ դա որեւէ մեկի գործն էր, երբ ինքն Անդրանիկն անզամ, եթե ուզենար. չեր կարող իր կամեցած ձեւով թողնել ու գործից հեռանալ: Հրայրի խոսքը շարունակում են Կահանն ու Նրա հետ եկած մյուս գործիները՝ Երկարն ու Եզրը».

«Եթե դուք հեռանաք, այս ատեն մենք ալ պիտի հեռանանք»: Այս լավ է, որ այսպես են ասում, բայց վատ է, որ նվազել է նախօրոց ենթադրելու. կոահելու ուժը, թե ինչ կիևնի վաղը. Եթե Անդրանիկը ասպարեզից հեռանա: Կգտնվեին. հիարկե, մարդիկ, դատարկ չեր ասպարեզը. բայց Անդրանիկին հրաժեշտ տալու զաղափարը մարդկանց մոտերի մեջ չեր տեղավորվում: Անդրանիկը հավաքական իմաստ էր ստացել: Եվ բացվում է հուզիչ տեսարանը: Չէ՝ որ կար ժողովուրդը, որն սպասում էր հարցի լուծմանը. որն ակնկալում էր փրկություն եւ կամք. որի համար այնքան կարեւոր էր, թե ով գործի գորիս կանգնած կիևնի. ով կտանի իրենց դեպի մարտ եւ մահ կամ ազատություն:

Հրայրի. Անդրանիկի. Կահանի եւ մյուսների բանակենց ձգձգվում է: Ի վերջո Հրայրն ու Անդրանիկը ոտքի են կանգնում: Ոտքի են կանգնում եւ համբուրվում: Կտանգված ժողովորի զավակները գուցե թե արտասուցեներ են իրար խառնել. բայց այդ մասին Անդրանիկը լուս է: Շարունակելով վերհուշը, նա ասում է, որ Կայծակ Վաղարշակն ու Գեւորգ Չափուշը նույնպես համբուրվեցին Հրայրի հետ: Ի վերջո հրավիրում են բոլոր հայողուկ զինվորներին. որից հետո Եղածը երդման տեսարան է: Լսենց Անդրանիկին.

«Կանչեցին հետո գտնված բոլոր զինվորներին. Նրանց ալ առաջարկեցին թե՝ ահա գործի եւ ընկերներու սիրույն համար՝ Անդրանիկը. Վաղարշակն ու Գեւորգը հաշտվեցին Հրայրի հետ, երկու կողմից զիջումներ ըրին. մաքուր սրտով, բոլորս ձեռք ձեռքի տված. սրանից հետո պետք է գործ առաջ տանենք»:

Եվ հուզմունքը պատում է բոլորին: Այլեւս անհնար էր թաքցնել արցունքները.

«Հրայրը մեկ կողմ, ես մյուս կողմ սկսանք արտասպելի»:


Զորավոր էր Անդրանիկը. բայց, մեկ է. մարդ էր: Իր արտասուքք, որ չի կարողացել զսպել մարտական ընկերների առաջ; զրշին հանձնելով, չի թաքցրել նաեւ սերիւնդներից:

Դրանից հետո, խոստովանում է Անդրանիկը, քանի դեռ ինչքը եղել է ու կովել Սասունում, բոլորը հաշտ են եղել ու միաբան<sup>1</sup>: Եղածը միայն դաս չեր, այլեւ՝ օրինակ:

Անջեւում 1903-ի ձմեռն էր, որին պիտի հաջորդեր 1904-ի գարունը: Մեկը նախապատրաստություն էր, մյուսը՝ հերոսամարտ:

1903 թվականը հայության համար լավ տարի չեղավ ոչ Հայաստան աշխարհի արեւելքում եւ ոչ էլ արեւմուտքում: Զարդերի հարցով ցարն ու սովորանք ասես հրար հետ մրցում էին: Արեւմուտքից<sup>2</sup> Կ. պոլսի ոռւսական դեսպանատնից եւ տեղերի ոռւսական հյուպատություններից, թե 1903, թե 1904 թվականին ցարական արքունիքը ուղարկված հաղորդումներում Անդրանիկը հիշատակվում էր որպես Սասունի բնակչության «ապատամբության դեկավար», որը Սասունից քշել է թուրքերի վարչական իշխանություններին, ոչնչացրել գավառներում գտնվող թուրքական ոչ մեծ զորամասերը<sup>3</sup>, որոնք մշտական պատժի դեր են խաղացել: Հայերի նկատմամբ որպես բարի ու կամեցող երեւալու համար թուրքերը խորամանկորեն օգտագործում էին Արեւելյան Հայաստանում կատարվող ամեն մի ցարական հակահայկական գործողությունները: Այդ տեսակետից թուրք քարոզչության համար շատ արդյունավետ եղավ ցարի 1903 թվականի հուլիսի 12-ի օրենքը, որով Էջմիածնի հայոց Եկեղեցական կալվածքներուն էին պետականացվելու եւ հոգեւոր դարոցներուն էին փակվելու: Այդ աղիթով թուրքերն ասում էին, թե իրենք երբեք ոռւսների նման չեն ոչնչացնելի Եջմիածնի գանձարկողը: Այս հաղորդող ոռւս դիվանագետը հավանաբար հայերի մեջ իր տերության ողբերն ամուր պահելու նպատակով գրում եւ տարածում է, թե 1904-ի ապրիլին, այսինքն այս պահին, որի մասին ինչքը հայտնում է, Մուշում եւ Տրչակայքում հայությանը զսպելու համար բերված զորքերի թիվը 12-ից 15 հազարի է հասնում: Եվ այդ այս դեպքում, երբ թուրքական իշխանությունների ներկայացուցիչները ոռւս դիվանագետների հարցումներին պատասխանել են, թե երկրում «հայկական շարժում կա միայն թերթերի տվյալներով, իսկ հրականում նման ապատամբություն չկա»: Սա ել մյուս ծայրահեղությունն է՝ առհասարակ սովորական կարգերի նկատմամբ երկրում ամեն տեսակի դժգոհության նշանները հերթելու համար: Միաժամանակ պաշտոնատար թուրքերը ոռւս դիվանագետներին հայտնել են, թե տվյալ պահին Սասուն՝ Անդրանիկի մոտ են ուղարկվել երկու պաշտոնատար հայ հոգեւորականներ, որոնք իրենց հետո տարել են իրենց թե սովորանի հրովարտակը, որը

<sup>1</sup> «Անդրանիկի լուծը», էջ 310-314: <sup>2</sup> Կոռուպ. և. 450, էջ. 1, գ. 138: «Հայոց կատարական սուսպիսների մասին»:



Ա. ԽԱՇ ԵԿԵՂԵՑԻՆ ԱԽԹԱՄԱՐ ԿՂՋՈՒՄ

հայությանը արտոնության խոստումներ է պարունակում<sup>1</sup>: Լուրեր են:  
Զմեռ Անդրանիկն անց է կացրել այնտեղ, որ ե՛ւ կովի զանգերն  
եին ինչեցվելու, ե՛ւ լինելու էր յարտերի ամենաթեժ քուրան: Ընդ-  
լայնվել է տեսաղաշտը, փորձ է կուտակվել: Ուշադրությունը համա-  
ռորեն է տեւականորեն կենտրոնացվում է նախապատրաստության  
վրա: Գելիեգուզանը կենտրոն է, Անդրանիկը՝ դեկավար: Կապերը  
այստեղից գնում եին դեպի Սասուն լեռնաշխարհի բոլոր կողմերը:  
Կոհիվը, եթե լիներ, զանգվածային էր լինելու, լայնատարած, միաս-  
նական: Գործի մեջ են 1894-ի հին ու անբաժան ընկերություն Սուրահը, Գեւորգը, Քերին, Սեպուհը, ավելացել են նորերը՝ Վաղար-  
շակը, Թորգոսը եւ ուրիշներ<sup>2</sup>:

Ներգործվել եին Սասուն լեռնաշխարհի հայության բոլոր գործու-  
նակ Մարդիկ: Ոչ ոքի համար գաղտնիք չէր, որ կառավարական  
զորքեր են գալու, որ նրանց որպես ուղեկից եւ հետեւորդ գալու են  
նաեւ քողական գինված խմբերը, եւ կոհիվը այլեւս առաջվա նման  
կցկուր չի լինելու: Անդրանիկը ոտքի մրա էր, քայլող ու քայլեցնող,  
զենք ու գինամթերք հայթայթող, տեղանքը նախընտրող եւ որոշող,  
մարդկանց ի մի բերող, բաշխող ու հանձնարարող:

1. Կորու. և առ. 2 «Անդրանիկի լուսնը», էջ 315. ևա՛ Մկր. Երիցեանց... էջ 198:

Բոլորը հիշում եին 1894-ի օգոստոսյան վրահասը եւ իրենց  
հանպատրաստից մարտի մեջ մտնելը: Աշխատում եին բոլորը՝ ե՛ւ  
ընդհանուր դեկավարը, ե՛ւ խմբերի ու տասնյակների բոլոր հրամա-  
նատարները. հանձնարարություններ տալուց, դրանց կատարմանը  
հետեւելուց բացի, իրենց էլ պիտի որոշակի արոյունքի բերող մի գործ  
անելին: Անդրանիկն այստեղ էլ վերջինը չեր: Սղոցը, մուրճն ու  
ուրագն եին նրա ձեռքին: Էլ ո՛ր օրվա համար էր նրա ատաղձագործ  
լինելը: «Այս ձմեռ ես շինեցի 37 հրացանի ղոնդախ»: այս մենքն է  
միայն հարկ համարել հիշելու որպես նեղ-մասնագիտական (էջ 315):  
Բայց չէ՞ որ նաեւ գյուղերը գնալիս, երբ վաղվա կոիվների ոիրքերն  
է փորել տվել, մյուսների հետ ծանր գերանն է ուսն առած տեղափո-  
խել, մի ուրիշ դեպքում էլ բանի է եղել ձեռքին կամ քլունգը:

Կառավարությունը նախապես 1000 հոգի զորք է ուղարկում, որ  
զա ամրանա Շենիկ գյուղի տակ: Այդ ժամանակ հայերն արդեն  
լեռների ծերպերին դիրքեր եին բռնել եւ նրանց այլեւս հեշտ չեր լինի  
տեղահան անել: Զորքն ինչը է ստիպված վերադառնում: Գրագու-  
թյուններում այս կապակցությամբ թյուրիմացություն է եղել քանի որ  
այդ հազար հայոց լեռնաշխարհում է գետեղվել, ապա վերագրվել է  
հայերին, իբրեւ թե այդ նրանք են զորքով եկել-հաստատվել: Հենց  
այդպես էլ Կովկասի ոազմական օկրուգի շտաբի գեներալ-կվարտիր-  
մեյստերին Ռիզէ քաղաքի ուսական փոխհյուպատոսը՝ պալատական  
խորհրդատու Սահմանական կառավարության կողմէ առաջ մեջ ասում է, թե  
տարածված լուրերի համաձայն հայերին «հաջողվել է Սասունում  
կենտրոնացնելու» հազար հոգի զորք. եղանակացնելով. թե ուրեմն  
պայթյունն սպասելի է ամենամոտիկ ապագայում<sup>3</sup>:

Շատ ցավալի է, որ հաճախ նաեւ քրդերին եին հրահրում հայերի  
դեմ: Սա հիշանությունների սովորություն էր. քրդերին առաջ մղել  
հայոց կրակի տակ, ապա ուղարկել կառավարական զորքը եւ քաղել  
շինծու հաղթանակի արյունակի պտուղները: Հակառակն էլ էր լինում.  
ստեղծվում էր հրավիճակ, երբ հայերն այլեւս չեին կարող լուրջամբ  
տանել քրդերի բարեարոսությունները եւ իրենք եին հակահարձակ-  
ման անցնում: Երկու դեպքում էլ նույն էր, օգտվողը կառավարա-  
կան զորքն էր ու կառավարությունը:

Հիշյալ Մաեւսկին հարկ է համարել նշել, որ Սասունի հայության,  
մեր բաներով ասած, ինքնապաշտպանական նախապատրաստություն-  
ները Կովկասին վտանգ չեն սպասում: Կովկասյան ոազմական  
օկրուգի շտաբի 1904-ի հունվարի գրություններում նշվել է, թե  
թուրքական քաղաքների անգիտական հյուպատոսությունները Եվս  
մասրամասն տեղեկություններ են հավաքում թուրքական զորքերի

1. Կորու. և առ. 2 «Անդրանիկի լուսնը», էջ 315. ևա՛ Մկր. Երիցեանց... էջ 198:

տեղաբաշխման, համիդեական գորախմբերի շարժման մասին. լրջութեա հետաքրքրվելով հայոց գործերով. նաեւ դրանց վերաբերյալ նյութեր կուտակելով:

Ստացվում էր՝ հայերն իրենց տառապանքներից էին ուզում ազատվել: Թուրքերը նրանց դեմ գենք էին կոռում եւ բանակը մեծացնում: Զարն ասես պղտոր ջրում ուզում էր ձուկ բոնել. պատրվակներ ստեղծելով թուրք-կովկասյան իր սահմանը ամրապնդելու. մինչեւ իսկ Արեւմտյան Հայաստանում հայերի ազատագրական շարժումն իր տարածքային նվաճումներին ծառայեցնելու. Արեւելքի այս դարպասների տակ իր դիրքերն ընդում թուրքերի. չզլանալով նաեւ թուրքիայի հետ միատեղ, հզորացնելու համար: Նոյնն էլ. ավելի թէ պակաս. Անգլիան էր անում էին բոլոր տերությունները:

Ըստ եւրեյան ոչ մեկի հոգք չեր: Ամեն ինչից երեւում էր, որ կորիւը լինելու է: Անդրանիկն իր զինվորների հետ շալակով ցորեն ու այսուր էր տեղափոխում գալիք կովի Ենթարկող վայրերը. Նոյնքան եւ ավելի Մտահոգված լինելով. որ զենքը չպակասի. ավելացնում էր հրացանների թիվը եւ նոր-նոր երիտասարդների բաշխում. հետև էլ՝ պարկում, արճիճ ու վառող:

Այդ ձմոնաք, փաստորեն, գործի մեջ էին բոլորը՝ Հրայրն ու Մուրադը. Գետրգ Չափուշն ու Կայծակ Վաղարշակը. Մյուս հայտնի Ֆիդայիները՝ Թորգոմը, Կահանը, Ֆահրադը. Ավետիսը. նաեւ Երկարը. Եղորը. Թումանը... Բոլոր անունները մեզ չեն հասել. հասած բոլոր անունները չեր. որ բացված են ու ըստ արժանվույս իմաստավորված. տարբեր գբաղմունքների. արիեստների մարդիկ են՝ պայտառ ու դարբին. հյուսն ու ատաղձագործ. հնձվոր ու կալսող. ոսկերիչ ու դերձակ... Բայց ոչ երբեք զինագործ. թե՛ւ հիմա նրանցից շատերն ու գուցեց թե բոլորն էլ կուգենային. որ նախ եւ առաջ զինագործ լինեին: 1903—1904-ի ձմոն օրերին ամենից շատ հրացան պատրաստող էր պետք ու դաշխուն սրող. արճճի հատիկներ ձուլող ու դատարկ պարկումներ լցնող...

Սբրատը. Անդրանիկի հրահանգները առաջինների թվում կատարողներից մեկը. հաց թիւելու գործին է հետեւում: Մյուսները թիված լավաշն ու բոքոնը տանում, թաքցնում են այն տեղերում, որոնք Ենթարկում էին որպես կոիվների հավանական դիրքեր:

Որպես փոխադրամիջոց. զինվորների կոնսակն է ծառայել: Անդրանիկը նպաստավոր լուծում է գտել. գործի հրավիրելով հայերին համակիր քրոբերին: Նա հրաման է արձակում՝ ոչ մի տեղ չկաշկանդել. չվնասել պարեւ եւ ուզմանյութ փոխադրող քրոբերին: Խնդրին մըբոնումով մոտեցող քուրդ գյուղացիները. հայերի հետ դուռ-դրկից

ապրած. Նրանց հետ բարեկամություն հաստատած մարդիկ. պատվով են կատարել եղբայրության հանձնարարականը:

Զրդերի հետ մերձենալուն. Նրանց միջեւ այս ու այնտեղ առաջացած սառնությունը հաղթահարելուն մեծ նշանակություն են տվել Անդրանիկն ու բոլոր ֆիդայիները:

Անդրանիկն իր հուշերի գրքում բերում է իր գործադրած ջանքերի օրինակները:

Սկզբում. 1894-ին, երբ հայերը բողոքել են իրենց վատ վիճակից. կառավարությունը «մեղք զցէ է քրդերի վրա»: Պարզ էր նպատակը. հային ու քողին թշնամացնել. մեջտեղը շահելու համար: Եվ մի անգամ, երբ թուրքերը քրդերին հայերի վրա կովի են բերել. Գետրգ Չափուշը բարձրացել է եւ ասել նրանց. «Մենք պատրաստ ենք կառավարության դեմ կովելու եւ ոչ ձեզի հետ»:

Երբ թուրքերը. եղրակացություն չհանելով, այսուամենայնիվ կրակ են բացել. հայերը չեն պատասխանել: Այդ դեպքում քրդերը թողել. հեռացել են:

Եղել է այսպես, որ մի քրդից հայերը գողություն են արել: Քուրզը եկել. բողոքել է Անդրանիկին: Չանցած 24 ժամ, հիշում է Անդրանիկը. գործը գտնվել են եւ գողացված՝ վերադարձվել:

Աղբյուր Սերոբին սպանող եւ Անդրանիկի սպանած Բշարե Խալիկի հեռու բարեկամները Անդրանիկի հետ մտերմություն հաստատելու. կատարվածը մոռացության տալու ցանկություն են հայտնել: Հանդիպել են:

«— Իրենց սովորական երդումներն ըրին. — Իիշում է Անդրանիկը. — հաց կորեցինք եւ մի-մի կտոր բաժնեցինք իրարու հետ: Այդ բանով մեր միջեւ բարեկամությունը ավելի լավ հիմնվեցավ»:

1903-ին, երբ Սասունի Տափը գյուղից ոստիկանությունը հեռացել է. տեղի քրդերի ներկայացուցիչները դիմել են իրեն. «— Սեր կառավարությունը զնաց: Ասկե վերջ մեր կառավարությունը դուն ես»: Ասել են ու խնդրել. որ Անդրանիկն իրենց խորթ աքով չնայի. այլ ինչպես որ հայերին: Անդրանիկը հիշում է իր պատասխանը. «— Եթե խելոց մնաք. մատնություն չանցք. մնացեք ձեր տեղերը. մի գնաք: Իսկ եթե խելոց չեք մնա, այն ատեն վայ ձեզ. ձեր երեխաների մեռք ձեր վիզը»:

Քրդերը մնացել են այսուղում եւ ապահով ապրել. քանի դեռ Անդրանիկն այստեղ է եղել:

1904թ. փետրվարի 4-ին սասունցիները նամակ են հղել իրենց բոլոր հայերնակիցներին. հայ եւ քուրդ խաղոր բնակչություն ունեցող գյուղում քրդերը որոշել են սպանել այնտեղ եկած Անդրանիկին:

1 և առ.

Բայց դա նրանց չի հաջողվել: Անդրանիկը բռնել է խոռվահույզ քրողերին, վերցրել է նրանց գենքերը, ապա նրանց ընտանիքները, տարանջատելու նպատակով, ցրել տարբեր գյուղերում<sup>1</sup>: Եվ բավարարվել է այդքանով:

Անդրանիկի գիևակից Սմբատն էլ է խոստովանում, որ իրենց գլխավոր հոգսերից մեկը «քրողերի հետ բարեկամական հարաբերություն» հաստատել է եղել: Բայց նկատել է, որ քրողերը դժվարացել են հասկանալ հայերին, որին նպաստել է կառավարությունը քրողերի նկատմամբ իր կեղծ հովանավորչական գոհծունեությամբ: Դա այնուամենայի չի խանգարել, որ ֆիդայիները հրենց բոլոր քանչերը լարեն հանուն կատարյալ եղբայրության: «Եվ սակայն, անկարելին իսկ պետք էր փորձել՝ հայ հեղափոխության դույզն նպաստ մը բերելու համար», – հիշում է Սմբատը եւ ինըն էլ նշում, որ այդ նպատակով քուրդ աշիրեթների հետ աշխատանքը Գեւորգ Չավուշի պարտականությունն էր: Ու հետևում են արդյունավետ օրինակները, որոնց մեջ եւ այն, թե ինչպես քրդական ցեղասպաններից մեկի հետ մտերմանալու միջոցով Անդրանիկին եւ Գեւորգ Չավուշին հաջողվել է տվյալ ցեղին հեռու պահել հայ-թուրքական ընդհարումների ժամանակ թուրքերին օժանդակելուց<sup>2</sup>:

Շարունակենք: Անդրանիկը նախապես պատրաստել էր նաեւ փայտ կամուրջներ, որոնք կոչի ժամին հնարավոր եւ, որ օգտագործվեին, իսկ ձեռքի տակ եղած փոքր դրոշները մորգեական հեռախոսի դեր էին խաղալու:

Չորրութեանք. որ 1903-ի տարեվերջն էր, առցելում՝ ձմեռն ու 1904-ի գարունը: Ո՞վ էր հայի օցախի դատարկվող շտեմարանը լցնելու, թե՛ նրա որդիներն ու հարսները, կանայք ու տղամարոհիկ գարնան իրենց գործերը չկատարեին: Բարեխիղճ է եղել Կարսի ուսաւական սահմանի պահակակետի հրամանատար փոխգնդապետ Տոլմաչելը: Սահմանապահ էր եւ հետախույզ: Իր վերադասին հղած փաստարդում 1904-ի գարնան մասին գրել է, թե Սասունում «ում Անդրանիկ հավաքել, ի մի է բերել գիևած ֆիդայիների մի ավագակախումբ, մոտ երեք հազար հոգուց բաղկացած»: Բայց սա չէ նրա բարեխորդությունը, այլ այն, որ նաեւ ավելացնում է, թե հայերը գարնանը ձեռնամուխ են եղել ցանքսին<sup>3</sup>:

Զեւավորված է եղել նաեւ գիևորական խորհուրդ, որն էլ որոշել է կապ հաստատել Դաշնակցության արտասահմանում գտնվող կենտրոնի հետ եւ մասնակցել նրա առաջիկայում հրավիրվելու ընդհանուր ժողովին:

1 Վասէ ԴԿՊ. ֆ. 521. գ. 2. գ. 310. թ. 377: Նաև «ԴԿՊ. ֆ. 370. գ. 2. գ. 52:

2 Ակր. Ծրիցեանց. և ա. էջ 193-198: 3 Կողու. ֆ. 450. գ. 1. գ. 130:

Գյուղերում ստեղծված էին կոմիտեներ, որոնք ամեն մեկն իր տեղում, ինքնապաշտպանության գործին էին լծված: Կազմակերպման այս կարգի միջոցների ջերմ կողմնակից եր Հրայրը, որը հնքն էլ ղեկավարում էր աշխատանքների այդ բնագավառը՝ տեղերում ինքնիշխանության միջոցները ստեղծելը եւ բնակչության ուժերը գումարելը, սակայն լուր ու անձայն, իշխանություններին չիրակրելու համար: Հրայրը նաեւ հետամուտ էր, որ չինեին լարվածության պատրվակներ, չինեին ընդհարումներ, մանավանդ, չստացվեր այսպես, որ հայերը նախահարձակ լինեին<sup>4</sup>:

Ժողովներ են գումարել: Ինքնապաշտպանության ձեւերի, դրանց հետ կապված մյուս միջոցների, տեղական իշխանությունների, քրողերի, կենտրոնի հետ վերաբերմունքի հարցերը հուզում էին բոլորն՝ գյուղերի երիտասարդությանը. Նրանց ծնողներին, բոլոր չափահան ու տարեց մարդկանց: Ինչպես էր լինելու եւ ի՞նչ էր լինելու: Ցանկալին կոիվներից գուցե թէ մի կերպ խուսափելն էր, խաղաղ միջոցներով հարցերը լուծելը, զոհեր տալուց զերծ մնալը: Ամենուր սկսած Կովկասի սահմանից, քաղաքներից դեպի գյուղ, թէ գյուղամիջան ճամփաներին, բարձունքներում, թէ դաշտավայրերում, սովորան Համբիդ գիևած (բացահայտ թէ թաքստոցային) պահակություն էր կարգել, որ չիներ թէ հայերը որեւ տեղից, որեւ կերպ գենք տեղափոխեին: Եվ, այսուամենայի հաջողվել էր: Այդպիսի մի դեպք է պատմում Սմբատն իր հուշերի գրքում:

Մեմալից Գելիեզուզան գյուղ, որտեղ գտնվում էր այդ պահին Անդրանիկն իր ընկերներով, սուրհանդակը նամակ է բերում: Գրու էր գենք բերելու ճամփաներով հաջողությամբ Կովկասից վերադարձած թորգոմը.

«Չեինք կրնար հավատալ լուրին, – պատմում է Սմբատը: – Այսքան անակնակալ էր եւ այնքան հանդուզն կը թվեր մեզ այդ քայլը... Որովհետեւ լսել էինք թէ մինչեւ այն ատեն՝ Կովկասն Սասուն օգնական ուժ որկելու ձեռնարկումները գորեք առանց բացառության՝ ձախողեր էին»: Ոչ միայն գենք էին բերել, այլեւ եկել էին որպես Կովկասում գիևած խումբ: Սմբատը շարունակում է.

«Այս պայմաններու տակ, թորգոմի խումբին անվտանգ ժամանումը անշուշտ մեզ հիացիկ աաշության պիտի մատներ: Իսկ ժողովուրդին խանդավառությունը անսկարագրելի էր»<sup>5</sup>:

Սմբատն ասում է, թէ տարերային շարժումն իր ընթացքով զնում էր, բայց անհրաժեշտ էր, որ ինքնապաշտպանությունը դրվեր «կազմակերպական ամուր գետնի վրա»: Նա նկարագրում է նաեւ մի

1 Ակր. Ծրիցեանց. և ա. էջ 193: Նաև՝ Սմբատի անդակ պատմությունների գրառաներ:

2 Ակր. Ծրիցեանց. և ա. էջ 196-197:

ընդհանուր ժողով, որն անհրաժեշտություն էր դարձել «քե կացությունը ուսումնասիրելու եւ թե կարգադրություններ ընելու համար, մասնավանդ որ Թորգոմ պիտի վերադառնար Կովկաս եւ կուզեր իր հետ ստույգ տեղեկություններ տանիլ ու պահանջներ ներկայացնել հայ հեղափոխական դաշնակցության բյուրոյին»: Եվ ժողովը գումարվել է, որին մասնակիցների մեջ նա հիշում է Հրայր, Կահան, Ամերակիկ, Կոտոյի Հաջի Հակոբ, Կորյուն, Կայծակ Վաղարշակ, Թորգոմ, Սեպուհ, Սուլրադ, Սեբաստացի եւ ուրիշ անուններ: Կազմակերպող եւ մարտական ուժերի այս ներկայացուցիչներից բացի ժողովին ներկա են եղել նաև Շենիկ, Սեմալ, Տափեկ, Գելիեգուզան, Ալիսի, Զորեր, Սպաղան, Տալկորիկ, Այգի Տուն, Հոսնուտ գյուղերի պատվիրակները: Ժողովը կայացել է Գելիեգուզանից վեր «Ոչկեր կոչված Վայրում»: Ջևսկել է ընդհանուր վիճակը, բնակչության տրամադրությունը, պարզվել են զենքի տակ մտած եւ մտնելու պատրաստ մարդկանց քանակը, գենքի կուտակված պաշարների չափը եւ բազմաթիվ այլ մասնամասներ: Ուժերը բաշխվել են. Հրայրը դաշտի մեջ պետք է շարունակեր մարդկանց կազմակերպումը, Թորգոմը պիտի մեկներ Կովկաս (Վերը նշանակած նպատակով) եւ այլն: Այստեղ է, որ ընտրվել է գինվորական խորհուրդը, որի կազմում, զատ Սմբատի, Մտել են Անդրանիկը, Սուլրադ, Սեպուհը, Սեյդո Պետոն, Ավոն, Կայծակ Ալոաքել եւ ինքը՝ Սմբատը: Հետո այդ կազմի մեջ ընդգրկվել է նաև Գեւորգ Չավուշը, որ այդ պահին գտնվել է Վանում:

Ջևսկել է նաև ընդհանուր հրամանատարի հարցը: Երկու թեկնածու է եղել՝ Անդրանիկը եւ Սուլրադ, Սեբաստացին: Ըստ Սմբատի՝ «Սուլրատ կը պետք, որ հրամանատարությունը կը պատկանի Անդրանիկին. իբր ծանօթ տեղին, տեղացիներուն եւ մասնավանդ գինեալ ուժերուն եւ իր քաջությամբ ու փորձառությամբ:

Անդրանիկ կը նդիմանար ու կառարկեր իր հոգնությունն ու առողջության աննպաստ վիճակը:

Սեպուհ եւ Սուլրատ, առաջին տեսակցության մը մեջ, կրցան համոզել Անդրանիկը, որ նշանակվեցավ ընդհանուր հրամանատար կովոր ուժերուն: (Ն. տ., էջ 201):

Ընթերցենք այս պատմության մի ուրիշ շարադրանք.

«1904-ի պատմամբութենեն առաջ, ընկերներն ոմանք կուզեն Խմբապետ նշանակել գինքը (Սուլրադին՝ Հ. Կ.), բայց Սուլրատ: Կը մերժե, եւ կը հանձնարար խմբապետության պաշտոնը տալ այն ընկերոց, որը Սերոբի մահեն հետո առաջնորդեր է հայ ըմբռութերու փաղանգը:

«Անդրանիկն է այդ առաջնորդը. — կըսե Սուլրատ, եթե անզամ նա մեռած լինի, իր դիակը մեր դրոշակին հետ պետք է տարվի, մեր

առջեւեն դեպի կոփ ու ազատություն»:

Ամենքը չեին սիրեր Անդրանիկը, որ դժգոհություն կը հարուցաներ իր փոքր ինչ կոշտ, անհարթ ընավորությամբ: Բայց ի վերջո ամենքը համակերպեցին Սուլրատի, Կահանի հորդորներուն եւ Անդրանիկ եղավ պարագալուն»<sup>1</sup>:

Այս բոլորը եղել է, բայց ոչ որպես նախահարձակ լինելու եւ առհասարակ հարձակվելու նպատակով: «Արձակվելու, կոփ սկսելու հարց չի որպել, եւ առհասարակ պարզ չի եղել ում վրա հարձակվել, որտեղ, ինչպես եւ կոնկրետ ինչու: «Ինչուն» թեեւ երկիմաստ է, բայց դարձյալ պարզ է հարձակվել Սասոննը, թէ՝ ողջ Արեւմտյան Հայաստանը փրկելու կամ գուցե սովորանին ահաբեկելո՞ւ եւ նրան զապելո՞ւ համար: Այս Վերջինը բացառված չէր: Բայց դրա համար արդեն տարիների փորձը հուշում էր, որ սովորանին ինքն առիթ կտա, չէ՝ որ եթե հայերը մի քանի գյուղում եւ ամեն մեկում մի քանի երիտասարդ էին զինում եւ հինքնապատպանական հենակետեր ստեղծում, դրանից ավելի վաղ ու շարունակաբար, նույն այդ գյուղերից մոտ ու հեռու, սովորանը գորանցներ եր կառուցում եւ զորքեր կուտակում: Հայերի համար շան էր դժվար կոահեն, որ այդ բոլորն արկում է իրենց վրա հարձակվելու եւ այն էլ ոչ թե սոսկ սաստելու, այլ կոտորելու համար: 1894 թիվը, ի՞նչ է, ուրիշ կերպ ծագեց, եւ մի՞թե այն ժամանակ հայերը եղան նախահարձակ: Եվ մի՞թե դա սոսկ սաստել ու զսպել էր, այլ ոչ կոտորելու, բնաջնջելու մոլեգին ձգտում եւ այդ ձգտման «փայլուն» իրականացում: Եվ մի՞թե սուլրան ու նրա գործակիցները դեռ ալլահին չեին օրինում հայության զանգվածային այդ բնաջնջման համար եւ նոր կոտորածներ չեին ակնկալում նրանից: Այս բոլորի դիմաց իրենց կատարածի մասին այս է Սմբատի խոսքը.

«Պետք է շեշտեմ, թէ այս բոլոր կարգադրությունները հարձակողական որեւէ նպատակ չեին հետապնդեր, մասնավանդ որ տակավին նմիանուր պաստամբութեան ժամը չէր ինչած մեջ համար: Պարզապես կը պատրաստվեինք սպառնալի անծանոթին նախատեսութեամբ: Կը տեսնեմք վտանգը, որ կը հառաջանար հորիզոնեն, կը մոտենար քայլ առ քայլ եւ մեր դիմադրությունը կը կազմակերպեինք»<sup>2</sup>:

«Ժամը չէր ինչած»: Ապստամբության ժամը ինչեցնել ասելով հայերը հասկանում էին, թէ թուրքն ու քուրդը զորքով գալիս են իրենց գյուղերի վրա, պետք է գլխի ճարդ տեսնել: Ժամը ինչեցնուները հարձակվողներն էին, այլ ոչ պաշտպանվողները: Գլխի ճարդ տեսնելը՝ այս եր հայերի համար «ապստամբվելը», որը թուրքական պաշտոնական մամուլը կարող եր ողքան ուզենար չարաշակել եւ

<sup>1</sup> Մի. Կարանոնան, Սուլրատ, 1931թ., Դ. էջ 64: <sup>2</sup> Ա. Երիտանց..., էջ 202:

Նենգափոխել իրոք ապստամբություն հռչակելով: Հաճելի չեր. պետք է որ հայերը լուս ու մուսջ սպասեին. թե երբ են գալու իրենց կոտորելու այն զորքերը. որոնք արդեն սրբ էին շաշեցնում գյուղա-միջի ճամփաներին:

Աղօթում գարունն էր:

Հայերը զարնան էին Ենթադրում թուրքերի հարձակումը: Բայց 1904-ի հենց սկզբից սկսվեցին կոփվերը: Նշանակում է. առավել եւս. հայերի պաշտպանությունն անպատշաճ պետք է լիներ. իսկ հարձակման մասին խոսք լինել չեր կարող:

Անդրանիկը վկայում է. որ 1904-ի հունվարի 10-ին գինված քրոբը հարձակվել են Սասունի Հեղին. Արտկոնք. Ընկուզնակ եւ Դշխնձոր գյուղերի վրա՝ բացառապես թալանի նպատակով: Սա հենց իսկական մարտահրավերն էր. թալանով սկսած մարդկանց կոտորածով ավարտելու համար: Հունվարի 17-ին քրոդական ջոկատները հարձակվել են Անարոնք գյուղի վրա: Սպանել են հինգ հոգու եւ մանկահասակ մի աղջնակի եւ փախցրել: Սա արդեն մի քայլ «առաջ» էր: Կառավարությունն էլ իրեւ թե Մեղավորներին է սաստում. ձերբակալելով ուր հոգու. բոլորն էլ հայ<sup>1</sup>: Պաշտպանվողների եւ պաշտպանողների գլուխ են կանգնած Գեւորգ Չափուշը. Սուրադն ու Հրայրը: Ճիշտ է. հայերը նրանց գլխավորությամբ ետ են մդել հարձակվողներին. բայց Վտանգը չի վերացել: Պարզ է դարձել. որ իշխանությունները որոշել են այդպիսի անջատ-անջատ հարձակումներով հյուծել հայերին. Նվազեցնել նրանց թիվը. հայտկապես տղամարդկանց. թալանել գյուղերը. մինչեւ որ լիովին վերջ կտան հայերի կյանքին: Պաշտպանական գործի գլուխ կանգնած Անդրանիկն առաջարկում է՝ քանի ոտք այդ ավերմունքը չի կատարվել. հայերն իրենց խոհեմ գտնվեն եւ քանի ոտք թիվ վնասներ են կրել եւ զոհեր տվել. իրենք կամովին լրեն գյուղերը. տեղափոխվեն. որի համար Անդրանիկը Տալվորիկ գնալն է հարմար գտել եւ մատնացույց արել: Առաջարկը անսպասելի է եղել. գուցե եւ տարօրինակ: Հրայրն ու Վահանը. հանկարծակի եկած առարկել են: Այդ միջոցին Գեւորգ Չափուշը. որ Նշված գյուղերում եր ու թուրք-քրոդական գիսյալ ջոկատների Մշտական հարձակումներին Ենթակա. Նամակ է գրում. որ այլևս իր փոքրաթիվ խմբով չի կարողանում դիմանալ եւ ամենայն ինչ. որ կա գյուղերում. պետք է շտապ տեղափոխել Տալվորիկ: Եվ գյուղերից. այս անգամ արդեն ոչ թե ինչ-որ որոշման կամ հրամանի պարտավորեցմամբ. այլ հարձակումների ճնշման տակ. թողնում հեռանում են նրանց հնամենի բնակիչները: Այդպես մարտի

<sup>1</sup> Հայոցական հայոցը. էջ 337-339: Եաւ: Հայուն Մուշ Խովերը 1904-ին. Ժա. 1906 թ. էջ 5-6:

30-ի երեկոյան Կելիեկերման գյուղն է դատարկվել. 31-ի վաղ առավոտյան՝ Սեմալը:

Ապրիլի առաջին օրերին. քրոբը ճնշմանն ու հարձակումներին չոհմանալով. թալանվում են Ծովասար. Արտխու եւ Թարխոսու գյուղերը եւ միայն Սմբատի հարձակողական օգնությամբ է ունեցվածքի մի մասը թալանից փրկվում: Այսպես պատմում է Անդրանիկը. հիշերով նաեւ նման հարձակումներ ուրիշ գյուղերի վրա. թալան. տեղահանություն. սպանություններ: Փախստականների մեծ քանակություն է կուտակվում Գելիեգուզանում. ըստ Անդրանիկի՝ 5000 հոգի: Անդրանիկը. հայդուկները. տեղացի գյուղացիները եւ այնտեղ ապաստանելու եկած բնակչությունը սրբում են ճյուղն. հողաշեն օրեւաններ տնեղում էլ խորըում՝ մարտերի համար դիրքեր: Գյուղացին լի էին վրիժառության զգացումով. անպատվությունից. զայրութից ու կատաղությունից այրվելով անպայման ուզում էին բախվել թշնամու հետ եւ իրենց տված կորուստները անհատուց չթողնել: Այս հողի վրա դարձյալ ընդհարվում են Հրայրն ու Անդրանիկը: Այս անգամ Հրայրը բնակչության հետ համաձայն էր վրեժինորության հարցում: Մինչդեռ Անդրանիկը չափում էր ուժերը եւ բացատրում. որ դրանից մեծ օգուտ չի լինի. քանի որ թշնամին գալիս է բանակներով. գինված. այն էլ ոչ միայն հրացանով. այլեւ՝ թնդանոթով: Անդրանիկը նույնիսկ գյուղերը թողնելու կողմ էր. անզամ այրելու եւ լքելու. մի տեղ կուտակվելու. որպեսզի ավելի զրոավոր լինեն: Մարդիկ գիտեին. որ թշնամին ուժեղ է բազմապատիկ. գիտեին. որ իրենց անզոր են լինելու: Գիտեին. որ կոիվն էլ մահ է. կովից խուսափելն էլ: Բայց հաշվում էին ու կշռում. ո՞ր դեպքում է կորուստներ ունենալով ու զոհեր տալով փրկության թեկուզ մի փոքրիկ եւր բացվելու: Գիտե՞ր արդյոց Անդրանիկը. որ 1812-ին ոռւսաց զորքի հրամանատար կուտուզովս է հրամայել իր զորքերին կանգ չառնել Ֆրանսիայի կայսր Նապոլեոնի դեմ. չընդունել նրա հարկադրական մարտահրավերը. եւ թագավորի ու ժողովորի առջեւ խնդիր է դրեւ նահանջել. քանի ոտք թշնամու ուժերը առավել են. քանի ոտք ցուրտն ու ճահիճների մեջ ապրտիզաների հարվածները այնպես չեն հյուծել համաձարեղ ու անպատճական հարմարությունների վրա հարձակումյա տերերն ու պահապանները. որ բոլոր թողությունն ուժմացել էին. այսօր պետք է թողնեին

\* Սառու լեռացարքի. կրա քարեկորով բակարության իւթասացառական կողմ փաստաց մկրտագործություն է պարունակություն նույն հովհանների մասնաւությունը մեջ հայցագույնը (Տ. 1987թ.):

իրենց շենքը ու դուրս գային սարերն ու լեռները:

Հրայրը դեմ էր Անդրանիկին: Հրայրի համար ավելի հեշտ էր դեմ լինելու, ինչ Անդրանիկի համար՝ կողմ: Հրայրը կարող էր բնակչության մասին մտահոգված անձնափորության կեցվածք ընդունել, իսկ Անդրանիկի համար հենց դա էր ոժվարը, գիտենալով, որ հետեւ այստեղ է, որ նա գուց թե լիովին անհասկանալի ու անըմբունելի է լինելու բնակչության համար: Հրայրը պակաս զորավարական էր Եւ առավել քաղաքացիական, քան Անդրանիկը. Անդրանիկն առավել զորավարական էր Եւ պակաս քաղաքացիական, քան Հրայրը: Մի՛՛թ դերերը փոխվել էին, փոխվել էին նրանց գործի ու գրադմունքի թե ձեւը, թե բովանդակությունը: Անդրանիկն ուժգին պնդում էր ու պահանջում, որ գյուղերը դատարկեն, իսկ Հրայրը՝ նովսքան ուժգին հակառակը: Գուցե այդ նրանից էր, որ Անդրանիկն ավելի հզոր էր ու ահարկու, անկուրում էր ու համար իր վճիռների մեջ: Եկ այդ անկուրումի ու համարում էլ հենց այս պահին վեասում էր Անդրանիկին, համար Եւ, նրան համոզել չի լինի, կարող էր ասել Հրայրը, կարող էին ասել շատերը Եւ ասել Են թե՝ այդ պահին, թե հետագայում: Անդրանիկյան գարշապարը: Եկ նրանք, ովքեր խորա-մուս չեն եղել խորի եռության մեջ, ովքեր հակված են եղել բանա-վիճող կողմերից մեկին մյուսից առավել գտնելու ծանրաքարեռ հապճեարուն, անշշաղատ կշեզի նժարներին ոնենու, Անդրանիկին սիալ Են համարել ու նսեմ, Հրայրին՝ ճիշտ ու վսեմ: Մինչդեռ այստեղ ոչ նսեմի հարց կար, ոչ վսեմի: Մեկը կարող էր իր վճոի մեջ ճիշտ լիներ, եթե ուժերը համապատասխան լինեին հաջող կովի համար, մյուսը՝ դարձյալ ճիշտ, նոյն այդ վճոի հակառակը պնդելիս, եթե այդ ուժերը բացարձակապես նվազ էին Եւ մինչեւ անգամ չեղյալ: Վճռով հրապուրվելու համար չեն վճիռ ընդունում:

Երբ գինվորների հետ միասին Անդրանիկն ու Հրայրը ի մի հավաքվեցին, ուժերը դրվեցին նժարների վրա: Այդ ժամ Անդրանիկը պահանջեկու ասաց՝ «Անմիջապես գոր, պատասխանե, որ մենք անձնատու չենք լինի»: Այսինքն՝ գյուղերը կայրենք, կելնենք սարերը, կեռվենք մինչեւ վերջին շունչը:

Ամեն մի գյուղ յուրովի է ընդունել «այրել Եւ հեռանալ» վճիռը: Քաշերից քաշերն ըմբռստացել են. «Մենք չենք ուզեր, որ մեր գյուղն այրեց»: «Մեր գյուղը», ի՞նչ անուշ գուրգուրանք կա այս բառերում, ի՞նչ սեր ու հարգանք նախնյաց հիշատակին եւ կովելու ու մեռնելու պատրաստակամություն: Հրայրը չի համարձակվել անդել Եւ հրդեհող կայթարը ձեռքը չի վերցու: Գնացել է Անդրանիկը: Սարդիկ պատկառանք ու սարսափը միաստեղ են զգացել, եկել ե անձամբ Անդրանիկը. Եկել է նավթն ու կայթարը ձեռքին: Եկ այդպես հրկիցել է

ԶԵՆԾԿԵՑԻՔ. Ավեկեարմ, Երիցանք, Կոփ, Տափըկ գյուղերը, հետո հարկադրել է, որ այրեն Գեղաշենն ու Շուշնամերկը: Իսկ սուլթանը դեռ պետք է աշխարհի չորս կողմը թղթեր ուղարկի, թե Սասունի հայ ժողովուրդը ապստամբել է իր զահի դեմ, պետք է հյուպատուսներին հարկադրի կամ շողոքորդի, որ ուրիշ բան չգործ իրենց կառավարություններին, հայերի ապստամբությունից բացի:

Իրենք չայրեն, Ներխուժողոն էր թալանելու, ավերելու Եւ մնացյալը հրկիգելու: Այս խրթինը, այս անհավատալին ու անհասկանալին ինչպես պետք է հաստատածն ըմբռնի ազնիվ ու անեղծ անտեղակը: Կերը հայինն է, ցավը ինչու պետք է ուրիշօ զգա: Կա բոլորին մատչելի յուրացում բառը: Ներխուժողոն ինչ կերպ էլ կարկեր, նպատակը տոփրական իմաստով կողրադտել չեր, այլ յուրացելը: Կողոպտվելուց տիրողն է փոխվում, յուրացվելուց՝ հեղինակը: Մեկն ասում է՝ սա իմն է, մյուսը՝ սա Ես ստեղծեմ: Այս ամենը, ինչ եղել էր ու կար Անատոլիական թերակղզում մինչ սուլթանի գահը այնտեղ հաստատվելը, դրանից հետո օսմանյան տերության անբաժան սեփականություն էր հօչակված: Հեղինակն էր ուրիշ: Ոչ միայն դրիշ, այլեւ անփոփոխ: Կողոպտել միշտ էլ կարելի է, յուրացնել՝ եղբեց: Յուրաքանչյուր ստեղծագործության կողրադտիչները հոգնակի են, հեղինակը՝ եզակի: Կարո՞ղ էր յուրացնել Թուրքոսի «ԵԵՖԵՐՄԻՄԻՆ», Լեռնարդո դա Վինչիի «ՉՈԿՈՆԴԱՆ» կամ Ոաֆայելի «ՏԻՐԱՄԱՅՐԸ»: Եղափտական հողերի տերը արդեն քանի դար երկիրը նվաճած արաբական պետությունն է: Մինչդեռ փարավուների բուրգերը որպես ստեղծագործություն հավերժ հին եղափտացիների սեփականությունն են: Որովհետեւ ի սկզբան էր նրանցը: Ի սկզբան, ծակող չե, ոչ Ել շանթող ու հարվածող, բայց մահացու գենք է այդ մի բառը: Խաղաղ ժամին նա հայի հոգու խորըու էր, հարկադրանքի ժամին՝ շուրբերին: Ենիշերու մուտքը հայոց օջախները այդ մի բառի դեմ էր:

- Ենիշերին, ի՞նչ է, պետք է չնշե՞ր տիրոջ անունը:
- Ո՞չ, նա պետք է հեղինակի անունը փոխեր:
- Մի՛՛թ...
- Չեք սխալվում, ասացե՞ք, ասացե՞ք, սոսկալի է այդ բառը, բայց ասացե՞ք:

- Բնացնջումո՞վ:

Այ՞ն, բնացնջումով, որովհետեւ թե՛ւ վերջին հաշվով դա էլ միջոց չե, բայց ուրիշ միջոց չկա:

Հայերի հասակակից խեթերը, ասորեստանցիները, փոյուգիացիները, փյունիկցիները, մարերը փոշիացած, ցաքուցրիկ Եւ աշխարհով մեկ: Կան նրանց սոսկ անունները, փոշեհատիկ թեկորները աշխարհի տարբեր կողմերում: Բայց նրանց կերտած բազում հուշարձանները

կանգուն են. թե՛ արյունակից տեր չունեն եւ եղած տերերը հավելյալ են. մեկ է. հեղինակները հավիտյան հավիտենից մնում են. նույնը Հայերն եւ այդ բախտին են արժանացել թե՛ իրենց հողերի հսկայական զանգվածի կորստով. թե՛ առավել եւս բնակչության նվազումով:

Թող հայոց տերը ներխուժող հափշտակողը կամ բնաջնջողը չկարծի. թե հայը հարկադրական նահանջի ժամին իր գույքն է ափսոսում. որ նա անշափ ժլատ է ու չկամեցող. որ այդ վերջին պահին անզամ չի ուզում. որ իր տան նարին դարսած հացն ու մառանի գինին կամ թե աղջկներին հարսնության օրը տալու օժիտը իր ձեռքն ընկնի: Չէ՛, դա չէ գլխակորը: Անորանիկը լավ գիտեր ավելի լավ. քան շատ շատեղ. գիտեր մոտիկից. իր անձնական շփումներից. որ թուրքն էլ մարդ է. նա ել հոգս ու կարիք ունի. որ նա ել կարեկցող է ու կամեցող: Զանի՝ դար հայն ու թուրքը դուռ-դրկից ապրել էն. հարեւանություն արել ու բարեկամություն. ինչքա՞ն անուշ եր թուրքի նորաթուլս բորոնի ու հայի լավաշի բուրումները. թուրքի ապուրը. գոմեշի կաթն ու մածունը. ոչխարի թոնրադիր խորովածը: Եվ եղել է հայ ու թուրքի խաղաքանակ մի զյուր ու քաղաք. ուր հայի գեր մի օցախ իրեն մտերիմ մի թուրքի ընտանիք չունենար ու գերդաստան. ամեն թուրք՝ իր հայ բարեկամց: Չի եղել: Աստիճանաբար է. որ փոխվելով կարգերը. շրջել երն բարեթը: Մեղքը սուլթանի վզին եր:

Հայի սիրտը խորն եր խոցված. եւ զայրույթը չափ չուներ: Հայը միայն այս չի ուզում. որ ենիշերու սուրը իր գույքը չկտրի. այլէ որ իր պատմությունն արմատահան չանի ու ոչ միայն չկողոպատի. այլէ՝ չուրացնի: Կոփը նախ եւ առաջ յուրացման դեմ եր. այս յուրացման որև առանց կոփի էլ տեղի եր ունենում աստիճանաբար. տարեցտարի. ամսեամսին եւ օրեցօր. դպրոցներն եին փակվում. լրագրերն ու գրքերն եին կրճատվում...

Կա անհայրենիք որդի. Ե՛ հայրենիք՝ առանց որդու: Հայերից փաստորեն արդեն շատերն եին առաջինը. սուլթանն սպառնուած եր երկրորդը ի կատար ածել: Վերջինիս միջոցը յուրացնելն եր: Դրան հակադրվեց հայրենի օցախները լքելուց առաջ այրելու առաջարկը. որի վրա պնդում եր Անդրանիկը. որպես կենտրոնի Զինվորական մարմնի հրաման:

Սմբատը. որին հանձնված եր այդ գործը. ինքն ել իշտո պատմել է այդ վիճակը. երբ արդեն իր հուշերի գիրքն եր թելադրում.

«Բայց ինչպէ՞ն համոզել ժողովուրդը. որ իրավունքով կը գույքուրանա ամեն մեկ առարկայի վրա»: Եվ զինվորն ու զորավարը բացահայտում է կյանքի ու մահվան եզրագծի պարզ փիլիսոփայությունը: Լսենք. նրան. ինչպէ՞ն այրել սերունեների հիշատակը. ինչպէ՞ն

կրակի բոցերին հանձնել ժողովորի ժառանգությունը. այրել ակունքն ու արմատը: Եվ միթէ՛ տներն այրելով այրվում. ոչչանում էն միայն տներ կոչվածները. որոնք սոսկ օրու ու խոշնակի դեմ էն պատնեշ ու ծածկ: «Պահապան զինվորը որդի է. զիտե պապեանական դասը. զգուղի ամեն մեկ տան մեջ. ամենն համեստ խոճիթին մեջ իսկ երկար տարիներու ժառանգություն մը կա ամփոփված. նյութապես աղքատ. ողորմելի. բայց հոգեպես՝ ճոխ ու անզնահատելի ամեն մեկ զգուղացիի համար»: Ահա ցավի պատճառը. նյութապանի կորուստը յի տանջում հայ մարդուն. նյութապանից վեր ու առավել հոգեկանն է: որ կրակի լեզուներին հանձնելով. այլեւ չես վերականգնի: Ուրեմն. տունը այրելով սոսկ կացարան այրելով չէ: «Ամեն մեկ տան մեջ՝ հիշատակներու սրբությունը կը հսկե. տան ամեն մեկ անկյունին. ամեն մեկ առարկային վրա՝ ցավի կամ ուրախության պատմություն մը կա գրված»: Ինչպէ՞ն այրել պատմությունը: Վերաբնակիչ թուրքի համար գուցե թե առայժմ այդ զգացումը անհավասարի եր ու խորը: Նախնիները քոչվոր էն եղել. ինքը՝ ուրիշի հոդի վրա: Ո՞րն էր նրա ստեղծածը. հողը. որ ամենայն արարչության հողն էր. յուրացրած էր: Նքա կոփին էլ այդ յուրացման հետքերը կորցնելու համար էր. վերաբնակչի մասին տեղեկությունները հսպան վերացնելու: Ոչ միայն տեր էր ուզում լինել. այլեւ ուզում էր. որ այդահին ճանաչեն իրեն: Ուրեմն. ուրիշի հետքերը պետք եր սրբել. բնաշինց անել: Դա գիտե՛ր գեղջուկ հայը: Եվ այրելով իր տունն ու շեները. նա հույսը դնում էր վերածնենի վրա: Որպեսզի նորից ծննդն լիներ:

Գյուղերում հրավիրվում են երեւելիները. համոզվում են իրենք եւ համոզում ուրիշներին.

«Եվ ահա պարզեցավ հուզիչ տեսարան մը»:

Ոմանք իրենց ամենն ախտանի առարկաները աճապարանքով կը քաղենի հոդին տակ: Ուրիշներ. բոլորովին հուսահատ. մատնվեր էն անշարժության եւ կը սպասեն կարավանին մեկնումին:

Իսկ շատեր. կրակը տալե հետո իրենց սիրական բույեին ծունը կը դնենին սեմին առջեւ. կը համբուրեին. կարտասվեին ու կը հեռանային:

«Այսպես կրակի տրվեցան Ընկուզնակ. Հեղին եւ ուրիշ մեկ քանի զյուղեր»<sup>1</sup>:

Կրակի լեզուներն են երկինքն ի վեր ձգվում:

Իսկ ի՞նչ էր մնում:

Անում էն մտքում պահված եւ հողում թաղված այբուբենը. հայոց երգի մեղեդիները եւ ապրելու. վերստին կառուցելու եւ ստեղծելու կամքը: Այն. ինչ որ ժողովուրդն էր. հայոց ոգին:

<sup>1</sup> Ակր. Երեսանց... էջ 230-233:

1903-ի վերջին ամիսներից, 1904-ի սկզբից սուլթանի հշխանության ներք գտնվող մարդկանց քաղաքական ընույթի գրություններում թերթւան ամենից շատը վերաբերում էր Երկրի նորքի հայկական ընակության վրումնիւրի պատճառները կոծելուն. նրանց հականական պատճառական տրամադրությունների հմաստը նենգափոխելուն: Ապրիլին Կ. պոլսից հենց այդամի մի գրություն է ուղարկվել Վասի. Բիթիսի. Երկրի արեւելյան այլ վիայերների հետափար մարտիններին. որը թե ըստ եռթյան եւ թե փաստորեն Անդրանիկի անձի ու Նրա գործողությունների դեմ էր ուղղված: Տագեապով ու զայրույթով տեղեկացվում էր այն մասին. որ «Նորին մեծություն սուլթանին հայտնի է ղարձել», որ նրանց «Ենթակա հայկական նահանգներում հարաճուն ձեւով նկատելի են դառնում հայկական ազգային շարժման նշանները»: Եվ այդ էլ այն դեպքում, եթե սուլթանն իր գահ բարձանալու առաջին իսկ օրից նպատակ է ունեցել օգտակար լինել հայությանը, ուստի ափսոսանք է հայտնվում, որ հայերը շեղվել են ճշմարիտ ուղուց: Սնում է նյուճ սուլթանին եւ ասել, թե սրանից հետո պարզ չէ՝ որ պիտի հանձնարարեր իր տեղական լիազորներին. որ նրանք բացատրեին հայերին, որպեսզի նրանց իր «Ենթամամբ հատուկ վերաբերումն ցույց տան» եւ վանեն նրանց. ովքեր փորձ կանեն հրահրել իրենց եւ կոհվների մեջ քաշել: Եվ չի մոռացվում Անդրանիկի անունը.

«Բարձր Դոան եւ Օրմանյան պատրիարքի միջև վերատին կայացած համաձայնության հետեւանքով, Բիթիսի Հայ-Գրիգորյան Եպիսկոպոսը Ֆերիդ Բեյ վալիի. Վիայերի մի քանի բարձրաստիճան պաշտոնյաների եւ Բիթիսի հայության ավագանու հենց նոր մեկնել են Մուշ՝ հայ ավագակախմբերի պարագալիններին եւ նրանց գլխավոր Անդրանիկին խորհուրդ տալու. որ հրաժարվեն իրենց հեղափոխական ձեռնարկումներից»: Սա գրվել է ապրիլի 10-ին՝ (ին տոմարով):

Ըույնամիսի առաքելությամբ Անդրանիկին այցելել է նաեւ Բաղեշի Եպիսկոպոսի հոգեւորական Ներկայացուցիչը: Բաղեշի հայոց Եկեղեցու առաջնորդ Եղիշե Եպիսկոպոս Շիլինկիրյանը պատմում է, որ ինչպես Աղբյուր Մերոբը, նոյնպես էլ Անդրանիկը պարբերաբար նամակներ են գրել իրեն «Սասն բարձունքներից»: Նամակներից մեկով Անդրանիկը 30 մասուցեր գելու միջոց է խնդրել. եթե միայն մեկը 50 օսմանյան ոսկի էր: Երկրորդով պահանջել է, որ Եպիսկոպոսը թոհութուի ժամին Բաղեշից ոտքը դուրս չդնի. «Լցելով ժողովուրդը անհովիվ եւ անառաջնորդ...», հակառակ պարագայում սպասնացել է նրան գինված ուժով եւ բերել ճանապարհից: Շիլին-

<sup>1</sup> ուսւ. ֆ. Բաղարիկ. գ. 3444. թթ. 155-156:

կիրյանը նաեւ, ահա, գրել է. «Անդրանիկ, իբրև հայ քրիստոնյա, զերծ մնացած է կրոնական մոլեռանքությունները եւ նախապաշտմունքները: Սասն բարձունքներու պես ցինջ եւ մաքուր է իր կրոնական ոգին: Աղոթող եւ ցերմեռանդ, առանց ծուեր դնելու սրբավայրերու չոր քարերուն վրա: Այդ ոգով կրթած ու մարզած է իր գինվորներուն այլ»<sup>1</sup>:

Հյուպատոսական փաստաթղթերում ասկում է, որ այս անգամ Եպիսկոպոսի ներկայացուցիչը զենքերը ցած դնելու առաջարկ է արել: Անդրանիկը չի պատասխանել: Մուշի մոտակայքում տեղակայված թուրքական զորքերի հրամանատար Խալիլ փաշան անհապաղ Սասուն է ուղարկել մի քանի գումարտակ զորք. որոնց թիվը չուսով հասնում է տասնչորսի: Դրանցից չորսը մոտեցել են Լաջիկան գյուղի մոտ գյուղացիների պատրաստած ամրություններին. որտեղ «ապստամբների թիվը իբրև թե հասնում է երեք հազարի»: Չենք ուզում առարկել, ինարավոր է, որ երեք հազար է, ավելի էլ եղած լինեն: Թվեր ասելով, թվեր ունդացելով չի նշանակում ասել նաեւ, թե դրանց վերաբերում են բանակային կազմին: Գյուղացիներ են հավաքվել մի տեղ՝ իրենց շինած պատնեշի թիկունքում պատսպարվելու: Գյուղացիները գինվորներ չեն: Եվ նրանք հարձակված մեծացանակ զորքից ընդամենը 20 հոգու են սպանել. 25-ի էլ վիրավորել: Թուրքական հրամանատարությունը պահանջել է, որ գյուղացինեանձննելնեն, սպաննալով հակառակ դեպքում նրանց դեմ ավելի ուժով պատիժներ կիրառել. հետո որ տեղ հասնեն եկող լրացուցիչ զորամասերը: Մինչդեռ արդեն այդ ժամանակ քրդերը հասցրել են հրդեհել Մշա դաշտի մի քանի հայկական գյուղեր<sup>2</sup>:

Մինչ այդ, նույն 1904-ի ապրիլի 2-ին, քորդ ավագակների մի խումբ հարձակվել է Գելեհգուզան գյուղի վրա՝ տերտերի աղջկան առեւանգելու: Բայց հայ Ֆիդայիները, որոնք փաստաթղթերում, սպորականի պես, ավագակ են անվանված, վազօրոք իմանալով կատարվելիքի մասին, հարձակվում են եւ ըջում առեւանգուներին, որոնցից երեսունը սպանվում են: Մրան ի պատասխան, թուրքական զորքն է հարձակվում Սասունի գյուղերի վրա եւ կոտորում բոլորին, ութե՛ չեն հասնում պատսպարվել<sup>3</sup>:

Անդրանիկի անունը հայտնի էր: Թուրքերը՝ թե՛ հասարակ ժողովուրդը, թե՛ իշխանությունները, գիտեին. որ նա է հայության քաջականությունը: Գիտեին նրա մասին նաեւ Երկրում գտնվող Եվրոպական տերությունների դեսպաններն ու հյուպատոսները: Բայց երեսն նրանք ել իրենց չիմացողի տեղ են դնում. ինչպես կարելի էր

<sup>1</sup> Եղիշե եպս. Շիլինկիրյան. Փետկ բարյական առածերու և իշխանակ առաջելուրդներ. Երևանաւ, 1928թ. էջ 73-110 (լուսում Շիլինկ մը գրապահ Անդրանիկ կամացնել պահանջված):

<sup>2</sup> ուսւ. ֆ. Բաղարիկ. գ. 3445 (3444). թթ. 187, 188: 3 ն. ո., թ. 158:

ճշմարիտ լինել, սուլրանի ինքնասիրությունը վիրավորած կիհնեին: Անա ինչպես եր ասվում Թուրքիայում գտնվող այդ դիվանագետներից մեկի գեկուցագրում, որը նա հասցեագրել է և պոլսի իր դեսպանին եւ որին փրկել է «ում» բառը.

Սասունում գտնվող ավազակախմբերի դեկավարը ուն Անդրանիկ է, որը կարողացել է այդ երկրամասում հոչակ հանել իր խիզան հարձակումներով: Թուրքական կառավարության ստացած տեղեկությունների համաձայն, Մշո դաշտի հայ բնակչությունը, որը կարողացել է որոշ չափով զենք ձեռք բերել, հեղափոխական հակումներ է դրսելորում եւ նրա մի մասը արդեն հեռացել է Սասուն, որպեսզի ուժեղացնի ավազակախմբերին: Ապա անսըռդ պատմվում է այն մասին, ինչի դեմ մարտնչում եր Անդրանիկը. կառավարությունը բանից ձեռնամուխ է եղել Սասունի բնակչությանը իր բարձրաբերձ գյուղերից գուրս մղելուն եւ Մշո դաշտում բնակչության իջեցնելուն, բայց դա նրան չի հաջողվել: Հայերը գիտակցում էին, որ հարբակայրում նրանք այլեւս չեն կարող առաջիկ պես դիմադրել եւ պահպանվել: Եվ այն օրերի մասին, երբ Անդրանիկը գլուխվորում էր հայ բնակչության օրիհասական կոիկը իշխանության զորքերի դեմ, դիվանագետը գրում է, որ վերջիններս հաջողության չեն հասել, ուստի նոր ուժեր են կուտակել Սուլջի մոտակայքում<sup>1</sup>:

Դեռևս ապրիլի սկզբներին Անդրանիկին հայտնի էր, որ սուլրանի հրամանով 16 հազար զորք է գալու, թելանորմներով գինված, հենց այն գյուղերի վրա, որոնց նա ինքն էր հանձնում կրակի լեզուներին<sup>2</sup>:

Բնակչությունը բարձրանում է լեռները: Բարձրանում է կովելու, այլ ոչ փախուստ տալով ապրելու հույսով պատսպարվելու: Պաշարված ժողովուրդը ուզում էր ամեն կողմից արգելել զորքի առաջխաղացումը, ուզում էր հետո լեռների անճանապարհ փակությներում զամել զորքին՝ մեկով ոչ թե տասի. այլ հիսունի եւ հարյուրի դիմաց կովելու եւ մինչեւ վերջին գինվորը կոտորելու համար: Ուզում էր, որովհետեւ պատրաստ էր վերջին կովի գնալու: Հայերը բոլորն եւ ահա այս է, որ գինվոր էին ու մարտիկ: Մեկ է, զենք ունեին թե չունեին, մեկ է, տղամարդ թե կին. ջահել թե ծեր ու մանուկ:

Առջեւից գնացողները նրանք էին, որ հայուկ կամ ֆիդայի էին կոչվում: Առցեւը դեմ դիմաց չեր, թե՛ւ թիչ չեր պատահում նաեւ դեմ դիմաց: Նրանք ինքնապաշտպանության ոգին էին, ինքնապաշտպանության, որը թաքստոցից չեր միայն, այլեւ ճակատ առ ճակատ, որը նաեւ հարձակում էր. այլ ոչ միայն սպասողական, թե երբ պետք է զորք իրենց վրա կրակ բացի: Ավելին, ֆիդայիները գիտեին, որ այլեւս

<sup>1</sup> ուսւ. Ֆ. Բաղրամյ. գ. 3444, թթ. 167–169 (ազատ շարադրակը է. Խակիր ժաման): <sup>2</sup> և. ու.:

ինքնապաշտպանությունը չի օգնի. որ սովորական ինքնապաշտպանությունը հիմա, տվյալ պարագայում, անիմաստ է. ինչպես ինուց ասված հմաստությունը. մահ ոչ հմացյալ մահ է: Անա այստեղ է, որ Անդրանիկը հզոր ոգի է եւ ծածանվող որոշ: Այլեւս վախկուներ չկային, չկային կովողներ, որ քաջ չեն ու խիզան: Բոլորն էին եւ քաջ. եւ խիզան: Նրանց մեջ էին ե՛ւ Հրայրը, ե՛ւ Գեղրդ Չավուշը, ե՛ւ Կահանը, ե՛ւ Սուրաղը, ե՛ւ Ֆահրատը. Ակտիսիսը... Բայց մեղք է միայն այդ անունները հիշելը. միայն մի քանիսին վկայակոչելը. մեղք է ու հանցանը. ո՞վ է մյուսից պակաս կովել. ո՞վ է, որ գլուխը քարի տակից չի հանել, ո՞ր մայրն է, որ քարը ձեռքը չի վերցուել ու շարտել դեպի հարձակող զորքը. ե՛ւ ո՞ր որդին է, որ սպասել է, որ նախ մայրը քարը վերցնի ձեռքը... Ինչպես որ այսպես պատերազմ չի լինում. այնպես է այսպիսի սխրագործությունն է եղակի բոլոր պատերազմների պատմության մեջ: Ալսինդ մարդկությունը մի օր վերջապես այդ բանը պետք է հասկանա՞մ. թե՛ ոչ: Եռկի Վրայից մի օր մարդ արարածի հնուց ժառանգված վայրենության ու կիսավայրենությանը պետք է վերջ տրվի. թե՛ ոչ. մի օր նվազաթիվ ազգերի ու ժողովուրդների գերեվարման, բռնակցման, իսկ ապա նաեւ մշտապես հպատակեցման բորենիսիական ծարակը պիտի հագենա՞մ. թե՛ ոչ: Եվ ե՛ր է լինելու, որ ազգերի իրավունքը նրանց բազմությամբ չհաշվվի, եւ ծավալի չափանիշը տարողությունը չլինի:

Բոցավառվող հերոսության կրակների մեջ Անդրանիկն ամեն տեղ էր՝ որպես գինվոր թե հրամանատար, որպես ոգեշնչող եւ չորս կողմում թափված դիակների կողքին վերջին ապրողներին կենսամարտի առաջնորդող հաղթանակի հույս: Այսպես գրել է Ժամանակի մամուլը, այսպես ընկալել է ժողովուրդը: Այդան ոչ միայն ոգեւորելի, այլեւ հետադարձ ձեւով ոգեւորվել է Անդրանիկը եւ հուշերի իր գիրքը գրել: Գելիեգուցան գյուղը նեղոն է ընկած եղել, բազմաքանակ գորքը հախուտն հարձակվել է պաշտպանական դիրքեր մտած գինված պատմության վրա: Անդրանիկն իր տղաների հետ մարտնչել է հարձակվող բանակային ուժերի դեմ: Լսել են ու հմացել, որ ահա այնտեղ, կոիվների այսինչ հատվածում, Անդրանիկն ու իր գինվորներն են կոտորում բանակին: Եվ Անդրանիկը վերիիշել է.

«Երբ կիները լուր կը տանեն, թե Անդրանիկը կը քարդի զորքերը, բոլորը կոգեւորվին, թե՛ գինվոր, թե՛ տղամարդ, թե՛ աղջիկ:»

«Ուռաշ՝ կուտան, կը հարձակվեն հովտին մեջ գտնված զորքերը վրա: Այդպիսով Կելիկուզանը կազատվի:»

Բոլորն էլ կովում էին բացառիկ հերոսությամբ եւ եթե գոկվում էին, ապա դարձյալ այդպես. կոտոր Հացին, Տեր Կարապետը, Կրապն, Մատոն, Կիրո Գելոն... ծանոթ ու անծանոր անուններ. որոնց հիշա-

տակում է Անդրանիկը: «Հայ ժողովուրոց բանակ ուսենար ու պետություն, այս անունները, բոլորը լրիվ, հայտնի կլինեին. փառքի լուսապսակով զարդարված եւ ամեն մեկը մի-մի զսեմափայլ հուշարձան՝ դարերին այս անօրինակ հերոսության պատմությունն անելու: «Մեր տղերը հրաշքներ կը գործեն», — գրել է Անդրանիկը եւ այդտեղ էլ պատմել Հրայրի մասին:

Հրայրը միրճակել է թեժ կոիվների մեջ: Հետեւից մեծ քանակությամբ զոր է եղել, որի դեմ մի խումբ տղաների հետ կովելով, նա առաջ է գնացել: Այդ պահին Մուրադը եւ Տեր Կարապետը գգուշացրել են Հրայրին՝ այլեւ առաջ չգնաց: Իսկ նա հենց առաջ է գնացել: Նրա դեմ դիմաց ընկնում են հայ գինվորներից մեկն ու մյուսը: Հրայրը շարունակում է իր կոիվը: Շարունակում է եւ գնդակների տարափի տակ խիվում ծոծրակից: Ուշ երեկոյան, երբ կոիվը դադարել է, եւ թուրքական զորքը ետ է քաշվել. Անդրանիկը ընկերների հետ հաջում է զոհվածներին եւ դիակներն է մթության մեջ դաշտասում: «Մի հիսուն քայլ ցածրացա, տեսա Հրայրի դիակը, — ողբում է Անդրանիկը. — Զարի մը տակ ձյունի վրա ինկած...»

Մենք, ինդ գտնված գինվորներս, հրացաններս ուրիշներին տալով, վերցուցինք Հրայրին: Գիշերվան ժամը մեկն եր: Դիակները հասուցինք զուղը» (էջ 352–355):

Կորիվն անդադար եր, մարդիկ անխոնց: Անդրանիկն իր մասին ասել է. «Ամբողջ յոթը գիշեր ես քնացած չեմ. ցերեկները դիրքերով գրաղված, իսկ գիշերները՝ փամփուշտ լեցնելով» (էջ 360):

Մեկանմեկ ևս նկարագրում է գյուղերի համար մղված կոիվները, ամեն մեկը կոչելով գյուղի անունով. «Մերկերի կոիվը», «Չոփի կոիվը», «Բերդակի կոիվը», «Սկրագոմի կոիվը», «Թերքը եւ Կուրավուի կոիվները», «Գոմսի կոիվը»: Ապրիլի սկզբներից ամսիներ շարունակ: Ամեն մեկը ժողովրդի մի տառապանք ու սիրանք, բայց ի վերջո արյան խրախճանք: Դա ապտակ էր թուրքիայի ողջ զորաբանակին եւ նրա ամեն մի հրամանատարին ու գինվորին՝ առանձին-առանձին: Դա ամենամեծ ապտակն էր անկշտում, արյունախում սուլթանին. տերության խորքերում. մեծ աշխարհից կտրված ու զաղտագողի բռնել, շրջափակել էին անզեն հայությանը եւ անխնա կոտորում էին: Թուրքական մամուլը լուս էր. ի՞նչ հարկ կար զուր տեղը գրելու եւ մատնելու իրենց: Իսկ հյուպատոսներին էլ արգելում էին լուր հաղորդել իրենց կառավարություններին, դրսաշխարհի մամուլին:

Անդրանիկի հուշերը, որոնք գրված են օրերի թարմ տպագրության տակ, հաստատվում եւ լուացվում են 4. պոլսի ողուսական դեսպանատան գրագրություններով. որանց մեջ առանձնապես կոիվների մոտակայքի քաղաքների ոուս հյուպատոսների եւ կոիվների

վայրերն այցելած ոուս ոազմագետների գեկուցումներով ու փաստաթղթերով: Մրանց հաղորդումներն ել հիմնականում ճշմարիտ են, գրված լինելով դեպքերի օրերին ու դեպքերի վայրերից: Նրանցում, ճիշտ է կարող են լինել եւ կան. ինչպես փաստերի նկարագրության, նույնպես եւ դրանց մեկնաբանության միակողմանիություն: Բայց, մեկ է, նրանցում եղած բուս փաստերը պատմաբանի համար մնում են փաստեր:

1904թ. մարտին Մեծ Բրիտանիայի կառավարությունը անհանգստություն է ցուցաբերել, որ Սասունի եւ Սուշի հայ բնակչության նկատմամբ «քուրքական ոազմական իշխանությունների» ճնշիչ գործողությունները կարող են լուրջ հետեւանքներ ունենալ: Անգլիական դեսպանը առաջարկ է արել, որ ողուսական, անգլիական ու ֆրանսիական հյուպատոսությունները արյունահեծողությունները դադարեցնող միջոցներ ձեռք առնեն ինչպես գործը կարող է լինել, այնպես էլ հայերի նկատմամբ: Ոուս դիվանագետները նման քայլի չեն կարողացել դիմել, ինչպես ասվում է փաստաթղթում, որովհետեւ այդ ժամանակ «Բրիտանի հյուպատոսը դեռ նշանակման վայրը հասած չի եղել, իսկ Կանի փոխհյուպատոսը հիվանդ է եղել, Բիթլիսի եւ Վանի միջեւ նույն այդ ժամանակ հաղորդակցությունն ել ծայրահետ դժվարացել է»<sup>1</sup>: Ոուսական դիվանագետները փորձել են Կ. պոլսի պատրիարք Սաղաթիա Օրմանյանի միջոցով ներգործել Սուշի ու Սասունի հայերի վրա. որպեսզի հայերը հրաժարվեն իրենց «հեղափոխական ձեռնարկունքներից»: «Հավաստիացվում է, որ պատրիարքը Սուշի հոգեւոր առաջնորդին նման հանձնարարություն է տվել, բայց դրանից «ոչ մի օգուտ էլ չի ստացվել»: Թե Սուշում, թե Սասունում վիճակը, ինչպես մենք էլ տեսանք վերեւում շարադրվածից, մնացել է «չափազանց տագնապալից»<sup>2</sup>:

Դիվանագետները միմյանց հաղորդում են, թե իբր հայոց շարժուների պարագուխները կապ են հաստատել մակեղոնական խովանուզ կոմիտեների հետ: Ասվում է եւ այն, որ Սասունից Ֆիլիառուլ է գնացել Թորգոն անունով մեկը (Վերեւում քանից հիշատակած Թորգոն է) եւ դա կապված է այն բանի հետ, որ նշված կոմիտեները խոնիր են դնում, որպեսզի առաջիկայում Սակեղոնիայում ապստամբության զանգը հնչեցնելու հետ մեկտեղ հայերն էլ Փոքր Ասիայում միաժամանակ ծավալեն իրենց շարժում: Այդ բոլորը նախատեսվում եր կատարել հարկադրելու համար, որ մեծ տերությունները միջամբ տերության գործերին: Տարօրինակ է սակայն, որ փաստաթղթում հայտնվում է, թե Մշո դաշտի ողջ հայությունը իր հերթին

<sup>1</sup> Ա. Ա. գ. 3444, թթ. 40–50: <sup>2</sup> Ա. Ա. Խաչի «Անդրանիկ Կառավարությունը 1932թ. էջ 70–76:

պարտավորություն է ստանձել, որ թուրքական զորքը Սասուն գալու դեպքում պետք է միահամուռ հարձակվի նրանց վրա: Հայերի այս զործողությունները, սովորականի պես, դարձյալ հեղափոխական են կոչվում, իսկ հայերն ել՝ հրոսակախմբեր:

Պարզ երեւում է, որ դեսպանատներն ու հյուպատոսությունները տեղյակ են ամեն ինչից: Միայն թե նրանք շահագրգոված են ոչ թե հալածվողների վիճակը բարվողելով. այլ նման պատրիվակով իրենց դիրքերը Թուրքիայում ամրապնդելու, Եվրոպայի եւ Ասիայի սահմանագիծում գերիշխանություն ձեռք բերելու մեջ:

1904 թ. հունվարից Սասունում Անդրանիկի գլխավորությամբ մըղված դիմադրական, պաշտպանական կոհիվներին այս են դիվանագետները բնորոշ համարում, որ, ի տարբերություն, 1890-ական թվականների դեպքերի, այս անգամ հայերը գերադասում են կենտրոնանալ համեմատաբար փոքր մի տարածքում, ինչպիսին Սասունն ու Սուշն են միատեղ: Անցյալում նրանք ավելի վստահ են եւ ավելի մեծ ծրագրեր են կազմում: Բայց Երեկով արյունահեղությունները դաս են ծառայել: Այս վերջուծությունները պարունակող Կ. պոլսի ոուսական դեսպանատան 1904թ. մարտի Երկրորդ կեսի գրագորեցունում ասվում է, որ միայն Մշո հարթավայրում իշխանության տասնինգ գումարտակ է կենտրոնացված. յուրաքանչյուրում 800 հոգի, որը կազմում է մեկ դիվիզիա: Սրանից բացի է, փետրվարի վերջին, մարտի սկզբին ձեւավորվել է տասնվեց գումարտակից կազմված ուրիշ մի դիվիզիա, որը օժանդակելու եր Մշո դաշտում տեղակայված գորամասերին: Փաստաթղթի հեղինակը չի թաքնում եւ բառացի գրում է, թե հայության շարժումների նկարագրությամբ Եվրոպական մամուլ շահագրգոված է, որպեսզի ուղացնի փաստեր եւ դրանով իսկ Միջին Ասիայում հարուցի նոր բարդությունները<sup>1</sup>:

Սուլթանը գնալով բազմապատկում եր իր ուազմական ուժերի կուտակումները Երկրի արեւելքում, որն ընդգրկում էր Ուսասատանին սահմանակից հայաբնակ. Հայաստանի բաղկացուցիչ մասը կազմող, բայց Թուրքական սահմանագծի ներսում գտնվող տարածքները: Դրանից ցարական արքունիքն ել էր սկսում անհանգուտանալ: Ուստի ցարի ուազմական գործակալների թիվը Թուրքիայի իր դեսպանատան ու հյուպատոսություններում գնալով ստվարանում էր: Այդ նրանց հոգած տվյալներից է հայտնի դառնություն, որ 1904-ի տարեթիվը հայկական սահմանգներում եւ հարեւան բնակվայթերում տեղակայված թուրքական գորամասերի անձնակազմը եւ գեների ծավալը գնալով մեծացվում է եւ հավասարեցվում պատերազմական ժամանակավան<sup>2</sup>: Անհանգուտագել է նաեւ Կովկասի փոխարքան գեներալ-

1 ուսում. ֆ. Բաղարիկ. գ. 3444. թ. 71: 2 Ն. Ա. թ. 72:

-աղյուտանտ իշխան Գոլիցինը: Նրան էլ եր հայտնի, որ մարտին թուրքերը նորանոր զորքեր են տեղափոխում Բիթլիս եւ Մուշ: Թուրքերը պատճառաբանում են, թե դա արվում է ոչ թե հայերին կոտրելու, այլ նրանց Սասունի լեռներից ցած իշեցնելու եւ դաշտավայրում բնակեցնելու նպատակով: Փոխարքան անհանգուտացած էր եւ նրանով, որ այդ զորաբանակներում զգալի թիվ է կազմում հրետանին, որը սպառնալիք էր ոուս-թուրքական սահմանագլխին: Այս կապակցությամբ փոխարքան նպատակահարմար է գտնում, որ Բիթլիսում, որտեղ կուտակումներ են տեղի ունենում, նշանակվեր հյուպատոս, որը պետք է ուժեղացներ տեղեկատվությունը<sup>3</sup>:

Վերոհիշյալ Գոլիցինը գրել է 1904-ի մարտի 28-ին: Դրանից առաջ Թուրքիայի զորական կուտակումների մասին նա Երկրի ոազմական նախարարին հայտնել է զգուշացրել եր նաեւ մարտի 17-ին եւ 20-ին<sup>4</sup>: Դրանից հետո, ապրիլի 6-ին, հեռագրով նրան Պետրովարդից առաջարկվել է կապ հաստատել Կ. պոլսի ոուսական դեսպանի հետ եւ միատեղ լուծել Թուրքիա մի սպա ուղարկելու հարցը. որի խնդիրը լիներ տեղում պարզելը. թե որքան ճիշտ են Թուրքիայի կառավարության որոշումներն այն մասին, որ այդ կուտակումներն արվում են միայն եւ միայն հայերի ապստամբական ելույթը կանխելու համար: Եվ իրոք, նշանակած հետո Գոլիցինը հարցով դիմել է Կ. պոլսի ոուսական դեսպանին, թե արդյոք Թուրքիայի կառավարությունը չի առարկի. Եթե նշանակած նպատակով Թուրքիա գործուղարկ գլխավոր շտաբի մի փոխնօտապետ, հայտնելով նաեւ Վերջինիս Լյախով ազգանունը: Մեծ վեգիրը համաձայնել է, եւ Լյախովը մեկնել է Թուրքիա մայիսի սկզբին<sup>5</sup>:

Մինչ Թուրքիայում Լյախովի գործերին անդրադառնալը, դարձյալ մի քանի եւ դիվանագիտության պատմությունից:

Ֆրանսիայի խորհրդարանում Սասունի եւ Մուշի դեպքերի կապակցությամբ արտաքին գործերի նախարարին հարցավանդում է եղել, թե ինչ միջոցների է ոիմել կառավարությունը հայության նկատմամբ կիրառվող զազանություններին վերջ տալու համար: Հարցապեսնմամբ հանդես է եկել հայտնի սոցիալիստ Պետսանսը: Նախարարը պատասխանել է, թե Թուրքիայում ֆրանսիական դեսպանին ցուցում է տրված Բարձր Շոանը ամենախիստ հանդիմանաքեր անել, իսկ հյուպատոսներին վճռական հանձնարարություն՝ մեկնել Մուշ եւ մյուս տերությունների գործակալների հետ միասին հետեւել թուրքական ոազմական եւ քաղացիական իշխանությունների գործողություններին՝ «Ասրդկայնության եւ քաղացիական բարօրության հիմնական օրենքների խախտումներին վերջ տալու» իմաստով: Փարիզի ոուսա-

1 Ն. Ա. թ. 96: 2 Ն. Ա. թ. 96: 3 Ն. Ա. թ. 228:

կան դեսպանատից այս մասին հաղորդելով Կ. պոլիս՝ Նելիդովին. Եղուակացություն է արվում եւ հարց դրվում. «Միայն մի տերություն է ընդունակ, դա Ռուսաստան է. Վճռական միջամտությամբ խելք բերելու Թուրքիային եւ վերջակետ դնելու հայերի նկատմամբ Նրա արյունահետ հալածաքներին եւ քրիստոնյաներին հետապնդելուն»։ Սա Եղուակացությունն է: Այժմ հարցականը. «Բայց մի՞ն օգտակար է մեզ, որ հատկապես Ներկային պայմաններում մեծ ուժով մեզ վրա վերցնենք հայերի պաշտպանությունը եւ դրանով իսկ մեր ուս գիտենք Թուրքիային, առիշ տալով, որ կողմանակի միջամտություններ լինեն Արևելյան Հայաստանին»։ Դրվանագետը, սակայն, հարցականի հետ նաեւ հարց է բարձրացնում. «Գուցե նպատակահարմար գտնվի անդրադառնալ 1878 թվականի Բեռլինի տրակտատին, որի որոշումներից ոչ մի եկրոպական տերություն չի ցանկանա հրաժարվել եւ պահանջել, որ Բարձր Դուռը ճշտորեն կատարի 61-րդ հոդվածը. որը մինչեւ օրս մնացել է որպես մեոյալ կետ: սպառնալով. Թուրքիայի հայմառության դեպքում, հարկադրել նաեւ միացյալ արտաքին ճնշմամբ»։

Սա գրված է 1904 թվականի հունիսի 3 (16)-ին: Ծիծու այն օրեւն երև, երբ Անդրանիկը սուրը դեռ պատրան չեր որել. Երբ այրունը հոսում էր, եւ թուրքական բանակները շարունակում էին ջախչանիչ կորվները անզեն բնակչության եւ նրանց գինյալ կտրհճների փոքրացիկ խմբերի դեմ։

Բաղեցի վալին իմացել է, որ հունիսյան այդ օրերին Անդրանիկը, 40 ընկերներով. Նրանց մեջ նաեւ Գեւորգ Չավուշն ու Վահանը, գտնվելիս է Եղել Սուշի մոտակայքի գյուղերում: Կանգ առնելով՝ Նրանք շրջել են Գոմեր, Տերեկվանք եւ հարեւան մյուս գյուղերում: Վալին որոշում է բարձրաբերձ այդ գյուղերից հայերին արտաքսել. իշեցնել դաշտերը. որպեսզի Նրանք այլևս չկարողանան ֆիդայի պահել իրենց հարկերի տակ եւ դիմադրել: Թուրք եւ քուրդ հրացանակիրները սպանում են յոթ հայի եւ այլում հայերի քանակ տուն: Այսպես նաեւ բազմաթիվ այլ գյուղերում, բոլորում ել սպանություններ՝ ջահել ու ծեր կանանց, տղամարդկանց, բոլոր տարիքի երեխաների: Հունիսի 2-ին, հյուպատոսի նկարագրությամբ, հարձակվողները, չբավարարվելով կատարվածով, կրկնակի խուզարկության են ենթարկում Գոմերը: Այս անզամ էլ հրդեհում են 15 տուն, որից 7 հայ գոկվում են, թուրքերն եւ տալիս են երկու սպանված։

Թուրքերը տարածել են, թե որոնում են Անդրանիկին. հավատացնելով թե նա գտնվել է հենց Գոմեր գյուղում, թաքնվելով խուզարկությունից: Սուլթանի գինված ուժերը, գյուղից գյուղ ընկած, Անդրանիկին էին որոնում: Բաղեցի ուսական հյուպատոս Շիրկովի հանգա-

լանալից հաղորդումների համաձայն 1904-ի գարնան ամիսներից էին ֆիդայիներին որոնելու պատրվակով թուրքական կանոնավորապես գինված ջոկատները խուզարկում զավածի թե՛ կենտրոնը. թե՛ հիշվածի հետ մեկտեղ նաեւ մյուս գյուղերը: Այն տեղ Անդրանիկ էին Ենթադրություններ եւ գեղակահարություններ: Շատ դեպքերում հրդեհել են բնակչությունները Խայիսի լուս 31-ի գիշերը, օրինակ, գինված ջոկատները խուզարկել են Գոմեր գյուղը: Խոյսի վայր վայրագությունները են գործադրությունը Մուշի նաեւ Արագ Ենթերկեպանը գյուղերում: Խմանալով Տերեկվանքի խուզարկության մասին, Շիրկովը անգիտական փոխհյուպատոսի հետ եւ հեծալ ժանդարմերի խմբով շտապում է դեպքի վայրը, ցանկանալով տեղում տեսնել, բայց տեղ է հասել, երբ խուզարկություն կոչվածն ավարտված է եղել, եւ Անդրանիկը 15 հր ընկերների հետ՝ ծուղակից ելած<sup>1</sup>:

...Ուստի դիվանագետը Փարիզից շարունակում է իր միտքն ու խորհուրդը Կ. պոլիսի իր գործընկերոջը. «Թվում է, թե տերությունները կապրողանային հասնել Նրան, որ իրենց կոմիսարների եւ հյուպատուսների հսկողության ներք իրականացվեին այն վերափոխումները. որոնց հայության համար արդեն մշակվել էին 1894-1897 թվականներին եւ այդ օրից ի վեր մնացել անհետեանը: Այդ վերափոխումները կարող էին լրացվել եւ ընդլայնվել, եթե գտնվեր, որ դա օգտակար է, բայց այդտեղից մինչեւ կիսաանկան Հայաստանի ստեղծումը դեռու շատ հեռու է: Մինչդեռ մեզ համար (այսինքն՝ Ռուսաստանի համար 'Հ. Կ.), եթե այդ գործում նախաձեռնությունը իր ձեռքը վերցներ Ռուսաստանը, դրանից այն օգուտը կբխեր, որ հայ հեղափոխական շարժումը Ռուսաստանում կզրկվեր ընակչության գիտակցության վրա ազդելու պատրվակից, Նրա ավելի խոհեմ մասը համակրանք կտածեր մեր նկատմամբ, իսկ տաճկահայերը դարձյալ կվսկեին աստիճանաբար, ինչպես անցյալ ժամանակներում, Ռուսաստանի նկատմամբ, Վարկել որպես իրենց փրկարարի հետ, շնորհակալությամբ եւ ապավինումով: Եվ մենք կշարունակենք իրականացնել արեւելյան քրիստոնյաների նկատմամբ Ռուսաստանի հովանակորի եւ ազատարարի պատմական կոչումը»<sup>2</sup>:

Եվ սա եւս Անդրանիկի, Նրա քաջ ֆիդայիների, Սասունի եւ Սուշի կենսասեր ու ազատատեսչ հայ բնակչության դաժան պայքարի միջազգային արձագանքներից մեկն էր: Այդ մասին գիտեին մարտընչողները: Գիտեին եւ շարունակում էին կուվել ու գոհվել, ակնկալելով, որ եթե մարդկային բանականությունը սպառվել է թուրք կառավարիչների մոտ, գուցե մարդկային գութը ինչ-որ չափով պահանված լինի:

Մրա հետ շատ ներդաշնակ է Լախոնի պատմությունը:

1 ուսու, ֆ. Զարարանի, գ. 3444, թ. 239 1-24: 2 և. և. թ. 225-227:

Գ. Հայերի արյունահեղությունը ցարի ու սովորանի  
հաշիվներում եւ դարձյալ տեղեկություններ  
Անդրանիկի մասին

Յարական արքունիքը եւ բանակային հրամանատարությունը Լյախովին տվել էին իրեց առաջարանքը եւ Նշել նրա երրուժին, որը հիմնականում հայ-թուրքական ընդհարումների Վայրերն էին՝ Սասունն ու Սուլշ<sup>1</sup>:

Լյախովը ուսաստանյան բանակի գլխավոր շտաբի փոխգնդապետ էր: Նա թէ շտաբում, թէ արքունիքում գործիմաց եւ կարող մարդու համարում ուներ: Նրա ընտրությունը պատահական չէր, եւ հենց նա էր այդ պահին գործուղքում Թուրքիա նաև այն պատճառով, որ արքունիքի 2ահերի տեսանկյունից խնդիրը կարելոր էր, եւ որ նա հուսակի էր, գիտեր եւ ուզմական գործը, եւ շարին անհանգուացնող քաղաքական հոգսերն ու հեռանկատ նպատակները: Այդ խնդիրների մի մասի համար նա ուզմագետ էր, մյուսի համար՝ դիվանագետ եւ աննկատելիորեն գաղտնիքներ կորզող, տրամադրություն փոխող ու ստեղծող գրուցակից:

Մտնելով Թուրքիա, Լյախովը եղել է նաև Ուսաստանին սահմանակից նահանգներում, ապա շրջագայել հայկական կոտորածների վայրերում, հանդիպել թէ՝ պաշտոնատար եւ թէ՝ անպաշտոն անձանց հետ, պարզել իր առշեր դրված խնդիրների եռյօնը եւ արքունիք հղել հանգամանակից գեկուցագիր<sup>2</sup>: Հարուստ է նրանուն փաստական նյութը եւ ծանրակշիռ են եզրակացությունները, գոյնն նրանց համար, ուս որ հասցեագրված էին: Դրանք պետք է հիմք ծառայեին եւ կողմնորոշեին քաղաքականություն մշակելու համար: Պարզ է, որ գործուղվածը ձգտել է պատասխան տալ հետք այն հարցերին, որոնք առաջադրվել են իրեն եւ գործացնել նրանց, ովքեր սպասել են նրա Վերադարձին: Փորձենք պատմել ու վկայակոչել, մանականդ որ նրանուն Անդրանիկը վերցին տեղում չէ:

1903 թվականի աշխանն ու 1904-ի գարնանը ուսաստան հյուատուսների հաղորդումները տագնապալից բնույթ են ստացել: Ուսաստանին սահմանակից շրջաններում թուրքական կառավարությունը համարել է իր գորամասերը՝ զգալի թվով ուզմական ուժեր կենտրոնացնելով մասնակորածների վիճակի վիճակում: Ուժեղացվել են հատկապես համիլենական կոչված քրդական գինված զոկատները, որոնց հայուրյակներում, հեղավաների թիվը հասցվել է 128-ի: Սիա-

ժամանակ քրդական տասը գնդերի հրաման է տրված եղել Մշտապես լինել մարտականորեն կատարելապես պատրաստ վիճակում:

Ասվածից Լյախովի առաջին եզրակացությունն այն է, որ բոլոր այդ միջոցները ձեռնարկվել են Թուրքիայի անդրկովկասյան ճակատը ամրապնդելու համար, որ «Թուրքիան ինչ—որ բանի պատրաստվում է... եւ որ ներկա քաղաքական պայմաններում ինարավոր է, որ նա ուսաստանական գործողությունների անդրկովկասյան ճակատում Ուսաստանի դեմ հաջող պատերազմ մեկու հոյս է տածում»<sup>3</sup>: Այս եզրակացությունը անվանենք շեղում բառով: Հայկական կոտորածների հիմնական միտքը Լյախովը փոխադրում է դեպի Ուսաստանի դեմ պատրազմի պատրաստությունը: Պարզ է, որ դուսից այն միջոցները չեն բխելու, որոնք նպաստելու են կոտորածների նախապատրաստությունն ու ընթացքը անհապաղ կատարելուն: Լյախովին դա չի հետաքրքրում, նա նոյնիսկ ժխտում է Բարձր Դուռ այն բացատրությունը, թէ քրվակված ուզմական պատրաստությունների մեջ մասը ձեռնարկված էր... այս տարի (այսինքն 1904-ին՝ Հ. Կ.) հայերի սպասվող պատամբությունը ճնշելու համար, դրա համար եւ բերված տողի բազմակետերի տեղում և առել է «իբրեւ թե» բառը: Այդ բառով նա ոչ թէ հարցականի տակ է դնում հայերի ապստամբելու փաստը, որի նկարագրության է անցնելու իր գեկուցագիր հաջորդ եղբում, այլ պարզապես անուշադրության է մատնում թուրքերի կողմից հազարներով մորթությող հայերի այն աղաղակները, որոնք իրենց բարեկամ ճանաչած Ուսաստանին օգնության կանչ են: Նշենք, որ Լյախովը գործուղվել է Թուրքիա մայիսի 6-ին, երբ կոտորածների գլխավոր դեպքերը թերեւ կատարվել են, բայց հայոց գլուխում թափված արյունը ուր չէր չորացել, իսկ մյուսներում էլ դեռ հոսում էր, որովհետեւ կոտորածները չին դադարել եւ շարունակվում են այցի եկած փոխգնդապետի աշխ այցելու: Չե՞ որ, ինչպես ինքն է գրում, նա Բայազետում ձի է Վերցրել իր համար, «Ճանապարհներին ուղեկից եւ օգնական է վարձել ըլորդ Ալիին, որը «ինովին կարող էր արժեքավոր տեղեկություններ հավաքել... լավ գիտեր երկիրը եւ բազմաթիվ արյունակցական կապեր ուներ Թուրքստանում»: Չասելով, թէ որև է իր ասած Թուրքստանը, նա հայտնիալ է, որ ինքը շրջագայել, հետազոտել է Երզրումի արեւելան, Վականի հյուսիս-արեւմտյան եւ Բիթլիսի վիլայեթների հյուսիսային մասերը: Եվ ամեն տեղ տեսել է Թուրքական գործերի նոր կուտակումները: Ըստ որում նրանց տեղակայված են հիմնականութ հայաբնակ Վայրերում քաղաքներում, որանց շրջակայքում: Թուրքերը նրան ասել են, օրինակ, Սուլշում գործերի կուտակումը իրեց համար «առանձնապես կարելոր ե», որ «որ պատճառը թիւ է հերափոխական կոմի-

1 և. ա. թ. 228: 2 և. ա. ֆ. 450. գ. 1. գ 138. թթ. 210-225:

1 և. ա. թ. 210:

տեսերի կողմից հայերի հակակառավարական շարժումների նախապատրաստումը<sup>1</sup>: Եվ կամա թե ակամա անցնում է հայկական այդ շարժումների վերջին ամիսների ստորեւ համառոտագրված պատմությանը:

«Դեռ անցյալ տարի է Թուրքիայի կառավարությանը հայտնի եղել, որ Բիթլիսի վիճակի հայերը եռնեղով պատրաստվում են ապստաբության եւ որի կենտրոն են ըստրեւ Սասունի գավառը, այդ դժվարամատչելի լեռնային՝ մարզը»: Եվ պատմում է, որ դա եղել է անցյալ տարի աշնանից, այստեղ են բերել պարենի պաշարներ, շինել են զենքի պահեստներ եւ հատկապես Գելիեզուզան գյուղը պաշտպանական դիրքի են բերել: Այստեղ էլ արքունիքին տեղյակ է պահում Անդրանիկի մասին. «Նույն այդ ժամանակ Սասունում հայտնվել է Անդրանիկը, որը կանգնել է շարժման գլուխ: Նրա հանդես գալով հեղափոխականների գործունեությունը ստանում է մոլեցին բնույթ. Եւ ամբողջ Սասունի գավառը փաստորեն անցնում է նրա տրամադրության տակ: Թուրքական հշխանությունները նրանից են փախում, իսկ այստեղ տեղակայված գորախումբը փոխադրվել է Մուշի եւ Գելիեզուզանի միջեւ ընկած Սեմալ գյուղը»:

Ո՞վ է Անդրանիկը: Այս հարցի պատասխանն է Լյախովը հղում ցարական արքունիք.

«Անդրանիկը, ինչպես ասում են, Սվասի ծնունդ է, տարրական ցածր կրթություն է ստացել եւ գրադպէ է ժամագործի արհեստով Երգնկայում ու Էրզրումում: Թուրքերը պատմում են, թե ևս ինչ—որ հանցանք է գործել, երկար ժամանակ ինչ—որ տեղ թաքնվել է արդար դատաստանից, իսկ անցյալ տարվա գարնանը 60 ֆիդայինների հետ ժամանել է Սասուն: Լիազորված լինելով կոմիտեներից մեկի կողմից, ևս դարձել է Սասունի հեղափոխականների դեկավարը եւ եռանդով ձեռնամուխ է եղել պատամբական իրավիճակի ստեղծմանը. միտք ունենալով պաստամբությունը սկսել այս գարնանը: Այդ նախապատրաստություններով էլ անցել է ամբողջ ձմեռը<sup>2</sup>:

Մի կողմ թողելով մեջբերվածում ճիշտն ու սխալը, ասենք, որ այնուհետեւ Լյախովը բավական հանգամանորեն նկարագրում է Սասունում ժողովրդի ինքնապաշտպանական կովի ձմեռային նախապատրաստությունների ընթացքը, առանձնապես ընդգծելով դրանց բուռն բնույթը: Ստացվում է, որ ինքն էլ չի նկատում, թե ինչպես է դրանով անուղղակիորեն ինքն իրեն հակասում, քանի որ կամա թե ակամա ժխտում է իր այս շինծու դրույթը. թե զորքերն այդ վայրերում թուրքական հշխանությունները կուտակում են Ոուսաստանի դեմ սահման ամրապնդելու կապատակով. այլ ոչ թե հայերին սաստելու եւ

նրանց կոտորելու: Եվ այսպես շարունակաբար, այսուհետեւ նույնպես, նա ոչ միայն չի ժխտում, ոչ միայն չի նսեմացնում զորքերը այդ վայրերում կուտակելու հայաջարդ նպատակը, այլ, ընդհակառակը. Նորանոր փաստերի թելադրանքով, այդ անառարկելի փաստերի ծանությամբ հարկադրված դարձյալ նոյնը է պնդում. հայերի ըմբութացման շարժումը գնալով ավելի լուրջ բնույթ է ստանում, եւ այդ պատճառով ավելանում են զորքերի կուտակումները:

Լյախովը դարձյալ ըստ եղության այն է հաստատում, որ թուրքերը թաքցնում են հայերի կովի հրական. արդարացի դրդապատճառները. Նրանք չեն ուզում, որ դա հայտնի դառնա, հարցն այդպես մատուցելի եւ օմբունվի: Նրանք չեն ուզում ասպարեզ հանել հայկական հարցը. դրա համար էլ ֆիդայական շարժումը որպես ավազակություն են որակում, ֆիդայիններին՝ ավազակներ, որոնք. ինչպես գործ է Լյախովը, «իբրեւ թե կողոպտում են հայ բնակչությանը, որին պաշտպանելու համար էլ հենց հարկավոր է եղել նրանց կողքին զորակայներ ստեղծել»<sup>3</sup>:

Լյախովը ընթացքում հրաշքով փոխվում է. Լյախովը դառնում է արդարամիտ. «Ըման պնդումը պետք է հերթել», — գրում է ևս: Բայց ընդամենը մեկ—երկու Վայրկյան: Ըստ երեւութին, նրան սթափեցնում է իրեն գործուղելու քաղաքական նպատակամղումը. զորքով թերվում են ոչ թե հայերին ճնշելու համար, այլ Ռուսաստանի դեմ պատերազմ նախապատրաստելու: Իսկ դրա համար լիովի բավարարում է Լյախովի ուժգին երեւակայությունը: Լսենք նրան.

«Հայկական հեղափոխական շարժումը, ինչպես երեւում է, լավ էր նախապատրաստված եւ պետք է ընդգրկեր ոչ միայն իին Հայաստանի սի սահմանները Փոքր Ասիայում, այլև մեր Անդրկովկասը. միայն թե գործողությունների շրջանակը ընտրվել է Թուրքիան»:

Միա թե ինչ է ստացվում ըստ Լյախովի. ոտքի է կանգնել Արեւմբույան Հայաստանը, ոտքի կեանզնի նաեւ Արեւելյան Հայաստանը: Եթե այդպես է, ուրեմն, Թուրքիան եւ Ռուսաստանը, Արդու Համիդն ու Լիկուայ Երկրորդն էլ պետք է միատեղ լինեն ու միասնական՝ հայերի գործողությունների դեմ: Ուրեմն, Խնդիրը ոչ թե մեկը մյուսի թիկունքում զորքեր կուտակելն է միմյանց դեմ, այլ նոյն այդ ռւժերը կուտակելն է ընդհանուր թշնամու դեմ, որպիսին հայերն են: Ան թե ինչ է ասել Լյախովը եւ ինչը բացահայտելու նպատակով եւ նա սահմանն անցել, եկել Թուրքիա:

Հայերի թիվը, որոնց կոմիտեները կովի են մղում, որոնք ձեռքներին գենք ունեն, փոքր չե: «Շարժման գերազանց դեկապությունը գտնվում է մի քանի հեղափոխական կոմիտեների եւ «մեծ մարդ-

1 և. ա., բ. 211-212. 2 և. ա., էջ 212:

**կանց» ձեռքում».** — ասում է նա եւ դարձյալ թերում Անդրանիկի անունը. — այդ հեղափոխական կոմիտեներն ու «Մեծ Մարդիկ» Հօգնում են հայերին Ե՛ւ փողով. Ե՛ւ զենքով. Ե՛ւ խորհուրդներով: Նախագծումները կատարողների կողմից ի վերուստ նշանակվել են դիվիզիաների վեց հրամանատարներ (Ֆերիկներ), այն Ե՛ Անդրանիկը. Արմենակը. Արշակը. Օհանը. Կրեմիստովը եւ Արսենը»: Գրում է այս եւ առանձնապես կանգ առնում Անդրանիկի վրա. նշելով. որ «Անդրանիկը պետք է ապստամբություն բարձրացներ Սասունում եւ Մուշում. իսկ Մյուսներից Արմենակը՝ Տալվորիկում. Արշակը՝ Վանում. Օհանը՝ Մշո դաշտում. Օհանը. Կրեմիստովը եւ Արսենը. որոնք ապրում են Կարսում, պետք է ֆիդայիներ ուղարկեին Անդրեովկասից»<sup>1</sup>: Հավանաբար Արմենակ ասելով. Լյախովը նկատի ունի Արմենակ Ղազարյան—Հրայր Դժոխչին. Արշակը—Արշակ Գալֆայան և. նույն ինքը Քերին. որին հետո դեռ կիանդիանեց. իսկ Մյուս անունները դժվարանում ենք վերծանել: Լյախովը Արմենակին հիշատակում է որպես Անդրանիկի եղբայր եւ իր հերթին է ասում. թե իրեն էլ չի հաջողվել պարզել. թե Ֆերիկ կոչված դիվիզիաների հրամանատարներից ամեն մեկի ենթակայության տակ քանի ֆիդայի կա: Միաժամանակ նշելով. թե «Իրեն հաստատապես հայտնի է միայն այն, որ միասին գործող Անդրանիկի եւ Արմենակի մոտ մինչեւ 2000 մարդ կա: որ նրանք հույս են ունեցել. որ 1000 հոգի ել Անդրեովկասից է զայռու. ինչպես նաև. հայկական աղբյուրների համաձայն, հույս դնելով Վանից Արշակի օգնության վրա, որը 300 հետեւակ զինվոր ունի ել 800 ել հեծյալ ֆիդայի»: Թեեւ մեզ համար առեղծված մնաց. թե որտեղից է Լյախովը քաղել Վերը իր հիշատակած անունները. գաղտնիք չմնաց. թե նոյն Լյախովը ինչու է օգտագործում ֆերիկ քառո՞ն ու նրա դիվիզիա թարգմանությունը. ինչպես նաև զինվորների այդ մեծ-մեծ թվերը. հայերը պետք է զորավոր երեւան. նրանք պետք է սպանալից ցույց տրվեն. նրանց թվերը. նրանց գենքերը պետք է ուղանցվեն. որպեսզի ակնհայտ լինի նրանց վտանգավորությունը ոչ միայն սուլթանի. այլև ցարի համար եւ պատճառաբանվի հայերի դեմ այդ երկու ցարերի կամ երկու սուլթանների դաշինքի անհրաժեշտությունը: Լյախովը մեծ չարաշահող է: Նա իր այդ եւրոպական շատ է բացահայտվելու. մեծամեծ գործեր է կատարելու: Իր ակնկալությունների տեսակետից որքան ճիշտ է գտել ցարը Լյախովին:

Լյախովն ինքն էլ է տուրք տվել հայոց զորքի ու զենքի թվաքանակի ավելացմանը: «Ենթադրվել է. — ասում է նա. — որ հաջողություններին զուգընթաց հեղափոխականների թիվը արագորեն մեծա-

նալու է զյուղական բնակչության հաշվին»<sup>1</sup>: Բայց եանոթանալով հրավիճակին. պարզել է. որ դեպքերը կանխել են հայերի այդ մտադրության իրականացումը: Որովհետու երանց ենթադրել են ապստամբությունը Սոլշում եւ Սասունում սկսել մայիսին. այսինքն այն ժամանակ. երբ որ գալու էին օգնական ֆիդայիներն Անդրեովկասից եւ Վանից: Թուրքերն իմասնալով. խանգարել են. իրենց են նախահարձակ եղել. եւ այլեւ Անդրեովկասից սպասվող օգնական ուժերը չեն հասցել տեղ հասնել: Եղել է նաեւ ուրիշ մի հոլով. Արշակը խոստացած է եղել Վանից օգնական ուժերը բերել. բայց նա ել տարօրինակ մի պատճառով. ըստ Լյախովի. խոսք չի կատարել. վախեցել է:

Եւլով է այս. ֆիդայիների ծրագրումների մասին. պատմություններու արել Լյախովի. նա տարակուսում է. թե որքանով են դրանք ստույգ. բայց անցնելով իր հավաքած մյուս տվյալների շարադրմանը. հավաստիացնում է. թե այսուամենայնիվ այդ ծրագրումները եղել են: Այդ տվյալները կապված են Անդրանիկի անվան ու գործերի հետ. ուստի Լյախովի պատմածը բերենք տառացի-բառացի նույնությամբ. «Արմենակի եւ 60 ֆիդայիների հետ նստելով Սասունի լեռներում. Անդրանիկը անցյալ աշխանից եռանձնուն է եղել իր ուժերի կազմակերպմանը. որոնց այդ ժամանակ դեռևս քիչ են եղել: Հասուցելու, ընկերական կապերի եւ խաբելու ճանապարհով նա հասցեն է մինչեւ փետրվարը հավաքել մոտ 400 ֆիդայի: Մինչ այդ նա գործել է ավելի շատ խորամանկությամբ. լուրեր տարածելով. թե հայության շարժմանը աջակցում է ամբողջ Եւրոպան եւ առանձնապես Ռուսաստանը. որը. եթե մի բան լինի. հայերին կաշակի եւ կարավի ամրող թուրքները: Իր պատմածներին ի ապացույց նա ցույց է տվել նամակներ եւ ծածկագրեր. հաղորդումներ. որոնցով նա իրեւ թե կապ է հաստատել աշխարհի բոլոր ծայրերի հետ: Նա որպես հեռանկար նկարագրել է այն բանից հայության ահ ու վախի ազատագրման պատկերը. թե իրեւ մի գեղեցիկ օր թուրքերը մորթուտելու են բոլոր հայերին. եւ որ հաջողության դեպքում դժվար չի լինելու հայաստանի վերածնունդը. իսկ Վատագույն դեպքում հարկ կինի թուրքական հապատակությունը փոխել ուսականովք: Այսան պատմում. շարադրում է Լյախովը իր. ինչպես ինքն է ասում. հավաստի պատմությունները Անդրանիկի մասին. ստեղծերով նրա ծրագրումների ու գործերի վերաբերյալ հազվագյուտ փաստագրություն: Հազարություն. որովհետու. ինչպես ընթերցողն էլ նկատեց այս գրքի նախորդ էջերի շարադրանքից. սկզբնափուլի անդրանիկան պատճեռթյան աղբյուրների մեջ շատ մեզ հասած սկզբանդրյուրային փաստաթղթերը:

1 և. ա. թ. 213:

1 և. ա. թ. 213:

Բայց պարզ չէ՝ որ ժամանակին միայն Լյախովը չէ, որ պետք է գրած լիներ նման բաներ: Հենց այստեղ կարծես ավելի տեղին է հարց տալ. իսկ ի՞նչ են արել Մուշի, Քիթիսի, Վանի անգլիական, իտալիական, ֆրանսիական, ամերիկյան ներկայացուցիչներն ու իյուպատոսությունների աշխատակիցները, եւ մի՞թե նրանք նույնպես իրենց գերադասին նման հղումներ չեն կատարել: Դա անհնար է: Սա՛ ի միջի այլոց:

Շարունակելով իր գեկուցք, Լյախովը մատնանշում է, որ թուրքական կառավարությունը դեռ չի ընդհատել իր այն նախապատրաստական աշխատանքները, որոնք նպատակ են հետապնդում հայերի ապագա կոտորածք: Ասելով այսպես, Լյախովը այնուամենայնիվ նորբանկատ ձեւով ոչ միայն չի ուղացնում թուրքերի գործերի թիվը, այլև լոջորեն նվազեցնում է: Երեւում է նրան ձեռնտու չի ընդգծել, որ սուլթանը հայերի բնացնչման նպատակ է հետապնդում եւ խուսափում է ցույց տալ, որ նա է հայության զանգվածային կոտորածների գլխավոր կազմակերպիչը: Դառնալով Անդրանիկի որոշ գործողություններին, Լյախովը մեկ իրեն չհասկացողի տեղ է դնում եւ նրա առանձին հարկադրական քայլեր որակում է որպես հայության դեմ ուղղված դիտավորություն. մեկ էլ համակվում է ուղղամտությամբ: Ընթերցողը այստեղ կարող էր եւ սխալված չեր լինի, անմիջապես հիշել հայությանը գյուղերից տեղահան անելու նրա պահանջը: Լյախովը այդ մասին գործ է. «Տա (Անդրանիկ) սկսում է կորոպտել հայերին, այրել նրանց տեսքը. այդ բոլորը վերագրելով թուրքերին: Ի վերջո, եթե մարտին եւ ապրիլին սկսում են Մուշին մոտենալ ձեւավորված վեց նոր (թուրքական) գումարտակները, նա դիմում է ծայրահետ միջոց... սարերում այրում է մոտ 20 հայկական գյուղ»: Կարելի էր այս կապակցությամբ կրկնել Վերելի մեր բացատրությունը. բայց հարկ չկա. քանի որ Լյախովը հասկանալի է դառնում տեղնուտեղը, որը հենց նոր որակեցինք որպես ուղղամտություն. «Վերջին միջոցը (այսինքն գյուղերն այրելը) չնայած իր ամբողջ դաժանությանը, ունեցել է իր հիմքերը: Երջապատված լինելով թուրքական գումարտակների օղակով, կորցնելով Մուշի ապստամբելու հույսը, որն արդեն գրավել էին թուրք գործերը, եւ կոահելով, որ ինքը հավանաբար ստիպված է լինելու երկար նստել լեռներում. Անդրանիկը ձգտում է թեթեւացնել իր դրությունը: Այդ նպատակով 1500 տղամարդու եւ 3000 կանանց գրկում է օթեանից, որանով իսկ հարկադրելով, որ առաջինները ուզեն-չուզեն գան միանան իրեն, իսկ կանանց ստիպելով, որ գեան իրենց օթեան գտնեն Մուշում. դրանով իսկ ազատագրվելով նրանց սնելու հոգսից: Դրանից բացի, քանի որ թուրքական գործերը լավ չեին

ապահովված վրաններով. Նա օանկանում է արգելել նրանց մերձեցումը Գելիեգուզանին, գոնե, մինչեւ մայիս կամ հունիսի սկիզբը. Եթե Սասունի լեռներում... կսկսեր ձնհալը եւ երբ կարելի կիներ հույս ունել կանից ու Անդրկովկասից օգնության վրա: Ապրիլի Կեսերին Անդրանիկն ուներ մոտ 2000 ֆիդայի. իսկ թուրքերը հասցրել էին Սասունի շուրջը կուտակել 18 գումարտակ՝ գրեթե պատերազմական կազմով: Մուշի մոտ տեղափորված գործերի հրամանատարությունը հանձնարարվում է Սելահ փաշային, որն անմիջապես կարգադրում է բոնագրավել Մուշի եւ Սասունի մոտակայքի գյուղերի պարենամթերքների եւ անսանակերի բոլոր պահեստները. խուզարկություններ է կատարում գենքերը և լելու նպատակով եւ հայոց գյուղերում 1-2 վաշտ է կանգնեցնում, վեց գումարտակով եւ երկու լեռնային թնդանոթներով շարժվելով դեպի Սասուն:

... Ամսի 23-ին ընկել էին գրեթե բոլոր հայկական օջախները. եւ համար մարտից հետո Անդրանիկը մնացած ֆիդայիների հետ շրջապատվում է Գելիեգուզան գյուղում: Այստեղ վերջակետ են դնում: Սրանից հետո Լյախովի մեջ ասես բոցավառվում է վիպագրի կիրքը: Նրա խոսքը դառնում է պատերազոր ու ազդեցիկ. թուրքերը «սպասում էին ապրիլի 24-ի առավոտյան, որպեսզի հեղափոխականներին վերը տային: Ապրիլի լուս 24-ի գիշերը ցուտաշունչ էր, զորքերը անտանելի տառապանք էին կրում եւ օթեան փնտրում տներում ու վրաններում, որոնք լուսական էին ինչքան որ կարելի էր: Թանձր մառախուղը մթագնել էր չորս կողմը: Այդպիսի գիշերից էլ օգտվեց Անդրանիկը, սողալով անցակ շղթայի միջով եւ փախավ ողջ մնացած ֆիդայիների հետ»:

Փախավ, դուրս եկավ գործերի շղթայի միջով, ասում է Լյախովը եւ ակնարկ չի անում այն մասին, թե մինչ այդ Անդրանիկն ու իր քաջ հայդուկ գինվորները, զինյալ ու անզեն բնակչությունը մահու եւ կենաց ինչ ճակատամարտ են տվել թուրքական կանոնավորապես զինված բանակին: Հուշագրերը լրացնում են, դա նույնական բացառիկ է եղել նախընթաց ու գալիք օրերի բոլոր կոհիվների մեջ, բացառիկ կենսամարտ ապրել կամ մեռնել նշանաբանվ. Եթե կյանքի իմաստը մխրանքով մեռնելն էր միայն. մեռնելը, որ լիովին բավարարում էր ապրել եւ իրենց երեխաներին կյանքը պարգևել ցանկացող անմեղ մարդկանց, որոնք հանցավոր էին ու մահվան դատապարտված միայն նրա համար, որ Հայաստանում էին ծնվել եւ վատ հարեւան ունեին... Հայերը ասացվածք ունեն. մտակ հարեւանը հեռու բարեկամից լավ է: Նրանք սիրում են դուռ-դրկից ապրել մարդկանց հետ, իաց կիսել, հասնել մեկի ու մյուսի ներ օրին: Եւ այդպես ապրել են.

այդպես կամեցել են հարեւանի ոչ կրոնը հարցելով, ոչ էլ հացի մեջ խտրություն դնելով։ Այդպես նաև իրենց հողը ուղած դրած սելզուկ ցեղերից մինչեւ օսմանյան թուրքի հետ։ Մեկի մածնապուրը սոխառածով է ծածկվել։ Մյուսինը՝ համեմ կամ սամիր կանաչիով։ Երկուսի համար էլ փոխադարձորեն համեղ է եղել։ Ի՞նչ էր նրանց ուզածը այս կոիվների թե՛ պահին, այն, որ սովորանք, նրա տեղական իշխանությունները բազում հարկերով չհալածեին իրենց, եւ հայի ու թուրքի հարեւանությունը չխաթարեին, թունեին որ հայն էլ իր դրառոցն ունենար, իր աշխատանքի վաստակը, վաղվա օրվա իր հաց։ Լյախովը այս «մանրութերի» մեջ չի մտնում։ Նա շարունակում է հետամտել Անդրանիկին եւ հմացածը աշխարհով մեկ անել։

«Բիրլիսից, վալիի ասածով, նրա (Անդրանիկի) հետ գնացել են 60-ից ոչ ավել ֆիդայի, մասածները ցրվել են այուղերում։ Ուրիշ թուրքեր պատմում են, թե Անդրանիկի հետ Տալվորիկից փախել է մոտ 500 հոգի, որոնց մեծ մասը թաքնվել է պահպանված հայկական գյուղերում։ Թուրքերը ենթադրում են, թե Անդրանիկը թաքնված է Բուլանդի (այուղի) մոտակայքում։»

Անդրանիկի ջախջախման եւ նրա փախուստի լուրը արագ տարածվել է չորս կողմում։ Սշր դաշտի հայերին հարկադրել է խաղաղել եւ ահարեւել Կանի վիլայեթի հայդուկներին։ Սիայն թե այդ լուրը ուշ է հասել Անդրեկովկաս, եւ այն էլ հավանաբար, խեղաքյուրված, քանի որ հուսիս ամսից են այստեղի հայերը սկսել ներխուժել թուրքիայի սահմանները։

Լյախովը, սրանից առաջ էլ է զեկույց ներկայացրել կամ թե վերեւում գրածը նկատի ունի, որովհետեւ ճշտում է իրեն, ասում է. «Ես առաջ զեկույցել եմ, որ թուրքերը ենթադրում են, թե Անդրանիկը փախել է Բուլանդ։ Իրականում դա այդպես չէ։ Անդրանիկը ներկայումս թաքնված է Ղալավանք գյուղում։ Սուրհց մեկ ու կես ժամվա ձիու ճանապարհ հյուսիս- արևմուտք, եւ քանի որ նրան դեմքով չգիտեն, նա երբեմն գալիս է նաև Մուշ։ Հիմա նա լուծում է լինել-չիննելու հարցը։ Նա ասում է, թե եթ հյուպատոսները պաշտպան չկանգնեն հայերին, ապա վերջիններիս մոտ դեռւս կգտնվեն բավականաչափ միջոցներ։ Սշր դաշտում սկսելու համար նոր ապատամբություն, որին կաջակցեն Վանի եւ ոուսական [այսինքն՝ արեւելահայ] ֆիդայիները։ Մյուս կողմից էլ Գելիեգուզանի փորձ կարծես թե տատանէ են նրա հավատը պայքարի հաջող ելքի նկատմամբ, եւ նա մտածում է, թե հյուպատոսներից որին ինքը տրվի պաշտպանության։»

Լյախովը հայտնում է նաև տվյալներ, որոնց հավաստիությունը

Նշմարող ակնարկ անգամ ուրիշ ոչ մի աղբյուրում չենք հանդիպել։ Նաև նա նորից հիշատակում է Արշակ անունը, որը նման կապակցության մեջ դարձյալ ուրիշ տեղ չի հոլովակում։ այն պատճառով, որ Արշակն ու Օհանը Անդրանիկին օգնության չիասան ։ «Անդրանիկը մնացել է անօգնական, նրան օգնություն է եկել միայն մայիսի կեսին, այն էլ Անդրեկովկասից»։

Չի զայցել Լյախովը իր դեկավարությանը հայտնելու նաև թուրքական սպառագինության դեմ գինված ու անզեն հայերի բացառիկ սիրագործության մասին։

«Սայահի 17-ի երեկոյան, Արճշում, եւ իմացա, որ մոտ 45 ֆիդայի ամրացել են Հայուար-Բեկ գյուղի երկու քարայրում։ Այդ տեղեկությունն պարետը ստացավ իմ Ներկայությամբ։ Նա բոլոր Ներկա գտնվող սուվարիներին եւ զափթիներին կարգադրում է գնալ դեպի այդ քարայրերը, Խնդրելով, որ Վանից էլ ուղարկվի մի վաշու։ Այդ միջոցին քարայրերը շոշապատում են քրդեր, որոնք թուրքական կառավարության խստիվ հրամանի համաձայն գենքը ձեռքներին պետք է գործեին ֆիդայիների դեմ... Այրերի մուտքը նեղ է եղել, այսպես որ մեկական ֆիդային կարող էին պաշտպանել։» Սոտեցող քրդերն ու թուրքերը գոհեր են տվել։ Վանից վաշտի ժամանումը ձգձգվում է։ Չսպասելով, պաշարող թուրքերը քարայրերից մեկի մի անցքով նավը են լցնում ու այրում։ Զարայրը լցվում է հեծձուցիչ ծխով, ապա պայթում է, գոհելով տասը քրդի։ Խսկ փլամեն տակ մնում են 13 ֆիդայիներ, որոնք որ գերադասել են դիսամիտով պայթեցնել քարայրը։ Այսու քարայրում իրենց պարտականությունը շարունակող 30 ֆիդայիների վրա հարձակվում է Վանից հասած վաշտը։ Լյախովն ասում է, որ քարայրի ֆիդայիները անդրեկովկասի հայեր են եղել, որոնցից մեկը ողք է մնացել, եկել է Բիթիս եւ պատմել տվյալ կովի մասին։

Անուենուելու Լյախովը բերում է թուրքերի եւ քրդերի դեմ Անդրեկովկասից կած հայերի գինված խմբերի կոիվների մի շարք օրինակներ։ Սասունի կոիվներն, ըսն Լյախովի, ավարտվել են նրանով, որ կառավարությունը այստեղ լրացրել է զորքերի քանակը, այդպիսիք բաշխելով նաև ճամփաների վրա, որպես պահակային եւ հսկողական կետեր, ուժեղացրել է Կովկասի իր սահմանը, Վան տանող ճամփաներն ու լճի շրջակայքը, չցույց եւ տեղանքից չիեռացնելով հարձակումներից առաջ եւ ըթացքամ ստեղծված ու բերված զորամասերը, որոնք համարում են տեղական կայազորերը։

Կոիվների նկարագրություններից բացի, Լյախովը պատմում է նաև տեղական իշխանությունների պաշտոնատար անձանց հետ քաղաքական թեմաներով ունեցած իր գրույնները։ Թուրք գործիչները նրան

խորհուրդ են տվել ոուսների ինչ գործն է, որ հայերին ուզում են պաշտպան կանգնել. Վաղը հայերը նույն են անելու ոուսաց ցարի հետ: Ուստի նրան պետք է բացատրել, որ Թուրքիան է նրա բարեկամն ու օգնականը Երկրի հարավային այս հատվածում: Երեւում է, այդ գրուցները դուր են գալիս եւ համոզի են Լյախովի համար: Նա գուր ու աննպատակ չի գրում այդ մասին իր գեկուցագրում. բերել է ոչ միայն թուրքական զորքերի քանակի եւ տեղաբաշխման տվյալները, այլև թանկարժեք խորհուրդներ:

Առհասարակ հայության դեմ ոու-թուրքական դաշինքի հարցը միշտ է ծագել եւ այն դեպքերում, երբ հայերը ըմբուտացել են թուրքիայում, եւ այն՝ երբ նույնը կատարվել է Ուսասատանում, այսինքն՝ թէ՛ Արեւելյան, թէ՛ Արեւելյան Հայաստանում: Առաջինում այդ գաղափարի շոշափման նախաձեռնողները եղել են թուրքերը, Երկրորդում՝ ոուսները: Այդպիսի մի հղում է կատարել պալատական խորհրդական Սահեկին 1904թ. օգոստոսի 11-ի իր գեկուցագրում<sup>1</sup>:

Ոիզեյում եղած ժամանակ քանակային 4-ոդ կորպուսի հրամանատար Զաքի փաշան է այդ միտքը արծարծել: Զրուցի ժամանակ կողմնակի մարդ չի եղել, ասում է Սահեկին, Զաքի փաշան եղել է բոլորովին անկեղծ: Զրուցին առիթ են տվել այդ տարվա Մուշի-Սասունի դեպքերը. «Գիտե ինչ, — ասել է նա, — որքան ես հասկանում եմ, հայկական գործոք ձեզ մոտ՝ Կովկասում, մոտիկ ապագայում կարող են ավելի լավ չլինել, քան մեզ մոտ թուրքիայում են: Ըստ իս, այդ գործերում մենք պետք են լինենք ոչ թէ բաժան, այլ ավելի շուտ՝ համերաշխ»: Որպես դրական օրինակ բերում է այն փաստը, որ «ոուսական սահմանը հայկական ավագակային խմբերից մեկի անցելու ժամանակ նրա դեմ միաժամանակ գործել են եւ ոուսական, եւ թուրքական զորքերը»: Պարզ է միտքը: Նա կուգենար, որ մյուս բոլոր դեպքերում էլ հայերի դեմ այդպես միատեղ ու համերաշխ գործեին եւ թուրքիան, եւ Ուսասատանը: Հետաքրի է, այստեղ Զաքի փաշան անդրադարձել է փոխօնդապետ Լյախովի թուրքիա գործուղմանը: Նրան դուր չի եկել, որ Լյախովը, ոուս գիշվորական ներկայացուցիչը, եկել, հանդիպել է Զաքի փաշային եւ հետաքրի գնացել է իր ճանապարհով, առանց մտերմիկ գրուցի. «Անհանգամ կերպերս զիսավոր շտաբի ձեր զնդապետը, բայց բոլորովին ոչ այն կերպ, ինչպես եղել է 1895-ին: Ինձնից ինչ-որ հետաքրի է: Ինչո՞ւ: Որպեսզի հաշվի մեր գումարտակները»: Մի գաղտնիք է բացվեց. 1895-ի ժամանակ հայերի նկատմամբ Ուսասատանի դիրքը բուրգերին ոչ միայն չի անհանգամացրել, այլև... համերաշխ է եղել: Մի խորը, բուրգ զորավարը քանք է գործադրել

համոզելու ոուս դիվանագետին, որ Երկու Երկրները միատեղ լինեն հայերի դեմ մղվող պայքարում: Ոուս դիվանագետը շեշտը դնում է այն բանի վրա, թէ թուրք-ոուսական հարաբերությունները «աղոտություն են գլխավորապես ոչ թէ հայերը, որոնց մեծ մասը երազում է միայն հանգստության մասին, այլ ամբողջ Եվրոպան, որի գույն դարձյալ կանգնում է Ասգլիան»<sup>2</sup>: Ամեն մեկն իր հաշիվն ունի: Ըոլոր դեպքերում տուժողը հայ ժողովորդի զավակներն են, ժողովուրդու ամբողջությամբ: Խոր չէր Գելիեգուզանի կոկվներից հետո հայության համար ծանր կացության ժամին Անդրանիկն ասում. «Եթր դուռը յությունն անտանելի է: Եվրոպայի կողմէ ոչ մեկ միջամտություն...»<sup>2</sup>:

\* \* \*

Արվեստների թվում կա նաև ոազմականը: Զեռնամարտից մինչեւ ատոմային պատերազմը մարդկությունը հազարամյակներ է անցել: Թուրք սուլթանն իր զինվորներին հրացան ու թնդանոթ էր տալիս: իսկ հապատակ կոչված ջրհստույա ժողովորդին արգելում մի դաշույն անգամ կրտել: Որի՞ համար էր հեշտ, նրա՞ որ զենցով ու զորքով էր կրվում, թէ՛ նրա, որ հարկադրված էր անզեն մտնել մարտի մեջ: Ընդունենք, որ Երկուսից էլ ջանք ու հմտություն էր պահանջվելու: Եթե այդպես է, ուրեմն, Երկու կողմի համար էլ պատերազմ է: Մեկը հարձակվում է, մյուսը՝ պաշտպանվում: Եվ հարձակումն է կոիկ. Եւ պաշտպանությունը՝ անկան զենքի տեսակներից, ուժերի հարաբերակցությունից: Հարձակվութերի, մեծաքանակ զորաբանակների դեկավարները հրամանատարներ են ու զորավարներ: Թէ ով էր Անդրանիկը՝ իմացանք. շապինկարահիսարցի թորոսի որդին, ատաղձագործը, ժողովրդի զաղաքական կյանքով հետաքրքրվող Երիտասարդը, որը դարձել է Ֆիդայի զինվոր, զենք է կրտ ու զինավարժ խմբերի կոկվներ դեկավարել: Ուրեմն, մյուս հարցը՝ ի՞նչ էր Անդրանիկը: Գուրգենը Ֆիդայի եր ու Ֆիդայապետ, այդպիսին էլ մեռավ: Մերօք Ֆիդայի եր ու Ֆիդայապետ, այդպիսին էլ մեռավ: Նրանցից ոչ մեկին իրենց Ենթակաները չիասցրին զորավար բառով կոչել: Բայց անպայման կոչվեին, Եթե ժամանակը ներեր: Անդրանիկը, որ գյուղից գյուղ էր անցնում, մեկն ասում էր՝ Անդրանիկը եկավ. մյուսն ասում էր՝ եկավ, Երրորդը չէր համարձակվում որեւ բառ ասել, տեսնում էր, ճանաչում, լսում, լուս եւ գործի անցնում. ինչու անունը տար, ինչու պետք է բոլոր իմանային, որ նա է ոչ թէ կավարը. ինչպես լինում են դեկավարները, այլ այն դեկավարն ու հրամանա-

1 և. ու. 2 «Անդրանիկ լուցք», էջ 143:

տարը, որին ամեն քայլափոխում որոնում է ոչ միայն Խալիկի կինը, որոնում են ոչ միայն նրա նշանակած ամուսնացու տղամարդիկ, այլև սովորան ու նրա կամակատար ենթակաները: Եկ մեկ է վաղամենիկ Սերոբի նման Անդրանիկն է դառնում Փաշ: Փաշ՝ ան եկավ, փաշային տեսա՛ր, փաշան ասաց, ականջովս լսեցի: Փաշ՝, փաշ՝, Անդրանիկ փաշ: Փաշան հրամանատարն է, փաշան գորավարն է, որ հետո, կենդանության հետագա տարիներին ու հետմահու հաստատվեց որպես ամենից ավելի ճշմարիտ անվանում՝ Անդրանիկ զրոավար:

Նիստի հրավիրենք Ալեքսանդր Մակեդոնացուն, Հաննիբալին, Սպարտակին, Հուկիս Կեսարին, Ալեքսանդր Նեւսկուն, Սուվորովին, Նապոլեոն Բոնապարտին ու Կուտուզովին: Հրավիրենք նաև Զուգապատ Գարիբալդուն, Լատինական Ամերիկայի երկրներում կես-բանակ, կես-աշխարհազորային զորքերի հրամանատարներին, իրենց երկիրը նվաճողների դեմ պարտիզանական ու բաց ճակատային կորվեր մղող բուրերի հրամանատարներին: Պատմենք նրանց Անդրանիկի մասին ու հարց տանք. ի՞նչ էր Անդրանիկը, սոսկ զինվոր էր, թե՛ նաև զրոավար: Գուցե թե՛ այդ հարցին առաջինը շտապողաբար պատասխանեն Գարիբալդին, Լատինական Ամերիկայի երկրների ու բուրերի ներկայացուցիչները<sup>1</sup>, եւ մյուսները համաձայնեն նրանց կարծիքին. զինվորն էր, զինվորն էր ու զինվորների՝ զրոավար՝: Առանձ մեկի մյուսը չի լինում: Եթե զինվորն է երեկվա եւ նաև այդ օրվա զինվորի մեջ իր զրոավարին տեսել, ուրեմն հենց այդ զինվորն է զրոավար է: Ո՞ր պետությունը, ո՞ր պետության, ո՞ր բանակի հրամանատարությունը Անդրանիկին պիտի պաշտոն տար եւ դրան համապատասխան էլ զինվորական կոչում շնորհեր ու զրոավարական տարբերանշան փակցեներ նրա ուստրին: Անդրանիկը այս ժողովրդի զավակն էր, որը ո՞չ պետություն ուներ, ո՞չ էլ բանակ ու բանակային հրամանատարություն: Այդ բոլորն էլ Սասունի մարտնչող ժողովուրդն էր: Հետո, տարիներ ու տասնամյակներ հետո, Անդրանիկը զինվորներից մեկը<sup>2</sup> Հովհաննես Բաղրամյան անուն-ազգանունով, մարշալ է դառնալու եւ երկրորդ աշխարհամարտի ժամանակ գեներ բոլոր տեսակներով զինված բանակներ է մարտի տանելու, միայն թե Մոսկվայից Բեղլին ճամփաներով: Եկ նա՛ էլ զրոավարական իր գոլովն է խոնարհելու երեկվա շարօնային զինվորի՝ իրեն քաջության օրինակ ծառայած եւ պատգամ տված Անդրանիկի հիշատակի առցել:

## Դ Ճանապարհը տարավ երկրից դուրս

1904-ի գարնան ու ամուսն տեւական ու հյուծիչ կոխվերից հետո Անդրանիկը որոշում է իր խմբով գնալ Վան, Խորհել-Խորհրդակցու գործնկերների հետ հետագայի մասին եւ գուցե թե նոր մի խումբ կազմել ու նոր ծրագիր: Համեսայն դեպս նա չեր հոգեւել. չեր հիասթափել եւ կորվը շարունակելու կամքն էր նրա մեջ: Իսկ այդ ընթացքում ե՛ Վանում տնից տուն, թե՛ հրապարակային վայրերում, Սասունի գյուղերում լրտեսներն ու պաշտոնատար անձինք Անդրանիկին են որոնում: Իսկ նա Բերդակ գյուղում էր, որը իշխանությունների տեսադաշտից քիչ թե շատ դուրս էր<sup>3</sup>: Սեծամեծ ընծաներ են խոստանում նրանց, ովքեր ողք թե մեռած իրենց կմատուցեին Անդրանիկին: Իսկ նա շարունակում էր առիթ որոնել դարձյալ մի հարված հասցնելու համար, որը գուցե թե մի նոր բոնկման կայծ ծառայեր: Բերդակից տեղափոխվել է Չուխուր Արգավանդ, այստեղից է՛ Սուշանչեն հայ-օքրական գյուղը: Նրա հետ է եղել Սմբատը, այցի է եկել Սեպուհը: Եկ մի օր առավոտ վաղ հայունի է դառնում, որ Անդրանիկի հետքերով այդ կողմի սարերն է եկել Ալի բեկի ղեկավարած զինված քրոնի մեծ խումբը, նրա հետ է՛ կանոնավոր զորք: Խումբը՝ 300-400 հոգի, զորքը՝ յոթ-ութ հարյուր: Այսպէս վկայում է ինքը Անդրանիկը: Պահապան հայունկները բլուրներով բարձրացել են սարը, նրանց հետքով՝ նաև բնակիչները: Գյուղը դատարկվել է: Սմբատը մի քանի ընկերների հետ դիրքափորվել է եկեղեցու տանիքում: Հրացանաձգությունը տեւել է մինչեւ գիշերվա ժամը մեկը: Ի վերջո Անդրանիկը իր ուղեկից ընկերների հետ զնացել է Դատվան գյուղը, որը Վանա լճի մոտակայքում էր: Ափին առաջատանավեր են եղել: Անդրանիկն ու ընկերները նստում են եւ ուղղություն վերցնում դեպի Ախթամար կղզին: Էճում, թե կղզի հասնելուց հետո լճափից նրանց դեմ հրացանաձգություն է եղել, ապա նաև՝ թնդանորային կրակ: Պատսպարվել են եւ պաշտպանվել:

Կահան Թոթովենցը, լուացնելով, ասում է, թե մի առաջաստանավ էլ լճում են ձեռք բերել հայունկները: Ախթամար դուրս գալուց հետո որոշել են առայժմ անմիջապես զգնալ Վան: Յոթ օր հանգիստ են առել կղզում: Եկ դարձյալ հարց է ծագում՝ ի՞նչ են անելու այսուհետ: Կարծիք է եղել, որ բոլորն էլ թողնեն երկրի սահմանները եւ դուրս գան: Միացյալ խորհրդակցությունը եղարկացնում է, որ պետք է մասաւ Երկրում, նպատակահարմար գտնելով սուրեհանդակ ուղարկել Վան եւ մարդկանց հայունել այդ մասին, բնակչությանց խումապի

<sup>1</sup> Ակր. Երիտասարդ... էջ 279:

\* Այդ ժաման տես՝ եղանակամատ խոսքուն:

շմատնվելու, կազմակերպվելու առաջարկներ անել: Տվյալ խնդիրը բաժին է ընկույթ Գեւորգ Չափուշին: Հապահելու ժամանակը չեք: Գեւորգը պատրաստ եք, ոտքի վրա: Ի՞նչ եք լինելու հետո: Ընկերները հրաժեշտ են տալիս: Համեմայն դեպք Անդրանիկը եւ Գեւորգ Չափուշը պետք է որ հետագա հանդիպման հոկյով լի լինեին: Զուգադիպություն է, մի առաջաստանավ Գեւորգին տանում է Վան, մյուսը Վանից կղզի է բերում Դաշնակցության Ներկայացուցիչ Վահան Փափազյանին: Նրա բերած լուրն էլ եք զգուշացնող, իշխանություններն ամենուր որոնում են Անդրանիկին: Սուլթանը հանգիստ չեր առնում, որ Անդրանիկը դուրս էր պրետի իր ձեռքից: Միայն այդ փաստը նսեմացնում էր նրա փառահեղ հաղթանակը: Բանից պարզվում է, որ Անդրամար կղզու վասնի վանականներից մեկն էլ, պատահաբար թե մտածված, հայտնի է դարձել Անդրանիկի կղզում գտնվելը: Ծիշտ թե սխալ, անցյալում մամուլում գրվել է, թե Անդրանիկի Վանում գտնվելու լուրը «չչափած խուճապ է առաջ բերել Վասպուրականի մահմեդականների մեջ»: Վանից մահմեդական բնակչության դուրս գալու ալիք է ծավալվել: Բայց, ըստ Երեւությին, դա չի խորացել, լուրը ընութե չի կրել, քանի որ Վանի կայազորը շուտափույթ հայմարդել է նոր զորամասերով: Մյուս կողմից էլ այս փաստը լրջորեն անհանգություն է հայությանը: Նրանք սկսում են մտահոգվել, ինչո՞ւ է Անդրանիկը կղզում հանգրվանել, երբ իշխանությունները շարունակում են հալածանքները: Այս միջոցին կղզու ափերին երփում են կառավարության ուղարկած նավերը, նրանցում՝ զորքեր: Կղզին պաշարվում է<sup>1</sup>:

Նորից անելանելի վիճակ: Գրականության մեջ հավաստիացվում է, որ Անդրանիկի մղած ոչ մի կողմէ «այսքան օրիասական չի եղել»: Անդրանիկը հաշվարկում է, իրետանային արկերը ափից կիասնեն մինչեւ կղզի, թե ոչ, եւ հետո էլ մտածում է ծուղակից դուրս գալու մասին: Սուղնեկած այդ վիճակում Անդրանիկը նորից եւր է գտել, իրենց երկու դրոշները բարձրացրել է տեսանելի դիրքում: Հարձակվողների համար դա պիտի նշանակեր, թե քանի ուժը դրոշները առկա են ու տեսանելի, իրենք կղզում են եւ դիմադրության պատրաստ: Դրանից հետո Անդրանիկը մտածում է մութք ընկերուն պես ծուղակից ափ դուրս գալու մասին: Դրոշների մնալու էին տեսանելիության մինչեւ վերջին ռոպեն<sup>2</sup>:

Իսկ երբ վրա կիասներ գիշերային սեւ խավարը, անհապաղ պետք եր դուրս գալ ծուղակից: Այս էլ քանի՝ անգամ: Չե՛ որ այդ անգամ-

1 Հայուսայա մրգը, 16.-17. 1915 թ.: Խառ «ՊԿՊ», ֆ. 43, գ. 1, գ. 47, թ. 10:

2 «Անդրանիկ Կառաջը, պատմամեմոր և յուցեր», 7. 1932թ.: Խառ Ակր. Երի- տանց.... Ա հատոր, օ., էջ 279: Կ Փափազյան, Խ/ լուցքը, հ. առաջին, էջ 319:

ներից մեկը կարող էր այլ վախճան բերել: Ո՞վ էր մտածում այդ մասին, երբ գործից առաջ նախ վախճանն էր ընտրված, ապա՝ փրկությունը: Փրկությունը, որ առաջնային էր, ոչինչ, որ մեկի ու մյուսի վախճանին պետք է հաջորդեր, երբ այլ կերպ անհետար էր: Մնացյալը տեղի է ունենում վրա հասած մթության մեջ եւ առանց որեւէ մեկի վախճանի<sup>1</sup>:

Վանի կուսակալ Թահիր եւ գինվորական հրամանատար Հյուսնի փաշաները ղեկավարում են լամփից կղզու ոմքակոծումը: Անդրանիկն իր գինվորների հետ քաշվում է կղզու հենց այն անկյունը, որը թշնամու աչքից անետանելի կետերից եր եւ լամփին համեմատաբար մոտ: Առավույյան Անդրանիկն ու իր գինվորները ափ եւ իջնում:

Հասնելով Վան, Անդրանիկն ապաստանում է Այգեստան թաղամասում: Որտեղից որտեղ իշխանությանը դա էլ է հայտնի դառնում: Հենց այդտեղ էլ Այգեստան թաղամասում, սկսվում է ոստիկանության հրացանաձգությունը: Խուճապի մատնված բնակչությունը տեղափոխվում է հյուպատոսաբնակ թաղամասերը: Ուուսական հյուպատոսը շտապով հավաստիացնում է, թե կրակոցներ չեն լինելու, բայց ե՛ կրակոցներ են լինում, ե՛ սպանություններ: Անդրանիկը որոշել էր իր թաքստոցից հաշվեհարդար տեսնել Հյուսնի փաշայի հետ, հետո դուրս գալ, հեռանալ նոր ծուղակից, բայց կուսակցական ընկերները, առանձնապես Վահան Փափազյանը, նրան ետ են պահում այդ վտանգավոր մոքեց եւ Երեւությունների հեռանալու խորհուրդ են տալիս, հակ զանազան կարգի հետախույզները իրարամերժ լուրեր դին հաղորդում նրա մասին, ել ավելի սրբելով առանց այն ել լարված իրադրություններ նրա շուրջը: Ահա, օրինակ, «10-ը հունիսի 1904թ.» ամսաթվով մի փաստաթուղթը է շրջանառության մեջ դրել Թիֆլիսի նահանգային ժանդարմական վարչությունը: Ըստ այդմ Երեւանի նահանգապետը հայտնել է, թե հունիսի 1-ին ոուս-թուրքական սահմանից 25 կիլոմետր հեռավորության վրա «հայ հեղափոխականների ղեկավար Անդրանիկը գինված հայերի մի մեծ ավազակախմբի գլուխ անցած, ցանկանալով մտնել Երեւանի նահանգ, մեղհարվել է թուրքական զորքի հետ, սկսվել է հրաձգություն, որը տեսել է մինչեւ գիշերվա ժամը 12-ը... »<sup>2</sup>:

Նույն ամսի 17-ի թվակիր փաստաթորի համաձայն՝ Անդրանիկը եղել է Տարոնի Կուրավու գյուղում եւ այնտեղ է ընդհարվել թուրքական զորքերի հետ: Ընթերցողը թուրք-ոուսական սահմանի տեղությունու վերը նշված կոիմն էր բորբոքվել, լավ պատկերացնում է: Իսկ Տարոնը Վանա թից էլ արեւմուտք է, եւ այն օրերի հետարակորություն-

1 «Համբարձու Երանեան, Տուշարան Կան-Կանուրականը, Խառը, Բ. Անդրանիկին, 1929 թ. էջ 46: 2 Վայց ԱԿՀ ՊԿՊ, ֆ. 521, գ. 2, գ. 310, թ. 420:

Ներով պարզապես անհետար էին և մաս արագ տեղաշարժերը այլպիսի հեռավորության վրա: «Համեմայն դեպս այս փաստաթուղթը հրապարակում է Կուրավու գյուղում Անդրանիկի գտնվելու մասին նրա իսկ գոտ նամակը, որը դարձյալ կովի պատմություն է: Ըստ այդ Անդրանիկը գտնվել է այդ գյուղում օրերից մեկի երկրորդ կեսին, երբ այստեղ ներխուժել են 80 բուրք զինվորներ հրենց հրամանատարի գլխավորությամբ եւ սկսել են բնակչությունից սեռնդ պահանջել: Երկու թուրք զինվոր սկսել են ծեծել մի կնոք, մեկ ուրիշ նկատել է, որ գյուղում ֆիդայիներ կան. այդ մասին շտափու հայտնել է հրամանատարին, որը հրամայել է շրջապատել այն տունը, որտեղ հայ ֆիդայիներն են եղել: Անդրանիկը ասում է, որ իր խումբը ընդամենը 40 հոգուց է բաղկացած եղել եւ թվարկում է նրանցից մի քանի անունները: Սկսել է մարտը եւ երկու կողմից էլ գոհեր են եղել»<sup>1</sup>:

... 1904-ի մայիսին եւ հենագա ամառային ամիսներին, թե՛ս կոիվները շարունակվում էին: Սուլթանը այսպիսի դիրք է բռնչը, իբրև թե կոիվները հանդարտվել են, ինքն էլ (արյամբ հագեցած) անցնում է բարեգործության: <Ունիսի 12-ին Բիթլիսի Վալին կատարում եր սուլթանի հրամանը հայ գաղթականներին հրենց նախկին բնակավայրերը վերադարձնելու թույլտվության մասին, չորս ու կես հազար հայերի ուղարկելով Սասունի գյուղերը: Երեք օրվա համար, հայտնում է Նելիդովին Բիթլիսի ոուսական հյուպատոս Շիրկով, նրանց տրվել է «անսշան քանակությամբ հաց»<sup>2</sup>:

Մուշի մութասերիֆը (գավառապետը), Վալիի հանձնարարությամբ, գաղթականներին ուղեցել է մինչեւ իրենց բնակարանները եւ տեղուան էլ կարգադրություն արել, որ հետեւն նրանց ճիշտ տեղավորմանը: Ինչպիսի հոգատարություն: Բայց Շիրկովը խոսք շարունակում է մութասերիֆին հանձնարարված է եղել նաև մի շենք կառուցել այդ վայրերի գինվորական պարեկության համար, իսկ Բիթլիսի Վալին էլ արդեն համապատասխան շինանյութերն են ուղարկում Սեմալ եւ Շենիկ գյուղերի միջեւ զորանց կառուցելու համար: Կառուցմանը, ըստ դիվանագիտական տեղեկացման, պետք էր ձեռնամուկն ինեւ «ամենակարճ ժամկետում»: Մի խոսքով «բացառիկ» էր հոգատարությունը, որը բացառիկ խաբեություն էր: Նույն Շիրկովը հայտնում է նաև, որ գյուղերում շրջագայող զորքերը շարունակում էին ֆիդայիների որոնումներն ու այդ պատրկակով՝ խուզարկությունն ու բնակչության վերջին ունեցվածքի թալանը: Կուրավու գյուղում, որտեղ նա եղել է, Սուշ տանող ճանապարհի եղրին, «հայերի հսկայական

<sup>1</sup> Առև. «Հայութ» 3, 1904 թ., գ. 11, թ. 237-238: («Դառ. 3, 1904, թ. 2, գ. 52»)

<sup>2</sup> Առև. 3, Բաղադրի, գ. 3444, թ. 239 թ.:

ամբինը իրենց հոգեւորականներով, չացակումած կանանցով ու երեխաներով» եկել են իր կացարանը եւ պատմել «այն բոնությունների մասին, որոնք գործադրում են նրանց նկատմամբ ֆիդայիներին որոնող գինվորները, որոնք հաժանորեն հաշիվ են տեսնում արդար ու անարդար հայերի հետ»: «Թուրք զինվորները, — շարունակում է Շիրկովը, — անխտիր սպանում են մեծերին եւ փոքրերին, եւ արդարանալու համար հայտարարում են, թե բոլոր սպանվածներն եւ ֆիդային իսկ հաստատելով մի քանի օր հետո Մուշում ըստ հշանությունների այն հայտարարությունը, թե զինվորի սպանած ամեն մի հայ անպայման հեղափոխական է»: Գևալով Մուշ Շիրկովը նոյն բանն է լսել նաեւ այստեղի անգիտական եւ ֆրանսիական հյուպատոսներից, գյուղերում հայերի կեղծ խուզարկություններ՝ են ու անխտական սպանություններ: Երեկ հայերը մեռնում էին արյունահետ կորվների մեջ, այսօր՝ կեղծ ու խարուսիկ խաղաղության պայմաններում, զորքերի այցելությունները գյուղերը նորից նշանակել են զանգվածային կոտորած, նորից թալան եւ, ի վերջո, համատարած հրկիզում: «Պետք է նորից ատենք, որդպատմությունը այսպիսի ոչ կորիկ գիտի, ոչ էլ հաշվեհարդար: Միշտ էլ, որպես կանոն, ավարտվել էն պատերազմները եւ հաղթող թշնամու զորքերը կամ ետ են քաշելու կամ նոր կարգին հետեւելու: Այստեղ ամեն ինչ կողք կողքի է, ոչ զորքն է ետ քաշելու, ոչ կարգն է հաստատվել, եւ տիրակալի միակ հոգը որքան հեարավոր է շատ կոտորելն է, բնաշնչելը»:

Շիրկովը պատմում է: «Կիրակի օրը, մայիսի 30-ին Արագ գյուղում զատել են հայերի չորս տուն, ըստ որում հրդեհից հետո այդ տներից մեկում գտնվել է նոյն գյուղի բնակիչ Գեւորգի զավակների՝ մեկուկեան տարեկան Լուսիկի եւ Սեխսակ անսունով տասը տարեկան տղայի այրվածքը»: Բերելով ուրիշ սպանությունների օրինակներ, Շիրկովը ասում է, թե այդ գյուղի բնակիչների անասունները զորքերը քը շել-տարել են իրենց տները: «Եւ, ինչ արած, սա եւ ուրիշ մի հարեւանություն է, երբ աշխարհում կարգ է, որ հարեւանը առաջինն օգնության հասնի նեղն ընկածին:

«Չորեցաբթի օրը, հունիսի 2-ին, վերոհիշյալ Գոմեր գյուղը զորքը կրկնակի խուզարկության եւթարկել, որի ժամանակ հրկիզու: Եմինչեւ 15 տուն եւ, ինչպես ասում էին, սպանվել է 7 հայ, իսկ թուրք զինվորներից զորիկել է 2 հոգի»:

1 Ա. Ա. թ. 239/9:

Հավաքածս տեղեկությունների համաձայն, այդ գյուղում խուզարկությունը եղել է. իբրև թե այստեղ հայտնի Անդրանիկի գտնվելու պատճառով. որը թուրք գինվորների հետ հրացանաձգության մեջ մտնելով, կարողացել է թագավիճ»<sup>1</sup>.

Հյուապատոս Շիրկովը, որի 1904-ի հունիսի 15-ին Կ. պոլսի ուսական դեսպանատուն հղած ընդարձակ գեկուցագրից մեջբերուներ ենք կատարում. հայտնել է նաեւ հետեւյալը. մայիսի 30-ին կիրակի օրը իրեն հայտնել են. թե Տերեկվանը գյուղում, որը Սուշից 45 րոպե ոտքի ճանապարհ է հեռու, հրացանաձգություն է եղել բանակային գինվորների եւ հայ ֆիդայական խմբի տգաների միջեւ. որոնց Շիրկովը սովորաբար հեղափոխական անունով է կոչում: Կոհիվը ծագել է եկած գինվորների կողմից գյուղում խուզարկություններ անելու պատճառով: Շիրկովը ցանկացել է իմանալ. թե որքանով է ճիշտ այդ պատճառաբաններունը եւ առհասարակ հայկական գյուղերի խուզարկությունների մասին լուրերը. եւ այդ նպատակով է Սուշի անգիսական փոխիկուլատոսի հետ միասին. ժանդարմական հեծյալների ուղեկցությամբ զնացել է այուղ. իր աշջով տեսնելու ամեն ինչ: Տեղ են հասել այն ժամանակ. երբ խուզարկություններն ավարտվել են. եւ մոտ տասնինզա մարտնչող ֆիդայիները. որոնց գլխավորել է Անդրանիկը. արդեն հասցրել են փախչել<sup>2</sup>:

Շարունակենք մեր պատմությունը: Վանում Անդրանիկին ընկերները նոր կոհիվների մտքից աշխատում են եւ պահել եւ ուրիշ խորհուրդը են տալիս ու ճանապարհ մատնանշում: Եթե վերանանք հանգամանեթերից. պետք է ասենք. որ եղաների մեջ հենց այդ խորհուրդն եր ամենից ծանրն ու անցանկային Անդրանիկի համար եւ այդ ճանապարհը: Նրան ցույց եր տրվում դեպի Պարսկաստանի կողմը. որտեղից եա պետք է մտներ Կովկաս եւ զեար. հեռանար Եվրոպա: Հեշտ չեր. անսպասելի եր եւ սեփական կամքին հակառակ: Անդրանիկը. որ որչ եր մնացել կոհիվների թոհությունը. պետք է համակերպվեր Երկիրը լքելու. պանդխտության զնալու մտքին: Գավազանն առներ ձեռքը ու զեար. հեռանար. հեռանար մայր հողից: Ինքը չեր ուզենա. ժողովուրդն ել չեր ցանկանա. որ որդին լքի հայրենի հողը: Երբ հարազատին թաղում են. խոր վիշտ է. բայց ասում են մայր հողը թեթեւ լինի նրա շիրիմին. իսկ հիմա մարդուն ող—առողջ մայր հողից են անցատում. մայր հողի գիրկը մտնելու երջանկությունից գրկում: Այսուհետեւ ամբողջ պատմությունը այդ մասին է:

Միբատն այսպես է բացատրում: Երբ դեռ Ախրամարում քննվում եր այս հարցը. այն կարծիքն է հայտնել. թե խմբի հեռացումը

<sup>1</sup> Ն. Ա. թ. թ. 339/12. <sup>2</sup> Ն. Ա. թ. թ. 239/13. 14.

խառավարությունը որակելու է որպես «հեղափոխական ուժերի վերջնական պարտություն ու քայլացյում», եւ ժողովուրդն էլ իրեն «բոլորի անտեր ու լեզված պիտի զգար. դյուրին որս մը պիտի դառնար հեղափոխականներու վատ ու երկչու ազդեցություններուն. հավատքը բոլորովին պիտի վերցներ հեղափոխություններ եւ որ ավելին է. ավելի եւս պիտի ենթարկվեր բնապետներու եւ աշիրեթներու հարցատահարութեան»<sup>3</sup>: Այսպես եր:

Հվանելով Կան. արհավիրքերի բովում ապրող հնագույն քաղաքակրթության քաղաքում ընկերներից ում հետ էլ հանդիպե՞ն նույնն են կամ պարզ ու որոշակի. բայ առ բառ ասում. կամ հասկանալի ձեւով ակնարկում. չորս կողմում թեզ են որոշում. դու այլեւ չես կարող մալ. քո կյանքը ամեն րոպե եւ ամեն վայրկյան վտանգի է ենթակա:

Խորհուրդը սրտառուց եր. մարդկային: Խորհուրդը տվողը մտերիմներն են. գործնկերները. որոնք պահանջում են եւ պարտավորեցնելու:

Գործին տեղյակ եր ու մոտ կանգնած Դաշնակցության ղեկավարությունը: Նրանց մեջ եր նաեւ Ավետիս Անդրանիյանը. բոլորի կողմից հարգված մի մարդ. ժողովրդի համար բարձր հեղինակություն: Նա եւ հարգալից է եղել Անդրանիկի նկատմամբ. եւ նրա շատ արարթներին առարկող ու նրա նկատմամբ խոռվահույզ: Եվ նա նույնպես Երկրից Անդրանիկի դուրս գալը բացատրել է նրա համար ստեղծված սպառնալից կիճակով. նաեւ նրա հոգևածությամբ եւ հանգստի կարիքով. «Հոգնած. ու ֆիզիկապես իսպառ քայլացյած. նա պետք ուներ հանգստության եւ բժշկական խնամքի: Կար եւ կուսակցության կենտրոնի լուրջ մտահղությունը նրա կյանքի ապահովության համար... վախ կար. որ Անդրանիկ թուրք իշխանության ձեռքն անցնի: Պետք եր ժամ առաջ դուրս հասել նրան Երկրից եւ սպասել հետագա անցքերին»<sup>2</sup>:

Ճանապարհը Պարսկաստանով տարավ նախ Բաքու. ապա՝ Թիֆլիս. Վիեննա. Ժնև:

Խոյում. Սալմաստում. Թավրիզում. Դազգինում. ուր նա եղել է. նույնն են ասել՝ իրեն են որոնում: Թավրիզում. որպես Անդրանիկի. մինչեւ իսկ Մաշտոց անունով մի վարդապետի են ձերբակալել: Երբ հայցել է. զղացել. թիւ է մնացել զեա ներկայանա եւ անմեղ մարդուն կալանքից հանի: Հետո մեկ ամիս Բաքվում է եղել: Ապրել է. ինչպես վերը ակնարկեց. Նիկոլ Դումանի հարկի տակ: Վերջինս նոր եր վերադարձել Երկրից եւ նավային քաղաքում որպես դաշնակցական եռանդով մասնակցում եր հեղափոխական աշխատանք:

<sup>1</sup> Ակր. Երիտասարդ.... թ. 290. <sup>2</sup> Ակ. Անդրանիկ. Անդրանիկ. «Հայութիք». 1927թ.

Ներին: Դումանը սիրալիր է եղել այցի եկած ընկերոջը: Հագուստ է զնել նրա համար եւ ճանապարհածախսի դրամ տվել: Այսուհետեւ Թիֆլիսում եղել է 17 օր, ապա նորից Վերադարձել է Բաքու որտեղից պետք է զնար Եվրոպա: Այդ մասին իմացել է Թիֆլիսում, զնվոր բժիշկ Համո Օհանջանյանը, որը տարիներ հետո դառնալու էր 1918-ի մայիսին հոչակված Հայաստան Հանրապետության արտաքին գործոց նախարար, իսկ հետո՝ նաեւ կառավարության նախագահ: Թիֆլիսից բժիշկը նամակ է գրել Բաքու Անդրանիկին: Այս մասին ճանապարհությունը Եվրոպա: Մի կարճ ժամանակ կանգնէ առել Վիեննայում, ապա ուղիղ մեկնել ժնեւ, ուր եւ հանգրվանել էն այս:

Թիֆլիսում մի պարոք է՝ կատարել: Հանդիպել է հայոց մեծ քանաստեղծ Հովհաննես Թումանյանին, այցելել նրա տուն, ծանոթացել ընտանիքի հետ, լսել բանաստեղծի հեղինակային պատմություններն ու իմաստուն խորհուրդները: Զգուշության նկատառումներով նրանց տուն է մտել որպես Թումանյանի ծննդավայր Լոռու գավառից եկած ծանոթներից մեկը: Զրայցը Մտերմիկ է եղել, անկաշկանդ: Սերկա եւ եղել Թումանյանի ամքադ ընկերը՝ մանուկների սիրելի բանաստեղծ Դազարոս Աղայանը: Երկու բանաստեղծների դուստրեցը որոնց երգում են Անդրանիկի մասին ժողովրդի սիրած երգը: «Եսո արտասանում են հայ հեղափոխական բանաստեղծ Միքայել Նալբանդյանի «Ետալացի աղջկա երգը» բանաստեղծությունը, որում կարծեն թե հենց նրա համար գրված տողերն են՝ «Ամենայն տեղ մահիլ մի է, մարդ մի անգամ պիտ մեռնի, բայց երանի որ յուր ազգի ազատության կզոհիվ»<sup>1</sup>: Լսելով այդ բառերը, նա կարող էր երանի տալ Գուրգենին, Ալբյուր Սերոբին, Հրայր Դժոխքին եւ քանի՛ քանի՛ նրանց նման մարտիրոսված հերոսներին: Իսկ ինչն ապրում էր դեռ բավական չէ, նաեւ բունել էր բանտված հայրենիքի դեպի հեռուները տանող անհայտ ճանապարհը:

Հանգստի ժամ էր, կարճատեւ մի դադար: Բանաստեղծի հյուրընկալ հարկի տակ նա պատմում էր ոչ միայն իր կոիզմերը, այլև հայրենի Շապինկարահիսարում եւ Սասունում լսած անելիութերը: պատմություններն ու ասացվածքները: Բանաստեղծը կլանված լսում է նրան եւ խնդրում, որ Ֆիդայապետը սասունցիների առակներից մեկը նորից պատմի: Թումանյանը իմացել է այդ առակի մի հին տարբերակը, որը հայտնի էր Հին Հունաստանի սշանավոր առաջախնու Եղոպոսի հեղինակությամբ: Անդրանիկի պատմածը ուրիշ էր:

<sup>1</sup> Տեղականի տունը, էջ 444-445: <sup>2</sup>Տե՛ս պայուն Ներկա Դ Աղայակի ուսուական առաջնորդ Խոջիքը: «ՀԿՊ. Դ. 370, էջ 1, գ. 91: Նաեւ՝ «Հայոց», 12. 05. 1923թ. Բառով:

Հովհաննես Թումանյանը հետո մշակել է այն եւ հրապարակ հանել որպես «Մոծակն ու Մրջունը» հայության մեջ արագ տարածում գտնված առակը, որը աշխատանքի ու աշխատասիրության յուրատեսակ գովել էր<sup>2</sup>: Առաջին այս հանդիպման ժամանակ «Քանաստեղծը զվարք ու խնդուն ընավորությամբ լավ տապարություն եւ անուշ զգացումներ ունենալու հմայքն է ստեղծել», հիշել է Անդրանիկը եւ խոստովանել՝ «առաջին տեսակցությամբ մտերիմներ եւ բարեկամներ էինք»<sup>3</sup>:

Զրույցը հայոց ազգի երկու մեծությունների միջեւ էր. մեկը գեղարվեստի, մյուսը՝ ուսմարվեստի: Երկուս էլ մարտիկ են՝ մեկը գրով, մյուսը՝ գենքով: Ժողովուրդը Անդրանիկի անունը դնում էր Թումանյանի անվան կողմը. Թումանյան եւ Անդրանիկ:

Անդրանիկը գործ չէր ընդհատել, որովհետեւ ճանապարհը շարունակվում էր: Այսպես է կյանքը: Մեկը թափառական է լինում, մյուսը՝ ճանապարհորդ: Մեկը հայրենիքից գնում է, որ հոգին թեթվացնի, մյուսը հայրենիքն է տանում իր հետ, որ հոգին չդատարկվի: Թի՞ն էր հոգեխոռվ եւ վշտակեղեց այս զավակը: Որն էլ լիներ, նա հայրենիքից գնացող, հեռացող չէր: Նա գնում էր, բայց ոչ հայրենիքից: Որովհետեւ հայրենիքում մալու տառապանքից ոչինչ առավել երցանիկ չէր որոնում: Ի վերուստ են նրա բախտն ու ճակատագիրը: Միատեղ են նրա թե՛ դժբախտությունը, թե՛ ուրախությունը: Միակ ուրախությունը:

Միայնակ չէր դուրս եկել Անդրանիկը Կանից: Կես ճանապարհին, նոյում, նրան հանդիպած ընկերներից մեկը նկարագրում է այն տնակը, ուր նրանց կարճատեւ հանգրվանել են: Ուսանց ուղեկցում են, ումանը՝ գնում նույն ճանապարհով: Նրանց մեջ Սեբաստացի Մուրադն է, որ մենակ չի թողել Անդրանիկին. Կայծակ Առաքելն է, որը նոյնական հետու է եղել, Բաբերդից Արշակը, որ արդեն վաղուց Սեպուհ էր. Մշեցի Սեյտո-Պողոսը, որ կոկվների մեջ ինքնամուռաց եր եւ չէր կարող պետի նշանավորների հետ չկինել այս ճամփորդության ժամին. Սմբատն էր, որ իր կյանքն ու եռթյունը կապել էր Անդրանիկի հետ, թիկնապահ ու առաջավագ գինվորներն են՝ Բարմախսը Ավոն, Մաջոն, Հաջի Գետի, Ասյանը, Զառապ Արշակը. Կոտորի Հաջին...<sup>4</sup>: Ուղեկցում են, որ իրենց սրտի շերմությունը հաղորդեն ընկերոջը եւ հրաժեշտի նրա քաջալերիչ խոսքից հարցուածական զալիք օրերի կարուտը բոլովանող զգացմամբ:

Վերջապես անցել է սահմանը եւ ոտք է դրել Եվրոպա, այն

<sup>1</sup> Շունականը ժամանակակիցների հունցրան ժողովանուն կազմով: Հ. Ս. Կարասենյան թ., 1969թ., էջ 141-143: Նաեւ՝ և ս., էջ 921 էւ «Գործ հայես», Խ1, 1917թ.: <sup>2</sup> Մորական Անդրանիկը, վերիշումներ բանաստեղծ Հովհ. Թումանյանի կյանքներու մուլտաֆիլմը, էջ 550-554: <sup>3</sup> «Հայություն» ամսագիր, Մայո, 1927թ.: Միայն Կարանյան, Մորական, 1931թ., էջ 62:

Եվրոպան, որից ինքն էլ իր ժողովրդի պես օգնություն էր փրկություն եր ակնկալում: Բայց առաջին իսկ պահից հիասթափվել է: Չատ ժամանակ չի անցելու, տառացիորեն ամիսներ, եւ նա իր հուշերի գրքում գրելու է:

«Բախս ունեցանք Եվրոպան տեսնելու: Բայց ավելի լավ, կը համարեի՝ չտեսնել: Հայկական հարցի վերաբերմամբ ոչ մի տպավորություն չըռդեց ինձ վրա: Միայն տեսանք ժողովրդի ազատությունը իր երկրի մեջ:

Ինքնասեր, իրենց հանգստությունը սիրող մարդիկ են, որոնք չեն օգներ իրենց եղբարը, ու՞ր մնաց մեզի օգնել հեռուեն»:

Իր մղած կոիվսերի վերաբերյալ պարտը է համարել երկու քան խոստովանել: Սեկը՝ խմբերը կոիվսերի ժամանակ շատ զոհեր չեն տվել, բայց անարգ սուլթանը ամեն մի կովից հետո անգեն ժողովը դից բազմապատիկ վրեժ է հանել: Մյուսը՝ որպես զինվորը զինվորի դիմաց՝ «թշնամու կորուստը ավելի շատ է, քան մերը»:

Դաշնակցության բարձր մարմիններին եւ անհատներին խորհուրդ է տվել եւ պատճամ, չմոռանալ հարյուր հազարներով տված զոհերի «արյան Վրեժը» եւ ցույց տալ իրենց «հանդգնությունն եւ արագ գործունեությունը»: Չնաև ընդունված որոշումների եւ պայքարի նույն ձեւերի գերին:

«Այ ժողովրդին.

«Մի վիատիր, մինչեւ վերջը, հայ ժողովուրդ: Ցույց տուր հոգությունդ ու տոկունությունդ»<sup>1</sup>:

Ամփոփիչ էր, բայց ոչ վերջին խոսք: Առցեւում եւ՝ կյանք կար, եւ՝ պայքար:

## 4 ԱՐԴԱՇ ՕՐԵՐ ԺՆԵՎՈՒՄ ԵՎ ԿԱԼԱԹԱՅՈՒՄ

Ժնեւ մտնելն ու այստեղից վերջնականապես դուրս գալը տեսել է երկու տարուց պակաս՝ 1904-ի վերջից կամ 1905-ի սկզբից մինչեւ 1906-ի աշունը: Կարծիք կա, որ Կիեննայից նախ եկել է Փարիզ, ապա Ժնեւ: Հնարավոր է:

Ժնեւ հասնելուն անս այցելել է Դաշնակցության «Դրոշակ» թերթի խմբագրություն: Նրան այստեղ սպասում էին: Սպասում էին, որպես զի նախ ընդունեն, տեսնեն եւ հարցուիրող անեն, իրենց աչքերին ու հոգուն տեսնելու եւ զգալու լիություն մատուցեն: Լրագրող էին, նրանց ձեռքին գրիչ կիներ՝ գրի առնելու համար առաջին իսկ

<sup>1</sup> Անդրամական կառավարության մասին առողջապահության մասին աշխատանքը, 1932թ., էջ 153:

բանից՝ որպես ոչ թե հեռվից հեռու լսած, այլ նրա իսկ պատմած, նրա հետ ունեցած կենդանի զրոյցի ժամանակ ասված խոսք: Պարզ է: որ ով լինելու եր օրեր, ամիսներ շարունակվող զրոյցների սկզբը: Այժմ կարեւոր էր նրա հանգրվանի հարցը: Եվ առաջին իսկ օրը լուծվել է: Անդրամական պետք է ապրեր ժնեւում, «Դրոշակի» խմբագրության ընկերակցությամբ ու նրա խնամքին ենթակա:

Գրեթե ամեն օր է այցի եկել խմբագրություն: Այդտեղ էլ ծնվել են գաղափարներ, որոնց հրականացումը դարձավ ժնեւում նրա մնալու խնդիրն ու հիմնական գրադարձը:

Խնդիրը ծագեց, պարզվեց իր կամքից անկախ, ընկերների հորդությանը եւ չենք կասկածում, նաեւ իր սրտագին ցանկությամբ:

Խմբագրության սենյակներում, որտեղ էլ խստեր, միայն խմբագրության աշխատողները չեն խմբվում նրա շուրջը. այլեւ ժնեւում ապրող հայերը, բարձրագույն դպրոցներում սովորող ուսանողները: Տեսքին կարոտ էին: «Հարցերի տարափ էր: «Հարցափորձ էին անում, խնդրում էին պատմել իր անձի մասին, երկրի դրության մասին, ընկերների մասին, պատմել իր կոիվսերի պատմությունները, այն, ինչ իմացել էին թերթերի կցւուուր, թե հացական, թե տարակարծական հաղորդումներից, լսեին նրա խոսքը բերներեան իրենց հասածի մասին: Եվ նա պատմում էր այդ բոլորը, կատակում էր սրամտում էր, նաեւ ինքն էր հարցեր տալիս իրեն շրջապատողներին, որտեղից են, ինչ են անում Ընկերակիայում, երբ են հայրենիք վերադառնալու, որի հողն ու ջուրը կարոտ են իրենց զավակների օգնությանը: Այդ օրերի մասին հուշերի մի բեկոր թղթել է Ավետիս Ահարոնյանը, որ նրան տեսել է թե՝ Բաքվում եւ թե՝ ժնեւում:

Հիշելով Բաքվում նրա նկատմամբ Նիկոլ Դումանի խնամքը, նա ասում է, որ նույն ուշադիր ու եղբայրական վերաբերմունքն է նրան, ցուց տրվել նաեւ արտասահման՝ ժնեւ հասնելուց հետո: ««Դրոշակ» խմբագրության պարտեզում առավոտից երեկո լսվում էր Անդրամական սրտաբաց, ինչուն ծիծանը. միշտ նրան շրջապատած էին ընկերները, մեծ ու փոքր, խոսեցնում, լսում էին, պատկառու սիրով ամեն մեկը պատրաստ նրա հետին քմահաճուքը կատարելու»<sup>2</sup>:

Ավետիս Ահարոնյանը այդ օրերին Անդրամական հետ միւնքուն կուսակցության մեջ էր: Ահարոնյանը, որ հայ նշանավոր գրագետներից մեկն էր, բազմակողմանիորեն կիրթ, պատկառելի մի անձնավորություն, ամբողջությամբ կուսակցական գործիչ էր, Անդրամական հանգստի պարագայում գտնվող մի հերոս: Դարձյալ վկա բերենք Ահարոնյանի հուշերի պատահիկներից:

<sup>1</sup> Անդրամական կառավարության մասին աշխատանքը, 1932թ., էջ 153: <sup>2</sup> Ա. Ահարոնյան, Անդրամական պատմության մասին, «Հայություն», 1927թ., էջ 76:

«Եվ այդ ժամանակ Անդրանիկ կուսակցական էր, եւս առավել, որ հանգստյան շրջան էր ապրում, պաշտամունքի ընթացք մթնոլորտում։ Ոչինչ ուներ ակտիվ, որ պատճառ դառնար անհամաձայնությանց կամ վեճերի։ Փարիզ անցավ, մեր ֆրանսիացի բարեկամների հետ տեսնվեց, հիացմունք հարուցանելով ամեն տեղ իր բաց սիրտ շարժութեալով ու գրուցով. Թիյարը. Պրեսանեն, ժորեսը հետագայուն հաճախ էին այս մարտիկի գովքն անում»<sup>1</sup>:

Անհարունյանն, այնուամենայնիվ, մի բան ասաց. «Ոչինչ ուներ ակտիվ, որ պատճառ դառնար անհամաձայնությանց կամ վեճերի։ Ճշմարիտ է, բայց դա առաջմ. հետո կերեւա: Հիմա մեր գոհունակության խոսքը հղենք հայ նշանակոր գրագետի հիշատակին, հենց միայն այդ մի բանկագին պատառիկի համար. եղել է Փարիզում, հանդիպումներ է ունեցել: Ի՞նչ է գրուցել, ինչի՞ մասին։ Ոչ ոք այդ մասին հետք չի թողել։ Կոահելով. Կարող ենք ասել, որ գրուցը անպայման վերաբերել է նաեւ սոցիալիզմի ուսմունքին, ինչը քարոզում էին թվարկված անձինք: Հետագայուն Անդրանիկն առիթ կունենա ասելու, որ իր հմացածով սոցիալիստները ազնիկ մարդիկ են: Հետագան 1917 թվականի հոկտեմբերն է, որի մասին ստորև խոր կիսի: Եվ այդ ժամանակ է ապօք կողանա, թէ ինչու Անհարունյանը հարկ համարեց ասելու, որ ժնեւյան օրերին վեճերի առիթ չի եղել։

Ժնեւուկ Անդրանիկին այցի եկավ նաեւ մի սցանչատես երիտասարդ<sup>2</sup>, որ կարոտ ուներ հոգում եւ բանաստեղծական պոռթկումի ատաղջը զապած: Տեսակ հերոսին. գրուցեց ու քայլեց նրա հետ դրոշակյան պարտզում, ժնեւյան պուրակներում եւ լեռներից զահակեց գետերի եզերքներում: Եվ մի օր էլ նրան մատուցեց հայ բանաստեղծական արվեստի գոհար գանձերից մեկը, հաստատումը. թէ ինչ աստիճան ոգեւորիչ է եղել Անդրանիկի գործն ու անձը մահվան հետ մենամարտի մտած մի ժողովորի համար: Բանաստեղծը այնպես է գրում, թէ երազի մեջ Անդրանիկը այցի է եկել իրեն, որպեսզի երիտասարդի իր մարմինը. Եղթյունն ու հոգին վերջնականապես ցեցի եւ տանի դեպի հարկադրված կոիվեների դաշտը։

Բերել է նա ժողովորի հին-հին կենսատու զավակների անունները. նաեւ երեւ ընկածների արյան վրեժի զգացումը, որ ասի՝

Ուժի կեցիր այս ատեն, եղբայրացիր խումբերուս ու մրրկվեաննեց հետ....»<sup>3</sup>

Կա պատմություն նաեւ ուրիշ մի հայ գրողի հետ:

1905 թվականն է: Կովկասն անհանգիստ է, հայության դրությունը՝ վտանգված: Ժնեւ էն հասնում լուրերը հայ-թարարական ընդհարում-

1 և. ու. 2 «Անդրանիկ Կոնաք. պատերազմներ...», էջ 153: 3 Միհաներ. Ալբ-րակի:

Ների մասին, որոնք բարձրություն էին, եւ հանգիստ չեր երեւանում:

1 Ժնեւում, հենց «Դրիշակի» խմբագրությունում, ուր հաճախ եր ցնում դաշնակցական հեղինակավորներից Ռոստոմը<sup>4</sup>, զրոյց է բացվում կովկասահայերին օգնության համեմելու մասին: Եվ առաջինը Ռոստոմը է առաջարկ անում Անդրանիկին, որ ժամն է նրա այստեղ գտնվելու: Անդրանիկի խոսքը մեկն է լինում՝ պատրաստ եւ:

Ակսվում է Կովկաս մեկնելու պատրաստությունը: Նրան ուղեկից է Նշանակվում ժնեւի համալսարանի գրական ֆակուլտետի ունկնդիր. այդ ժամանակ բանաստեղծ Դերենիկ Դեմիրճյանը, որն ապագայում կառահեղ վեա է գրելու Անդրանիկի մեկուկես հազարամյա և ասխի վարդան զրավարի մասին: Անդրանիկի հետ նրա այս հանդիպումը գուց թէ ճակատագրի բերումով էր: Նա ոուտերեն գիտեր, պես ու ուղեկցեր: Ճանապարհ էն ընկնում միասին: Շատ չանցած. Ծվեյցարիայի երկաթուղային կայարաններից մեկում հեռազիր է մատուցվում: Կովկասից լուր էր եկել, որ Անդրանիկի մեկնելու կարիքը չկա: Եվ գիտվորն ու բանաստեղծը վերադառնում էն ժնեւ!»

Անդրանիկը կուզեր մի փոքր հանգիստ առնել, թուլացել կոիվերի օրերի իր ջների լարումը եւ բուժել հոդացավը: Օգնեցին ընկերներն ու բարեկամները, բժիշկներ բերեցին: Բայց մինչեւ ե՞րբ: Կամաց-կամաց դադարեցրեց բուժումը եւ գործի կպավ: Ընդհանրացորդ իր կյանքի առաջին մեծ փուլի եղելությունները, որոնք որպես իր հուշերի ամբողջական գիրը հանձնեց ժնեւի դաշնակցական արխիվին: Ի մի բերեց հայուկային կովի իր եւ ընկերների փորձը, զրեց, այսպես ասած, հայդուկակովի ուսուցյաց «Մարտական հրահանգներ» խորագրով:

Հուշերի գիրը, որ բազմից վկայակոչվեց վերեւում, զրված է առաջին դեմքով. հեղինակը ինքը պատմել էր գործ է՝ «Ես»—ով, «Իմ»—ով ու «Անո»—ով. բայց վերևագրված է երրորդ դեմքով. «Անդրանիկի հուշերը»: Կարծես թէ մատուցում է մեկ ուրիշը: Դա արդեն թելադրվել է հրատարակիչների կամքով՝ իբրև թէ նրանք են մատուցում հուշերը հասարակությանը եւ. հավանաբար նաեւ նրա համար, որ հենց վերնագրում ընդգծվեր ու բերներերան անցներ, թէ ինչ գիրը է լույս տեսել ու մեկը մյուսին ասեր ու հարց տար. «Անդրանիկի հուշերը լույս է տեսել», «Անդրանիկի հուշերը կարդացել է Ես...»:

Առաջին բարից մինչեւ վերջինը հուշերի գորում ողջ-առողջ ապրում է Անդրանիկը, անմիջական մարդն ու զինվորը իր սեփական

\* Եղան իռջ՝ Սունիան Զորյանը:

<sup>1</sup> Անդրանիկի Կոնաք. պատերազմներ...», էջ 156-158:

շառով ու տողով, իր կրթությամբ ու գիտելիքներով, իր բնակորությամբ, սիրով ու ատելությամբ, իր աշխարհը մբռնմամբ, իր մտքի սորությամբ ու պարզությամբ, իր կարծիքով ու մերժումով, շարքահինի իր խոսքով ու դեկապրի իր շեշտով, իր զայրույթով ու սաղաղությամբ, իր ատելությամբ ու կարեկցանքով:

Առողջ ու կարող ժամերին ինչն է գրել, հոդացավից մահճակալին շամկած ժամին պատմել է ու թելադրել, որն էլ գրի է առել Ժնևում շյուղատնտեսական բարձրագույն դպրոցի ուսանող Գեւորգ Գրձելյանը, օժոված ու աշխատասեր մի երիտասարդ, որին սպասում էր շյուղատնտեսական գործի ու գիտության դասավանդող—տարածող պրոֆեսորի արժանի հեղինակությունը: Երան՝ գերազանց Անդրանիկը Ժնևում իրեն այցելած բազում մտավորականների մեջ, գերադարձուց ու նախընտրեց: Իբրև թե բուժվում էր ու մնացած ազատ ժամերին էլ հուշերի գիրքն էր ստեղծում: Մեկ անգամ գրելուց, ժելադրելուց հետո նորից է նայել ու շտկել, լրացրել ու ճշգրտել: Եվ յտացվել է այնպես, ինչպես որ ինչն է՝ հարզացատ ու անխառն: Ոչ նընագովք է, ոչ էլ քննարկում ու քննադատություն: Եվ ոչ էլ այսպես ասած, ծանրախոհ վերլուծություն ու կշռադատություն: Ասես թե ամեն ինչ եղել է հենց նոր, դեպքը դեռ թարմ է, նոր միայն յատարվել է, մի դեպքում ավարտվել է, մյուսում կիսատ է մնացել, չըրորդում դեռ շառունակում է, հաջորդում մտադիր է դեռ առաջ չնալ ու առաջ տանել սկսած... Պատահում է թուրցիկ մի բան է պատմում, որը չի դրված ժամանակի կոնկրետ շղթայի մեջ... Այս էլ չուցե նրանից է, որ դեռ մտադիր է եղել նորից Վերիիշել. նորից յայել ու զննիանուր հայտարարի բերել երեկվա կատարվածի այդ շրվա գրառումը: Ինչպես էլ լինի, անչափ հարուստ է նյութը եւ սեկրենակ արժեքավոր՝ թե որպես հուշ, թե որպես պատմական շարադրանք, թե որպես վերլուծություն եւ կշռադատում. տեսնում են ինքը երը, տեսնում են վայրերը, տեսնում ու լսում են մարդկանց: Այսպես է, որ թե արվածն է պատմություն, թե գրվածք, մեկը՝ գործի. յուրաք՝ մտքի: Միտքն էլ հիմնականում երեկվանն է, դեպքերի ընթացքում եղածը՝ ինչպես ասվել է, ինչպես զնահատվել է, թե ճիշտն ու սխալը, թե հաստատվածն ու մերժվածը: Մի բան էլ եթե մոռացել : մի ուրիշ բան էլ եթե ժամանակին կիսատ է իմացել, այդպես էլ յատուցում է՝ ոչ սխալը թաքցնելով, ոչ հերոսականը գունազարդելով և ոչ էլ հատուկ ջանք գործադրելով լրիվ ու ամբողջական լինելու, որ պատմած դասի վերածելու, մարդկանց ու սերունդներին ուսույանող խորհուրդներ տալու համար: Այդ բոլորը խոսքի ընդերքում է, պատմած-հիշածի խորով՝ բոլորն ամբողջությամբ վերցրած, փասուերի ու խոսքերի համադրության մեջ: Տարիներ հետո նա ասելու է.

թե իր կյանքն ու գործը բարդ են եղել եւ պատմաբանի համար հեշտ չի լինելու գրի առնելու: Առաջինն ինչն է կանգնել, ահա, այդ դժվարության առջեւ, որը խոստովանում է ոչ այնքան իր կատարած գործի, որքան այս գրի առնելու ծանրությունը ընդգծելու համար:

Հուշերի հեղինակը փուլով պատմում է, որ մտքում եղածը չմոռացվի, պատմում է ինչն այդ օրը, այդ ժամին դեռ թարմ է, բայց շղթայված, պատմում է, որ նախ ինչք չմոռանա, անհանգստությամբ, թե՛ ով գիտէ, ինչ է լինելու վաղը, եւ ով է ժամանակ ունենալու գործու եւ պատմելու:

Իսկ ո՞ո՛ ընթերցող, օգտվիր առիթից, Մտիր հուշերով վերարթնացած դեպքերի այդ աշխարհը, ինչը էլ թեզ համար մի հարմար տեղ գտիր այստեղ եւ փորձիր նաեւ վերլուծել՝ օգտվելով պատմողի համեմատ ք այն առավելությունից, որ դեպքերը ուս գիտես ոչ միայն իրենց ծնունդով ու օրվա վախճանով, այլեւ գիտես հետազա անդրադառվ. եռեկը գիտես պատմության ձիգ շղթայի մեջ թողած իր հետքով ու ժամանակների համար տված արդյունքով...

Սինէւ 1904 թվականի վերջի պատմություններն անելիս մենք նույաբես Անդրանիկի հուշագրության շղթայում էինք: Ոչ թե չկամեցանք, այլ չկարողացանք դուրս գալ, որովհետեւ ուրիշ աղբյուրներ չկան, որովհետեւ դուրս գալ կնշանակեր կամ բաց թողնել, շրջանցել այդ եցերը, կամ վերցնել ուրիշ մի, այսպես ասած, կրկնադրյուրից: Այս, ինչ Անդրանիկին նվիրված ուրիշ գրքերում պատմված է նրա հայուկ լինելու եւ հայուկապետության մասին, գրեթ լինվին մի աղբյուր ունի, որը եւ Անդրանիկի հուշերն են: Որքանո՞վ արդարացի կիմեւնը աղբյուրի միակը լինելու պատճառով կրկնելուց խոսափելով:

Աղավեյակն ու կարասպ տեր են կանգնում բնին, որտեղ հրենց ձագուկն է, հայ մարդ պահապան է կանգնում իր օջախին, որ սուլթանի գինված ուժերը չավերեն: Ահա ամբողջ պատմությունը: Մեսացյալը վերաբերվում է ձեւին: Ձեւն այս է, զենք էն հայթայթում, խմբեր են կազմում, միայնակ թե խմբերով շղզում են գյուղերի չորս կողմը, բարձրանում են սարերն ու թաքստոց մտնում եւ անկյունից հետեւում թշնամու անցուղարձին: Նախահարձակը սովորան է ու իր մարդիկ: Հայերն ի վիճակի չեն ամեն նախահարձակմանը պարիսակ կանգնելու եւ ամեն հարձակվողի սաստելու: Դա ուժից վեր եր: Դեպքից դեպք նրանց մարտերը պարզապես ահազանգ էին, որ նիրհած հայերը արթուն մնային, եւ քար ու ապառած եկորապական տերությունները օգնության հասնեին: Սահու եւ կենաց այս կովում հայի զավակներն են, որոնց անուններն եւ հիշատակում իր գրքում Անդրանիկը, որոնց սխրագործությունն էր երգում եւ նրանց մահը ողբում: Չի ֆետիշացնում: Բոլորն էլ սովորական են: Եվկ է, հրամա-

Աստար են, թե շարքային, բոլորն էլ՝ նախ եւ առաջ զինվոր են: Հատուկ սպայատուն չկար եւ առանձին մի խրամատ՝ դեկավարների համար: Բոլորն էլ կովում են ճակատ առ ճակատ, բոլորն էլ գիշերում են ցարայի խորըում կամ սարի կատարին, եթե զյուղի Ներսում լրտեսներն են, իսկ զյուղից դուրս, չորս բոլորը կամ մոտակա բարձունքերում՝ սուլթանի ու նրան օգնության կանգնած թուրք ցեղապետերի գործեց:

Իր գործընկեր մարդկանց հետ Անդրանիկը վարվում էր ինչպես որ դեպքերն են թելադրում: Մեկի առաջ գլուխ չեր խոնարիով, մյուսին զուր տեղը ընդուխմախոսում: Եթե պետք էր լսել ու հրամակը կատարել, միշտ առաջինն էր ուզում ինեւ, իսկ եթե գործը շեղ էր զնում ու շտկել էր պետք, հազիկ թե նա լուր մնար: Խոսքն է ասելիս, եթե պետք էր որ խիստ ասեր, այլեւս մեղմացնող բառեր չեր որոնում: Բայց միշտ պարտաճանաչ էր ընդունված վճիռը կատարելիս եւ հրամանին առաջինն ինքն էր ընդառաջ զնում: Այսպիսի զինվորի հետ հեշտ է, իսկ հրամանատարի հետ՝ թե՝ հաճելի, թե՝ դժվար:

Թանձր է հուշերի գիրք: Գրեթե ամեն եցի վրա ոչ թե դեպք, այս դեպքեր են հիշատակված, գրեթե միշտ հակիրճ ու հպանցիկ, որը ափսոսանք է առաջ բերում, ոչ ինքն է հետո այդ պատմությունը հետազյում բացել, ոչ էլ ուրիշ որում մեկը: Անդրանիկով, այսպիսով, բացվում է արահետց հայոց այն հուշագրության, որի հեղինակները ազատամարտի զինվորներ են ու հրամանատարներ: Ենչ Վերաբերում է գործի պարունակությանը, ապա կարծում ենք, այն հիմնականությամբ դարձագ վերը մեր կատարած մեջբերումներից:

Գործի վերջում Անդրանիկի հարցն է՝ «Եթե շարունակենք գործունեության նույն եղանակը՝ արդյոք պիտի հասնինք մենք մեր նպատակին»:

Նրա առաջարկն է, որ նրանք, ուշեր կանգնած են գործի գլուխ, կատարեն ծրագրային փոփոխություններ: Վերըուծեն, խորհրդածեն, ծանր ու թեթև անեն. ի՞նչ ցույց տվեց ֆիդայական կովի փորձը, ինչպես ճիշտ եւ արդյունավետ կլինի առաջիկայում: Շտապենք պատասխանել, որ թեեւ ասպարեզի վրա եղած կուսակցությունները համաժողովներ գումարեցին, քննարկումներ կազմակերպեցին, հայրցը ըստ եռթյան, ըստ արժանակույն իր դիպուկ պատասխանը չստացավ: Հայ ազատագրական ուժերը ի մի չբերվեցին, ժողովուրդը մի մարտնչող զանգված չդարձագ, չձուլվեց որպես սուլթանիկմին հակառակ բոլոր հակամարտ ուժերի դաշինք: Անվախ այն բանից, թե գործի գլուխ կանգնածները պայքարի ինչ եղանակներ էին ենթադրում եւ մշակում, հիմնականը մնաց ինքնապաշտպանականը: Առ

դեռ բավական չէ, հայոց առաջատար ազգային քաղաքական կուսակցությունը՝ Դաշնակցությունը, ունեցակ Թուրքիայում իշխանության գրանցում անցնելու նախապատրաստվող Երիտասարդ թուրքեր կոչվող կուսակցության հետ դաշինք կնքելու պատրանքը, որով ժողովովի մարտունակ ուժերը ապահովմորոշվելով, մատնվեցին անորոշության:

Դառնանք, «Մարտական հրահանգներին»:

Մարտունուց: Կանոններ կովի: Կանոններ հայուկային խմբի: Խմբային կոիվ, խմբային կովի կարգապահական նորմեր եւ գորակովի արվեստ: Այս բառերն ու հասկացությունները բացահայտելու, ուսուցանելու նպատակն են հետապնդում «Մարտական հրահանգները»:

Անդրանիկը «Մարտական հրահանգները» մտորել, գրել սկսել է, ըստ երեւույթին, հուշերին զուգընթաց եւ ավարտել է 1906-ի մայիսին. ինչպես նշված է հենց գրքի վրա: Այն լույս է տեսել նույն տարում, Ժնևում: Հրատարակել է Հայ հեղափոխական դաշնակցություն կուսակցության «Դրոշակ» թերթի խմբագրությունը:

Խորագրի տակ հեղինակը բացատրական բառեր է գրել՝ «Առաջարկներ, նկատողություններ եւ խորհուրդներ»:

Ուզմունուցը բացվում է մեր նախընթաց շարադրանքից հայտնի իր պաշտելի հերոսներին, ֆիդայական կովի ուակիրակերին ուղղված ձևով: Նրանց մեջ են Սերոբը, Ապրոն, Հրայրը, Գուրգենն ու Վահանը. «Եթե անսման հիշատակին կը նվիրեմ այս գրքույկը, հուսով, որ անոր ընթերցումը ավելի փորձառու կը դարձնե անձնվերները եւ կը նպաստ ավելի օրգանապես ծառայելու ձեր սիրած գաղափարին»:

Ուզմունուցը եւ շարքային կազմի. Եւ հրամանատարության համար է: «Ենց սկզբում մարտերի հաջողության կարեւոր պայման է համարվում զինվորական խորհրդի ստեղծումն ու նրա կանոնավոր գործունեությունը: Խորհուրդը պետք է գտնվի երկրից դուրս եւ կազմված լինի առնվազն տասներկու փորձառու ընկերներից: Պետք է մշտապես կապ լինի խորհրդի եւ երկրի միջեւ: Նրանք պետք է տեղերում հավաքագրեն Երիտասարդների, որոնց խմբերի մեջ ներգրավում նախապես պետք է քննեն եւ որոշեն բժիշկները: Ընտրելուց հետո նրանց պետք է կենածունեներ տրպի, քանի որ խմբերը զաղոտնի են: Զինվորական խմբի պարտը է խմբերին հագցնելն ու զինելը, նրանց զինակարգության գործը ուսուցանելը: Հրամիկ զինվորներից բացի խմբերը պետք է ունենան իրենց օժանդակող մասնագետները, որպիսիք են ոռումք ձուլողը, զինագործը, բժիշկն ու ատաղձագործը. Կոչկակարն ու դերձակը, նաեւ՝ լուսավորիչը: Հատուկ զնդգնվում է զինվորների բարոյապես անաղարտ լինելու հան-

## ՄԱՐՏԻՎՈՒ ՀՐԱՄԱՆՆԵՐ

Նաեւ թշնամուս հետամուտ լինելու ձեւերն են բացատրվում: Զինվոր-ները իրար վիրավորական խոսք չպետք է ասեն, իրարից խոռվ չպետք է մնան: Հատուկ ցուցում է տրվում՝ «ժողովրդին հետ սիրով եւ քաղցրությամբ պիտի վարվիք. եթե ժողովուրդին անհատ մը ձեզի վիրավորական խոսք ըսագ. իրավունք չունիք ձեռք բարձրացնելու. կարող եք ձեր պետերուն բողոքել եւ անոնք հարկ եղած կկարգադրեն»: Չի մոռացված եւ խմբապետի պարտքի սահմանումը. նրա պարզ եղայքն եւ կոչման վեհության գուգակցումը.

«Զինվորները, չի կարծեք թե խմբապետության մեջ մեծ փառք մը կա: Ընդհակառակը՝ խմբապետը ամբողջ խումբին ծառան է եւ բոլոր մտահոգությունը իր վրա ծանրացած է»: Բավարարվենք այս մի քանի բառը քաղելով: Մնացյալը ամբողջ այս ոգով է. հայդուկապետը պատասխանատու է զինվորների կյանքի ապահովության համար. ևա պետք է հետատես լինի. կարողանա թիզ զոհ տալով կամ առհասարակ զոհ չտալով կովից հաղթանակով դուրս գալ: Ժողովուրդն ու խումբը պետք է մոտիկ լինեն իրար. «քանի որ առանց անոր քացալերության եւ գործնական մասնակցության՝ ոչինչ չենք կրնա ընել» (եջ 43):

Եվ դարձյալ մեծ գործը հաղթանակով պսակելու «մանրութեռն» են. ինչպես պետք է խումբը իրեն պահի լուսնյակ գիշերը. ինչպես. հարկ եղած դեպքում. կրակ վառի գիշերային խավարի ժամանակ. ինչպես ապահով գնալ անտառով. ինչպես. կարիքի դեպքում. գյուղից հաց վերցնել. ինչպես ընթանալ գյուղամիջով եւ անցնել հանդիպած գետով: Ինչպես պատսպարվել փոսում. պահապաներ նշանակել. փամփուշտ խնայել. պատրաստ լինել գիշերային ընդհարման եւ կարողանալ գիշերային պաշարումից դուրս գալ կամ թե կրվելով. ցերեկով թե մրության միջով. սար բարձրանալ:

Մարտունուցից հեղինակը իր կյանքի փորձից գիտ եւ պարտը է համարում անփորձ մարտիկին տեղեկացնել թուրք եւ քորդ կովողների խորամանկությունների մասին: Կովսերի ժամանակ նրանք հրեցն գլխարկները՝ ֆեսն ու օղողօք. դնում են սուստ տեղեր. որպեսզի խարեն եւ փամփուշտ վառել տան՝ «Չըլլա թե խաբվիք. դիտակով նայեցնք. եւ հետո զարկեք. եթե երեցողը հսկական գլուխ է»: Թուրքն ու քորդը կովի դաշտում միմյանց քացալերելու համար աղմուկ-աղաղակ են բարձրացնում. մեկը շան պես հայում է. մյուսը՝ զայի պես կախկանձում. նրանց զինվորներից մեկը հանկարծ մոտենում է ձեր շարքերին. վայր է ընկնում. իբր թե խիված է. իսկ դուք ոսթի եք ելում նայելու եւ այդ ապահին ձեզ. են ուղղվում թշնամու զնդակները:

Համանքը: Առանձին նշվում են խմբապետի պարտականությունները: Նա պետք է առանձնապես մտահոգված լինի զինվորներին լավ զենք ու զինապահար տրամադրելու գործով. որը հաջողության շատ կարեւոր պայման է ոլոտվում:

Ըստ ուազմուսույցի. խումբը. որը կարող է լինել 35. 55. 75 կամ 95 հոգուց. պետք է կազմված լինի տասնյակներից. իրենց տասնապետով: Ըստ որում տասնապետին ընտրելու են զինվորները՝ «ձայներու մեծամասնությամբ»:

Հայդուկը պետք է գգույշ լինի ու գաղտնապահ. իր պայուսակում ունենա անհրաժեշտ չափի սնունդը. այլ ոչ թե միայն գենքի պաշարներով մտահոգվի: Տարբեր են առաջապահ եւ. այսպես ասած. թիկնապահ զինվորների պարտականությունները. բոլորովին էլ նույնը չէ նրանց ցերեկային ու երեկոյան երթի կարգը. հանգստի ու ընթացքի վարքը: Դիրքավորումից. առաջ տեղանքի ուսումնասիրությունն է պարտավորեցվում. նահանջելու ու նահանջից խուսափելու. ինչպես

Կերցում հեղինակի անկերծ խոստովանությունն է ու պատգամը՝ հասցեագրված երիտասարդներին. Ես զինորական որեւէ դպրոց չեմ ավարտել. ուստի հավակնություն չունեմ. թէ մասնագիտական գրվածք ԵՄ մատուցում իմ հայրենակիցներին: Ցավում Ե Նրա սիրոց իր իսկ բախտի համար. Նրա՝ համար. որ իր ժողովուրդը հնար չի ունեցել իր որդուս ուսման տալու Եւ կրթելու իր ցանկացած ձեւով. Նրա՝ համար. որ որդին Է Կոհիվների ՄԵԶ մինքել Եւ ուսման ՄԵԶ խորանակու փափառ է անկատար թողել: ՉՇ. ավելի լավ է. իրեն. Անդրանիկին ընթերցենք.

«Կյանքը ինքն է եղած իր փորձառություններով՝ իմ. ինչպես Նաեւ իմ շատ Մը ընկերներուս դաստիարակը: Իհարկե սրտանց կը փափաքեի. որ օր մը... մոտավոր ապագայի ՄԵԶ. գիտապես. մասնագիտական կրթությամբ օժտված երիտասարդներ հաջորդն ՄԵԶի Եւ ավելի ձեռնահասությամբ վարդին մարտական բանակը»:

Սա սրտի ցավն է: Նույն տեղում Նրա խորհուրդն է. հայր լինի Տաճկաստանում. Կովկասում. թէ Պարսկաստանում կամ այլ տեղ. ՄԵԶ է. Նա «իր կյանքը պահպանելու ՄԵԿ միջոց Մը միայն ունի. ՄԵԿ պաշտպան մը. այն ալ զենքն ու զինվարժությունն է»: Զինվորը այն է համարում ամենից զորագործ իր ժողովորդին Մահվան երախից փրկելու համար. ինչը իր ձեռքին է տարիներ ի Վեր՝ զենքը: Լուել. պապանձելը չի օգնել. Խնդրելը չի օգնել: Չի օգնել այն. ինչ եղել է ոչ թէ տարիներ. տասնամյակներ. այլ դարեր. «Սարո ոչ հերոս. ոչ ալ կովող կը ծնի. զենքն է. որ մարդուն կովելու ընդունակություն կուտա Եւ դիմադրության ոգի կը ստեղծե անոր ՄԵԶ: Անոնք. որ կը սպասեն՝ թէ մեր նոր սերունդները առանց զենքի ընտելանալու. առանց զինավարժությամբ պարապելու՝ Վաղը կովողներ պիտի դառնան՝ տղայական միամտությունն է. որ կը հայտնեն. ուրիշ ոչինչ: Այդ կերպով եթե դարեր ալ սպասենք. նորեն երկզոտներ. ստրուկներ պիտի մնանք. Եւ նորեն մեր կյանքն ու պատիվը պիտի ըլլան օտարի ձեռքի խաղալիքը» (Եջ 78):

Կամքն է ամենազոր: Բայց որպեսզի այդ կամքը իրականություն դառնա. Կովելու ունակություն է պետք Եւ զենք: Սա ՄԵԶ հայրենիքի ուղղամամարական փորձի ամփոփումն էր:

Բուլղարահայ «Ուազմիկ» թերթը նույն տարվա հոկտեմբերին «Սարտական հրահանգները» «Դրոշակի» խմբագրության հրատարակած հեղափոխական գրականության ՄԵԶ համարել է «օգտապահության տեսակետից» «ամենեն ուշագրավը». «պարզ. ընտանի լեզու մը՝ սակայն Եւ ուժեղ ու հզոր ոճով մը. որ տարօրինակ ձգողություն մը ունի Եւ խորապես՝ նպավորիչ է...». «Տուրիների հմաստուն գործունեության. ապրված հոյակապ կյանքի» ծնունդ. «արյունական

դժվարությանց ու բազմազան վտանգներու փոթորիկին մեջեն հաղթական դուրս Եկող կուրծքի մը խոսք...»<sup>1</sup>: Եկ գրույկն ինքը. Եւ ուշագրավ այս խոսքները. որպես երեւույթ. պետք է որ զինավարժ ինքնապահութանության խանջը բորբոքեին ասպարեզ իշնող հայ երիտասարդության ՄԵԶ:

Երբ բուլղարահայ թերթը հրապարակում էր այս խոսքերը. Անդրանիկն ըստ երեւույթին կամ այլեւս Ժնևում չեր. կամ պատրաստվում եր այստեղից ՄԵԿնելու: Երկրից հեռու եր: ՄԵԿն ու մյուսն է կարծեր. թէ չկա այլեւս Անդրանիկը. մոռացել է նա կովի դաշտը. իսկ առանց նրա այլեւս ի՞նչ կոիվ: Մտածել է այսպես Եւ սթափեցնող ու ահազանգոր մի կոչ հետեւ «քոլոր հայ հեղափոխական զինվորներին»: Հայերեն այն տակել է Պլուղովի «Ուազմիկ» թերթում<sup>2</sup>. Թարգմանաբար՝ Նաեւ Եկորապական մյուս Երկրների թերթերում:

Անցյալն է ընդհանրացնում Եւ ուշագրությունը օրվա ու վաղվա անեկիցի Վրա բնեուում. «ամփոփենց ուժերինս. կազմակերպվինք. պապանձենվինք Եւ մեր շարքերը ավելի ստվարացնենք.... դարերով մենչքած ժողովուրդ մը. ինչպես է հայը. փոխանակ զանազան բաժանումներու Ենթարկվելու Եւ զանազան վարդապետություններ քարոզելու կամ հետեւելու այս ու այն ընկերային փիլիսոփայություններուն. մեկ Նշանաբան մը պետք է գրէ իր դրոշակին Վրա – հանուն հայրենիքի փրկության վազել սեղմ այս դրոշակին տակ – այս է այսօրվան պահանջը. բավարարություն այսօրվան Հայենիքի պահանջին. իսկ Վաղը. Երբ մեր հայրենիքի պայմանները փոխվելով՝ մեր վրա նոր պահանջներ դնեն. այն ժամանակ կը փոխենք մեր դրոշակին Նշանաբանը Եւ վաղվան պահանջը կը տեղափորենց հոն:

Եթե չեմ սիսակիր. այսպես առաջ գացած Են նաեւ այս բոլոր ժողովուրդները. որոնք այսօր պատ են»:

Զգուշացնում է տարանջատող թերթերից. հրարամերժ քարոզներից: Փոքր է հայոց զանազանը. բոունցըվել է պետք նրան. այլ ոչ տարանջատվել ու փոշիանալ: Թերթերի տխուր Եցերն է կարդում. «ամենեն ցավալին այն է. որ հայը սկսած է իր եղբայր հայը վկանենել. մշեցին՝ բուլանցին. բուլանցին՝ մշեցին. վանցին իր համազարացին. ինչականը՝ դաշնակցականը Եւ դաշնակցականը՝ հնչակյանը: Ինչո՞ւ. ի՞նչ պատճառ կա...

Թշնամին թողով Եւ ներթին մասր կոիվներով զբաղի՛լ. ոճիր է. հայրենիքի մահն է»: Եկ այսպես բազում անզամ. միեւնույն կոչի մեջ միեւնույն միտքը՝ ծայրեծայր. «քողուցեք անձնական ինչ կիրք որ ունիք...»:

Հաճախ լինելով «Դրոշակ» թերթի խմբագրությունում. ձեռքին

<sup>1</sup> 1. Շոամիկ. Պուղում. N 97. 4. 10. 1908. 2. և առ 20. 09. 1908թ.:

«Դրոշակ» ու «Հնչակ» թերթերը, սոցիալիզմի գաղափարախոսության հետ է առնչվել: Թեեւ այդ թերթերը հակոտնեա, նկատել է, որ ամեն Մեկը յուրօքի նոյնը է մատնանշում՝ ընկերավարություն – սոցիալիզմի գաղափարախոսությունը, որը ժնեւի, Փարիզի, Լոնդոնի բազմաթիվ այլ թերթերի էջերում էր: Զգուի է խորամուլս լինել, ըմբռնել ու հասկանալ՝ հայն ու Հայաստանը այդ ուղիղվ պիտի գնան, դրանով էն փրկվելու: Մինչ այս պահը, Մինչ կոչ գրելու գրի վերցնելու ժամը ինքն իր մտքերի մեջ ինքնամփոփ էր եղել, այս պահին է, որ դարձել էր բացահայտ եւ այն էլ, ահա, հրապարակային թերթերի էջերու: Երեւում է, զիտ եւ այն, ինչ սոցիալիզմի մասին Հայաստանում է գրվում ու լույս տեսնում, նրա թե՛ Արեւմբույան, թե՛ Արեւելյան հատվածներում, եւ՝ այն, ինչ Ուսւաստանում ու Եվրոպայում: Նկատում է, որ սկզբունքային կոչված հարցերը շատ են տարրալումել կովկասահայությանը, որ 1905–1906–ի հեղափոխության օրերը տասնում են «Մեր փոքրիկ ուժերին տարանջանտուն», նրան, «որ իսկապես թշնամին փնտուած եւ չի գտած էր»:

Ինքը, Անդրանիկն է սա գրում, անխառն, առանց որեւէ մեկի միջամտության՝ դաշնակցականների, որոնց շարքերում էր դեռ նա, ինչակյանների, որոնցից հետացել էր, բայց նրանց հետ էլ գժտվելու առիթ չեր ունեցել, ինքն է գրում, իր փոքրից ելենելով, չսովորած սովորելու: Հիմացածը լրացնելու անհանգիստ ցանկությամբ: Եվ հանկարծ, ասես ուազմի դաշտում, պողոքիւմով բացականչում է: «Ես դեմ չեմ համամարդկային գաղափարներուն»: Բայց նայած՝ որտեղ, երբ ինչը եւ ինչպես, «բայց սա եւս ճշմարիտ է, որ համամարդկային գաղափարներն Եվրոպայի մեջ իսկ իրենց թերիական շրջանին մեջ են...», ասել է թե՝ դեռ խմորվում են, հասուն չեն ու ավարտուն ո՞չ դրանց ծնող կյանքի պայմանները, ո՞չ էլ տեսություններն իրենց որպես կատարյալ ամբողջություն: Եվ կարծես ուզում է ասել, թե եթե մինչեւ իսկ կյանքն էլ ու գաղափարներն էլ հասունացած լինեն, Կատարյալ, դարձյալ կա հայրենիքը. նրա մահու եւ կենաց հարցը, որը ոչ մեկին ստորադաս չէ, եւ ազգի գյոյության ու բարեկեցության հարցն է, որ բոլորից վեր է եւ բոլորի գերազույն պարտքը. «...ընկերավարական առաջնորդներն անգամ հայրենիքի գաղափարը չեն Ժխտեր—, «Այս օրը, որ հայրենիքին Վտանգ սպառնա օտարեն՝ կը մոռնամ ամեն բան եւ հրացան վերցնելով կովի դաշտ կը հառաջանամ»:

Այս քաղվածքների մեջ մի նո՞ր Անդրանիկ տեսանք, թե ինքն իր մեջ խմորվող, ինքնակրթությամբ ձեւավորվող անձնավորության բացահայտումը: Գերազույնը՝ «հայրենիքի գաղափարն է, այս է նրա համոզունքը, պահանջն ու խնդիրը՝ «սրափինք. սեղմենք մեր

շարքերը..., ազգովին քով քովի գանքը..., քաջությունը, դրամը, գենքը չեն որ կը պակսի մեզի, այլ կամքը, զորացնենք մեր կամքը, եւ վստահ ըլլանք: որ կը փրկվինք»:

Արդյոք բոլո՞յն ասաց: Չխորհեց իր մասին՝ մնա՞լ կուտակցության շահերում, թե՛ հեռանալ: Մնա՞լ հարվածի տակ չընկնելու», ստեղծված պահի ծանրությունից խուսափելու, թե՛ հեռանալ շահելու համար: «Եռանալ՝ Երեկվա սիալներից իրեն անմասն ցուցադրելու», սկսվող նոր գործով մնացած մյուսների համեմատ ավելի մտահոգ եւ շահագրգիռ Երեւալու՝ համար: Կամ գուցե թե՛ հոգնել էր եւ այլեւ տաքուկ տեղ էր որոնում:

Բուլղարական «Վեչերնայա փոշրա» թերթը 1906–ի հոկտեմբերի 25–ին խմբագրական հոդված է զետեղել բուլղարացի Պ. Ռատեև ստորագրությամբ: Թեեւ Անդրանիկի գտնվելու վայրին եւ ժամանակին վերաբերող բառերը նրանում գրված են եզրակացն լեզվով. հասկանալի է դառնում, որ այդ ժամանակ նա գտնվել է արիշն Բուլղարիայում: Ռատեևը հանդիպել է Անդրանիկի հետ, գրուցել է եւ հրապարակային խոսքում նկատել, որ Անդրանիկն ուշագրությունը բնեուում էր հայոց մեջ Երկարակությունները վերացնելու: առկա բոլոր ուժերը զստ հնարավորին ի մի բերելու եւ հակառակորդի դեմ անպարտելի ուժով կանգնելու Երաշխիքների վրա: Անդրանիկայն կոչից քաղած մտքեր են Ռատեևի շարադրանքում. «Ողբերգական իրողություն է», որ այս պահին, երբ Հայաստանը «աւելք ունի իր լավ զավակներուն միաբանությանը», «անոնք բաժնված են թշնամական խումբերու, կը կովին իրենց մեջ անխնա: Ուսանք, սոցիալիզմով ներշնչված... դաշնակցություն կը քարոզեն քուրտ պրոլետարիատի հետ...»: «... Ուժերը կալատվին.... մինչդեռ Հայաստանն ալ իր ճակատագրին տակ կը տկարան»: Եվ այսպես բուլղարական թերթը հայության ներքին Երկարակության փաստն է ակնարկում եւ դրա վերացման համար Անդրանիկի խոր մտահոգությունը: Խնդրի այս կողմը առաջ մղելով, բուլղարական «Դնեւսկի» թերթը Անդրանիկի կոչն իր էցում գտնեղել է «Սիրության համար» խորագրի տակ: Հրապարակմանը կցած խոսքում խմբագրը դարձյալ «Երկարակություններից ու փոխադարձ թշնամանքներից բգկտված» լինելու է տեսնում հայոց ողբերգությունների արմատը: Տույս առիթով «Սակեդոնիո–Օսրինյան» հանդեսը Անդրանիկի գլխավոր ջանքը համարում է հայոց մարտունակ ուժերը ի մի բերելու: Անդրանիկը հանդեսում բնութագրված է «Նշանավոր եւ անխոնջ ոյլուցացուն», որի կոչը դասեր է պարունակում ոչ միայն հայ, այլև իրենց ազգի ազատության համար մարտունող բոլոր հեղափոխականների համար<sup>1</sup>:

<sup>1</sup> Շատրւակ. N1540, 1906թ.: Նախ՝ Շատրւակ. 25. 10. 1906թ.:

Հեռու էր ժնելը: Պետք էր, եթե Երկիր չէր մտնում, գոնեւ մոտակա մի տեղ հանգրվանել: Տեղը 1906-ի աշնանից արդեւ Բուլղարիան էր: Տեղյակ հուշագիրը պատմում է, թե ժնելից զևսցել է Նախ Եգիպտոս, որտեղ Կահիրեաւ եւ Ալեքսանդրիայում հայության Ներկայացուցիչների հետ հանդիպելուց եւ բանակցելուց հետո տեղափոխվել է Բուլղարիա: Ապրել է Նախ Սոֆիայում, ապա ծովափինյա Վառնա քաղաքում: Այստեղից բուլղար ժողովորի ազատագրական պայքարի մեջ ընդգրկված իր հին ու նոր ծանոթների խորհրդով էն օժանդակությամբ փոխադրվել, տեւական բնակություն է հաստատել Մարմարայի ծովափինյա Կալաթա (Ղալաթա)՝ գյուղակում: Հայ եւ բուլղար հոգատար ընկերները օգնել են նրան ձեռք բերելու մի առանձնատեսակ իր շրջակա պարտեզով<sup>1</sup>:

Ամառանոցային Կալաթան հիմնականում բուլղարաբնակ էր (120 տեղացիներ): Ապրում էին նաեւ մի քանի տուն հայեր եւ թուրքեր: Անդրանիկին Կալաթայում հաճախ այցելում էր ջուրը՝ Լազելին, որը բնակում էր Վառնայում<sup>2</sup>:

Անդրանիկը Բուլղարիային անհայտ անուն չէր: Շատ անգամներ էր եղել, որ զենք որոնող հայ Ֆիդայիները եկել էին Բուլղարիա, այստեղ հայթայթելու, իսկ չեղած դեպքում էլ այդտեղով էին անցել Ուսաստան կամ Եվրոպական ուրիշ Երկրները: Զիս չեր պատահել, որ սովորանի հետախույզներից խուսափած հայ ուազմիկներն էին եկիլ, թաքսոց մտել կամ հանգրվանել Բուլղարիայում: Եվ նրանց հրեց հետ բերել էին նաեւ Անդրանիկ անունը, բացի այն, որ մինչ այդ էլ այդ անունը Եվրոպական թորոքն էին նաեւ Բուլղարիա հասցեր:

Թուրքական բոևապետության դեմ մարտնչող բուլղար ժողովորի որդիները գիտեին, որ Անդրանիկը հարկադրված է եղել դուրս գալ Երկրից, զենք Շվեյցարիա եւ գալ իրենց հյուրենակալ Երկրի: Անդրանիկի մասին տեղեկացմանը, ինչպես նկատվեց, իր հերթին նպաստում էր Բուլղարիայի Պուղորիկ քաղաքում լուս տեսնող «Ռազմիկ» թորոք:

Հոդվածները, որոնք տպագրվում էին բուլղարական մամուլիմ, արտահայտում էին հայ ժողովորի զավակին իրենց հղողության մասին բուլղար հեղափոխականների պատրաստակամությունը: Եվ գուցե թե դա էլ հենց ողեւորել է Անդրանիկին ու բերել քախտակից ժողովորի հայրենիքը: Բուլղարիայում մեծ թիվ էին կազմում 1894 եւ 1904 թվականների կոտորածների ժամանակ Սապունից զաղթած հայերը: Բուլղարիան Երկրին մոտ էր, այստեղ ապրու

\* Կոյկու է ևսու միջապար:

1 Ա. Անդրանիկի հուշերը: «Հայութիք», Ա. առ.: 2. ՀՀ ԴՐԱ Տ. 370, թ. 1, գլ. 4 և 92:

հայերի մեջ շատերը ծանոթ էին իրեն: Ծովափինյա Վառնայում է Կալաթայում նա կարուսակեր նաեւ իր հոդագավի բուժումը, որպիսի խորհուրդ էլ տվել էր նրան բժիշկը Վիեննայում, ուր նա այցելած է եղել «Դրոշակ» թերթի խմբագիր Խաչատուր Սալումյանի (Ե. Ակնունի) ուղեկցությամբ<sup>3</sup>:

Անդրանիկը Կալաթայում ապրելով, հաճախ Վառնա, նաեւ Սոֆիա ու Պուղորիկ քաղաքներն այցելելով, ծանոթանում է ինչպես այդ վայրերում ապրող առանձին հայ Մարդկանց, այնպես էլ բուլղարական ազատագրական շարժման գործիչների հետ: Գրականության մեջ այդ գործիչներից հիշատակվում է հատկապես Բորիս Սարաֆովի անունը, որի հետ մտերմացել է Անդրանիկը: Սարաֆովը եւ նրա գործընկերները ընդհատակում աջակցում էին Մակեդոնիան թուրքական լծից ազատագրելու շարժմանը, որի հետ առնչություններ ունեցել նաեւ Անդրանիկը: Հենց այդ շարժման գործիչներն էլ հոգացել էին Կալաթայում Անդրանիկի պատսպարման մասին:

Կալաթայում հանգրվանելու առաջին տարում նա գերազանցապես կուսակցական գործիչ էր: Երեկով Ֆիդային ու Ֆիդայապետը եռանդով կ սկիրվում է իր կուսակցության, Դաշնակցության, բալկանյան կազմակերպությունների եւ նրանց կենտրոնի աշխատանքներին<sup>4</sup>:

Բուլղարիա մտնելու առաջին իսկ օրերից կուսակցական աշխատանքում Անդրանիկին աջակցել, նրա հետ է եղել Ֆիդայական օրերից ծանոթ ու մտերիմ Թորգումը, որի անունը դեռ առիթներ կունենած հիշելու ոչ պակաս կարեւոր հետազա գործըրում<sup>5</sup>:

Բուլղարիայում Անդրանիկը հանդիպել է Սոֆիայի ուազմական դասընթացներն ավարտած Գարեգինը Նժդեհին կազմության գավառի Կզնութ գյուղից էր, եղել էր Պետերբուրգի համալսարանի ուսանող, ցարիզմի դեմ ըմբուտացման համար ուաշնակցական մի խումբ գործիչների հետ դատվել եւ ձերբակալվել: Երեք տարի հետո, ազատվելով բանտից, հանգրվան էր ընտրել Բուլղարիան եւ հիշյալ դասընթացներն ավարտելուց հետո գրանցվել որպես բուլղարական բանակի պահեստի ենթապորություն<sup>6</sup>:

Բուլղարիայում Անդրանիկին եւ Նժդեհին կապողը սկզբում տեղում ուազմական դպրոց ստեղծելու աշխատանքներն են եղել, իսկ հետագա 1 Ժնկութիկի կետը, պատերազմները... 2. թ. 158: Այսուհետ կեդու է թ. թ. Անդրանիկը Կալաթայում կանգ է առել պահանջման համար, ի. 2. թ. 158: Արթուրը կազմություն է առանց ու թ. Օսմական, այլ ուժություն Պարագանելի կանոնը, պատերազմները... 3. թ. 158: Կամաց է ենթական ժողովածուն 189-րդ երու առա Անդրանիկը: 3 Ա. առ.: թ. 152: 4 «Կիևսկայ մատուցություն 1913 թ. 07 1913 Ա. Ե. Տրուպնի, Անդրանիկ ու ուղարկություն»:

5 Նշերտ Հ. Յ. Դաշնակցության պատմության հիշյալը Անդրանիկը կազմություն է առանց ու թ. Օսմական, այլ ուժություն Պարագանելի կանոնը, պատերազմները... 3. թ. 158: 4 «Կիևսկայ մատուցություն 1913 թ. 07 1913 Ա. Ե. Տրուպնի, Անդրանիկ ու ուղարկություն»:

գայում՝ համատեղ մասնակցությունը թուրքիայի դեմ Բուլղարիայի մղած պատերազմին:

Նախապես Դաշնակցության Սոֆիայի կոմիտեն ստեղծած է եղել փոքրիկ մի խումբ՝ պայտօնցիկ և յուրեր պատրաստելու համար: Դրա հիման վրա հետագայում ձեւավորվել է դպրոցը: Այս հարցը, իր պատմությամբ հանդերձ, ընսարկվել է Դաշնակցության չորրորդ համագումարում, որի արձանագրությունները նյութ են մատուցում սույն շարադրանքին:

Դաշնակցության չորրորդ համագումարը կարեւոր է թե կուսակցության, թե Անդրանիկի կյանքում: Կայացել է Վիեննայում, 1907-ի փետրվարի 22-ից մինչև մայիսի 4-ը, 121 նիստով: Խօթք եւ Մուրադ Սեբաստոսին եղել են Սասունի կազմակերպության պատվիրակներ՝ վճռական ձայնով: Պատվիրակների կազմում են կուսակցության նշանավոր դեմքեր՝ Արամ Սանուկյան եւ Համազասպ Բաղդացյան (Սալման) Կասպուրականից, Կահազ Տաթեւյան եւ Թովման Զելայան՝ Ամերիկայից, Սարգիս Մինասյան եւ Ռուբեն Զարդարյան՝ Բալկաններից. «Դրոշակի» Խմբագիր Խաչատոր Մալումյան (Ակնունի), կուսակցության Արեւմտյան բյուրոյի կողմից Ուստում անունով հայտնի Ստեփան Չորյան, Արեւելյան բյուրոյի՝ Երեւանից թիժեն Հակոբ Զավոյան. Ալեքսանդրապոլից՝ հայ Մեծ քնարերզակ Ավետիք Խահակյան, Կարսից՝ հայ քաղաքական եւ դիվանագիտական ասպարեզ մտած ականավոր գրագետ Ավետիս Սիհրոնյան. Նոր Նախագետանից՝ Հայաստանի ապագա Վարչապետ Միմոն Վրացյան, Թիֆլիսից՝ Եղիշե Թոփչյան, Բարումից՝ Միջայել Վարանյան, Կիլիկիայից՝ Միմոն Զավարյան, Նաեւ՝ Սեպուհ, Խանասորի Վարդան, Սեւերեցի Սաքը... բոլորն եւ մնայուն պատմական անուններ:

Զինվորական դպրոցի հարցը պետք է ընսարկվեր 22-րդ նիստում, բայց այդ օրը Անդրանիկի բացակայելով պատճառով հետաձգվել է: Հաջորդ օրը, Անդրանիկի ներկայությամբ, դպրոցի մասին բացառությամբ հանդես է եկել Բալկանյան կենտրոնի պատվիրակ Ուուբեն Զարդարյանը:

Դպրոց ստեղծելու խորհուրդը տվել էր կուսակցության Ամերիկայի կենտրոնը: Ժնեվից Անդրանիկի Բուլղարիա գալով, «գործն ավելի լայն չափեր է ընդունում»: Անդրանիկը կուսակցության Արեւմտյան բյուրոյից, որի դերում հանդես էր գալիս «Դրոշակի» Խմբագրությունը ժնեվում, հանձնարարություն է ունեցել «զենք գետ եւ ուղարկել Կովկաս»: Չուզընթաց, բուլղար բարձրաստիճան մի պաշտոնյայի միջոցով և այլ դպրոց ստեղծելու հարցը դրել է Երկրի կառավարության առջեւ, որը ոչ միայն դեմ չի եղել, այլև խոստացել է աջակցություն:

Առաջին աջակցությունն այն է եղել, որ 400 հայ տղաներ գենքին վարժվելու համար նախապես մտնելու են բուլղար բանակը: Դպրոցը բացվել է 1905-ի նոյեմբերին: Ուսուցումը լինելու եր տասնամյա: 50 աշակերտ: Ընդհանուր ծախսը՝ 50 հազար ֆրանք: Անդրանիկն ասում է, որ դպրոցը եղել է իր Արեւմտյան բյուրոյի եւ Բալկանյան կետրումի ձեռնարկումը: Նա դպրոցի բացումը շատ կարեւոր է համարում, նկատելով, որ «Երկիր գնացած գինվորների 90%-ը գենքի Վարժ չեն եղել»<sup>1</sup>:

Համագումարում քննարկման ընթացքում Արամ Սանուկյանը, Կասպուրականի հայոց ինքնապաշտպանության մարտիկն ու դեկապարը, ճիշտ է համարում դպրոցի հիմնադրումը եւ կարեւոր. «Սեր ընկերների արագը՝ ճիշտ է», ասում է նա: Նախորդ Ելույթ ունեցողը ասել էր. թե՝ Երկրում սով է, իսկ այստեղ այդքան գումար է ծախսվում դպրոցի համար: «Բայց չէ» որ սովին Վերջ տալու արմատական միջոցը. — պնդում է Արամ Սանուկյանը. — քաջաքական կոյիկն է, որի հնամար «հարկավոր է եւ գենք»: Նա գտնում է, որ ծախսը աննպատակ կլինի այն ժամանակ, եթե դպրոց մտած ները հետագայում չարդարացնեն իրենց վրա որված հովաները: Հակառակ դեպքում կարելի է մարտիկներ պատրաստել ուրիշ Երկրների բանակները հայ տղաներ ուղարկելով:

Անմիջապես հաջորդ Ելույթ ունեցող պատվիրակը, որը ֆիդայական մարտերի աշքի ընկենող ներկայացուցիչներից մեկն է, հակառակն է պնդում. պետք է շնորհակալ լինել ուզմական դպրոցը բացող ընկերներից՝ «Այդ Կարգի դպրոցներ պետք է ունենանք. որքան կարելի է շատ»: Ուստումը ասում է՝ «Այդ դպրոցը մեր ամբողջ տակտիկայի մի արտահայտությունն է»: Եղիշե Թոփչյանը՝ ոչինչ վիճելի չկա այդ դպրոցի օգտակարության շուրջը: Հակոբ Զավոյանը դպրոցի միայն կարեւորությունն է ընդգծում<sup>2</sup>: Սնում էր, ուրեմն, որ դպրոցը գործեր եւ լուծեր իր առջեւ որված խնդիրը: Այս հարցի ընսարկումը դյուրին եղավ: Բարդ ու խրին էր այն հարցինը. որը հայտնի է «Կովկասյան նախագիծ» անվամբ: Կովկասում հայությունը ընդգրկվել էր ցարական ինքնակալության դեմ Երկրով մեկ բոևկած հեղափոխական շարժման մեջ: Դա արեւելահայության ազատագրության հովաներ էր բորբոքում: Դաշնակցությունը գտնում էր, որ այսուհետ եական փոփոխություններ պետք է մտցնել Հայաստանի արեւելյան եւ արեւմտյան հատվածների նկատմամբ իր նախկին դիրքորոշումներում: Արեւելքը առաջ էր մղվում: Ուստի այլեւս առաջ վանձ չեր կարող լինել երան նկատմամբ Վերաբերությունը: Հօգուտ Արեւելքի փոխվում է Արեւելք-Արեւմուտք հարաբերակցությունը

<sup>1</sup> «Երեքր Հ. Հայակացութան պահմութեան համար». Խառը 9. էջ 60. 2 և ու. էջ 62:

Դաշնակցության որոշումներում. բարձրացնել Արեւելքին ցուցաբերվող ուշադրությունը եւ պայքարի առավել ուժեղ կուտակել այնտեղ: Անդրանիկը անտարբեր չգտնվեց նման մոտեցման նկատմամբ. ընկալեց այս յուրովի եւ ըմբռուտացավ կուտակցության դեմ:

Հարցի պատմությունը 1905 թվականից է. ոուսական հեղափոխության բնօնման ու ծավալմանը զուգընթաց: Չննարկվել եր Դաշնակցության երկու (Արեւելյան եւ Արեւմտյան) բյուրոների եւ տարբեր վայրերի կենտրոնների ներկայացուցիչներից կազմված բարձրագույն մարմնի՝ Խորհրդի նիստերում: 1905-ի մայիս-հունիսին Խորհուրդը կազմել եր փաստաբուղթ. որը հայտնի է «Կովկասյան Նախագիծ» պայմանական անվամբ: Անդրանիկը ներկա է եղել 1905-ի փետրվարի նիստին. որը տեղերի կարծիքն իմանալու համար հաստատել են ուղարկել եր հակիրճ մի նամակ: Նրանում երկու հարց եր: Անացին. Դաշնակցությունը Կովկասում այսուհետեւ եւս պետք է մաս ինքնապաշտպանական դիրքում. թե հանես է գալու որպես «հեղափոխական միջոցներով քաղաքական իդեալներ հետապնդող հեղափոխական կուտակցություն»: Եթե այս. ապա առաջարկում եր երկանուղ երկրորդ հարցը. «համաձայն եք. արդյոք». որ. առաջին՝ Դաշնակցությունը Կովկասում նպատակ ընտրի դեմոկրատական ֆեդերացիան՝ Ռուսաստանի հետ նրա ֆեդերատիվ կապերը ապահովող օրենքներով հանդերձ: Եվ. երկրորդ՝ տնտեսական բնագավառում «որպես դեկավարող սկզբունք» ընդունել սոցիալիզմը եւ ըստ այդմ կազմակերպել բանվորների ու գյուղացիների պայքարը<sup>1</sup>:

Ինքնապաշտպանությունից անցում հեղափոխության եւ սոցիալիզմին՝ որպես դեկավարող սկզբունք: Խորհրդի ապրիսան նիստում օրակարգի հարցերն են՝ «Տաճկահայաստանի տակտիկան» եւ «Կովկասյան նախագիծը»: Չննության է առնվել. ըստ արձանագրության. Արեւմտյան Հայաստանում մինչ այդ կիրառված գործելակերպը: Թվարկվում են «արշավախմբեր. զինատար խմբեր. սահմանից անցնելու դժվարությունը. ընդհարումներ. մարդկայն. նյութական եւ բարոյական մեծ զոհեր»: Եղել է այս բոլորը. իսկ Եվրոպայում քար լուրջուն է տիրել. նրա կողմից՝ ոչ մի միջամտություն. «Սասունը ապստամբեց. արյուն հոսեց. բայց Եվրոպան տեղից չշարժվեց»: Մինչեր կոիվը մի կողմից է նպատակ եր հետապնդում Եվրոպայի ըմբռուտացումն ու միջամտությունը: Ապա ինչ եր Առաքելոց վանքի ընդվորմը. ինչ էին Սասունի 1903-1904 թվականների ինքնապաշտպանական. օրիասական մարտերը: Ներկաներից Միջայել Վարանդյանը. Համո Օհանջանյանը խստորեն ըննադատում են այդ գործելակերպը: Անդրանիկը Ռուսումի եւ այլոց հետ պաշտպանողնե-

<sup>1</sup> «Հիմքը & Հաշնակցության պատմության համար». հ. Բ. լը 226-227:

թի մեջ է: Բանակեճը զբաղեցնում է մի քանի նիստ: Անդրանիկը գինում է. որ այսուհետ պետք է ուժեղ կենտրոնացնել. ի մի բերել. նախապես աշխատելով կուտակել հնարավոր թվով հրացան եւ 200 հազար փամփուշտ: Եթե ոչ. ասել է. ինքը ձեռնպահ է:

Խորհրդությունը որոշել է՝ տեւական. զգուշավոր միջոցներով. ազգաբժնակչությանը զինվորության կարող դարձնելով «ընդհանուր շարժում առաջ բերել» Կասպուրականում եւ Սասունում: Անա սրանից հետո է. որ ինչում է Ռուսումի առաջարկած «Կովկասյան խնդիր» բանաձեի նախագիծը. որը եւ ընդունվում է: Իմաստն է՝ «Կովկասի հեղափոխական շարժումները ստացել են անսպասելի լայն ծավալ», բոևապետությունը հարգածների. տակ «զգալապես թուլացել է», «Կովկասը պետք է բարձրացնել իր ձայնը». «Կովի ներկա պայմաններում անհրաժեշտ է կովկասյան գործունեության որոշակի ծրագիր»: Եվ Խորհրդի վճարականը՝ «Կովկասյան շարժման հարցում ինքնապաշտպանութեան շրջանից անցնել բուն հեղափոխական միջոցներութեան»: Ըստ այդմ պետք էր մշակել ծրագիր եւ ուղարկել այն Կովկասի դաշնակցական մարմիններին՝ ի դեկավրության: Մինչեւ «Նրա վերջնական հաստատումը առաջիկա ընդհանուր ժողովում»<sup>2</sup>: Այս էլ հենց համառոտակի Կովկասյան նախագիծն է: Անփոփոխ. «Կովկասյան խնդիր» վերնագրով. այն գետեղի է 1906-ին Ժնեվում «Լախագիծ կովկասեան գործունեութեան» հրատարակության մեջ. որի մասցայլ 15 էջը նոյնանուն «Լախագիծ կովկասեան գործունեութեան» փաստաթուղթն է. ընդունված հակիրճ բանաձեի հանգամանալից եւ բազմակողմանի հիմնավորումը<sup>3</sup>: Նրանում հոչակնում էր. որ Դաշնակցությունը «սերտ հարաբերությունների մեջ է մտնում Ռուսաստանում եւ Կովկասում գործող հեղափոխական սոցիալիստական կազմակերպությունների հետ՝ համերաշխ ուժերով մղելու ընդհանուր ազտագրական գործը եւ իր քաղաքական ու սոցիալական դավանակի հետ՝ առաջարկում է իր գործունեության նախագիծը»: Որան հետեւում է հիշատակում վաղնջական օրերից մինչեւ կապիտալիզմ հասարակության ընթացքի մասին. հանգամանորեն բացատրելով սոցիալիզմը՝ որպես անցման հասունացանության միջազգային մասշտաբով: Այդ անխուսափելի փաստի առջեւ է կանգնած նաեւ կովկասահայ. հրականությունը. ուր փոխվում է «հիմնավորը տնտեսության ձեւերը», հայ առեւտրական տարրը զարկ է տվել արդյունաբերության. «Մեթենայական խոշոր ինդուստրիան» է ներմուծված երկրամաս. «ծնունդ է առնում Անդրեկովկասում Եվրոպական մտքով փողատեր դասակարգ բուրժուազիա»: Խնչայես նաեւ «Նրա անբաժան ստվեր» արդյունարիատը: Կովկա-

<sup>1</sup> Ն. Ա. լը 227-228: <sup>2</sup> Ն. Ա. լը 229-230: <sup>3</sup> Ն. Ա. լը 232-236.

սահայ իրականության մեջ նույնաեւ առկա էր դասակարգային հակամարտությունը՝ թե՛ քաղաքներում եւ թե՛ գավառներում: Պայծարի նախապայմանները կան, պետք է հստակ լինեն նաեւ հեռանկարները: Անդրկովկասը կազմելու է «ազատ Ուսասատանի անբաժան, դաշնակից մասը», նրա հետ «ընդհանուր պետական ինքնապաշտպանության, դրամական սիստեմի ու ընդհանուր քաղաքականության» կապերով միացյալ, բայց եւ «իր բոլոր ներքին խնդիրներում» անկան, լինեն դրանք գարչական, տնտեսական թե այլ կարգի: Երաշնավորվում է ուրժամյա բանվորական օր, պետական ապահովագրություն, արհեստների ազատություն, աշխատանքի բորսա, բանվորական վերատեսչություն...»: Եկ այսպէս Ուսասատան ու նրա հետ Անդրկովկասը թեւակոխել են կապիտալի եւ աշխատանքի հակամարտության փուլը, հեռանկարում է միջազգային ասպարեզում լայն տարածում ստացող սոցիալիզմը: Այս պայմաններում հայության ազատագրության հույսը ձուլվում է ինքնակալության խորտակմանն ու համառուսաստանյան հեղափոխական շարժմանը նպաստելու հետ, ինչը որ Կովկասյան նախագիծը պարտավորեցնում է Դաշնակցությանը:

Դաշնակցության դեկավարությունը գիտակցում էր, որ սա կարող է ընկալվել որպես Արեւմուտքի անտեսում կամ նույնիսկ իրաժարում նրա ազատագրության կովից: Այդ ըմբռնմամբ էլ հենց Կովկասում եւ Ուսասատանում Դաշնակցության գործունեության «Ուղեցոյց» փաստաթղթում հատուկ ասվում էր, երբեք աչքաթող չանել տաճկահայերի դուռը յությունը, որը անառարկելիորեն ծանր է, քան հայության մի այլ հատվածինը: Բայց մեկ է, ինչպէս ասուս են, վիճակը գցված էր, տաճկահայության մասին գրություններն ու վճիռները այլեւս առաջաւ կտրական բնույթը չունեին, նախատեսվող եւ թելադրվող միջոցները այլեւս իրամայական պայքարը չեին, մահու եւ կենաց այն կոիվը, որոնք ասպարեզ հանեցին հեռուսների սերոբյան, գերոգ-չավուշյան եւ անդրանիկյան կերպարները: Ահա, օրինակ, հիշյալ «Ուղեցոյցում» օգտագործվում էին, «տարածել տեղեկություններ տաճկահայերի արդի կացության եւ նրանց պահանջների մասին» կամ թե՝ «պրոպագան ընել թուրքերի այմյան ուժինի դեմ»: «հաստատել բարեկամական հարաբերություններ այն ոչ-հայերու հետ՝ որոնք կարող են մեզ դառնալ դաշնակիցներ թուրքիայում»: Ապա՝ դրամական հասույթներ հատկացնել տաճկահայերի ինքնապաշտպանությանը, օժանդակել նրանց գինմանը<sup>2</sup>:

Գործով շահագրգիռ անձինք նկատում էին բառերի տարբերությունը, բայց որոշումներին չին նշանակություն տալիս, այլ գործով էին դատում: Չորրորդ համազումարում Ոստոտմը հիշում է, որ Արեւմուտ-

քում հայությանը գինելը եւ կազմակերպելը դեռ 1890-ից է, բայց գտել է, որ նույնիսկ թե՛ գենք տեղափոխելը, թե՛ գինելը «բավական չեն գործի հաջողության համար»: Ինչո՞ւ: Որովհետեւ եղել է, որ «զենքը տանում էին եւ ձեռնուու գնով ծախում»: Դրանից խուսափելու համար հետո որոշվել է ըլդուակի գենքը բաշխել ժողովրդին, բայց այս դեպքում դարձալ եղել է ծախելը: Ուրեմն, եզրակացնում է Ոստոտմը, «հարկավոր է նաեւ հեղափոխական պատրաստություն»<sup>1</sup>: Այդ գործը պետք էր ըստ նրա, Վերապահել Դաշնակցության տեղական կոմիտեներին: Կուսակցության կազմակերպչի դերն է ընդգծում, անմիջական, անընդմեջ, եռանդուն, տեղում տարվող աշխատանքը: Երբ համագումարում քննարկվում էր «Ապստամբական ձեռնարկի հարցը» Անդրանիկն ասում է, «քարտեսներով անկարելի է առհասարակ ծանրանալ իրականության հետ»<sup>2</sup>: Իսկ առաջարկված որոշման նախագծում, որը Անդրանիկը եւ Կասպուրականի պատվիրակ Վոնայանն էին միատեղ կազմել, դրվում էր բնակչությանը անհապաղ գինելու, զինման գործը վիճեցնելու փորձերը կասեցնելու վճռական պահանջը: Միաժամանակ դրվում էր Երկրորդ դուրս պատրաստի այսպիսի ուժեր ստեղծելու հարցը, որոնք անհապաղ շարժման մեջ դրվելին Երկրի ներքին ուժերին օգնելու համար<sup>3</sup>:

Ի շարունակում Կովկասյան նախագծի չորրորդ համագումարը սոցիալիստական գաղափարախոսությունը էլ ավելի է խորացնում կուսակցության ծրագրային փաստաթղթում: Անաշարկ է արվում կուսակցությունը այսուհետ անվանել «Հայ սոցիալիստ հեղափոխական դաշնակցություն», նաեւ առաջարկ, որ կուսակցության անվան տակ գրվի որպես բացատրություն: «Սիհազգային սոցիալիզմի հայկական բանակ»: Սակայն ձայների մեծամասնություն չստանալու պատճառով հարցի քննարկումը թողնվել է ապագային: Կովկասյան նախագծի ընդունումը Անդրանիկը որպակում է որպես Դաշնակցության իրաժարում «իր բուն խպատակեն, որ էր թթահայ ժողովրդին ազատությունը», այսինքն՝ «կիսով չափ, թաղել թթահայոց դատը»<sup>4</sup>: Ասպարեզում էր բուրժուական կիսատ-պոատ ծրագրերով հանդես եկող Երիտասարդ թուրքերի կուսակցությունը, որը ցավակի թուրիմացության մեջ էր գտել Դաշնակցությանը: Վերջինիս պարագալումները Երիտասարդ թուրքերի ձեւականորեն հակասութանական ելույթների, մեջ տերության վարչական կարգի եւ բուն քաղաքականության եական փոփոխություններ եին ակնկալում: Ուստի սպասելիսները պարագալու երիտասարդը, պարտավորվելով նրանց օժանդակել սուլթանի տիրապետությունը խորտակելու եւ սպասվելիք «քարենուկ» կը խոսի: Խրատարակած Փարիզի «Ապագա» թերթի մեջք Փ. 1921թ. էջ 223:

<sup>1</sup> Ն. տ., հ. 9, էջ 102; <sup>2</sup> Ն. տ., էջ 120; <sup>3</sup> Ն. տ., հ. 9, էջ 122թ; <sup>4</sup> «Զոր. Ալորակ» կը խոսի.

րոգումների» իրականացման գործում: Սա եւս նշանակում էր հայոց Արեւմուտքի ազատության կովի հնավանդ դիրքորոշման փոփոխություն: Եվ դա շարունակվում էր առավել ամբողջական ձեւի մեջ էր մտնում, ահա, Կովկասյան նախագծի ընդունմամբ: Միշչետ Նույն այդ ժամանակ մյուս հայկական կուսացությունները՝ հնչակյաններն ու արմենականները, ինչպես նաև առաջիկայում, 1908—ին, ասպարուց եկած Հայ սահմանադրական ռամկավար կուսակցությունը առաջարկում էին ուժերը միավորելու, թուրք բռնակալների դեմ հայ ժողովորդի ազատագրական պայքարը Միատեղ կազմակերպելու ծրագրը:

Խոռվահույզ տրամադրություն է արտահայտել Անդրանիկը համագումարի՝ Կովկասյան ծրագրի բանավեճերին նկրված Նիստերում: «Ամբողջ հոգինված դեմ դոհի», — իիշել է նա: Եվ չի մոռացել նաև, որ տվյալ Նիստերին նախագահող Խաչատուր Մալումյանը, նոյն ինքը «Դրոշակի» խմբագիր Ակնունին, բողոքել է, ասելով, թե Անդրանիկն ու նրա հետ «քանի մը հոգի պատճառ կը դառնան ժողովին Երկարաձգման»<sup>1</sup>:

Այդ միայն ինքը չեր զայրանում եւ ըմբռուտանում կուսակցական համագումարում: Հոգու խորքում նաեւ պատզամ կար եւ պարտի խոր զգացում:

Մինչ Վիեննա գալը նամակ էր ստացել: Գրել էր Գեւորգ Չավուշը: Գրել էր նա «Սիրելի Պարույրին», Անդրանիկի ծածկանվամբ, եւ հետո էլ Սուրադին, որը Նույնպես Բուլղարիայում է գտնվել: Հայտնել է, որ ինքը է համագումարի պատվիրակ ընտրվել, բայց չի կարողացել գալ ճյուն ու բուժից ճանապարհների փակ լինելու պատճառով: Մնալով Երկրում, ճայնեց տվել է ընկերներին. «... երբ որ ես բաղդ չունեցա զալ եւ ներկայանալ այն ազնիկ ժողովին, ճայնեց տվի ձեզի, որ ներկայանաք ժողովին էլ մեր կողմանեւն խոսիք եւ ծանուցումներ տաք Երկրի մասին, ինչպես այլ որ գրած են Արեւելյան բյուրոյին, որ դուք պետք է ներկայանաք ժողովին էլ խոսիք մեր ու Երկրի մասին, թե Երկիր ինչ է պահանջում...»:

Որպես հիմնական պահանջ նշում է «գերամի ու գելքի» կարիքը եւ պահանջում է, որ ընկերները օգնության հարց դնեն ընդհանուր ժողովի առջեւ: «Եղբայրը ճան, խնդրեմ լավ աշխատեք, որ օգուտ մը հասցեք այստեղ ժողովողեան եւ գործին, որ ազատութե նրանց մեղքեն»: Գրել է այս Գեւորգ Չավուշը եւ հեռվից հեռու իր ընկերներին «ուրացող» պիտակն է ուղարկել որպես նվեր, որովհետեւ Երկիրը թողնելն ու հեռանալը բնութագրելու ուրիշ հարմար բառ չի

գտել<sup>2</sup>: Եվ հենց պայքարի ընկերոց այդ անսերող եւ անզիցու տրամադրությունն է համագումարի Նիստերի ժամին եռացել Անդրանիկի երակներում:

Վիեննական համագումար: Ինչի՞ համար էր կովել եւ ո՞րն էր լինելու այսուհետ նրա կոիվը: Ո՞վ է թիկունք կանգնելու արեւմտյան հային: Միթե՛, ուրեմն, ինքն էլ պիտի մի օր թողներ Արեւմուտքի իր հոգեւրը եւ գնար Արեւելք՝ ցարին խորտակելու կոիվ մղելու համար: Չեր ուզում, որ Ռուսաստան հենարանը հայոց հույսի ոտքի տակից հանվեր: Չեր ուզում, որ գոնե մեկը չիներ, որ իր ժողովորդի անկաման վերջին պահին տեր կանգներ եւ ապագեն լիներ նրան: Եվ եթե եղել է մարդ, եղել է մեկը, որ երբեք առիթ չի ունեցել լինելու եւ իմանալու, թե ինչ ասել է սրտի խոր զայրույթը, ապա թող լսի Անդրանիկի խոսքը, որը նա ասել է Վիեննական համագումարի պատվիրակ ընկերներին, չի ասել, այլ ժայթել է հրաբխի պես, ինչպես որ այն ճայթում է Երկրի ընտերցից:

«Արյուն ձեր ի գույն ձեր: Ըստք ինչ որ կուզեք. բայց Ռուսիո դուները մեզի դեմ մի փակեք: Մենք շատ թշնամի ունենք արդեն. Ռուսիան ալ թշնամի մի ընեց մեզ եւ պատճառ մի տաք, որ Կովկասի հայությունն ալ թրքահայոց Վիճակին Ենթարկվի»<sup>2</sup>:

Խոսք չեր, այլ աշխարհայացք: Եվ ոչ թե լոկ մեկի ու մյուսի, այլ բազում սերունդների: Անդրանիկի կամքը սոսկ այդ խոսքն ասելն ու կրկնելու չեր, այլ ցանկությունը, որ սերունդները հավատարիմ մնային պատզամին:

Համագումարի դահիճում, այնուամենայնիվ, մենամարտը խոսքով եր, նահանջը՝ գաղափարով ու Վճիռներ կայացնելով: Բայց եղել է նաեւ գործնական մի անհաջողություն:

Կանում հայերը մեծ զժվարությամբ գենք ու ուզմամթերք են ամբարել ոչ թե վերջին օրվա, այլ Վերջին ժամկա համար: Անդրանիկը հույս չի ունեցել, թե ապահով վիճակում է գենքը: Վայ է հայտնել, թե թշնամու ձեռքը պիտի անցնի: Այս անգամ էլ Վանի ինքնապաշտանական ուժերի դեկավարը, հայտնի Արամ փաշան է, որ նոյն ինքը Արամ Մանուկյան է, հակառակ կարծիք Եղել, պատմել է հետագայում Անդրանիկը. «Եմ տասնեակ տարիներու փորձառութիւններով համոզված էի, թե այդ գենքերը թշնամին ձեռքը պիտի անցնեին: Արամ Մանուկյանը հակառակ կանդեր, ինձ լսեցին եւ հականեցան Արամին...»: Չորս ամիս անց, շարունակում է պատմել Անդրանիկը, թշնամին բոնագրավում է գենքերը. Արամին է, գտնելով թաքստոցում, ձերբակալում:

1 Ժդոյնք ՀՅ. Դաշնակութեան պատմութեան համար. 7 հատոր. էջ 9-11. 2 Ժդոյնք. Անդրանիկ կը խոսի. էջ 224:

Այս փաստը ծանր է տարել Անդրանիկը:

Կար պատճառ, եղավ նաև առիթ: Զենքերը գրավելու լուրը ստանալուց հետո նամակ է հղում ժնեւ, «Դրոշակի» եջբում հրապարակելու համար, այլևս հրաժարվում է մնալ Դաշնակցության շարքերում: Կուսակցության ժնեւի բյուրոն, համոզելու համար, իր ներկայացուցչին է առաջում Կալաթա, իսկ Թիֆլիսի բյուրոն էլ հապճեպորտելու հետագի վճռից հետ պահի<sup>1</sup>:

Չի զղացել: Համոզվել է, որ եթ մնար, վաղը դարձյալ հրաժարվելու էր եւ էլ ավելի զորավոր պատճառներով. ինչը մնում էր իր ուխտին, իսկ կուսակցությունը փոխակերպվում էր: Վիճնական հայագումարի օրերին էր նա ասել՝ «Ավելի լավ է, որ դուրս մարդ մնամ, քան թե ձեր մեջ աստված»: Ասել էր իրեն մտերիմ Ակնունուն<sup>2</sup>:

Թուրքիայում տեղի ունեցավ յուրատեսակ, արեւելյան տիպի. բուրժուական հեղափոխությունը: Արդու Համիդը զզաց ուժեղացող ճշշումը եւ ընդառաջ գնաց. 1908-ի հուլիսի 24-ին թերթերը հրապարակում էին իր իսկ սուլթանի հայտարարությունը երկրում սահմանադրական կարգ հաստատելու եւ առաջիկայում պատգամավորների պալատի հրավիրման մասին: Եվ այս խաղաղ անցումն էր այն, ինչը երիտթուրքերի գլխավորած բուրժուական հեղափոխությունն է, որը նրանց բերեց իշխանության գլուխ: Խաբեությունն անգամ իր մեջ այսքան կեղծիք չի պարունակել, հայերին էլ մյուսներին հակասա՞ր հրավունքներ տալու հրապարակումներն էին արվում: Որքան միամիտ էին Դաշնակցության ոյուրահավատ գործիչները: Նրանք բարիս բուն իմաստով խրամաճանք էին ապրում. Թուրքիան մտնում է կյանքի նոր փուլ, որը համաշխարհային պատմության լուսավոր եցերից մեկն է կազմելու: Եվ նրանք մոռացության մատնեցին Հայաստանի ազատության եւ անկախության մասին իրենց երեկով արտահայտությունները բավարար համարելով Արեւմտյան Հայաստանի պահպանումը ֆեդերատիվ սկզբունքով ձեւավորվելիք Թուրքիայի կազմում, որը ստեղծված նոր պայմաններում նրանց ծրագրային պահանջն էր իրթիատական կառավարությունից, որքան էլ Վերջինս լսել անգամ չեր ուզում ֆեդերալիզմի մասին եւ սկզբունքորեն դեմ էր դրան:

Եվ այսուամենայիկ երկրում սկսվեցին պաղամենտի ընտրությունների նախապատրաստությունները: Անդրանիկը Թուրքիայի Մայրաքաղաք Կ. առլսից ոչ հեռու իր Կալաթա հանգրկանում լսում էր, որ երեկով իր համակուսակցական ընկերները՝ Դաշնակցության ծաղիկն իր ամբողջական կազմով, օսմանյան խորհրդարանի ընտրություններին ընդառաջ են գնում երիտասարդ թուրքերի կուսակցության հետ

մեկ միասնական բլոկով: Զանի դեռ այս բոլորը հեռվից եր լսում, գուցե մի կերպ կարող էր համբերել: Բայց ինչպես համբերեր, եր իր մոտ հայտնվեցին իր երեկով մտերիմ ընկերները, կուսակցական պարագուները եւ հետո իրեն՝ Անդրանիկին առաջարկ առին համաձայնություն տալ պաղամենտի դեպուտատ ընտրվելու համար: Այ թեզ անսպասելի հարց. Անդրանիկը մտներ օսմանյան պաղամենտ: Առաջարկեցին նրանք Կ. պոլսում, այն օրերին, երբ նա ծպտյալ եկել էր թուրքերի մայրաքաղաքը: «Հասդիպում են նրան Դաշնակցության հեղինակավոր մարդիկ: Հինգ ժամ տեսող զրոյցի ժամանակ, պատմում է Անդրանիկը. նրանք միահամուր ջանում էին համոզել, թե ուրիշ են երիտասարդ թուրքերը, թե նրանք այլեւս թույլ չեն տա, որ հայերի կոտորած լինի: Ո՞ւմ էին համոզում: «Ես հակառակ կը պեղեի», վերիիշել է Անդրանիկը եւ գրի առել երեկով իր խոսքը.

«— Չեմ հավատար, այս գազանները մեզ դարձյալ կը կոտորեն, ըրպեսին դարձյալ կեղծիք է, զուք կը խաբիք եւ կը խարեք մեր ժողովուրդը»:

Եվ ոչ միայն երիտթուրքերի կեղծությունն է վկայակոչել, այլեւ մատնացոյց է արել այն փաստը, որ երկուում, Տիգրանակերտից սկիզբ առնող եւ միչեւ Պարսից սահմանը ձգվող հայաբնակ վայրեռում, 160 հազար զինված քրեր են պահպամ: Ո՞ւմ համար էին դրանք եւ ինչի: Մի թե անցյալի փորձը բավական չէր պատասխան տալու համար: 160 հազար զինյալ դահիճ: Ինչո՞ւ պետք է կառավարությունը սեր եւ հաներձավորեր դրանց:

Երիտթուրքերի գաղափարական մարզանքներով հրապուրված դաշնակցական դեկավարները այլեւս Անդրանիկին չեն լսում: Անդրանիկը մնացել էր իր մտքերի ու գործերի հետ: Ո՞վ էր Անդրանիկը դաշնակցական առաջնորդների համար՝ ընդամենը մի զինվորական, որը հեռու էր քաղաքականությունից եւ քաղաքական կյանքի փրկիչությական ըմբունումներից: Ի՞չ պիտի հասկանար մի մարդ, որը միշտ զենքի հետ էր գործ ուսեցել եւ այն էլ քաղաքներից ու զյուղերից դուրս, սարերի ու լեռների կատարներին:

Այլեւս ինչպես պիտի Անդրանիկին իր ընդումախոսներին հասկացներ, որ երբ թշնամին նույնն է մնում, նրա հակառակորները իրավունք չունեն իրենց տեսակետը փոխելու: Սուլթանը բացահայտվել էր ու բացահայտ էր, երիտթուրքերը իրենց խոստումների մեղրամին էին ապրում: Ապասեք, ամեն ինչ կերեւա վաղը: Այս էր Անդրանիկի միտքը: Իսկ նրա զրոյցակիցը, «Դրոշակի» Խմբագիր Սալումյանը, նույն ինքը՝ Ակնունին, նրան Մեղադրում է հոռետեսության մեջ.

«Ի՞նչ հոռեւսե մարդ ես դուն, երբեք չտեսա. որ թէս մըն պլա-  
վատես զլահիր»<sup>1</sup>:

«Հոռեւսին» լավատես դարձնելու համար խորհուրդ են տալիս  
ծանօթանալ ու զրուցել Կ. պոլսի ոստիկանության ղեկավար Ալի  
փաշայի հետ. տեսնել ու համոզվել. թէ ինչպես, իրոք. ուրիշ են  
երիտրություն եւ ուրիշ է նրանց վերաբերությունը դեպի հայ ժողո-  
վուրդը: Այդ պահին Անդրանիկը չե իմանում. թէ որ Ալի փաշայի  
մասին է խոսքը: Որոնում, գտնում է: Եկ տեսնում է ամենասարա-  
փեին. ոստիկանաբետ Ալի փաշան այն Մարզն է, որը գլխավորէ է  
հայության Կոտորածք Տալվորիկի եկեղեցու մեջ: Հիշում է զարդարելի  
անցյալը եւ նորից գրի առնում ե՛ւ փաստը. Ե՛ւ եղրակացությունը.  
«Ալի փաշան ինձ դեմ կոված էր երեք անգամ: Հիմա կուրեին, որ  
իմ ձեռքս դեմ անոր արյունոտ ձեռքբուն մեջ եւ ցեմ. «Երեկ: Կոփ  
կընեինք. այսօր ընկեր զլանց»: Դա Անդրանիկը չեր կարող անել: Թող  
ասեին, որ նա Տալեյրան չէ, դիվանագիտություն չգիտի: Թող  
ասեին, բայց նաեւ հաշվի առնեին, որ այն. Տալեյրանը չէ. բայց  
գոնե Անդրանիկն է: Եթէ Խորամանկության մեծ վարպետ Տալեյրանը  
կուեր նման պահերին եւ կուրիրդածեր ինչ—որ մի վճռ կայացնելու  
համար, Անդրանիկի պատասխանը պատրաստ էր.

«Եւրը տեսնաք. բայց գնեն ժողովուրդը մի՛ խաբեք»:

Ասում է եւ վիզօն իրեն համոզողներից ազտելու համար մտածում  
միառժամանակ հեռանալ թէ՝ Կալաթայից. թէ՝ Կ. պոլսից<sup>2</sup>: Իսկ մինչ  
այդ հոգու մի պարտք է կատարում: Գրպանում փող է եղել: Իսքն  
եր անձամբ հանգանակել Կալաթայից դուրս զայուց առաջ. գուց թէ  
մի մասն էլ իր անձնականից էր դրել: Գուման է Կ. պոլսի հայոց  
եկեղեցի. հանդիպում նպաստամատույց գործից Դուրյան Սրբազնին  
եւ դրամբ հանձնում նրան. Խնդրում. որ հասցի որպես նպաստ  
Սասունի եւ Մուշի հայոց դպրոցներին<sup>3</sup>: Գրպանը դաշտարկվում է  
127 ոսկուց. բայց հոգին է թեթեւանում: Դրանից հետո նա ճանա-  
պարհվում է եզիպոսու:

Մի՛թ սոսկ Կալաթայից ու Կ. պոլսից էր հեռանում Անդրանիկը:  
Ի՞նչ միտք ուներ դառնացած հոգով ու ծանրացած մտքով մի տեղինց  
մի այլ տեղ գնալը: Դաշնակցության հոգեհայրերից Ավետիս Անդր-  
ռունյանը. որ մինչեւ վերջ էլ իր խոռվածք չխառնեց Անդրանիկի անձի  
նկատմամբ Վաղեմի օրերին տիճած իր անկեղծ հարգանքի հետ.  
գուել է. որ Դաշնակցության հետ Անդրանիկի գժտությունն այնպիսի  
ընկույթ չի ունեցել. որ նստմանի կողմերից մեկի կամ մյուսի «Վարկն

1 Հօր. Անդրանիկ կը խուի. էջ 227: 2 և ա. ու. էջ 227-228: 3 Ըստ Զար Ժա-  
ողումանակի. տես: Արսեն Ժամկունան. Զար. Անդրանիկ կը պատասխան իր հակոսակույթու-  
րուն. Օ. 1945. էջ 72:

ու արժանիքը»<sup>4</sup>: Խոչպե՞ս թէ: Բացատրում է, որ. այն. քանի որ  
Անդրանիկը «սկզբից ի վեր առանձնահատուկ դաշնակցական է»:  
Ախամված չեր լինի. Եթէ ասեր թէ՝ առանձնահատուկ կուսակցական է:  
Անհրունյանը այդ էլ կարող էր ասել. քանի որ այդ միտքը արտահայ-  
տելուց առաջ արդեն կարդացած պետք է լիներ. չեր կարող ուրիշ երաց  
լինել. Փարիզի «Ապագա» թերթում. ապա առանձին լուս ընծայված  
«Զօր: Անդրանիկ կը խօսի» հուշերն ու վերլուծությունները: Անհրունյան  
կուսակցականը պետք է կարդացած լիներ նաեւ նշված հոդվածախումբ  
գրքում Անդրանիկի ողջ կուսակցական եւլույնը բնութագրող չիրս  
տողը. որում եւ կգտներ իրեն տանջող հարցի պատասխանը.

«Ես չեմ կրնար երեւակայել. թէ անհատ մը կըրենա ըլլալ որուէ  
կուսակցության սեփական ապրանքը. զոր ուզածին պէս կարենա  
ծախել ուզած գինովը ու շահագործ այն»<sup>5</sup>:

Եթէ ուրիշ մեկն ասեր ու գրեր սա. տեսաբանները դրան մեծ  
արժեք կոտային եւ պատմահրավակական. Փիլիսոփայական իմաստու-  
թյուններ կվերագրեին հեղինակին: Իսկ սա հիմա անստիճան ու  
անուսադիր մի գինվորական է ասում. որը. հավանաբար. կարդացել.  
մտածել է Անհրունյանը եւ մոռացության տվել: Իսկ Անդրանիկն ասել  
է այն ճշմարտությունը կուսակցության մասին. ինչը հազարներ կուլ  
են տվել ու լուրջամբ տարել. եւ քերն են միայն քաջություն ունեցել  
ուրիշ երաց մտածելու:

Հարյուր եւ հազար անգամ ճիշտ էր Անհրունյանը. գրելով. թէ երբ  
Նա «Սասունի լեռներում թառած... անընդհատ կոիվների մեջ» եր.  
«Կողսակցական կարգապահությունը նրա համար հենց այդ անձնու-  
թյունը ու կատարի ոգորումներն են [եղել] հանուն հայրենիքի ազա-  
տության»: Սա. ինչպես ասում են. փիլիսոփայություն է: Այրեանը  
Անդրանիկն էլ գիտեր. եւ եթէ կուսակցության անդամը հենց միայն  
այդ լիներ. ապա հազիկ թէ հարկ լիներ. որ նա գրի կերցներ ձեռքը  
եւ ժնելյան կենտրոնին նամակ գրեր կուսակցության շարեթից  
հեռանալու մասին: Նրա պատկերացումը միայն դա չի եղել:

Անհրունյանը. փաստը մեղմացնելու համար. գրում է. թէ Անդրանիկը  
ընակ չեղողեց. որ Դաշնակցությունը հաստատեց իր ընկերա-  
վարական սախագիծը Վիեննայի համազումարում. եւ մինչեւ հայ քայլի  
կարգական սամունդը Վիեննայի համազումարում. որ կուսակցությունը հաստատած է մնում թուրքաց  
Հայաստանի ազատագրության գաղափարին»: Չուզենալով հաշուվել  
իրողության հետ. Անհրունյանը պնդում է. թէ համազումարից հետո եւ  
Անդրանիկը մնաց «հավատարիմ դաշնակցական» (Ա. թ.):

Բայց կա եւ մեղալի մյուս երես. Անհրունյանն էլ պետք է մի փոքր  
ավելի ջանք գործադրեր Անդրանիկին հասկանալու համար: Նա շատ  
ավելի ջանք գործադրեր Անդրանիկ կը խօսի. էջ 223:

1 «Հայություն», 1927թ., էջ 75: 2 Հօր. Անդրանիկ կը խօսի. էջ 223:

լավ գիտեր, չեր կարող չիմանալ նրա այն միտքը, որ ուրիշներն ել ասել ու կրկնել են. թէ՝ «իմ կուսակցությունս ժողովուրդն է»: Մի՛ թէ անթույլատրելի եր սա կամ սխալ: Իրականում սա կոնկրետ հարց է: Ուրիշները, մեծամեծ քաղաքագետներն ու տեսաբանները, կուսակցությունը դասակարգինն են համարում, այլ ոչ ժողովորդնը: Ժողովուրդը դեռ ամբողջ ազգը չէ: Բայց Անդրանիկը, իր այդ ըմբումամբ, կարող եր նաև ազգն ասել՝ «իմ կուսակցությունը ազգն է»: Այդ դեպքում, ըստ Ահարոնյանի, ավելի վատ: Դարձյալ, նայած թե ինչպես եւը հասկանում: Եթե ժողովուրդը եւ ազգը ունեն ամբողջական մի խնդիր, մի ցավ, մի հոգս, որը նրանց լինել-չլինելն է, հարց է ծագում՝ կարո՞ղ են տվյալ դեպքում, հանուն ազգին ի մի բերելու, ազգովին պայքարելու, ներազգային տարակարծություններն ու բազմաշահագրգությունները մի կողմ դրվել եւ առաջ մղվել գլխավորը, կենսականը, անհետաձգելին՝ մահու եւ կենաց խնդիրը, այսինքն ազգի գոյապահպանությունը եւ նրա միջոց ինքնապաշտպանությունը: Կարո՞ղ են ե՛ տվյալ, ե՛ համանման մյուս այլ դեպքերում, կուսակցությունների միասնություն լինել ու ներդաշնակում. քանի որ խնդիրը գլխավորն է, իսկ գլխավորը՝ մեկը, համազգայինը: Անդրանիկը եւս իրավունք ուներ բնեցնելու փաստից: Ահարոնյանը միանգամայն ճիշտ կիհներ, եթե «Անդրանիկը հեռացավ կուսակցությունից» ասելով, կոնկրետորեն նկատի ունենար Դաշնակցությունը, բայց ոչ առհասարակ կուսակցականությունը:

Անցնելով կովկասյան ծրագրի իրականացմանը, այսինքն իր գործունեության մեջ առաջ մղելով Արեւելյան Հայաստանը եւ ընդհանրապես կովկասահայ իրականությունը, Դաշնակցությունը միանգամից Վերիիշեց եւ Վերարթնացրեց սոցիալիզմի մասին իր սկզբնափուլի նպատակադրումները եւ միանգամից իրեն հոչակեց բանվորական դատի պաշտպան: Եվ սա եւս Անդրանիկի անհանգստության մի առիթ ծառայեց: Հասկանալի է, որ դա բոլորովին ո՛չ նրա համար, որ Դաշնակցությունը աշխատավորների ազատագրության լոգունգներն ե առաջ մղում: Ո՛չ: Նրան անհանգստացնում են դաշնակցականների պայքարի ձեւերն ու եղանակները, մի կողմից, մյուս կողմից՝ այն, ինչ առում են եւ այն, ինչ որ անում են. Անդրանիկը դրա մեջ սոցիալիզմ չի տեսնում: Նրա պատկերացմամբ սոցիալիզմն ուրիշ է: Իսկ եթե դաշնակցականները պետք է պնդեին, որ հենց այն է սոցիալիզմը, ինչ իրենք առում են եւ անում, ապա նա սկսում է տարակուտել եւ չի թաքցնում նաև, որ եթե այդպես է, ապա ինըն այդպիսի սոցիալիզմ չգիտ եւ չի կարող այն ընդունել: Նրա պատկերացմամբ այդ չափու է լիներ: Նա զարմանում է եւ զայրանում, որ, օրինակ, Բաքվի եւ Բաթումի դաշնակցականները, մտնելով բան-

վորական շարժման մեջ եւ իրենց բանվորների շահերի պաշտպան հոչակելով, գործադուլըներ են իրահրում հայ կապիտալիստների ձեռնարկություններում: Այդ ձեռնարկությունները, Բաքվում ու Բաթումում, փակվում են, դրանից տուժում են, ինչպես բացատրում է Անդրանիկը, հայ բուրժուաները, տուժում են եւ աղքատանում, որից կրծատվում են իր հայության միջոցները, որոնցից բաժին են հանվելու ե՛ Դաշնակցության, ե՛ հայության ինքնապաշտպանության ծախսերի համար: Չե՛ որ դա ուրախացնում է, նշում է Անդրանիկը: «Քաթար գործատերերին»: Մեկը թուլանում եր, մյուսը՝ ուղարկում, ինչ թէ Եթե Դաշնակցությունը կազմել էր իր ընկերավարության դիրքություն՝<sup>1</sup>

Անդրանիկը անտեղյակ չեր սոցիալիզմի ուսմունքին: Չի ել կարելի ասել, թէ համակիր եր ու կողմ: Խնդիրը կողմ ու դեմին չեր վերաբերում, այլ եռթյանը: Նա գիտակցում եր, որ սոցիալիզմը կարող է հաստատվել քիչ թե շատ զարգացած երկրներում: Եվ Հայաստանը, մանականդ Արեւմտյանը, դրա համար բոլորովին հարմար չեր տեսնում:

Անդրանիկը տարակուսանցով ու արհամարհանքով ասում էր, թէ Դաշնակցությունը ընկերավարություն է քարոզում Դարաբաղից մինչ է Սարդամիշ. որտեղ հայ ժողովորի 80 տոկոսը անզորագտ է: Եվ նոյն շեշտով նա ասում է, թէ Դաշնակցությունը ուզում է մինչեւ իսկ թուրքերին եւ թաթարներին ել ընկերավարություն սովորեցնել. «Քրենց օրգանեներու մեջ բոռայով՝ «Աշխատավորներ, միացե՛ք առանց ազգի խտրության»»:

Այս ամենը Անդրանիկի կարծիքով ջանքերի ավելորդ կորուստ եր: Ուստի առանց սրտի ցավի չեր ասում.

«Երասի թէ դաշնակցությունը այս «միացեք» – ի հորդոր կարդար հայ ժողովուրդին եւ փոխանակ 30 տարի ներքին կուսակցական կոիկ մղելու, միություն առաջ բերելու աշխատեր»<sup>2</sup>:

Ուրիշ հոգս չուներ:

Զանազան բացատրություններ են տրվում Դաշնակցությունից Անդրանիկի հեռանալուն: Նաև այն է ասվում, թէ Անդրանիկը ոչ թէ կուսակցության սկզբունքների հետ գտնվեց, այլ նրա մի քանի «ղեկավար անհատներու հետ»: Ու իբրև թէ նա մնաց «կուսակցական հավաքականության հետ», նրա «որդեգրած մեթոդներու հետ», պնդելով, որ նա հավատարիմ մնաց նրա «քաղաքական հավատամքին հետ»<sup>3</sup>: Այսինքն՝ ձեւին առարկեց, բայց ոչ բովանդակությանը: Եվ եթե այս տղողերի հարգելի հեղինակը իրոք գտնում է, թէ

<sup>1</sup> Ձեզ Անդրանիկ կը խուժ. լ. 225: <sup>2</sup> Ա. Ա. լ. էջ 225–226: <sup>3</sup> Մեղու Ընդհանուր մական ցործը. «Պատմ. ֆ. 370. գ. 94:

Արեւուտքի հոգսերից Արեւելքին անցնելը Եւ Արեւուտքի բախտը նրա թաքնված, առայժմ չբացահայտված դահիճներին հանձնելը սոսկ ձեւ է, ապա ավելի վատ: Եւ ո՞ր օրվա համար են, ապա, քաղաքական գործիչների, կուսակցական դեկավարների, ժողովրդի բախտի տնօրինումը իրենց ձեռքը Վերցրած անհատների հեռատեսության մասին բոլոր տեղերում արվող պնդումները: Գուշ թէ Անդրանիկը պետք է կարծեր, թէ դա բոլորի, բայց ոչ Դաշնակցության տվյալ գործիչների համար է ասված:

Հեղինակի այդ բացատրության մեջ մի քան միայն ներելի է Եւ միայն այդքանով հասկանալի: Այդ բառերը ասվել են շատ տարիներ հետո, Անդրանիկի բարմ շիրմի վրա: Սգում էր ամբողջ հայությունը՝ անկախ իր զավակի կուսակցական պատկանելությունից: Դաշնակցության հնօրյա Եւ նորոյա գործիչների համար հսկապես հեշտ չեր հաշովել այն մտցի հետ, թէ իրենց բաժին չունեն Անդրանիկի դիմակի առցեւ ասված մեծարանքի խոսքերի մեջ: Պետք էր գտնել մեղմացուցիչ հասգամանը. ձեւին առաջնություն տալը Եւ բովանդակությունը եւ մղելն էր այդ հասգամանը:

Այն օրերին, եթե երիտրուքերի սահմանադրական հայտաբարություններով հրապուրված դաշնակցականները ընդհատակից մակերս էին դուրս գալիս, Անդրանիկը, այն մի քանի օրը, որ Կ. պոլիս Եկակ, Եկակ բոլորովին զաղունի Եւ ծածկանված տակ, արգելելով, որ բարձրածայն իրեն Անդրանիկ կանչեն, եթե Նա Պարույր էր: Կ. պոլսում մի՛զ հավաքի, խորհուրդ էր տալիս Նա կուսակցական գործիչներին. «Հարունակեցք ձեր անլեզաւ գործունեությունը Երկրին մեջ Եւ Երկրին դուրս»:

Պարույր դարձած Անդրանիկը դիտում էր Կ. պոլիսը: Հայերն աշխույժով մտել էին Նախընտրական պայքարի մեջ, հոչակելի էին օսմանյան Երկրի քաղաքացիներ: Անզամ Մուրադն էր այդ բոլորի մեջ, իր սասունյան կոիվների օրերի հնօրյա ընկերը, որը մինչեւ հսկ ձայներ շահեց Եւ ընտրվեց Նորաստեղ ընտրովի մարմնի մեջ<sup>1</sup>:

Ապշել կարելի էր: Այս աստիճան էլ միամտություն, պիտի մտածեր Անդրանիկը: Եվ եթե ուրիշների վրա չեր կարող իր զայրույթը թափել, նա այդպես իր կարող էր վարվել Մուրադի հետ: Մուրադը ինչքան օգուտ կարող էր բերել դրսում աշխատելիս, իսկ հիմա պետք է ժողովների նստեր Եւ խոսակցությամբ ժամանակ վատներ, մտածում էր Եւ արտահայտվում Անդրանիկը: Չեր հավատում ոչ մեկի խոսքումներին Եւ համոզված էր, որ ուր որ է բոլոր այդ մոլորությունների վերջը գալու է, որը հորդահոս արյունահեղությունն է լինելու:

<sup>1</sup> Այսպէս գոյնի իր պայուն պատմում է Անդրանիկի գործեալոր կահան Թորություն: Տես անդրանիկի կետեց, պատրագմանը և յաշեռը, Բ. 1932, էջ 164-167:

Այդ պատճառով էլ Անդրանիկը, ինչպես ինքը կասեր, այս ասեկությանիցիցից, ուներ իր բուն գործը, որից դարձյալ երբեք ու ոչ մի պարագայում չէր հրաժարվում: Լիներ դա ժնեւում, Բուլղարիայում, թէ մի ուրիշ Երկրում: Ժնեւում, ապա մերը ընդ մերը Փարիզ գելիսին, Նա կապել էր մարդկանց, որոնց հետ հարկ էր լինելու Բուլղարիայից եւ առնչվելու: Իսկ Բուլղարիայում նա դարձյալ ձեռնամուխ եղավ իր այն գործին, որով սկսել էր որպես Ֆիդայի ձեւագորման իր ճանապարհը: Չենքի հայթայրումն էր դա ու կուտակումը, մարդկանց զինելը: Այս ժամանակ սննդի պայուսակն ուսին Կարսով կամ Սիմֆերոպոլով ու Յալթայով Բաթում էր անցնում, որպես հրացան ու փակցիչը բերեր Եւ ըմբշամարտի փոխարեն գինակովի մեջ մտներ սուլթանի ու Նրա տեղական Ներկայացուցիչների դեմ: Բայց տարիներ էին անցել Եւ ընականաբար, գործելու ձեւերը պետք է փոխված լինելին, ինչպես նաև մասշտաբները: Այստեղ, Բուլղարիայում, Նա նախ գենքի պահեստարաններ գտնելու, գենք ամբարելու հարցերն է լուծեւմ: Ապա գենքի հատկային հայթայթումից անցնում է զանգվածային ձեռքբերմանը: Ցուրքիայում Եղած ժամանակ սուլթանի սուորադպներն էին Նրան քայլ առ քայլ հետեւում, որքան որ դա Նրանց հաջողվում էր, այստեղ, հեռվից հեռու, ցարական կառավարության պահենորդական բաժանմունքի Եկոպապական գործակալները: Հայտնի է, որ Բուլղարիա մտնելուց արդեն կարճ ժամանակ անց Օդեսայի պահենորդական բաժանմունքի աշխատակիցները նկատել են Նրան Եւ ձգեմել, որ չվրիպի իրենց ուշադրությունից: Մնացյալը արդեն հետամուս լինելու էր Եւ հետամտելու փաստաթղթերը, որոնք ուղարկվելով սահմանական հասցեներով, պատմում էին թե տեսածի, թէ լսածի մասին: Գիշավոր հասցեն Պետերբուրգն էր, ճյուղերից մեկը՝ Թիֆլիսը, որը Կովկասի ժանդարմական վարչության նստավայրն էր:

Անդրանիկը բուլղարահայերի մեջ որոնել, գտել է կովի պատրաստակամ մարդկանց: Նախ զբաղվել է Նրանց ուազմուսումմամբ: Իրեն ընդառաջ Եկած հայերին ի մի է բերել Եւ կապեր է հաստատել Բուլղարիայի հակառակության քաջամարտիկների հետ: Ընթացքում էլ ձեռնամուխ է եղել հետեւ հայթայթելու Եւ հայթայթաց պատսպարելու՝ կուտակելու, ապա նաև տեղ հասցելու դժվարին գործին: Աշակցում էր նաև Դաշնակցության դեկավարներից Սիմոն Զավարյանը: Աշխատում էն կապեր հաստատել Եգիպտահայ զաղութի հետ, նպաստել Սեբաստիայի Եւ Կեսարիայի շրջաններում ինքնապաշտպանական ուժերի ձեւագորման ու զինմանը: Ներգրավված էր Դաշնակցության ականակրոններից նաև Ռուբեն Զարդարյանը: Ա. Զավարյանը, որ անբաժան էր Անդրանիկից, 1907-ին այցելել է Եգիպտոսում մարդիկ կային.



ԱՆԴՐԱՍԻՒԿԸ ԵԿ  
ՈՒՐԵՑ ԶԱՐԴԱՐՅԱՆԸ

**Խել:** Այս աշխատանքները մարդկանց պարտավորեցրել եր վիճնական համագումարը: Այստեղ եր որոշում կայացվել մասնավորաբան Մեթաստիայի հայության կազմակերպման համար գործիչներ ուղարկելու, մարտական ինքնապաշտպանական խմբեր ստեղծելու միջոցով նրան օժանդակելու մասին: Գործին մասնակցել են նաև հեշտական ներք: Շուտով տեղում, Մեթաստիայում, ստեղծվել է շրջանային օժանդակ մարմին<sup>2</sup>: Տարիներ հետո կազմված փաստաթուրերի ժողովածուում նյութերի հիման վրա եղակացվում է: «Երեւույթները ցուց կուտան, որ Անդրանիկն ու Ուրեց Զարդարյանը ծանոթ են եղած Եգիպտոսի ուխտալներու ծրագիրներուն, բավական խանդակառ անոնցով ու միշտ՝ քաջալերող ուրօք մեջ»: Եվ վկայակույթում են տողեր Ուրեց Զարդարյանի նամակից, որ նա 1907-ի հոկտեմբերի 22-ին հետ է Եգիպտահայության մեջ աշխատողներից Մետրակ

<sup>1</sup> Հերկեր Հ. Զ. Դաշնակցութեան պատմութեան համար, Ա հատոր, էջ 229:  
<sup>2</sup> Ա. Ա. էջ 235:

որոնք իրենց հերթին նըպատակ են հետապնդում «անցնել Եթիկո, մասնավորաբան Մեթաստիայի և Կեսարիայի շըջանները», այստեղ կազմակերպված գործ սկսելու համար: Գլխավորը գինվել էր եւ ինքնապաշտպանության պատրաստ ինելը: Եգիպտոսի հայութը, ինչպես առաջնարդում, կապ ունեին Կիլիկիայի, Զմյուտնիայի (Իզմիրի) եւ Կ. պոլսի հայության հետ<sup>1</sup>: Պահպանվել են Կալարայի հետ նրանց նամակագրության փաստաթուրերը: <Իշտատակություն կա Եգիպտահայ գործիչներից Արշակ Քեհեյանի Կալարա Դայցելության մասին, որտեղ նա կապ է հաստատել Ուրեց Զարդարյանի եւ Անդրանիկի հետ: Այստեղ կայացվել է հաստատյան նամակագրության փաստաթուրերից Արշակ Քեհեյանի Կալարա Դայցելության մասին, որտեղ նա կապ է հաստատել կայութեան նամակագրության փաստաթուրերից Արշակ Քեհեյանի Կալարա Դայցելության մասին: Գործին մասնակցել են նաև հեշտական ներք: Շուտով տեղում, Մեթաստիայում, ստեղծվել է շրջանային օժանդակ մարմին<sup>2</sup>: Տարիներ հետո կազմված փաստաթուրերի ժողովածուում նյութերի հիման վրա եղակացվում է: «Երեւույթները ցուց կուտան, որ Անդրանիկն ու Ուրեց Զարդարյանը ծանոթ են եղած Եգիպտոսի ուխտալներու ծրագիրներուն, բավական խանդակառ անոնցով ու միշտ՝ քաջալերող ուրօք մեջ»: Եվ վկայակույթում են տողեր Ուրեց Զարդարյանի նամակից, որ նա 1907-ի հոկտեմբերի 22-ին հետ է Եգիպտահայության մեջ աշխատողներից Մետրակ

Պահը անձինքն. «...Եթե առաջարկը արդեն վաղուց ծանոթ էր ինծի՝ թե ընկեր Հերոսին...»: Յավ է հայտնվում, որ սկսած հնարավոր չի եղել ակելի վաղ «գործնական հողի վրա դրվել»: Եվ հուսադրությունն է՝ «ապահով եղեք թե կարելին եղածի չափ ըրած ենք ձեզ համար...: Մենք պարտավոր ենք... օգտակար ըլլալ ձեզի՝ ձեր ազնիկ նպատակն իրագործելու համար»<sup>1</sup>:

Եգիպտահայերը հարցեր են բարձրացրել եւ խնդրանցներ ներկայացրել: Ուրեց Զարդարյանը 1907-ի նոյեմբերի 30-ին նրանց պատասխանել է. «... Անշուշտ ցարդ ստացած կը լլաց Վառնայելն ձեզի գրած նամակս, որով հաղորդած է թ. թե ընկեր Անդրանիկի հետ հարկ եղածը գրեցինք Բյուրոյին»<sup>2</sup> ձեր գործերու մասին եւ խնդրեցինք շուտափույթ բավարարություն ձեր պահանջներուն:

Արդ. շատոնց ստացած ենք Բյուրոյի պատասխանը՝ որմտ կը տեղեկանանք, թե բավարարություն տրված է ձեզի»: Խոսքը Եգիպտահայերից դրամական օժանդակություն խնդրելու մասին է: Ո. Զարդարյանը հայտնում է նաև, որ իրենք «Եթիկո անցնելու համար» գտել են «Նոր եւ ապահով» ուրիշ մի ճանապարհ, որից եթե Եգիպտահայերը ուղենան օգտվել, ապա վաղորոք պետք է հայտնեն. նրանց «անհրաժեշտ մանրամասնություններ հաղորդելու համար»<sup>2</sup>:

1908 թվականի գաղտնի մի գրության համաձայն, բազմաթիվ երիտասարդ հայեր. «հայրուրից ոչ պակաս», Բուլղարիայում ընդգրկված են եղել ուղամական դասընթացների մեջ, այն ակնկալությամբ, որ հետազայում կարող են մտնել նաև Արեւելյան ու Արեւմտյան Հայաստանում կամ թե հետո տեղում, Բուլղարիայի զանազան քաղաքներում՝ Կառնայում, Բուլգասում, Պլովդիվում ու Սոֆիայում ձեւագործող ջոկատները, որոնք հարկ եղած դեպքում կկանգնեն են առաջարկության հարձակումների դեմ հայության ինքնապաշտպանության ուղղություն: Գրության մեջ ասվում է, որ 1907-ի նոյեմբերի նշված կապակցությամբ Անդրանիկի նկատմամբ սահմանվել է գործակալական հսկողություն:

Անդրանիկն աշխատել է նավ ձեռք բերել, հայթայթած գենցերը տեղերը փոխադրելու համար: Նա եղել է եւ Վառնայում, եւ Սոֆիայում, ինչպես նաև մեկնել է Շվեյցարիա: Անդրանիկը կապ է հաստատել Կերին Մակեդոնիայի հեղափոխական կոմիտեի նախազահ Գարվանովի եւ նրա ընկեր Բորիս Սարաֆովի հետ: Անդրանիկի հետ առնչվող հայերը Կովկասում ստեղծել են զենքի պահեստներ, որոնցում կուտակել են հրացանն ու փամփուշտը: Գործակալության

<sup>1</sup> Կարեր Հայութից <sup>2</sup> Անդրանիկը և առաջնական պատմության մասնակի թուրքական առաջնորդությունը:

1 և ա. էջ 224-225. 2 և. ա. էջ 235.

կարծիքով տվյալ պահին գործի ներքաշված հայերի հոգսն այս է. որ պայթուցիկ նյութը կուտակվեն. որ իրականացվեն Անդրանիկի գաղափարները եւ որ այդ գեները հասցեն Բաթում: Բաթումից ճանապարհները, թե՛ գործակալները չեն նշել, հայտնի էն. տանըմ էն Կարս. որ այստեղից էլ դեպի Մայր Երկիր. Արեւմտյան Հայաստան, հասցեին: Ոտոմիստեր Անդրեւը, որ ստորագրել է այս փաստաթուղթը. Նշում է, որ գեները փոխադրվում են «Բորժոմ» նավով. որը պատկանում է «հայտնի նավի վաճառական Սանրաշտին»<sup>1</sup>: Մարտին գործակալությունը հայտնում էր, որ Անդրանիկի ձեռք բերած նավի կապիտանն ապրում է Կառնայում, բայց հանկարծակի անհետացել է. որ նա կապ ունի բուղարահայ «Ռազմիկ» բերդի խմբագրության հետ եւ այլն:

Գործակալությանը հայտնի եր նաեւ, որ այդ ժամանակամիջոցում Կիևնայում նիստ է գումարել հայության ներկայացուցիչների. Մի հանձնախումբ, որին մասնակցել են տասներկու հոգի. այդ թվում՝ Անդրանիկը. Դաշնակցության գլխավոր թերթի խմբագրի Ակնունին. Երկու մակեդոնացին: Ըստ որում դրանց թվում հիշատակվում է նաեւ Մեկը. որը կոչված է «Անդրանիկի քարտուղար»: Նշանակում է Անդրանիկը ունեցել է մի գործունեություն, որի համար հարկ է երեւ նաեւ քարտուղար: Խորհրդակցությանը Եկած են եղել նաեւ Դաշնակցության Թիֆլիսի կենտրոնի ներկայացուցիչներ: Հիշատակվում է եւ այն, որ Անդրանիկը Կառնայում ունեցել է Մազմանյան ազգանունով ընկեր, որը Կառնայից նրա բացակայության ժամանակ վարել է գործերը:

ջոկատի ձախ թեփ վրա: Թուրքերի դիրքը ջոկատի նկատմամբ հշխող էր: Վիճակը բարելավելու համար պետք էր նախաձեռնություն: Դրանում հսարամիտ է գտնվում Վաշտապետ Սեպուհը: Նա անսպասելիորեն իր վաշտի մի մասով հարձակման է անցնում, կարողանալով թշնամու համեմատ բարձր դիրք գրավել եւ հրացանազարկի համար գործարար հեռավորությունից. չորս հարյուր մետրից կրակ բացել երա դիրքերի վրա: Խոնդիրը այս եր. որ թուրքերը դուրս մղելին դիրքեցին զրեցից: Սեպուհին աջակցում են Սմբատի եւ Արտաշեսի Վաշտերը: Թուրքերը դուրս քշվելով, գրկում են ջոկատին խիելու դիրքային առավելությունից: Այդ պահին կովի մեջ մտած հինգ հարյուր զինված քրոք հարձակվում են ջոկատի աջ թեփ վրա՝ նրան դիրքից դուրս մղելու համար: Անհապաղ վաշտապետ Նիկոլը մարտի առաջին գիծ է ուղարկում իր վաշտի երկու դասակները, վերացնելով աջ թեփին սպառնացող վտանգը: Դա առաջին անգամ ձեռքները գենք վերցրած անբեղ—անմորու ուսանողների ու մյուս ջակելների մարտական մկրտությունն եր, որոնք մարտի էին գնում. ինչպես դեպի Խանդավառ տոնահանեսի: Սահման մասին միայն լսած լինելով, բայց երբեք չմտածելով այդ մասին:

Տերեկվա երկրորդ կեսին թուրքերին օգնության են հասնում քըրդական նոր ուժեր: Ի տարրերություն նախորդների, նրանք փորձում են ջոկատի շարքերը ճեղքել շղթայի կենտրոնից: Հենց այդ է, որ անմիջապես նկատում է Անդրամիկը: Ի՞նչ միջոցի պետք է նա դիմեր: Վերադասավորելով ուժերը, մի դասակով նա ուժեղացնում է կենտրոնը, որի կրակի հանդիման քրդերը կանգ են առնում, բայց ես չեն դառնում: Մարտերի մասնակիցը հաշվել է՝ ջոկատի 1200 հոգու դեմ երկուսուկես հազար զինված քրոք եւ թուրքական բանակային մեկ գումարտակ: Սեկին' երեք: Նույն օրը երեկոյան Բուրուշ Խորանից թուրքերին օգնության են գալիս լրացուցիչ նոր ուժեր: Եվ թուրքերի կրակը դառնում է փաստորեն անընդմեջ:

Արդեն երեկոյան այսաեւ եր, որ ջոկատի ուժերը ճգված էին մոտ չորս կիլոմետր երկարությամբ, ըստ որում ձախ թեւը. որև ամենից թույլ եր, ստացել էր երկու դասակի համալրում:

Ջոկատն իր հնարամտությամբ եր իր ուժերը ավելացնում եւ կատարելագործում, իսկ թուրքերը շարունակում են դրսից համալրութել: Գալիս է մի պահ, երբ հնարամտությունն էլ է դառնում անզոր: Հույսը մոտ է այն, ինչ Անդրամիկն իր համհարդի միջոցով հայտնում է Սեպուհ, Սմբատ եւ Արտաշես Վաշտապետերին. «Եթե նրանք հանձնեն իրենց դիրքի թեկուց մի մասը, ապա դրանով ծանր վիճակի մեջ կդնեն մեր ջոկատը»: Ստացվում է պատասխանը. «Կամունքը, բայց դիրքերը չենք հանձնի»:

Առանց այս էլ ցուրտ ուշ երեկոյին հաջորդում է էլ ավելի սառնաշունչ գիշերը: Հրաձգությունը. թե՛ւ տատանումներով, չի դադարում: Կամավորները մինչեւ առավոտ պակում են սառը ձյան վրա, չշարժվելով իրենց դիրքից: Զինվորները այնպես արագ են կողմնորոշվում, կարծես ամիսներ առաջ են մտել ուազմի դաշտ. մեռնողներին թաղում են տեղնուտեղը, վիրավորներին անհապաղ հասցնում սանիտարական կայան: Այստեղ ոչ միայն բժիշկ Թովմասյանն եր, այլև հոգատար ու անխոնջ Հակոբ Զավրյանը, որը բուժումից ազատ պահերին ինըն էլ գինվորների հետ եր. նրանց կողքին՝ ոչ միայն որպես բժիշկ, այլև որպես մարտիկ եւ խորհրդատու:

Առավոտյան թուրքերը վճռում են միահամուռ հարձակմամբ թույլացնել ջոկատի դիմացորությունը: Կամավորները մնում են անհողողողոց: Այդպես մարտը շարունակվում է մինչեւ ցերեկվա ժամը 1-ը: Անհայտ եր եւ ֆիզիկական ուժերի եւ զինական պաշարների նվազումը: Ժամանակին վրա է հասնում 5-րդ Կովկասյան գնդի առաջին գումարտակը, որը դիրք է գրավում ամենից ավելի ծամր ու լարված հատվածում՝ ջոկատի ձախ թեւում:

Կամավորները տեսնելով կենսաբեր ոուս զինվորներին, ակամայից հնչեցնում են ողջույնի եւ ուրախության «Ուուա՛ն»: Նրանք ոչ միայն հրացանակիր էին, այլև հրետանավորներ: Անմիջապես քառասուն կամավորներ գնում են օգնելու ոուս զինվորներին՝ հրետանու լավ դիրքեր ստղծելու համար:

Ի վերջո, երեկոյան ժամը 5-ին մոտ, կամավորներն ու ոուս զինվորները միատեղ գրոհի են ենում եւ թուրքական զրբքին այլեւս ոչինչ չեր մնում. բայց կովից խուճապահար խոյս տալը, կովի դաշտում անթաղ թողնելով մեծ բայով գոհկածներ, իրենց վերջին ձիերը, դեղամիջոցները, ահազին գենք ու փամփուշտ:

Ջոկատը ունեցել է տասնմեկ զոհ, տասնհինգ վիրավոր եւ զանազան նյութական կորուստներ: Դա՛ չորս անգամ թվաքանակով հականակորդի առավելի դեմ:

Զորախմբի հրամանատար Զեռնոզուբովը իր ողջույնի եւ գլուխա-

1 «Дневник военных действий первой армянской добровольческой дружинны в Русско-турецкую войну 1914—1915 г.г. (Арагатского отряда «баб-мая 1915г.»). Ст. «Люц», № 121, с. 2, ч. 32, стр. 1—15; Խաբե՛ն և ո. № 121, с. 1, ч. 4, стр. 1—8.



ՀԱԿՈԲ ԶԱՎՐՅԱՆ

կուրյան խոսքն հղում հայոց կաթողիկոս Գետրոգ 5-րդին. «Նոյեմբերի 5-ի մարտում Անդրանիկի հայ կամավորների ջոկատը ցուցաբերեց մեծ սխրանք եւ անձնազոհություն։ Ինձ երջանիկ եմ զգում Ձեր սրբությանը հայտնելով այդ մասին»<sup>1</sup>։

Սամուլը չի խնայում մեծարանցի խոսքերը նոյեմբերի 5-ի մարտը մղած կամավորների հասցեին։

Ուզմարշավի առաջին հոկ օրերից ուսական զորամասերի եւ նրանց հետ հայկական ջոկատի դեմ դուրս են զալիս ուղեկցող զյուղերի գինված քրդերը՝ առանձին հարվածող պարտիզանական խմբերի կամ թէ գինվորական միավորումների ձեռվ։ Որպես կանոն, նրանց հավաքագրում, գինում եւ վարժեցնում էին տեղական ջուրդ առաջնորդները. որոնք եւ նրանց մարտերի են տանում։ Նոյեմբերի 7-ին ջոկատի ճանապարհին դուրս են զալիս Շերիֆ Բեկի հազարից ավելի գինված հեծյալներն ու հետևակայինները՝ շուրջ հազար կանոնավոր բանակային գինվորների հետ։ Ջոկատին մեծ դժվարությամբ է հաջողվում նրանց ետ մղել դեպի մոտակայքի Բաշկալե այլուրը<sup>2</sup>։

Դժվար ճամփաներով, ցրտին դիմանալով ու ձևաբուքը հաղթահարելով, ջոկատն առաջանում է դեպի թուրք-պարսկական սահմանագիծ կազմող Բուրուշ Խորան լեռնանցքը. նույնանուն գյուղի մոտ<sup>3</sup>: Ճանապարհը փակող թշնամու գինվորները երկու անգամ ավելի են կամավորական ջոկատի գինվորներից։ Անդրանիկի հրամանով նըրանք երկայնաձիգ շղթա են կազմում թշնամու դեմ հանդիման. մոտ չորս կիլոմետր ձգվող գծով։ Մարտի հիմնական ծանրությունը իրենց վրա կրում են Սեպուհի. Սմբատի եւ Արտաշեսի վաշտերը։ Զինվորները կովում պարտաճանաչ կատարում են նախապես իրենց ստացած մարտական դասերը։ Եկ դա միայն գիտելիքներ չե, որ պահանջում եր. այլու բացադիկ կամք ու տոկունություն։ Որպես հետևող է այդքան ժամանակ զամված մնային նոնավ ու սաղը ձյունածածկ գտնվին։ Վրա է հասնում ուսական զորամասը եւ նոյնքան էլ տեսում է նրա հետ համատեղ Կոփը։ Անկարող թշնամին վերջապես փախուստի է դիմում։ Անդրանիկի համար տարօրինակն այս է լինում. որ ոուս իրամանատարը, ինչպես նաեւ վերլուծվել է ժամանակի փաստաթղթում, հաշտվում է. որ ուժասպառ թշնամին պարզա-

1 Կողու. ֆ. 2100. գ. 1. գ. 646. թ. 63: Խոե՛ «Արմենական աւտոմատ»։ Մ. 1917 թ. N10-11 և 13-ը 2 ՀՀ Պատմ. ֆ. 402. գ. 1. գ. 13. թթ. 1-11: Խոե՛ «... որագրութիւն»։ Պ. թ. 2: Անյ Կոփների մասն տա Խոե՛ «Հայ կամավորական Ա գույք որագրական սպառությունը»։ Բայց ան Անդրանիկի թիկապահ թիվանի Փափագանի օրագիրը («Հայության 1917թ., մայիս 30-ի N34-ից շաբաթակար»)։ Խոե՛ գեւերան նազարետովի հերիական Ամուսնուկի հրամանառութեան տակ գրելող Խումանակ 1-ին կամավորական խմբի գրելութեան կարճառու Անդրանիկից։ Ն. առ. N36. 1. 06. 1917թ.: 3 ՀՀ Պատմ. ֆ. 402. գ. 1. գ. 13. թթ. 10-11:

պես լքի կովի դաշտը ու ճողոարի։ Երան այդաւես ել առեղծված է մնում. թէ ուս եւ ինչու եր պետք այդ «մեծահոգությունը»։

Լավ դաս ստացան անմեղ, անփորձ տղաները. իսկական մարտական մկրտություն. ծանր. բայց ոչ թէ հիմաթափեցնող, այլ զենք վերցնելու ուստին մինչեւ վերջ հավատարիմ մնալու ոգով տղորորդ։

Երբ թուրքերը, պրիժառությամբ լեցուն, հապճեա հրետանային կրակ են բացում Բուրուշ Խորանի լեռնանցքից. անմիջապես մարտի են ելում թէ ջոկատը. թէ ուսական հրաձիգների գումարտակը՝ 1-ինը ձախ կողմից. 2-րդը՝ աջ։ Կոփների ընդհանուր հրամանատարությունը ստանձնում է զնապետ Զայցեւը. որպես բոլորից բարձր գինվորական կոյում ուսեցող։ Ժամանակին դեպքերի նկարագրությանը նվիրված փաստաթղթում գրվել է։ «Անդրանիկից իր արժանի օգնականներ Սեպուհի եւ Սմբատի հետ միասին գինավորում է թուրքերին շրջապատող զորամասերի առաջնադաշտում. Թուրքերը չեն դիմանում կամավորների համեռաշն ճնշմանը եւ կարճատեւ հրաձգությունից հետո կամավորները. մեր (այսինքն՝ ուսական զորամասի-Հ. Կ.) հրետանու աջակցությամբ. գրուում են թուրքերի դիբերի վրա։ Թուրքերը խումապի մատնված. սարսափահար փախչում են տարբեր կողմեր։ Եկ դաշտի վրա նրանց անթաղ մտելներն են»<sup>4</sup>։

Նոյեմբերի 7-ի երեկոյան ամբողջ ջոկատը հանգիստ է առնում Բուրուշ Խորանում։ Հաջող օրը շարժվում է դեպի Խանիկ գյուղը եւ ուղարկվում առաջ՝ Կաշկուլի լեռնանցքը գրավելու։ Ամսի 8-ի երեկոյան ժամը 5-ին մոտ ջոկատը գրավում է Կաշկուլ գյուղը եւ մի պահակային խմբով լեռնանցքում կանգնում հետախուզության։

Կոփների սկիզբ ու միանգամից երեքօրյա անընդմեջ. լարված. անհավասար մարտ բնության դաժան պայմաններում։ Խոկ օրերի հաշվետու-Նկարագրող փաստաթղթը հուշում է. «Երեքօրյա այդ մարտերում կամավորները չոր հացից բացի ուրիշ պնուսդ չեն ստացել. ջրի փոխարեն եւ ձյունն եր։ Չնայած այդ գլկանքներին. ջոկատի տրամադրությունը կիանալի էր»։

Նոյն այդ օրը. Նոյեմբերի 8-ի երեկոյան մթնշաղից առաջ. Խանիկ է զալիս գեներալ Նազարետովի գրուամասը. որը թուրքերին շարուել էր Խանասորի լեռնանցքում։ Հետեւ այդտեղ եւ կամավորների ջոկատը լրիվ կազմով կցվում է գեներալի դեկավարած զորամասին։

Ուր որ անընելչ կամավորներն այստեղ են. Խանիկում. Կաշկուլ լեռնանցքում պահակության եւ հետախուզության դիբում կանգնած։ Եկ դարձալի հակառակի նման ուժգին ցուրտն ու սառնամանիքն են իրենց զգալ տալիս. Երբ նաեւ պետք էր դիմանալ սննդի սուր-

1 ՀՀ Պատմ. ֆ. 121. գ. 2. գ. 32. թթ. 15-19: Խոե՛ և ու. գ. 45. գ. 1. թթ. 23. 24.

կարիքին. տղաներն իրենց էին առանց աղ ու թթվամորի. կիսահոլմ բողոք հաց պատրաստում. իսկ երեմն էլ բավարարվում պարզապես աղանձով<sup>1</sup>:

Նոյեմբերի 16-ի առավոտյան ջոկատը Կաշկուից ուղեւորվում է Ղոթուր, ուր հասնում է Երեկոյան ժամը 5-ին եւ տեղավորվում գյուղի բնակիչների տներում: Այդ ընթացքում գյուղ է գալիս Նազար-բեկովին Ենթակա կազակային գունդը: Հաջորդ օրն արդեն պարզ էր կամավորների եւ կազակների միացյալ խնդիրը՝ գրավել Ղոթուրի կիրճ. որը դեպի Կան տանող միակ անցուղին էր. ձգվում էր խոյից վեցի քան հարյուր կիլոմետր Երկարությամբ:

Ղոթուրը հիմնականում թուրքաբնակ գյուղ էր. որտեղից Վերջին մարտերից հետո թուրքերը գաղթել էին Ռազի. որը պաշտպանության համար ավելի լավ դիրքերում էր գտնվում: Նրանք ոուսական զորամասերի մոտենալուց առաջ այդ կողմերում էին եւ ասես սպասում էին նրանց: Նոյեմբերի 17-ին, առավոտյան, առաջինը նրանք էլ կրակ են բացում գյուղում տեղավորված գործի վրա: Այդ ժամանակ էլ ստացվում է հրամանը. ջոկատը պետք է առաջ շարժվեր. գրիներ մոտակայքի բարձրունքը էլ Ռազիի մերձակայքի ոհրենք. որտեղ թուրքերն էին ամրացել: Չոկատն անմիջապես շարվում է: Առաջին երեք Վաշտը հրաման են ստանում շարժվել դեպի բարձրունքը. իսկ չորրորդը՝ Ռազի: Եկ անմիջապես սկսվում է երթը. չնայած հեռվից. բարձրունքներից թուրքերը նրանց վրա հրետանային կրակ են բացում: Առջևից. հեջյալ կամավորների գլուխ անցած զնում է Անդրանիկը. բարձրունքի կողմում թուրքերի դեմ ուղղած հրետանային կրակով հարթելով ջոկատի ճախապարհը:

Թուրքական գորամասը եւ քրդական գինված ուժերը. լավ դիրքավորված՝ համառորեն դիմադրում էին: Ռազի գյուղը համեմատաբար հեշտությամբ գրավվում է. բայց կիրճը դեռ լրջորեն դիմադրում էր: Մարտը հաջող առաջ տանելու նպատակով քրդերը նոր ոհրենք են ստեղծում մոտակայքի Հարաթել գյուղի տակ. իսկ ասկյարներն էլ (բանակային գինվորները) գրավում են գյուղի Վերին բարձութեաները: Հենց այդ կողմերի վրա էլ ջոկատը կենտրոնացնում է իր ուժերը և քրդերին նեղ գցում: Վերջիններս ստիպված վեր են ծածանում Երկու սպիտակ դրոշ: Պարզ երեւում է. որ դրոշների թիկունքում քրդերը են են քաշկում. ամրող Երկարությամբ թողնելով իրենց գրաված ոհրենքը:

Հարաթելում նոյեմբերի լուս 19-ի գիշերը տեղի է ունենում մի դեպ. որը հիշելու է եւ անհետեանք չի մնալու կորիվների հետագա ընթացքում: Հայկական Սաթմանց գյուղի ուսը. ինչպես պատմվում է

փաստաթղթում. Խորհրդավոր մի նամակ է հանձնում Անդրանիկին. խորհրդավոր, բայց եւ պատերազմական պայմաններում ոչ բացահիկ: Նամակը հղել էին Շամսեկ. Սլած է թաքուր քրդական աշխրեթների չորս բեկ պարագալիքները՝ Օսմանը. Հուսեինը. Նազիր եւ Սահունը. թուրքական իշխանությունների կողմից ճանաչված անձինք. Քինքաշիները: Շուտով նույն հարցով եկել. Ներկայացել է նաեւ հինգերորդը՝ Եզիդ Զհանգիր աղան: Սարդիկ չեն կամեցել կովել ոուսական բանակի դեմ եւ չնայած նրան. որ իրենց բարձր հովանավորներից ստացել էին 500 հրացան զորք կազմելու եւ կովելու համար. կամեցել եւ հանձնվել: Սյուրերում պատմվում է եւ այն մասին. որ երբ ջոկատը մտել է Հարաթել. քրդերը սպիտակ դրոշ պարզած ընդուած են եկել ոուսական կողմին՝ իրենց գնդերը հանձնելու կարգի վերաբերյալ բանակցելու առաջարկով:

Բանակցությունները տեղի են ունենում Հարաթել գյուղում. երբ կովի այդ հատվածում մարտերն ավարտված էին. թուրքերը՝ պարտված: Անդրանիկն ընդունում է քուրդ առաջնորդների առաջարկը: Գերի հանձնված հիշյալ քուրդ քեկերին նա անհապաղ ուղարկում է ոիկիզիայի հրամանատար Նազարբեկովին:

Անդրանիկին հայտնի էր. որ քուրդ պարագալիքները իրենց տրամադրության տակ շատ գենք ունեն. զինված ու անզեն քրդեր: Ուստի նա խնդիր է դնում. որ նախ նրանցից վերցվի գենքը: Նազարբեկովին ոա չի հաջողվում: Երբ այդ մասին նա հայտնում է Խոյում գտնվող Զեռնողությունին. Վերջինս պահանջում է. որ քուրդ ցեղապետրին ուղարկեն իր մոտ: Բայց այստեղ. Խոյում էլ. հայտնվում են կորպուսի հրամանատարին պյոյի եկած ուրիշ հայտնի քուրդ հեղինակություններ. որուք համոզում են. որ քրդերը հավատարիմ մարդիկ են եւ միաք չունի նրանցից գենքը վերցնել կամ էլ ցեղապետրին պատասի պահել: Եկ հինգն էլ մեծահոգաբար ազատ են արձակվում. առանց գենքերն իսկ հանձնելու:

Հատ չանցած հայտնի է դառնում. որ վերադարձած քրդերն իրենց ցեղակիցների գլուխ անցած մարտնչում են ոուսաց զորքի դեմ Խոյից ոչ հեռու գտնվող Դուզ Դաղ լեռան տակ: Եկ այդտեղ էլ գործի են դնում 3600 հրացան. որոնցից Երկու հազարը ունեին պատերազմն սկսվելուց առաջ. իսկ հազար վեց հարյուրը էլ թուրք հիշխանություններն էին տվել նրանց. որ էլ ավելի հաջողությամբ նրանք կոտորեն հայերին: Դրանք էին այն հրացանները. որ Անդրանիկն ասում էր. թե պետք է ետ վերցնել. բայց նրան լսող. չեղակ: Իսկ փաստաթղթում այդ մասին ասում է. «Դրանով իսկ նրանք Անդրանիկին վճարեցին իրենց գերելու համար. իսկ ոուսա-

1 Ա. Ա. բ. 20-22:

կրամանատարությանը՝ իրենց կեղծ հավաստիացումներին հավատալու<sup>1</sup>:

Այդ ժամանակ կամավորների կոիվները դադարել եին: Չոկատը գեներալ Նազարբեկովին ենթակա զրոյանմբի կազմում մտնում է Շարաբխանե գյուղը:

Նոյեմբերի 20-ից 25-ը ջոկատը գտնվել է Սարայ քաղաքում: Ուզամական գործողությունների օրագրում առանց մանրամասնությունները բացելու ասվում է, որ այդ ժամանակամիջոցում «ջոկատի վրա դրվել են մի քանի լուրջ պարտականություններ, որոնք կամավորներ կատարել են հաջողությամբ»: Ինպես երեւում է, այդ օրերին ջոկատը հիմնականում կանգնած է եղել հետախուզական դիրքում: Սարայ հայ եւ ասորի բնակչություն է ունեցել: Անդրանիկը միաժամանակ հօգածել է, որ քաղաքում նորմալ կյանքը չխանգարվի եւ իր առաջին պարուն է համարել հսկողություն սահմանել աետական պահեստների վրա:

Ամսի 25-ի ցերեկը հայտնի է դառնում, որ թուրք-օրդական զորքը եւ կուտակվել Սարայից քաներեկու կիլոմետր հետափորության վրա Մոլլա Հասան գյուղի մոտակայքում, որոնք հարձակում են գործել Ասուրլի գյուղում գտնվող ուստական զրոյամասի առաջապահ կազմակային ջոկատի վրա<sup>2</sup>:

Նոյն օրը երեկոյան, կարդում ենք ուզամական գործողությունների օրագրում, գեներալ Նազարբեկովը հրաման է արձակում. ըստ որի կամավորների 1-ին ջոկատը, որը հրամանում գումարտակ է անվանված, ուստի զինվորների երեք հարյուրյակի հետ միասին, նրա երկու լեռնային թնդանորով հանդերձ, գնդապետ Զայցենի հրամանատարությամբ հաջորդ օրը անցնում է Ասուրլի. թշնամու հարձանատարությամբ հաջորդ օրը անցնում է Սարայի. թշնամու հարձանատարությամբ հաջորդ օրը անցնում է Ասուրլի կուլական պահանջման արժանի պատիժ տալու համար: Երեկոյան, կուլ գործած զրոյամասին արժանի պատիժ տալու համար: Երեկոյան, տեղ հասնելուն պես, կամավորների ջոկատը զբաղեցնում է հետախուզական դիրքեր: Նոյեմբերի 27-ի վաղ առավոտյան ընդապետ Զայցենը գործերը մարտական կարգի է բերում. դիրքերի կենտրոնում, բարձունքի վրա հարմարեցվում են թնդանորերը, նրանց աջ կողմում դիրքավորվում է կամավորների 1-ին վաշտը, Սմբատի հրամանատարությամբ: Զայն կողմում՝ 2-րդ եւ 3-րդ վաշտերն են՝ Սեպուհ Առաքյանի հրամանատարությամբ: 4-րդ վաշտը, Նիկոլի հրամանի կազմական չորսհարյուրյակի հետ մնում է պահանջման արժանի պատիժը: Կազմակային չորսհարյուրյակի հետ մնում է պահանջման արժանի պատիժը: Զբարեն ու թուրքերը տեղավորված են մոտ յոթ կիլոմետր հեռավորության վրա Սերկերին. Չարուրախ, Ասպասարիկ եւ Ղարա-

1 «Պատմ. ֆ. 121. գ. 2. գ. 32. թթ. 15-19: Նախ՝ և աւ. գ. 45. գ. 1. գ. 1. թթ. 26-27, 30-31: (Ըերեղողությունների կամականական առաջարկությունները՝ Անդամ է փաստաթուրքում Հ. Կ.): 2 «Պատմ. ֆ. 121. գ. 2. գ. 52. թթ. 36: Նախ՝ «... օրագորոխիկը. էջ12:

այլզ գյուղերում: Ուստական հրամանատարությունը ստույգ տեղեկություններ չի ունեցել հակառակորդի կուտակումների մասին: Բայց հեռադիտակով պարզ երեւացել են նրանց շարժումները եւ մանականդ ուժերի կենտրոնացումը Սերկերիու գյուղում: Զայցենը ենթակա հրամանատարներին բացատրում է, որ Խնդիրը «քրութիւն ու թուրքերին պատժելն է եւ Ասուրլիից եւ Չարուրութիւն»: Հրամանի համաձայն, առանց ժամանակ կորցնելու, Անդրանիկն իր չորրորդ վաշտի հետ Ասուրլիից առաջ է շարժվում եւ հակառակորդի ուժերից մոտ երկու հազար քայլի վրա, ինչպես ասվում է փաստաթղթում. շղթայական դիրք է գրավում: Թուրքերը անմիջապես կրակ են բացում: Ակսվում է եղանակուն փոխիրաձգությունը: Այդ պահին կամավորներին օգնության են հասնում թիկունքից ուղարկված կազմակային դասակը եւ երկու հրանոթները: Վերջիններս կրակի տակ են պահում գյուղը: Թուրքերն ու թուրքերը ստիպված են լինում նահանջել դեպի Վերին Մոլլա Հասան գյուղը, որ նոյն գծի վրա եր: Կամավորներն ու կազմակները ներդաշնակ կրակի տակ են վերցնում փախչող թուրք եւ թուրք գինվորներին եւ նրանց հետքով մտնում գյուղ: Սակայն գյուղ մտած գինվորների վրա հանկարծ տներից մեկից կրակ է բացվում: Թուրքերն են, մի սպա եւ հինգ ասկյար, որ չիասցնելով ճողովրել, մնացել են ծուղակում: Անդրանիկը, ասվում է փաստաթղթում, մի կնոջ ուղարկում է այդ տունը, թուրքերին հանձնվելու առաջարկով: Բայց կրակը ոչ միայն չի մարում, այլ շարունակվում է կարծես ավելի ուժգին: Անդրանիկյան կովի օրագիրը կազմողը շարունակում է. «Տուն մը կրակի տվինք անոր համար, որ 4-5 թուրքեր այդ տան մեջ մտած անձնատուր չեն ուզեր ըլլալ»: Թշնամու կորուստների թիվը՝ 70-75 է: Ըստ որում թե՝ դեպքերի հայերեն օրագրողը եւ թե ավելի վաղ կազմած ուստերեն ուզամական օրագիր հեղինակը նշում են ջոկատի ընդամենը մեկ զոհ եւ մեկ վիրավոր<sup>1</sup>: Նշանակում է հայ գինվորները այլեւս կոիվների սկզբ անփորձները չեն:

Եղել է նաեւ նախաձեռնությունը: Երբ չորրորդ վաշտը, պահեստից դուրս գալով, հարձակում է սկսում Սերկերիու գյուղի վրա, վաշտապետ Սեպուհը իր մարտըներների գործը հաջող եւ ապահով տեսնելով, «իր սեփական նախաձեռնությամբ» հարձակվում է եւ գրավում Դարագյող գյուղը<sup>2</sup>:

Նոյեմբերի Վերջին օրերին իրականացվում էր համակորպուսային այն հրամանը, ըստ որի զրոյամասերը երկու տարբեր ճամփաներով ուղեւորվելու են դեպի Վան, որը սովորական երթով մի քանի ժամկան ճանապարհ էր: Սեպ Խոշաբի կիրճով եր ընթանում, մյուսը՝

1 «Պատմ. ֆ. 121. գ. 2. գ. 32. թթ. 39-43: Նախ՝ «... օրագորոխիկը. էջ12: 2 «Պատմ. ֆ. 121. գ. 2. գ. 32. թթ. 43:

Ղոթուր եւ Ռազի բնակավայրերով պիտի դուրս գար դեպի Սարայ մեծ գյուղը եւ Արճակ լիճը, որտեղից այլեւ գիծը դուրս էր զալիս Կան: Հենց դրան էլ Կորպուսի զորամասերը պատրաստվում էին. Նրանց մեջ նաև Անդրանիկի ջոկատը: Կամավորները անհամբեր ու սպասողական, պատրաստ էին ուզած մարտերին. Միայն թե օր առաջ, ժամ առաջ հասնեին հարազատ Կան:

Եվ հանկարծ, բոլորովին անսպասելի ու անհավատալի կերպով, հայտնի է դառնում համախանակային հրավանը Կովկասյան ռազմական հարավային այս գծից ոուսական զորքերը ետ քաշելու մասին: Առաջընթացից՝ կտրուկ նահանջ: Լազարենկովն իր մոտ է հրավիրել իրեն Ենթակա ստորաբաժանումների սպասերին: Ըստեցել է Զենոնզուբովի հրամանը. թշնամին այսքան ու այսքան զորքով, թնդանոթով ու գեղացրով հարձակման է պատրաստվում, ուստի գիշերը եւեր պիտի նահանջի եւել Ղոթուր-Սարայ ճանապարհով<sup>1</sup>: Դրա լուրերն ասում էին, թե Թուրքերն ավելացնում են իրենց Կուտակումները Կովկասյան ճակատի մյուս հատվածներում. Սարիղամիշից տակ էլ սկսելի է երկու բանակների մեծ ընդհարում: Եվ այդ է հրականը, որը հարկադրում է առաջնադաշտան հարավարեւմոյան այս գծից. ինչպես նաև ամբողջ Հարավային Աղրբեջանից զորքերը ետ քաշել:

Հրամանն ընդհանուր էր: Բանակային մյուս ստորաբաժանումների հետ Անդրանիկի ջոկատը եւս բունում է Ետղարձի ոչ այնքան դժվարին, որքան անցանկալի ուղին: Դեկտեմբերի 2-ին ջոկատը մտնում է Ղոթուր. ապա, ամսի 7-ին. Բելաջուկ, որտեղ կանգ են առնում մինչեւ ամսի 24-ը: Ետղարձի ճանապարհին թուրքերը ոուսական բանակին բջկտելու. հյութելու առիթը բաց չէին թողնում: Այնպես որ. եթե երեկ ջոկատը ոուսական զորամասերի հետ միատեղ մարտեր էր մղում առաջ գալու. իման նա նույն անում էր շուտափույթ ետ դառնալու համար: Կոիզմ մնում էր կոիզմ. իմաստն ու նպատակն էին տարբեր: Այդպես դեկտեմբերի 25-ին առջերի զորամասերը մտնում են Խոյ, որտեղից հաջորդ օրը ճամփա են բունում դեպի Չուլֆա: Նրանց հետ եր նաև Անդրանիկի ջոկատը: Այդ ընդհանրության մեջ կար խոր տարբերություն՝ թե ըստ բովանդակության, թե ըստ ձեւի: Ամեն մեկը լուրովի եր նահանջում:

Եվ որքանո՞վ էր անհրաժեշտ այս նահանջը: Սարիղամիշի տակ, այո՛, մեծ ճակատամարտ էր. երկու կողմերն էլ մեծաքանակ զորքեր էին կուտակել եւ դեռ կուտակում էին: Սակայն որտեղից է հայտնի. որ հարավային այս գծից ետ քաշված զորքերը կոիզմերի ընթացքում տարբել են Սարիղամիշ: Ետ քաշված բոլոր զորամասերը, այդ թվում

նաև հայկական ջոկատը. պարզապես ետ են քաշվել Ելման դիրքերը եւ այնտեղ էլ պահպել սպասողական Վիճակում: Շատ ափսոս, որ մենք խորամուխ չենք եղել. թե՛ իսկ ուր տարբեցին թուրքական զորքերը: Չե՛ որ մի կողմից նահանջը մյուսի ձեռքերն եր ազատագրում եւ հոգս եր թերեւացնում: Թուրքերին ոչինչ չեր խանգարում ուսւների եւ քաշվելուց հետո գեալ. Սարիղամիշի տակ օգնության հասնել իրենց զորքերին: Սակայն, որքան մեզ հայտնի է դառնում նահանջի փաստերի ուսումնասիրությունից, թուրքական նոյն այն զորքերն էին հալածում նահանջի ճամփա բունած ոուսական բանակին. որոնք մինչ այդ ճողովրում էին ոուսերի հարգածների տակ: Այսինքն, թուրքերը հարավային այս ճակատը ոուսերի նահանջից հետո ձեռքից բաց չեն թողել. իրենց զորքերը ետ չեն քաշել. տարել Սարիղամիշ: Իսկ եթե ավելի մանրազնին ուսումնասիրությամբ պարզվի, որ ինչ որ մի բան էլ տարել են, ապա դա դարձյալ չի խոսում այս մասին, թե հարավից ետ քաշվելու ոուսական զորավարական ստրատեգիան խորիմաստ էր. քանի որ ետ քաշած զորամասերը պարզապես սառեցվել են Ելման դիրքերում: Ըսդգծում ենք. մեր խոսքը կերպերում է բացառապես հարավային այս գծից ետ քաշած զորքերին: Ելման դիրքերում մնալու փոխարեն մեծ տարբերություն չեր լինի. եթե մնային առաջացած դիրքերում:

Մի խոսքով. մեկի նահանջը մի տեղ չի նվազեցրել հարձակումը. իսկ մի այլ տեղ՝ փոխել իրերի վիճակը: Եվ հայ կամավորների հիշողության մեջ. առավել եւս Անդրանիկի սրտում եւ մտքում. մնացել է նահանջի տարակուսական հարցականը. ո՞ւ եր պետք այդ նահանջը: Եվ դա հարցական է ոչ թե սուկ մեկ կամ մի խումբ մարդկանց հիշողության մեջ, այլ դարավոր հայոց պատմության:

«Անսպատակ նահանջ». այսպես է որակել Ետղարձը Նազարետկովը իր հուշերի եւ կերպությունների տետրում<sup>2</sup>:

Կաշտապետ Սեպուհը հենց նոյն օրերին հարցուփորձ է արել ոուս սպասերին: Բոլորովին ուրիշ է եղել նրանց պատասխանը կամ գուց թե նրանք էլ դժվարացել են ուրիշ մի պատճառ հորինել: Որովհետեւ սպասերը իրենց էին, որ պետք է նահանջող զորամասերին առաջնորդեին դեպի Սարիղամիշ: Զմեռ է, ցուրտ է, ասել են նրանք. պարենք՝ պակաս: Ավելի լավ է ետ դառնալ. պատրաստվել գարնանային առաջնադաշտան<sup>3</sup>: Իհարկե՛, թիկունքում կանգնած զինվորները հաց չե՛ին ուտելու եւ կուտակելու էին սնուենդ գարնան հարձակման համար:

Ժամանակին լուրեր են եղել. թե թշնամին նորանոր զորքեր է 1 «Պատ» թ 45. զ 1. գ 2. թ 1: 2 «Պատ» թ 216:

<sup>1</sup> Սեպուհ.... հ. Ա. էջ149.

Կուտակում հարավում՝ Թափրիդի ուղղությամբ։ Ըստունեաք, որ դա  
եւս ճշմարիտ է։ Դա իր հերթին, առավել եւս, հարցական է դնում  
սահմանչի անհրաժեշտության վրա։ Եթե Մի կողմը ուժեղացնում է իր  
դիրքերը Մի տեղ, մյուս կողմը ինչո՞ւ պետք է այնտեղ թուլացնի կամ  
թե հապետաց ճողովրդի, ինչպես որ արվում եր։

Ում ցավն եր. թէ կամավոր հայը ետ եր բերպուս Վասի Հօնոյ և շուրջից. որտեղ նա Երկիր Մտնելու րոպեներն ու Վայրեկյաններն եր հաշվում: Որդին համբուրգել եր ուզում եւ գրկախառնելի... Մար հայրենից հետ:

Ոլուաց բանակն ու նրա կազմում Անդրասիկը չկազմվ. շնորհած գումարում է Արձակ լճի հարպ-արթելյան ափից. որը հազիկ 50-60 ջում էր Արձակ լճի հարպ-արթելյան ափից. որը հազիկ 50-60 կիլոմետր էր հեռու Վան լճի Վան քաղաքին և այսուհետեւ կամականական ափից. Եթե օր ու գիշեր լեռներով ու ձորերով անցնելուց հետո կամակորները նորից անցան թուրք-պարսկական սահմանը եւ Մտան Արաքսի Կոտոր վլուակի ակունքներից ոչ հեռու գտնվող Նույսանուն մեծ գյուղը. որ վաղուց հորոցքվում էր որպես Ղոբուր:

Թօւրքական զորաբանակի հրամանատարներն ու զրովորությունը ու թեսնական հապճեպ և նախանշի. դեպի Աս տանող ճանապարհի գյուղերն ու քաղաքները իրար հետեւց եւ արագործն թողնելու ժամանակ հազիկ իրենց գլուխն էին փրկում: Ժամանակ ու հետաքրություն չունեցան իրենց ուզածի պես կոտորելու հայ բնակչությանը: Ետդարձը Նրանց համար խրամաճանք եր. հայության համար՝ լիակատար տեղահանություն եւ անկազմակերպ գաղթ ու փախուստ: Թօւրքական բանակը այսքան ոուսական նահանջող զորամասերին հալածելով չեր շահագրգոված. որքան հայության ալան-թալանով ու կոտորածով: Եվ այդ բոլորը Անդրանիկի աչքի առաջ: Ոուսական զորամասերը կարգապահ ճշգրտությամբ նշկած օր ու ժամին են էին քաշվում. իրար հետեւց թողնելով գրաված գյուղերն ու քաղաքները. անկան Նրանից. թե դրանց բնակչությունն ամբողջությամբ. թե մասամբ էին հայեր. ոչ թուրքին ու զորին առանձնապես կոտորում էին թուրք կամ քուրդ լինելու համար. ոչ էլ հայի երեխաներին կամ կանացն իրենց եւ դարձող սայլերն էին նստցենում. եթե հանկարծ խախտվում եր մեռաղարձի ժամն ու րոպեն: ճշտապահ էին ու կարգապահ:

Անդրանիկի ու Նրա ջոկատի համար, պարզուս էր, որ Կայ առ Անդրանիկի ու դրանից բխող Մի ուրիշ ուազմական կարգապառութիւն մի խնդիր ու դրանից բխող Մի ուրիշ ուազմական կարգապառութիւնը: Դւոք եր հասնել, օգնել եւ թուրքի հարվածից փախչող հոկեյուն: Դւոք եր հասնել, օգնել եւ թուրքի հարվածից փախչող հայի մի շունչ, մի կյանք պայմեն փոկել, մեկն երեխային գրնել կամ ձի ու ֆուրգոն ևստցնել, սայթաքող մի կնոց ձեռքից բռնել ու Վեր բարձրացնել, երրորդի բերդ շալակել... Եկ այստեղ Անդրանիկյան

զոկատը փոխվեց իր ձեւով. փոխվեց նաև. մյուս զորամասերի համեմատ. իր բնույթով. որովհետև ստանձնեց նոր խնդիր. Մտավ նոր հոգաբրի տակ. իր թիկունքից կամ երբեմն էլ առջելից ընթացող զարթականության շարքերի փաստորեն ձուլումը զոկատի հետ ու նրանց նկատմամբ հոգատարությունն ու խնամքը դարձան զոկատի պարտքի բաղկացուցիչ մասը՝ ցուրտ ձմեռային ետդարձի ճամփաներին... Ձեւակորպում եր բանակային մի նոր տեսակի միավորում. որպահին ոռւսաց բանակը երբեք չէր եղել. երբեք չէր տեսել ու բոլորովին էլ այդպահին դառնալ չէր ակնեալէ՛ բանակ. որը զարթողների խմբերին իր հոգեթարազատ մասն եր համարում. նրանց օգնելն ու օժանդակելը իր աշբածան խնդիրն ու պարտականությունը:

Ետղարձի ճանապարհին ընկած հայկական գյուղերի եւ թուրք ու պարսից խառնակազմ գյուղերի հայ ընակիչներն ահով ու սարսափով էին դիտում ոռւսաց բանակի նսհանքը: Խսկ թուրքերը հրեցն ժամանելու են սրում եւ գոտիներն էին ճգում: Չորքի ետղարձի հետ մեկտեղ հայ մարդը. որ երեկ ուրախ էր ու տրամադիր. այսօր ապշահար. խոր զարմանքով ու նույնքան խիր կշոտով նայում էր զինվորի ետղարձին ու մտածում՝ զորքի հետ ճամփա բռնել. որտեղ ոռւս զինվորն ու հայ կամվորը. այստեղ էլ ինչը:

Անդրանիկի Մտքում Սալմաստն եր' իր գյուղերով:  
Չմոռանանք. Սալմաստը գերազանցապես հայաբնակ էր: Ետդարձի  
ճանապարհին հայկական ջոկատի առաջին պարտօն է դառնում  
հասնել. փրկել հայությանը վրա հասնող թուրք բանակի կոտրող  
սրից: Եկ այս է լինում Անդրանիկի. որպես ջոկատի հրամանատարի.  
հազմական պարտօն, որպես հայոց Նահանջի ապահովման կարեւոր  
պայման: Ուրեմն պետք էր Նահանջի ընդհանուր ճանապարհից  
շեղվել. գևալ դեպի Սալմաստ. Ճովկել զաղթող հայերի հետ. ճանա-  
պարհը շարունակել դեպի դարձյալ հայաբնակ Խոյ քաղաքը. ուր-  
միատե՛ թե՛ Սալմաստում. թե՛ Խոյում ու Մերձակայքի գյուղերում.  
տասխյակ հազարավոր հայություն կար: Դրա համար պետք էր կա՞մ  
ընդհանուր հրամանատարության պաշտոնական թուլժվությունն ու-  
հրամանն ունենալ. կա՞մ Նահանջի սահմանված ընդհանուր ճանա-  
պարհից շեղվելու հսարավորությունը: Համընդհանուր Նահանջի հա-  
մար սահմանված ճանապարհից շեղվելս արգելվեց. այդ հրամանը  
ամբողջ ջակատով չկատարելը հնարավոր չեղավ: Մտախոհ Անդրա-  
նիկը իր մոտ կանչեց հին ու անբաժան Ֆիդայի ընկեր Ավոյին  
Կանչեց եւ. ով գիտ, ոզգամական կարգի համաձայն հրաման տվեց  
նրան. թե՝ գրեց. համբուրեց. իր աշերի արցունքներով թթեց նրա  
դեմքը. ապա իջակ ծնկաչող ու Խնդրեց. Վերցրու հեծյալներից  
ուրթասխյակը եւ պոկվիր մեզնից. իմացածոյ կարձ ճանապարհի

ընկիր եւ հասիր, տեր կանգնիր Սալմաստի հայությանը, բեր նրանց հասցրու մեզ... Ավոյին այս է ասում ու շտապում ոռու հրամանատար մոտ, բացատրում, խնդիր է դնում, որ իրենք ել ոռուական գորամատերը, ուշադիր լինեն, օգնեն թուրքի կեր յաթաղանից խուս տվող եր ու մանուկ, մայր ու կին հայերին:

Սուայ եր այդ պահին Անդրանիկը, զայրույթն ու վիշտը իրար խառնած, որոնք, ուազմերթին զուգընթաց, դառն ու թունալից հիանաթփություն էին դառնում: «Հն ու հարազատ ընկեր Ավոյին ճանապարհելուց հետո «այլեւ հնարավոր չեր խուսել Անդրանիկի հետ», այդպես է իր թարմ հուշերը հրապարակ հանել դեպքի մասնակից թիշկ Վաղարշակ Հովակիմյանը»:

Ավոյի եւ նրա հետյաների խնդիրն եր ոտքի հանել հայությանը եւ հետեւել, որ նրանց ճանապարհը քուրդ ու թուրք հարձակվողներից անպաշտապան չլինի:

Ավոյին ճանապարհելուց հետո, պատմում է նույն ականատեսն ու դեպքերի մասնակիցը. Անդրանիկի ճակատն ասես կնճիռների ժայռաքար լիներ: Նրա «դեմքը մոայլորեն խոժողված եր ու նրա թագ հովքերին նայելն եր անհինար: Կարծես թե ուր որ է, ահա, ել չի զահ նա իրեն, կիարձակվի թեզ պրա, որ հանգիստ տա խոռվահույզ իր ողուն<sup>2</sup>:

1904-ի վերջից ի վեր նա իր աչքերի առջեւ թուրքի ձեռքից հայերի փախուստի եւ զանգվածային կոտորածների տեսարաններ չեր տեսել: Եկ հիմա ուազմի դաշտ եր եկել ոչ թե Մեկին կոտորելու եւ մյուսին հովանավոր կանգնելու. այլ կոտորածին վերջ տալու եւ կոտորած խափանելու համար: Նա չեր նախանձում ոչ Շեռնողութեալ վին, ոչ է դիմիզիայի իր ազգակից հրամանատարին, որին բոլորն էլ թուկմասի փոխարեն Ֆոմա էին ասում եւ Նազարեթյանցի փոխարեն Նազարեթով: Բայց ինչ խոսք, որ իր համար երիցս հաճէի եր ջոկատի հրամանատար լինելը եւ կկամենար նաեւ, որ միաձոյլ բոլոր հայ կամավորների ջոկատների հրամանատար լիներ, թեւ հիմա, նահանջի այս խայտառակ բովեին. նա ամաչում եր մինչեւ ինկ ջոկատի հրամանատարի իր պաշտոնից: Եկ ինչ լավ է, որ նրա ուսերին հրամանատարի ուսադիրներ չկային: Նա զինվորի կոչումով եր որպես ջոկատի հրամանատար ուազմի դաշտ եկել եւ մի հաջող մարտը հազար գեներալական աստիճանի հետ չեր փոխի. մի հայ մանուկի կյանքի համար իր ոչ միայն ուզաքդ ուսադիրները կնվիրեր, այլև կյանքը: Լուսք ականատեսի հուզմունքը:

<sup>1</sup> Вагаршак Овакимян, В поход с Андраником, «Армянский вестник», М., 1916г., №№30, 32, 34. Խառ՝ «Հայութ», Տ. 1, գ. 3, թ. 18. 2 գ. Ընդամենք, Կայ:

—Երեք օր շարունակ մենք նրան չտեսանք. չստցինք նրա ձայնը. քաջալերող խոսքը. նրա կայտար ծիծաղը: Նստել եր նա քրոի խրճիթում, գիշերը քու չուներ, ցերեկը՝ հանգիստ:

Չեր ուզում մարդկանց երեսին դուրս գալ. կախենալով, որ իր տխուր ու մոայլ տեսքով զինվորներին կվշտացնի: Նրա Վշտի ու տխուրթյան մասին գիտեին միայն նրա կաշտի հրամանատարները, որոնք լուր ու մունջ ապրել եին նրա հետ. միատեղ տանելով սովու ու ծարավը, ամպրոպն ու կարկուտը, ամեն տեսակ չարիքի ում մարտելով սարերի լանջերին. լեռների կատարներին ու քարայրերում, երազելով պատության լուսավոր այգաբացի մասին: Զոկատի հրամանատարի հետ միասին ուրախ չեին նաեւ կաշտապետերը. հիշում է ականատեսը. Սեպուին ու Ավոն, Սմբատը, Նիկոլն ու Արտաշեսը, որոնք վանական ճգնավորների նման մարդկանց հայացքից թաքցնում էին իրենց թախծոտ աչքերը»:

Մարդասպանության մեջ նույնպես խորամանկ էին թուրքերը: Քիացնելով հայությանը լիովին, կոտորել նրանց հարկի տակ ու դուռն շեմին, հետապնդում էին ու թուում գաղթի ճամփաներին: Հեծելազորով շոշանցում էին ու դուրս գալիս անգեն գերդաստանների դեմ հանդիման: Իսկ դրանով ուսւաց բանակային ուժերը ազատվում էին նահանջի ժամին նրանցից պաշտպանվելու հոգսից, կարողանում էին գոնե անվնաս ու անկորուստ անցել ետքարձի ճանապարհը: Եվ մի թե թուրքական բանակի հրամանատարության ու երկորի իշխանությունների համար ծագել եր նոր խնդիր, որը նրանց համար լիներ ավելի կարեւոր, քան թշնամի երկորի հարձակվող բանակին դիմադրելը. նրա ճանապարհը փակելը, նահանջի ոժվարությունից օգտվելով՝ նրա հետ հետքությամբ հաշվեհարդար տեսնելը: Իսկ եղած խնդիրը ծագել էր կորվների ընթացքում, թէ՝ եղել եր ի նկարանե, պատերազմն սկսվելուց 2ա՛տ առաջ: Այս հարցերին ցարական արքունիքի համար թուրք պաշտոնաների խորհուրծները բերող երեկով փոխգենապետ Լյախովի պատասխանը համոզիչ կիներ եւ սպառիչ, եթե գենքը ձեռքից վար դներ ու արդարամիտ պատմաբանի գրիչը Վերցներ:

Դեկտեմբերի 25-ն եր: Սալմաստի հայ բնակչությունը դեռ չեր հասցրել լիովին գաղթի ճանապարհը բունել: Դեռ ձուլվում էին քարավանները: Թուրք զորաբանակը, տեղահանող քրդերի զինյալ խմբերին, հայության արյանն ու ինչքին աշքաղիր բաշիբողուկներին իրեն գումարած կամ առանձին-առանձին, որոշում է առաջ անցնել. դուրս գալ զաղթողների հետց դիմացից եւ ճակատային դիմահար հարվածով կոտորել բոլորին: Լուրը հասնում է Անդրանիկին: Սալ-

յաստցին կարող էր այսուհետ մի հատիկ շառավիղ անզամ չունենալ: Այժմ էլ Անդրանիկը իր մոտ է կանչում դասակի պետ Թադեևս Ամիրյանին, թողնում է, որ Վերցնի հեծյալներին եւ աճապարի օգնության: Ինքն էլ, ջոկատի մյուս կազմով, ոտքը կախ է գցու հայության դեպի Չուլֆա տանող ճանապարհին, Խոյից յոթ կիլոմետրի վրա Սեյդեվար գյուղում, մինչեւ որ Սալմաստից ճամփա բոնած հայերի քարավանները կիասնեին. առաջ կընկնեին: Նոր էին գաղթականների առաջապահ ջոկատները հասել Սեյդեվար, միացել ջոկատին, երեկ ու առաջին օրը հետեւորդ դարձաներին, երբ դարձաւ ինչեց ընդհանուր բանակային հրամանը. թուրքերը սպառնում են առցեւում գտնվող Սակու քաղաքի կողմից փակել ճանապարհը, չպետք է հապաղել: Հապճեա հոգալով երեկ միացած գաղթականների մասին եւ ջոկատը ձուլելով նոր եկած գաղթականների Խմբերին, Անդրանիկը կանգնում է ջոկատի գլուխ եւ Ենթարկվում հրամանին: Ճանապարհը տանում է դեպի Չուլֆա, որտեղ ոռւսական սահմանն անցնելու կամուրջն էր:

Չմոռանանք, հարազատ մնանք Անդրանիկի ոգուն: Նա ինքն է մի առիթով, ինչպես Շեքսպիրի Օթելլոս բեմում, ասել, խնդրել, որ ապագա պատմաբանը հարազատ մնա իրողությանը: Ղոթուրից Խոյ ճանապարհ անցնում է Տղմուտ գետի հոսանքով, որն իրեն հետեւող գաղթական հայությանը տանում էր դեպի Ավարայրի դաշտը, որտեղ դրանից հազար չորս հարյուր վարսուն երեք տարի առաջ հայոց սպարապետ Վարդանն էր իր գործով մահու եւ կենաց մարտ մնել պարսից գործերի դեմ: Նահանջ չէ, ինչ էլ լիներ, չեր կարելի անուշադիր մնալ: Գետափի բարձունքին սպարապետի գերեզմանն էր: Գաղթական հայերը հոգնաբեկ, ծանր բեռը, երեխաները շալակներին, քայլով բարձրանում են դեպի գերեզմանաթումբը եւ գլուխ խոնարհում ժողովրդի ազգապահ նահապետի շիրմի առջեն:

Հասնում են կամավորները Սեյդեվար գյուղ ու Խրանց հետ նաեւ գաղթականների հսկայական զանգվածը: Հաջորդ օրը այզաքացին կամավորները նահանջի շարքերն են կազմում: Բոլորի հետ կողք կողքի կանցուն էին նաեւ վաշտապետները: Այլևս մարդկանցից խոյս տաւ չեր լինի: Անդրանիկը մոտենում է շարքերին եւ իր մեջ խոյք ասելու ուժ է գտնում: Հազիվ նա ողջունի երկու բառ էր ասել, գինվորները կանխում են հուզմունքը «Կեցցե՛ մեր պանծալի հրամանատարը» բացականչությամբ: Անդրանիկը շարունակում է. այս տեսուր տեսարանների առաջ միջ վիատվի, հույսները միջ կտրի. — ասում է: Եկ քաջության է կոչ անում: Հիշեցնում է հայոց ճակատագրը. — այս է մեր բախտը, մենք ծնվել ենք տառապանքի եւ

սարսափի համար: Ով գիտե, գուցե թե մեզ ավելի մեծ դժբախտություններ են սպասում, ինչ արած, առանց դառը քրտինքի քաղցրություն վայելել չի լինում: Եվ հուսաղորում է, քանի դեռ մեզ հետ է մեծ Ռուսաստանը, մենք չպետք ենք ընկճվենք<sup>1</sup>:

Որը՝ ճիշտ կիներ, այն, որ այս նահանջի տեսարանները նկարագրեր ջղերից ամուր մի մարդ առանց հուզմունքու եւ փաստաթղթերի լեզվին զգայական շեշտեր ավելացնելու, թէ՝ ընդհակառակը, այնպիսի մեկը, որը գրելիս նաեւ անտարբեր չէ, ապրել ու կերապերել գիտե եւ իր ընթերցողին հենց այսպէս տրամադրել, ինչպես որ ժամանակն է եղել ու դեպքերը: Ես այսպես մտածում էի, ձեռքին տակ ունենելով հայ վանական մարդու հուշերը, որոնց թէ՝ պատկերավոր են ու հուզիչ, որպես վիապանն է գորերը, թէ առարկայորեն ճշգրիտ ու հաստատ, ինչպես փաստաթղթերի չոր լեզվին կառչած պատմաբանի քննախուզ շարադրանքը: Երկու դեպքում ել նպատակը նույն է՝ պատմել ինչպես որ եղել է: Եվ դա հեղինակին հաջողպել է ավելի, քան մեկ ուրիշի, որովհետեւ նա նաեւ ժամանակակից է եւ ականատես:

«1914թ. դեկտեմբեր ամիսն է, Ուրմիայից բոնած մինչեւ Սալմաստ, Խոյ, Թավրիզից մինչեւ Արաքսի ափը ճանապարհները բոնած եին մարդու եւ անասունի կարավանները. առանց հանգիստ առնելու եւ ճամփու երկյուղից գնում եին շարունակական բախտը:

Այս գաղթը ո՞չ նման էր Սովուսի՝ իսրայելցիների Եգիպտոսից հանելու եւ ո՞չ Շահ Ապասի Արարատի դաշտի ժողովրոնին դեպի Պարսկաստան խուճափի Ենթարկելու, օսմանցիների ձեռքից ազատելու, այլ մի տեսակ երկյուղից տագնապ էր, որ մայրը իր զավակին թողած միայն իրեն համար էր մտածում:...»

...Երկար ու անտանելի ճանապարհի հոգնածությունից շատեր իրենց գրկի փոքրիկները արտերի մեջ ձգում եին: «Աղջի՛կ, քո երեխեն մեռա՛վ, ասում էր Մեկը Մյուսին, իմինը մեռավ ես ազատվա»: Չէ, իմինը սառած է, ծոցիս մեջ պահել եմ, բալթիս արթենա...»

...Եվ այսպես հազարավոր դեպքեր ու քստմնելի տեսարաններ մեր աչքի առաջ կատարվում եին ամեն օր, ամեն ժամին<sup>2</sup>:

Նույն պատմողը Խոյ քաղաքում տեսել է Անդրանիկին: Սեն-մենակ հոգնած ու տանջահար պառկած է եղել խարխուկ մի կացարանում: Զայրութին չափ չկար, բայց ինչ կարող էր անել, երբ անթիվ հայության զանգվանները, անլուր չարչարանքներ կրելով փախուստի

<sup>1</sup> «Արմանու օստոն» 1916թ. N30, է. 13-14. <sup>2</sup> Խորեն Զայրական, էջ. 114-116:

1 «Պատմ. ֆ. 402. գ. 1. գ. 12. բր. 1-12: Նաեւ՝ «Օրագործիւնը», էջ 3-16:

ճամփան էին բունել. իսկ ինքը անձար էր Եւ անկարող օգնության: Ալան-թալան էր. խանութերի ու պահեստների կողոպուտ. սով էր ու սովամահություն: Եկ դարձյալ վանականը պատմում է. մի այծի համար մարտ Են մղել կամավորները Եւ պարսից հեծյալները. որի պատճառով պարսիկներից զոհվում Են յոթ. հայերից երկու հոգի Եւ ուրիշ էլ ակելի փիրավորներ Են եղել<sup>1</sup>:

Բաշկայելում. ոուս զինվորները հազիկ էին ոտքերը քաղաքից հանել. քուրդ ցեղաբետ Շերիֆը. արյան ծարավ ումակի գլուխ անցած. գենքը հշեցնում է Մանուկից մինչեւ ծեր բոլոր հայ տղամարդկանց գլխներին. կողոպուտ. սրբում Եւ բնակչության տներում եղած կերպին ինչը Եւ նույնպես Եւ վարդում մերձակայքի յոթ հայկական գյուղերի. Սարայ քաղաքի Եւ դարձյալ Նրա մոտակայքի գյուղերի հայ բնակչության հետ<sup>2</sup>:

Նույն այս օրերի. նույն այսպիսի դեպքերի մասին հայության ներկայացուցիչները մեկ տարի անց. 1915-ի հոկտեմբերի 24-ին. գրել Են Կովկասի փոխարքային. որն այլևս Վորոնցով-Դաշնովը չէր. այլ Նրան փոխարինելու եկած ցարի ազգական. մեծ իշխան Նիկոլայ Նիկոլաևիչ Ռոմանովը. «Աշխանը Սարայի Եւ Բաշկալիի շրջաններում գազանաբար կոտորվել Եւ ամբողջ հայ բնակչությունը՝ շուրջ 10 հազար հոգի: Հայերին ողջ-ողջ թաղել Են. այուղի. մեխել խաչերի վրա: Քաղաքներում հայերի ամբողջ գույքը բռնագրավել Եւ հայերը լիովին քայլավել-սնանկացել Են: Հայ զինվորներին բանակում նշանակել Են բացառապես ծանր աշխատանքների Եւ եղել Են նրանց զանգվածային գնդակահարություններ: Շատ շրջաններում Են թուրքերը հայ բնակչությանը. որպես իրենց համար վտանգավորի. ոչնչացնելու միտք հղացել: Սասունում. Վանում. Շապին Կարահիսարում. Զեյրունում Եւ այլն: Շատ գյուղեր ավերվել Են ու ոչնչացվել: Այդ դեպքում հայերը որոշել Են պաշտանել իրենց. որը հանգեցրել Եւ բացահայտ ընդհարումների: Ամենից ավելի նշանակալից դիմադրություն Են ցույց տվել գեյրունցիները. բայց Նրանք Էլ Են ընկճվել. Եւ բնակչության մի մասը զոհվել Եւ պայքարում. մյուսն Էլ արտաքսվել Եւ Արաբիա: Եկ նկարագրությունների այս շարքում Անդրանիկի հայրենի քաղաքը Եւ Շապին Կարահիսարում գործն սկսվել Եւ հայերին զինաթափելու Եւ նրանցից 12 նշանավորներին կախելու փորձով. որոնց բնակչությունը ուժով ազատել Եւ Ակսմել Եւ անհավասար պայքարը: Հայերը գրավել Են բերդը. բայց հետո անզոր Են եղել դիմադրելու Եւ մարտնչող հայերը հրամանատար Մուրադի հետ լեռներն Են բարձրացել. իսկ ով մնացել Եւ քաղաքում. կոտորվել Եւ<sup>3</sup>:

1 Ն. ա. էջ 116-117. 2 Արդակ Դարեհնան. Խել գործ. էջ 17.

3 ՀՀ Պատ. Տ. 121. գ. 1. գ. 3. թ. 27-30:

Անհ թէ ինչ էր արժենում ոուսաց զորաբանակի ու նրա հետ նաեւ կամավոր հայերի ջոկատների նահանջը: Բայց սա դեռ առաջին նահանջն էր: Առջևում ուրիշ նահանջ էլ կա. ոչ միայն բազմից առավել ատեսաբեր. այլեւ զարմանակի ու մինչեւ օսու առեղծվածային:

Մինչ այդ շարունակենք ետդարձի պատմությունը:

Այսուամենայնիվ ճիշտ էին հայ կամավորների նախնական հաշվումները երկու ամսում կան հասնելու մասին: Ծանապարիի կեսից ավելին անցել էին մեկ ամսում. իսկ եթե ետդարձ չիներ. մյուս կեսն էլ հաջորդ ամսին կանցնեին, եթե ոչ ավելի շուտ: Դա հնարավորությունն էր. իրականությունը՝ նահանջը:

Անկումային տրամադրությունը պատճի խորացավ. երբ Արաքսի ջուկֆյան կամրջով հունվարի 1-ից հետո կամավորները. այսպես ասած. իրենց երեկով ոտնահետքերով անցան Արաքս գետի ոուսական ափը. որտեղից էլ մտան հայկական ջուղա քաղաքը<sup>1</sup>: Որքան դեպի Արեւելք. այնքան առավել խորանում էր Անդրանիկի կիշտը: Եկ ահա այդ վիճակում Նրան այցի Եւ զայիս գետերալ Շենովուրովը Եւ իր ձեռքով Նրա կրծքին ամրացնում կոփվների ընթացքում պարզել էր որված Շեռոգիեսկան խաչը: Գոնե հաղթարշավի օրերին լիներ: Որքան պետք Եւ փառասեր լիներ մարդը. որ մինիթարվեր ու մինիթարեր: Անդրանիկը այդ չեր: Նա խոռվեց ոուրս չեկավ: Նահանջը հավերժ սպի մնաց Նրա սրտին:

Տիուր էին օրեր ջուղայում: Նույն ունայնությունն էր Նրա համար Եւ նույն մենակությունն է: Զգիտեր ինչ պատասխաներ կամավորների «ինչո՞ւ Եւ նահանջել» հարցին: Էլ ավելի դժվար էր ու անորոշ «մինչեւ Ե՞րբ». «Ի՞նչ է լինելու» հարցերի պատասխանը: Տիուրությունն ու անորոշությունը ցրելու առիթ եղավ Զրիստոսի ծննդյան օրը: Անդրանիկը նախաձեռնող եղավ լուսավորչական Եկեղեցու արարությունը կատարելիս: Նա ինքը զորքի ներկայությամբ խաչը հանց ջոկատից<sup>2</sup>:

Հունվարի 11-ին ստացվեց ետդարձի հրամանը: Ջոկատն այդ օրը արշավի Եւ լուս Եւ ամսի 13-ին Կարա Թափեռվ հասնում պարսկական Սարաւել քաղաքը: Ետդարձի ճանապարհը ինի կրկնությունը չէր. զորամասը հրաման ուներ խորանալու դեպի Թավրիզ<sup>3</sup>. որը այստեղից ոուսական զորքերի նահանջից հետո գբաղեցու էին թուրքերը. ինչպես նաեւ Սոֆյանը Եւ այս լեռնանցքը. որով անցնում էր տվյալ հատվածի հիմնական ճանապարհը: Անդրանիկի ջոկատը այս երթուղու վրա ոուսական բանակի այս զորախմբի կազմում էր.

1 Ա. ա. էջ 14: Նաեւ Հ. Օրագործություն. էջ 16: 2 Հայ Ե. Հ. Կարապետյանի հոգի-թուրքական պատմություն. էջ 2: 3 Ն. ա. Տ. 121. գ. 1. գ. 3. թ. 17: Նաեւ Ի. ա. էջ 370. գ. 2. գ. 89. էջ 3:

որը բաղկացած էր երկու հրաձգային գնդից. Երկու մարտկոցից, երկու դիվիզիոնից, սահմանապահ հետեւակայինների երկու հարյուրյակներից. Երթային գումարտակից եւ օժանդակ այլ զորամասերից<sup>1</sup>. Այդ զորախմբի կազմում ջոկատը շարունակեց իր երրոր դեպի Դարա Աղայ. որտեղից ընդառաջ եկած լեռնանցքով պիտի զնար դեպի Սոֆյան մեծ բնակավայրը. ուր բախում եր նախատեսվում բուրքական զորքերի հետ: Բայց տեղ հասնելը սպասածից շատ ժամանակ խլեց ճանապարհի հատկապես դժվար ակցանելի ցեխու լինելու պատճառով. որը կամավորների համար թերեւ ամենից ավելի դժվար հաղթահարելի հանգամանքներից մեկն եր. մանավանդ. որ վատն էին նրանց ոտևամանները եւ շատերի ոտքերին՝ սահող եւ ցեխ ու ջուր կլանող տրեխներ: Տրեխների ձեռքին կամավորները պարզապես տանջվում էին ու տառապում: Անուշաղիր էին եղել նրանք. ովեր դրա համար նախապես պատասխանատու էին նշանակված: Այնպես որ մինչեւ կամավորները տեղ կիասնեին. մարտը. որ ցերեկն էր լինելու. նրանց տեղ հասնելու ժամին. երեկոյան. ազարտվել էր եւ. ինչպես ասում են. փառք աստծո. ոուսաց զորքերի լիակատար հաղթանակով:

Սոֆյանում ջոկատին այլեւս անելիք չկար: Հուսվարի 17-ին վերադառնում է Մարանդ. որտեղով որ առաջ էր անցել: Այստեղ ջոկատին հանգիստ է տրվում: Որոշակի եր. որ առջեւում եւ լուրջ. եւ տեւական մարտեր էին սպասվում: Պետք էր ջոկատի կազմի կորուստները համարել. Վերացնել մինչ այդ նկատված թերությունները. մանավանդ հանդերձավորման եւ գեների պաշարների ապահովման գործում: Մինչեւ նահանջի ավարտման պահը. ոազմի դաշտ ելած հայ կամավորների չորս ջոկատներն ունեցել էին 156 սպասված եւ 743 վիրավոր. հիվանդ եւ ցրտահարված. որն ամբողջությամբ վերցրած փոքր թիվ չէր: Բոլոր ջոկատներն եւ հրենց կազմի համալրուման. հանդերձավորումը լրացնելու. բարելավելու սուր կարիքն ունեին: Ոչ պակաս կարեւոր էր ավելի շատ թվով հայ կամավորների ջոկատներ ուսզմանակատի հարավային այս հայաշատ գծի վրա կենտրոնացնելու. տեղաբաշխելու հարցի լուծումը:

Ազգային բյուրոն փոխարքայի հետ այդ նպատակով բանակություններ էր վերջո. ուսզմանակատի բանակային հրամանատարությունը հոգում է. եւ առաջին չորս ջոկատներն եւ շարվում են. ահա. հարավային այս գծի վրա. որը տանում էր դեպի Կան. Կանից էլ Բիթիս ու Մուշ<sup>2</sup>:

Փետրվարի 3-ին ստացվում է զորախմբի հրամանատար Շեռնողությունիցի հրամանը կամավորների առաջին ջոկատի վաշտապետեր

1 և. ու. ֆ. 45. գ. 1. գ. 2. թ. 1: 2 ՀՀ ՊԿԱ. ֆ. 121. գ. 1. գ. 3. թթ. 17-18:

Սմբատին. Սեպուհին. Արտաշեսին. Նիկոլին շքանշաններով պարզեցած մասին<sup>3</sup>: Դրանից մեկ շաբաթ անց Անդրանիկը. որ վատառողջ էր. հանգստի ու ապաքինման կարոտ. մեկնում է Թիֆլիս. որտեղից դուրս է զայխ տասը օր անց: Մինչ նրա տեղ հասնելը. ջոկատը Սարանդից ճանապարհով է Դուզադուզ մեծ գյուղը եւ առաջվա պես Նազարետկովի դիվիզիայի մյուս ստորաբաժանումների հետ մասնակցում Դուզադաղ լեռան ստորոտում մղված կոհկվներին. որը Խոյ քաղաքի մոտակայքում էր<sup>4</sup>:

Փետրվարյան օրերին Թիֆլիսում եղած ժամանակ նա շրջապատված էր ցերմ սիրով ու գուրզուրանքով: Բոլորն էին ուզում տեսնել նրան. բարեւել ու մի ցերմ խոսք ասել: Բոլորի մեջ էր նաեւ ամենից ավելի հարգաված ու սիրելի Հռիփաննես Թումանյանը: Հանդիպել են նրանք. զրուցել: Թիֆլիսից դուրս զայխ հրածեցնի հավաքույթ է եղել: Բանաստեղծը 1915-ի փետրվարի 20-ին. զրավարին ուազմանակատ ճանապարհելիս Մտերմիկ ու ոգեշնչող խոսք է ասել: Վառ հույսերով է լեցուն այդ խոսքը. հաղթանակի եւ հայրենիքի վերածնողի երազների իրականացմամբ տոգորված: Կճուկան այս պահին. ասել է նա. հայ զինվորների մղած կոհկվը դարեդար փառքով պիտի պսակի նրանց անունները: Եվ այսպես է ավարտել իր ներշընչանքի ու մեծարման խոսքը. «Կուսանք հայոց աշխարհի լեռներից ու դաշտերից թարմ ծաղիկներ կիավացնեն եւ դափնեասակով կզարդարեն ձեր գլուխները...»: <Նադարի հայոց անվեհեր սպարապետ Վարդան Սամիկոնյանի եւ ժողովրդի երեւակայությամբ կերտված առապելական Սասունցի Մելքին ու Դավթի անուններն եւ հիշատակել եւ նրանց կամքն ու խիզախությունն է տեսել կամավորների ու նրանց պանծալի հրամանատար Անդրանիկի մեջ. նրան անվանելով հայոց աշխարհին ազատություն բերող Գարիբալդի<sup>5</sup>:

Հովհ. Թումանյանը. հայության կամավորական շարժման. կամավորական ջոկատների ստեղծման ցերմ կողմանակցներից մեկն եր. որին նա օժանդակում էր որպես ազգային բյուրոյի անդամ: Կողմ լինելով ոուսական բանակին Կովկասյան ճակատում հայերի գործեական օժանդակությանը. Հովհ. Թումանյանը. ինչպես նկատել է Անդրանիկը. պնդել է. որ հայ ժողովուրդը «պետք է կապէ իր քաղաքական ճակատագիրը ոուսեների բանտին հետ», գտնելով. որ քանի կա Ռուսաստանը. այլեւս «պետք չէ սպասել եւ ակնկալել հեռավոր դուսեր օգնություն եւ աջակցություն. ցեղին բարելավման եւ ազատագրման համար»<sup>6</sup>:

1 «... օրագութիւնք. էջ17: 2 «ՊԿԱ. ֆ. 121. գ. 1. գ. 3. թթ. 29: Լաւ. ԿՊ. որու. ֆ. 2100. գ. 1. գ. 646. թ. 68: 3 «Արև. Կահրե. 24. 10. 1966թ. 4 «Պարագա. 12. 05. 1923թ. Բ. ըստ Լ. Լուկեցյանի գրառակ:

Թիֆլիսից Անդրանիկը ուզմի դաշտ է Վերադարձել առդեն այն օրերին, երբ ջոկատն ընթանում էր դեպի Խոյ: Դա փետրվարի 27-ին էր: Ապա այստեղից տեղափոխվում տեղավորվում է հայաբնակ ՍԵՐԵԿՎԱՐ գյուղում, այդտեղ Մնալով Մինչեւ մարտի 14-ը: Այդ ընթացքում թշնամու հետ լուրջ ընդհարումներ չեն եղել: Հրամանատարությունը հետախուզական հանձնարարություն էր տվել, որը կատարում էր ցուրտ գիշեր ու ցերեկները: Կամավորները այդ գործի համար, անկախ ցրտից, հարմար էին. լավ գիտեին տեղանքը, գիտեին տեղի բոլոր լեզուները, որ ոչ միայն հայերենն էր, այլ քրդերնը, թուրքերենն ու պարսկերենը: Տարրալություն էին, եթե հարկ էր լինում, բնակչության մեջ եւ իրենց չտարբերվող խոսակցականով խորամուլս լինում, բերում գործին ու նրա առաջընթացին հարկավոր լուրերը<sup>1</sup>:

Պատերազմ էր, բայց ահա շաբաթներ շարունակ հակառակորդ բանակներն իրարից հեռու, իրար երես չեին տեսնում: Զորամասերը տեղաշարժեր էին, չգիտես՝ հեռվից հեռու միմյանց ուսումնասիրություն, թե զարնվելու համար դեռևս ոչ բավականաշափ կամք ու համարձակություն:

Եկ ոուսաց բանակի ու նրա կազմում Անդրանիկի ջոկատի ետուառաջին ու տեղափոխություններին զուգընթաց փոփոխվում էր առջեւում գտնվող բնակավայրեի հայ բնակչության թե տրամադրությունը, թե Վիճակը: Նահանջի ժամանակ կոտորածներից չհագեցած թուրքական բանակը, տեղական ջարդարար խմբերն անընդհատ հարձակվում էին անզես հայ բնակչության վրա, թալանում եւ կոտորում: Հայերը խաղաղ էին, սպասողական: Եթե հաջողվում էր, միայն այն էին անում, որ սուրհանդակներ էին ուղարկում ոուսաց բանակի հրամանատարությանը, նաեւ անձամբ Անդրանիկին, պատմում էին իրենց որության գնալով ծանրացման մասին: Եւ օգնություն հայցում: Այդպէս, 1915-ի մարտի 10-ին, Ուրմիայի շրջանի հայերն ու ասորիներն են երկու սուրհանդակ ուղարկել Անդրանիկի ջոկատը, որոնք նամակ են բերել ու պատմել իրենց տառապանքների մասին: Պատմել են եւ օգնություն աղերսել<sup>2</sup>: Ուրիշ եւը չկար, թե՛ւ, ինչպես կտեսնենք, այդ եւը էլ դեպի փրկություն չտարափ:

Անդրանիկն ահազանգերի մասին հայտնում էր հրամանատարությանը, ինչդիմեր էր դնում եւ իր օգնությունն առաջարկում: Բայց մեկ է, բանակի երթուղին մնում էր նույնը, առաջնադացման արագությունը՝ անփոփոխ:

Մարտի 14-ին ջոկատը տեղափոխվում եւ 20 օր սպասողական ու

<sup>1</sup> «Հ. Պու. ֆ. 121. գ. 1. գ 3. թ. 29: Նախ՝ «Եւակ. 11. 07. 65թ.» 2 ՀԿԿ ԱԿ-Ի կուտարման ֆ. 4047. գ. 1. գ 87. թ. 6: Շետաքի թագավոր»:

հետախուզական դիրքում կանգ է առնում Դուզադուզ պարսկական գյուղում, որտեղից փոխադրվում, վրան է խփում ճաքար Յազու գյուղի տակ: Եկ մի շաբաթ հետո նորից վերադարձ Դուզադուզ: Այստես տեղից տեղ, թիզ թե շատ տեւական ու կարծատեւ կանգաներ պարսկական Դիման քաղաքի ճանապարհին ու մոտակայքում<sup>3</sup>: Ասես զորքի խոտանությունը հետախուզական հանձնարարություն էր տվել, որը կատարում էր ցուրտ գիշեր ու ցերեկները: Կամավորները այդ գործի համար, անկախ ցրտից, հարմար էին. լավ գիտեին տեղանքը, գիտեին տեղի բոլոր լեզուները, որ ոչ միայն հայերենն էր, այլ քրդերնը, թուրքերենն ու պարսկերենը: Տարրալություն էին, եթե հարկ էր լինում, բնակչության մեջ եւ իրենց չտարբերվող խոսակցականով խորամուլս լինում, բերում գործին ու նրա առաջընթացին հարկավոր լուրերը<sup>4</sup>:

Այս բոլորը մինչեւ ապրիլի 18-ի լուս առավոտը: «Համբերենք, որովհետեւ պատմությունը միայն վերը նշանակ պետք է հմանան իրենց հրամանատարների տեղը: Ոչ ոք իրավունք չունի կրակելու առանց վաշտապետի հրամանի: Ոչ զինվորները, ոչ հրամանատարները քնելուց առաջ չպետք է հանեն փամփուշուները, հրացանը քնած վիճակում եւ իրենց հետ պետք է լինի. Կազմ ու պատրաստ: «Առաջին ջոկատի հրամանատար՝ Անդրանիկ»<sup>5</sup>:

Այս բոլորը մինչեւ ապրիլի 18-ի լուս առավոտը: «Համբերենք, որովհետեւ պատմությունը միայն վերը նշանակ պետք է հմանան իրավունք ու իրավունքը թիվունքը շարունակվում էր կամավորության շարժումը: Թիկունքը ո՞ր է եր, աշխարհի բոլոր այն ծագերը, որտեղ հայություն կար ապրող, մեկ է՝ շատ. թե թիզ: Որքան շատ է զավթված հայութենիքը, այնքան բազմատարած են նրա ցրիվ եկած որդիների կացարանները: 1915-ի հունվարի 15-ին Բուլսարեստից հեռագիր է ուղարկվել Թիֆլիս, հայորդիների մի ամբողջ ցուցակ: Ծիշտ է, ընթեցողը այդ անուններից ոչինչ չի հասկանա, բայց հայի ուշքն ու միտքը իր ցեղի պատմությունը որոնող է սերնեսերունը: Հիշատակենք մեկ-երկուած, գուցե թե դրանում մեկի պապենական տան ծանի ճյուղը լինի. Մյուսի համար փոքրիկ մի նյութ՝ պատմության համար, դաշնակցականներ՝ Սրաբ Աղոյան, Բաբիկ Աբգարյան, Մկրտիչ Կարապետյան, Պետրոս Սարգսյան, Անդրանիկ Հովհաննիսյան... 90 հոգի: «Նշակյաններ՝ Հակոբ Հախինյան, Կարապետ Կիրակոսյան, Սարգիս Գրիգորյան, Հակոբ Լեւոնյան... 26 հոգի<sup>6</sup>:

Հազարբեկովը տեղյակ է եղել, որ Սարայում եղած ժամանակ մոտ հարյուր հեծյալ կամավորներ են եկել Անդրանիկի ջոկատը համա-

<sup>1</sup> «Հ. Պու. ֆ. 121. գ. 1. գ 3. թ. 29: Նախ՝ «Եւակ. 11. 07. 65թ.» 2 ՀԿԿ ԱԿ-Ի կուտարման ֆ. 4047. գ. 1. գ 87. թ. 6: Շետաքի թագավոր»:

լորելու, այս անգամ Սոսկայի ու Պետրոգրադի ուսանողները, Երիտասարդներ Ամերիկայից, որոնց դեկավարել է Ա. Զամայյանը: Անդրանիկը նրանցից ճեւավորել է առանձին մի ջոկատ, եղած հեծյալների ջոկատից բացի<sup>1</sup>:

Փետրվարին, մարտին եւ հետագա ամիսներին կամավորագրվելու ցանկությունն ավելի լայն չափեր է ընդունում: Եթե պատերազմից առաջ ու պատերազմի սկզբում հայ Երիտասարդները կամավորական ջոկատներն են գալիս ինքնապաշտպանության մղումով, իիմա Ներսանց մեջ, չմեղանցներ ճշմարտության առաջ, խոսում էր նաեւ Վրիժառության զգացումը: «Հոկտեմբերի 19-ից սկսած հարձակվող հայերը թիկունքում Մարդասպանությամբ չեն գբաղվում: Ուստաց զորքի կոիվն էլ թշնամու բանակի հետ եր, բայց ոչ բնակչության, առավել եւս՝ կանանց ու մանկահասակ երեխաների: Իսկ երբ ուստաց բանակը սկսեց նահանջել, բացահայտ ու մերկ ճշմարտություն դարձավ, որ թուրքական բանակի համար առաջնահերթ խնդիր է հայ բնակչության կոտորածը թե՛ այստեղ՝ կոիվների գոտում եւ թե՛ խորքերում, ուզմաճակատից շատ հեռու: Եվ հայ Երիտասարդները, ումասեց կոտորածը խափանելու, մյուսների սպանված, մորթված, խարոյակի վրա ողջակիզված հարազատների Վրիժառության զգացումով են գալիս կամավորական ջոկատ: Եվ այստեղ լիովին անկեղծ է Սեպուհը հուշերի իր գրքում: Վերիիշելով Դուզդաղի կովի ժամանակ հայության կոտորածներին հարեւան գյուղի ցուցաբերած արյունողուշտ աջակցությունը. պարզ գրում է, որ այդ գյուղը ետդարձի ժամանակ գրավելիս կոտորած է եղել ատամն ընդ ատաման սկզբունքով: Լսենք Սեպուհին, նրա համար ել հեշտ չէ. «Պետք է խոստովանեմ, թե անօրինակ սպանություններ կատարվեցան այս գյուղին մեջ թե՛ ոսւ կողակներեն ու գիևվորներեն եւ թե՛ հայ կամավորներեն: Զուրդ կիներու լացն ու աղաղակը մինչեւ Երկինք կը բարձրանար. սակայն ո՞վ ուշադրություն կըներ, թուրքիայն անլուր ոճիներու լուրերը կը հասնեին մեզի եւ այլեւս անկարելի եր զապել մեր գիևվորներու կատադրությունը»:

Ցավակի է: Ամոր ու անպատվություն է մեկի կանխամտածված կոտորածը, եւ ոչնչով ուրախալի չէ, որ տուժողի հարազատներն ու ազգականները մինչեւ հոգու խորքը վիրավորված լինելով դարձել են վրիժառու եւ ստեղծված իրավիճակում վարվելու ուրիշ եղանակ չեն ունեցել «ատամն ընդ ատաման»—ից բացի:

Փաստերն անցնածի են: Ցանկալին թե անցանկալին շրջանցելով, վերը չի բուժվի: Պատմությունն ամբողջությամբ ավելի ուսանելի է. զան կիսատ-պոատը: Արդ. Սեպուհի խոսքը կիսատ չըռողնենք: Ուսւ

<sup>1</sup> «Պատմ. ֆ. 45. գ. 1. գ. 1. թ. 33:

հրամանատարը գինվորներին 24 ժամյա ազատություն է տվել, որպես «աստվածավախ ու բարի քրիստոնյա», բայց հարկադրված է եղել կեսից դադարեցնել այն, որ նշանակում էր արյունահեղության առջեւ պատնեշ կանգնեցնել:

Թուրք պատմաբանը իր հարազատ երկրի ու ժողովրդի պատմությունը գրելիս թող այս տողերը մեջբերի եւ թող ամրթանք տա ու պարսավի հայ կամավորին, ոուս սպային ու նաեւ հայ պատմաբանին, որ հարկ համարեց այս տողերը գրել: Բայց թող հնքն ել փորձի ուղղամիտ լինել եւ պատմի իր հարազատ տերության հրամանով արյան գետեր հուեցնող «քաջազգործությունները»:

Կոիվների այս հատվածի պատմությունը եզրափակենք Չեռնողութովի բնութագրական խոսքի ազատ շարադրումով:

Անդրանիկի ջոկատի մարտական գործողությունների մասին միայն գովասանքի խոսք կարող եմ ասել: «Ենց սկզբից ել ջոկատը իրեն պանծալի կերպով դրսեւորեց: Աշխակի, Բուրուշ Խորանի, Խանիկի, Ղոթուրի, Սարայի, Սոլլա Հասանի, Բելաջուկի եւ Հարաթելի մոտ մեր ունեցած հաջողությունները զգալիորեն կապված են առաջին հայկական ջոկատի հետ, որի գլուխ միշտ գտնվում էր Անդրանիկը. քաջ ու փորձված հրամանատարը, որը հիանալի հասկանում էր մարտական դրությունը. միշտ հաստատապես գտնվում էր ջոկատի դեկավարի իր դերում եւ վայելում էր կամավորների մեծ հարգանքը<sup>2</sup>:

Պատմությունից բացի կան նաեւ հանգամանքներ: Ուստի կարող են լինել եւ թեր ու դեմ կարծիքներ:

Առաջին հսկ կոիվներից ծագում է մի հարց. ինչի մասին չեղ խորհել ուստաց բանակային հրամանատարությունը եւ որն եր, որ աչքի առաջ չեն ունեցել նաեւ կամավորական ջոկատների կազմակերպիչները: Դա ուզմի ժամին հայ—ըուրդ հարաթերության հարցն եր: Վերեւում էլ ասեցինք, որ հայ ժողովրդին վաղնջական օրերից հասակակից քրերի մեջ քիչ չեն հայության դուռ-դրիկից բարեկամները. որոնք հունց կյանքը վտանգելու գնով հայի վրա սուր բարձրացնողին պատնեշ կկանգնեն: Բայց քիչ չեն սուլթանի եւ նրա տեղական իշխանությունների կողմից նաեւ խաբվածները, որոնք հաճախ, իրենց ծառայակատար մոլորության եւ ստրկամիտ մոլուցի ժամին, հայության դեմ ավելի կատաղի են. քան իրենք հսկ մոլտունդ թուրքերը: Ուսւ զանագետներն ու ազգմական իշխանությունները, ինչպես խոստովանվում է բանակային հրամանատարության վերը մեկ անգամ վկայակոչված փաստաթղթում<sup>3</sup>, քրդերի հետ

<sup>1</sup> Սեպուհ... հ. Ա. էջ 180-181: <sup>2</sup> «Պատմ. ֆ. 370. գ. 1. գ. 76: <sup>3</sup> Կողոս. Տ. 2100. գ. 1. գ. 646. թ. 67:

վարդելակերպի հրենց ձեւերն են մշակում եւ հրենց նպատակներն հետապնդում:

Ըստ բանակային փաստաթղթի, դա հետեւյալն էր, քրդերին տրամադրել հրենց կողմը եւ կորվերի ժամանակ օգտվել նրանց ծառայությունից, մի բան, որը սակայն, գործի ժամին հրեն չարդարացրեց: Ուսւները դրա համար չզլացան ոսկիներ շոայլի: Անուներն էլ են հայտնի. Արդու Ռազկն ու Մուստաֆա բեկը ուսւաց կառավարությունից եւ փող ստացան, եւ գենք: Բայց դա սովորականի՝ պես զուր չանցավ: Ինչպէ՞ս կարելի էր, ոսկի՞ էն ստացել: Դեկտեմբերին նրանք եռանդով մարտնչում էին ուսւաց բանակի դեմ: Հրամանատարությունն իր փաստաթղթում խոսովվանում է, որ նույնպես է վարդել նաեւ Աբդով Մեջիդ կոչված քուրդ ցեղապետը Պուտոսում: Խոկ ուսւ-թուրքական սահմանում բնակվող քրդական շամշադինյան կոչված բեկական ցեղը մտածված կերպով ուսւներին գերի է ընկել. ապա հետո, նույն հաջողությամբ էլ դավաճանել նրանց: Երկերսակի ու դավաճան է դուրս եկել նաեւ նույն ցեղի զավակ Համիդ բեկը. որը ուսւաց բանակում պրապորչիկ էր: Նա բերել է իր հորեղբոր տղային՝ Շասուլ բեկին, եւ ուրիշների, որոնց սիրալիք ընդունել են ուսւ հրամանատարները. Եւ որոնք քուրդն էլ դավաճանել են. մի համիդեական գինվոր անգամ ուսւաց կողմը չբերելով: Փաստերից բխեցվում է գինավոր եգրակացությունը. «Սակայն, չնայած այդ ամենին եւ նրան, որ քուրդ գազանաբար կոտորել են Ուսւսատանին համակիր հայերին. մեր (ուսւական) իշխանությունների կողմից քըղողերի նկատմամբ վերաբերմունքը եղել է ներողամիտ. մինչեւ հսկ մեհս, զատ որում մեկ անգամ չէ, որ գինված քուրդը մնացել են թիկունքում», այսինքն՝ հայերի նկատմամբ հրենց գործողություններում ազատ: Հենց այստեղ էլ օրինակ է բերվում Անդրանիկի հետ կատարված վերոհիշյալ փաստը. որպես հանդիմանություն ընդհանուր հրամանատարությանը. «Հայկական ջոկատի հրամանատար Անդրանիկին հանձնվեցին չորս քուրդ սպաներ՝ Սադիմ բեկը շամսի աշիրեթից. Օսման բեկը մլան աշիրեթից. Լազիս եւ Հուսեին բեկերը թաքուր աշիրեթից: Հետո եկել է նաեւ հինգերորդը՝ եղի Զհանգիր աղան»: Եկ պատմվում է, որ Անդրանիկը նրանց քուրդին էլ գինաթափել է. ուղարկել գեներալ Նազարեկովին. պարտը համարելով հայտնել, որ նրանք համիդեական զորականներից են եւ մեծ թվով ուժեր ունեն»:

Նազարեկովի պահանջով քուրերը հանձնել են ընդամենը հարյուր հրացան. այս դեպքում, երբ Անդրանիկը Նազարեկովին տեղեկացնում է, որ այդ քուրերը պատրազմից առաջ թուրքական կառավա-

րությունից ստացել են 1600 հրացան. որից բացի իրենք է ունեցել են երե հազար: Անդրանիկը վճռականապես պահանջել է, որ զենքը նրանցից լիովին ետ կերցվի: Մի քանի օր քուրդ առաջնորդները որպես պատանի մնում են Նազարեկովի մոտ: Բայց հետո գեներալ Չենոզուբովի պահանջով ուղարկվում են նրա տրամադրության տակ: Այստեղ վերոհիշյալ Աբդու Ոզակի աջակցությամբ Զհանգիր աղան Չենոզուբովի համոզում է, թե ինքը եւ մյուս գերիները հավատարիմ են Ուսւսատանին եւ այդ ձեւով քուրդը էլ ազատ են արձակվում: Այլևս շատ ժամանակ հարկ չեղավ. որ ոուս հրամանատարները լսեին նրանց «հրաշագործությունների» մասին. անմիջապես Դուզդաղի տակ մարտերի մեջ են մտնում ուսւաց բանակի դեմ. իսկ նահանջի օրերին կոտորում են Կերին եւ Ներքին Ախուրեկ գյուղերի հայ բնակչությանը: Արանից հետո ոչ թե մենք, այլ ուսւաց հրամանատարության փաստաթղթի արդարամիտ կազմողն է Եղուակացնում. «Այսպիսին է եղել Ուսւսատանի վերաբերմունքը քրդերի նկատմամբ»<sup>1</sup>:

Անդրանիկը, հիարկե, հասկանում էր, թե բանն ինչումն է, ուստի նրան լիովին պարզ էր. թե ինչ էր նշանակում մի կողմից՝ ցարի շողոցը քուրդությունը հայերին եւ նրանց կամավորական ջոկատներին ուազմի դաշտ բերելը. մյուս կողմից՝ նույն այդ ուազմի դաշտում հայության դեմ մարտնչող քուրական հրամանատարության նկատմամբ ներողամտություն շոայլելը: Մոտավորապես այսպես էլ գնահատվում էր փաստը Կովկասյան բանակի շտաբի կազմած վերլուծականում, որտեղ հավասարության նշան էր դրվում հայկական ջոկատների կազմակերպման եւ քրդերին Ուսւսատանի կողմը գրավելու ձգտումների միջեւ: Դեկապարությունը, ասվում էր նրանում, պետք է ոչ թե մեկի նկատմամբ մյուսին առավելություն տար. այլ ելեսեր «գործնական այն օգուտից, որը կարող է... բերել այս կամ այն ձեռնարկումը»<sup>2</sup>: Խոկ թե քրդերին ազատություն տալուց որքան օգուտ ու վսաս կստացել հայությանը. այդ էլ. զստ երեւույթին. թոլովում էր, որ հայերը իրենց հաշվեին: Ակամայից հարց է ծագում՝ Վերոհիշյալ օգուտներին. թե վսասների մեջ պետք է մտցվի քրդերի կողմից նորամանուկից մինչեւ ծերունի հայ բնակչության կոտորածի հաշվարկը:

Ըներցելով այս փաստաթղթը, ի վերջո, զարմանում ես, թե որքան անկեղծ է այս: Նրանում ուսւ-թողական տվյալ հարաբերություններից երկու իրարամերժ (բայց վերջին հաշվով ցարական տեսանկանը նպաստավոր) եգրակացություն է. տեսնելով քրդերի հետ ուսւների մտերմությունը. հայերը կարող են միրավորել (1). ուսւները իրենց նկատմամբ քրդերի վերաբերմունքը կարող են վաղը

1 Ն. Ա. բ. 67-68:  
2 Ն. Ա. բ. 67:

հակադրել հայության կողմից իրենց ներկայացվող ինքնավարության պահանջներին եւ մերժել այդահիք (2): Ստացվում է, որ մեկի համար չկա չարիք առանց բարիքի. մյուսի համար՝ բարիք առանց չարիքի: Իսկ այժմ մեջերենը բառացի. «... բոլորին մեր կրոնը գրավելու մեր գործունեությունը. բնականքար. կարող ենք օգտագործել ի հակակշի հայկական ջոկատների, եւ մեզ բրդերի ցուցաբերած ծառայությունները կարող են անսպասու ազդեցություն ունենալ Հայաստանի ինքնավարություն տալու հարցի լուծման վրա. որը կարող են առաջ քաշել հայերը ինու Ներկայի պատերազմում մեզ ցուց տված իրենց օգնության փոխատուցում»<sup>1</sup>: Այս բոլորը գրված, ստորագրված է 1915-ի դեկտեմբերին: Ինչպես չիհանալ որևս ռազմագետի քաղաքական հետատեսությամբ:

Ի՞նչ կիներ, եթե այս բոլորը նոյն այդ օրերին կարդար ու իմասնար նոյն այդ օրերի ձմեռային բութին ու սառնամանիքին կամավորներին հանուն ոուս-հայ եղբայրական դաշինքի մարտի տանող Անդրանիկը: Եվ ինչ լավ է, որ այս եւ չի իմացել: Այս եւ որովհետու համանման ուրիշ այնքան բան գիտեր նա, որ առանց սրա ել նրա սիրտը լի եր զայրույթի պայթուցիկ նյութով:

Ռազմական ու քաղաքական այս խաղերին մոտ եր կանգնած եւ այդ ամենը անհամեմատ պետի շատ գիտեր Նազարետկով գեներալ. առան հարակից ջոկատի հրամանատարը՝ Անդրանիկը: Իր հուշատեսությում Նազարետկովը պատմում է, որ 1915-ի փետրվարի Վերջերին կամ մարտի սկզբին Խոյում Եղած ժամանակ իրենց գորախմբի շտաբում հանդիպել եւ ծանոթացել է Վերջ հիշտակված Աբդուլ Ոզակի հետ. որը լրիկ ամսամբ Բերի Խան Զահե Աբդուլ Ոզակն էր: Նազարետկովն իր համար պարզել է, որ ոուսական կառավարությունը մտադիր է եղել նրան Նշանակել Թրդստանի գլխավոր. այն գրավելուց հետո: Նրա համար հասկանալի է դարձել. որ իրենց այդ ակնկալությամբ էլ քուրդ ցեղապետոր խաղ էն անում ոուսական գործերի ու նրանց հրամանատարների հետ. մեկ բարեկամ էին. մեկ թշնամի. նայած որը երբ եր ձեռնտու իրենց:

Բարձրահասակ. գեղեցիկ է տեսել Նազարետկովը Աբդուլ Ոզակին. Եվրոպայում ուսում առած քաղաքական եւ ռազմական քուրդ գործին: Ոուսական կառավարությունը ամսական 300 ոուրի է Վճարել նրան: Մինչեւ Կոիվները նա ապրել է Պետերբուրգում: Նազարետկովն ասում է, որ իրեն Աբդուլ Ոզակը դուր չի եկել. թեւ նա վայելել է գեներալ Չեռնոգորովի մեծ հարգանքը:

Այդուղի, Խոյում է հայտնվել է Ամեն. որը թուրքերի հետ եր եղել ոուսների դեմ նրանց կովի ժամանակ: Նազարետկովն իմացել է այդ

յասին եւ զայրացել. որ «չնայած այդ ամենին, Ամկուն այնուամենայ-նիվ վայելում է Չեռնոգորովի առանձնահատուկ հարգանքը», մի քան. որը զայրացնում եր նաեւ մյուս ոուս հրամանատարներին<sup>2</sup>:

\* \* \*

Եղել է ընդիմախոսություն: Եղել է Անդրանիկի անձի ու գործի տարակարծիք զնահատում: Վերեւում զստ եռթյամբ նույնությամբ վկայակութեցինք Անդրանիկի հրամանատարի մասին գեներալ Չեռնոգորովի արտահայտած կարծիքը: Իսկ այժմ հակառակի մասին: Դրանով քայլ առ քայլ. հետեւղականորեն հանդես է եկել վաշտապետու Սեպուհը:

Սեպուհը Անդրանիկի ֆիդայական օրերի ընկերն եր. բացարիկ քաջ զինվորներից մեկը. որ 2կիւտ եր բոլոր թե՛ ֆիդայիների եւ թե՛ ֆիդայապետերի հետ: Անդրանիկին գիտեր նրանց մեջ եւ նրանց համեմատ: Հիմա, տարիներ անց. ոազմաճակատային այս գծի վրա. ուժերի բոլորովին այլ հարաբերակցության. մարտերի միանգամայն ուրիշ պայմաններում. ուրիշ տեսակի գեներերի. կովի այլ եղանակների դեպքում վերլուծում եր նա նոր. առկա Անդրանիկին եւ կամա թե ակամա հիշում եր հին Անդրանիկին. համեմատում եր ու վերլուծում. այդ բոլորը խտացնելով «Եցեր իմ հուշերեն» խորագիրը կրող եռկանոր հուշամատյանում<sup>2</sup>:

Ինչ դիրքում էլ. ինչ դերում էլ տեսնում եւ լսում է Անդրանիկին. Սեպուհի մտքում դարձյալ հին ֆիդային է: Փոխվե՛լ է. թե՛ չի փոխվել. ի՞նչն է նորը. ինչը երեկանը. ո՞րն է լավը. որը՝ հակառակը... ստացվում է ոչ այնքան ջննական վերլուծություն. որպես հետոյա հուշագրին է հատուկ՝ խորելու եւ դատողություններ անելու հմաստով. որքան վերաքննություն՝ որպես բնորոշ է ոչ այնքան արդարամիտ ու լայնախոն. որքան միտումնավոր եւ դժկամ դատավորին: Ինչո՞ւ միտումնավոր է եւ ինչո՞ւ դժկամ: Գուցե թե դա ել նրանից մեջբերումների տողատակերում կարդանք. նախապես ասելով. որ փաստերը այնուամենայիկ փաստեր են. եղելությունները՝ եղելություններ. մոռացել են միայն խնդիրների բարոյական կողմը. ուազմի դաշտ մարդու մեկնելու հանգամանքները եւ անտեսվել է կոնկրետ մարդը իր հնարավորություններով. դրանց բնեցրած արդյունքները եւ այդ բոլորի պատմաքաղաքական արժեքը:

Սեպուհը նկատում է ամեն ինչ. Անդրանիկը ջոկատի հրամանատար է. ջոկատը համար առաջին է. մյուս ջոկատների համեմատ կրկնակի ու եռակի ավելի իր կազմով: Անդրանիկը մերք վեհանձն

<sup>1</sup> «Դառն. չ. 45. գ. 1. գ. 2. <sup>2</sup> Սեպուհ. Եցեր իմ հուշերեն հ. ս և հ. բ. Դարձու. 1925 եւ 1929թ.

հրամանատար է ու գորավար, մերթ շարքային գինվոր է, հասարակ ու մինչեւ իսկ մանրախնդիր:

Սուազին կոիվն է: Աշնակի տակ մղված այն կոիվը, որը հարուցել էր Չեռնոգորովի իհացմունքը Եւ հարկադրել Նրան Ամենայն հայոց կաթողիկոսին շերմ խոսք հոդի Նրա քրիստոնյա որդու սխրագործության համար:

Մմբատն իր վաշտի հետ մագլցել է լեռան կատարը. երբ հանդիպակաց բարձունքի գագաթից այդտեղ էին հասում թշնամու արձակած գնդակները: Անդրանիկը Նիկոլի Եւ Սեպուհի վաշտերին Սմբատին օգնելու համար դիրքերն ուղարկելով. Արտաշես Սուլյանի վաշտին կարգադրել էր պահեստում մնալ: Բայց կովի թժ ժամին. երբ հարկավոր էր եղել, զայռույթի տարերքի մեջ Նրան էլ է ուղարկել մարտի. որի մասին Սեպուհը հավանաբար չի խացել. մինչդեռ պետք է եղել, որ հենց այդ պահին օգնության հասներ Նիկոլի վաշտին:

«—Ի՞նչ եք կանգներ պառակ կնոջ նման. չե՞զ լսեր հրացանի ձայները. շո՛տ դեպի կոիվ», — բերում է Սեպուհը Անդրանիկի ոչ թէ իր ականջով, այլ ուրիշից լսած խոսքը: Ընդունենք. որ Անդրանիկը ուրիշ բառերով պետք է վաշտապետին կոիվ մուր, Եւ անառկելիորեն ճիշտ է Սեպուհը. բայց առավել մեծ էր այն ճշմարտությունը, որ Վաշտը պետք է կովի դաշտ ուղարկվեր. անկախ այն բանից, թէ ինչ խոսքերով դա կարվեր: Սեղը Անդրանիկին եր, որ յանակուց ուզմի դպրոց չեր գնացել Եւ ազգի պաշտպանության արվեստը սովորել էր նեղ ժամին իրեն անհապաղ մարտի մեջ նետելու տարերքի մեջ. ինչպես որ իմաս նա պահանջել էր Արտաշեսից, առանց բառեր որոնելու Եւ դրանց տեղն ու շեշտը որոշելու վրա լրացրեցի ջանք գործադրելու:

Դեռ միայն այս չեր Անդրանիկի հանցանքը:

Կամավորներին կովի դաշտ ուղարկելով. նա հեռվում խոսքով էր բռնվել թիկունքից եկած մեկի հետ, որը Տրդատ Ղազանչյանն էր Եւ Նրան «հիշեցրել» էր. թէ «կովի դաշտի մեջ կը գտնվինք»: Բերներքան հավաքելով ուրիշների խոսքերը. Սեպուհը ստույգ հիշում է նաև Անդրանիկի դարձյալ անպատշաճ պատասխանը.

«Այդ Եւ գիտեմ. մի քանի լամուկներ ի՞նչ պատի կրնան ընել մեր տղաներուն»:

Իսկ հետագա շարադրանքի մեջ միտքն այն է, որ Անդրանիկի գլխավորած կոիվը «Ֆետայական կովի նման էր», այն տարբերությամբ միայն, ավելի ճիշտ. ըստ Սեպուհի, Նրա այն առավելությամբ, որ զոնե «Ֆետայականի մեջ կապ մը կար Եւ այդ կապն անզամ չկար հոս»: Կարծես թէ թուրք-քրդական զորամասի կոիվը ուզմական արվեստի այնպիսի մի բարձրագույն մակարդակով էր տարվում.

որից Անդրանիկը գուշն չեր հանում Եւ որին չեր կարողանում արժանին հակադրել: Սեպուհին դուր չի զալիս, որ «կապ պահելու պարտականությունը կը պատկաներ հրամանատարին», որևէ Եղբայրական գործությունը կը գործով կը գրաղվեր Եւ գործին ուշանիր չեր ըլլար»<sup>1</sup>: Կարծես թէ կապ պահպանելը հրամանատարի գործը չէ կամ թէ ինչ մի վատ բան կա դրանում Եւ, դրանից բացի, չհասկացանք. թէ այդ Տրդատ Ղազանչյանի հետ «զրուց ընելը» ինչ աստիճանի ուրիշ գործ էր, որն այնպես դատապարտելի էր սեպուհյան ուզուուցի համաձայն:

Հետագա շարադրանքում Անդրանիկը հանդիմանության է արժանանում, որ կապ չի եղել իր Եւ ենթակա հրամանատարների միջեւ:

Ի վերջո կոիվն ավարտվել է. թշնամին փախուստի Եւ ոհմել Եւ Անդրանիկը հայտնվել է. ըստ Սեպուհի, որպեսզի բազմի հաղթանակի բազկարռությունների: Եվ Սեպուհն այն է ասում, ինչ չի ասել Անդրանիկի ոչ մի գինվորն ու սպան. «Մեր Եւ մեր հրամանատարի միջեւ կապ չկար...»<sup>2</sup>: Ասել է. թէ՝ հաղթանակ հաղթանակի հետեւից հենց այն պես, երկնքից ուկե հատիկների պես թափվում էին կամավորների ոտքերի տակ:

Այս կովից հետո Եւ ահա, որ թուրքերը փախուստով աճապարում են դեպի Բաշկալե, իսկ Անդրանիկն իր ջոկատով՝ Բուրուշ Խորան<sup>3</sup>: Մնում է պարզել, թէ ինչ բանի համար է այդ կովից հետո Եւ նույն այդ կովի մասին հրամանատար Չեռնոզուբովը ողջույնի շերմ խոսք հոդի հայոց կաթողիկոսին:

Եղել է Սեպուհի ընդուհմախոսության նաև հետեւյալ առիթը. որը հաճույքով և ավելի ջանքով է հուշերի իր գործում:

Դեռքը պատահել է նոյեմբերի 7-ին Բուրուշ Խորանի լեռնացքում մղված կոիվների ժամանակ: «Կովի ամենատաք բոպեին», պատմում է Վեպուհը. 400-ի չափ գինվորներ թշնամու կողմից. հրացաններն ուսւներին. խաղաղ երթով զալիս են դեպի ոռու զորամասի հետ կամավոր հայերի զբաղեցրած ուրիշերը: Անդրանիկը Ենթադրելով, որ թուրքական բանակի հայ գինվորներն են զալիս հանձնվելու, հրամանատարությանը այդպես էլ տեղեկացնում է Եւ գտնում. որ Նրանց դեմ կրակը պետք է դադարեցնել: Ինքն էլ մի երկու գինվոր թիկնապահներով. ձիս հեծած գնում է ընդառաջ: Մոտենում են եկող չորս հարյուրից բռնվելով. առաջ հեծած գնում է Հանտելով Նրանց. Անդրանիկը բավական առաջացած երկու հոգու: Հանտելով Նրանց. Անդրանիկը մյուսի հետ հաշիկը մաքրում է իր թիկնապահից:

1 Սեպուհ ... հ. Ա. թ 100. 101: 2 Ե. Ա. թ 103: 3 «Օրագորություն», թ 10-11:

Այլեւ պարզ էր. թուրքերի հերթական խորամանկություն էր: Իր ոհրքերը Վերադարձած Անդրանիկը հրամայում է անմիջապես կրակ բացել առողեն բավական մերձեցած զինվորների վրա. որոնց մեծ թվով զոհեր են տալիս իրենց դեմ մոտիկից արձակված կրակից: Սա չէ կարեւորը. այլ Մեպուիի ատամելու շեշտն ու եզրակացությունները.

«Որքան պոռացինը որ չերթա. մեզ մտիկ չըրավ եւ ձին առաջ վագեց»: Եվ ապա. «... Անդրանիկ կուգեր փառքի տիրանալ եւ ըստի. որ՝ «տուե՞ք. այդ չորս հարյուրը իմ անունին համար եկան անձնատուր եղան»:

Մեպուի նաեւ այն է ստույգ հիշում. որ «ոռու հրամանատարը հեգնությամբ ըստավ անոր».

— Էակ Նվեր բերիք մեզի. Անդրանիկ:

Չհանդիմանենք Մեպուին. մարդն այդպես է հիշում:

Կա հիշողություն. կա նաեւ տրամադրություն: Նայած որով ես դեկավարկում:

Դեպքերին շատ ավելի մոտ պահի ստեղծված ուազմական օրագրում. որտեղ հիշելու կամ մոռանալու հարց չկար. տրամադրությունը այլ է: Ըստ այդմ. կամավորները. բայց ոչ թէ Անդրանիկը կամ միայն Անդրանիկը. ենթադրելով. թէ մոտեցողները թուրքական բանակի հայ զինվորներն են. որ զալիս են անձնատուր լինելու. հսկապես գոչել են. թէ՝ միշ կրակի. հայեր են: Կապիտան Հովսեփիանցը անմիջապես հրամայել է կրակել: Մի փոքր հապաղելուց հետո ամբողջ շղթայով մեկ ճարճատել են կամավորների հրացանները: Եվ սկսել է թուրքերի խումապահար նահանջը: Գրեթե բառացի. եւ ուրիշ ոչինչ<sup>1</sup>:

#### Գ Դիմանի ճակատամարտը

Ուսաց զորքը վերստին առաջ էր գնում: Նրա հետ թեւ թեյի գնում էին հայ կամավորների ջոկատները: Հայ ազգային քաղաքան, կան ուժեղը եւ նրանց հետեւող ժողովուրդը վերստին հույսերով եին լեցուն: Մեկ անգամ արդեն Երկրի որդիները սահմանի եզրին եին եւ որ է կարող եին Երկիր մտնել: Մեկ անգամ արդեն շեմից զարմացական ետղարձ էր Երեւլ. Երեւլ էր հուսախաբություն. բայց դեռ ոչ հիասթափություն: Հայ մարդը մի գերազուկն հոգս ուներ՝ օգտակար լինել թէ՝ ոուս բանակի. թէ՝ կամավորների առաջխաղացմանը: Դեռ Երեւը հայոց պատմության մեջ այսքան ուժգին չէր Երեւ հույսն ու հավատը Ուսասատակի և կատմամբ: Երբեք նրա համար այնպես մոտ ու իրական չէր Երեւ սպասելիքը: Օգտակար լինելու եւ սպասումի այդ մերձակոր ժամին Գեւորգ 5-րդ կաթողիկոսը հոչակում է նոր

<sup>1</sup> «Պառ. Տ. 121. թ. 2. գ. 32. թթ. 18-19:

հանգանակություն հանուն ազգային շահերի պաշտպանության եւ նրա ի կատար ածումը արտոնում է հայության գործին անձնությաց հասարակական գործիչ Պողոս Նուբարին: Վերջինս հայությանը շըրջաբերական է հղել.

«Երբեք մեր պատմության մեջ ասկէ ավելի նպաստավոր պատեհություն մը ներկայացած չէ. եւ երբեք մեր ազգային ցանկությունները իրենց իրականացումին ավելի մոտ չեն գտնված: Բայց անհրաժշտ է ասոր համար. որ ամեն մասնակոր նախաձեռնություններ կեղունացվին ազգային շահերու պաշտպանության համար. որպեսզի կարելի ըլլանք անոնք համերաշխել ու այսպիսով ապահովել գործողությանց միությունը... »: Վերջում հույսերի մոտալուտ իրականացման խոր համոզմութքն է. «Երբեքին համոզումը ունիմ. որ... իրավունք ունինք հուսալու թէ՝ մեր ազգային ցանկությունները պիտի ունենան ընդուակ այն լուծումը. որում ամեն հայ կը բաղձա»<sup>1</sup>.

Գրված է սպասելիթներով լի մարտի 15-ին. իսկ զորքերի առաջնացումը տարավ դեպի նոր ճակատամարտեր: Դեկտեմբերին Սարհիմարիշի տակ մղված կովում ձախողվել էր ոուս-թուրքական սահմանագծի հյուսիսից Անդրեկովկասի պատնեշը ճեղքելու եւ այդ ճանապարհով դեպի Բաքու գնալու պլանի իրականացումը: Այժմ փորձ էր արվում հարավից՝ Հյուսիսային Պարսկաստանի Եզրերով նույն այդ ճանապարհը հարթել: Եվ այդտեղ. թուրք-պարսկական սահմանի Դիման քաղաքի մոտ. տեղի ունեցավ ճակատամարտը: Առաջ անցնելով. այս անգամ պատմենք նախ՝ ճակատամարտի արձագանքները. ապա՝ պատմությունը: Որովհետեւ մեկ է՝ ինչպես որ առանց ճակատամարտի նկարագրության չի լինի ճակատամարտի պատմությունը. այսպես է առանց արձագանքներն իմանալու բայց ը լինի նրա հաղթանակի գործում Անդրանիկի ու ջոկատի մարտիկների ցուցաբերած անձնական քաջության գնահատումը:

— 1915-ի ապրիլի 18-ին. Դիմանի մոտ տեղի ունեցած մարտում եւ. 9-րդ վաշտի հետ. Կովկասյան 8-րդ իրածագային գնդի 3-րդ գումարտակի աշ տեղամասում էի: Ֆերեկվա ժամը 3-ի եւ 4-ի միջեւ տեսա. որ մեր տեղամասի ձախ թեւում եռանդուն կերպով հարձակվող թուրքերը սկսեցին ետ դառնալ. որը ինձ շատ զարմացրեց: Հաջորդ օրը այդ տեղամասի Կոիվերին անմիջապես մասնակցողներից իմացա. որ 1-ին հայկական ջոկատի հրամանատար Անդրանիկը. որն իր վաշտերի հետ միասին կանգնած էր մեր մարտական տեղամասից դեպի ձախ. տեսնելով թուրքերի եռանդուն հարձակումը. առաջ է զալիս դեպի դիրքերը եւ 150 մետր հեռավորությունից իր կողմն է քաշում մի գնդի չափ հետեւակ. զինվորների. անցնում է

<sup>1</sup> «Պառ. Տ. 57. թ. 5. գ. 27. թթ. 16:

հարձակման եւ, հարվածելով թուրքերին, գրավում է Բորչաշլու ցյուղը: Թուրքերը հարկադրված են լինում հապճեպօրեն ետ նահանջել:

Այս բոլորը, գրեթե անփոփոխ, պատմում է փոխզնդապետ Օոլովը: Նոյն գնդի շտաբ-կապիտան Նեստերովսկին հիշել է հետեւյալը:

— 1915-ի փետրվարի 18-ին գեներալ Նազարեբեկովի զորամասը Դիլմանի կողմում դիրքային պաշտպանական մարտեր էր մղում երեք անգամ ուժեղ թուրքերի դեմ: Սեր ձախ թեւում թուրքերը սկսում են մի ամբողջ գունդ կուտակել մեր երկու վաշտի, հետախույզների մի խմբի եւ թեփի ամենաձախ ծայրին գործող Անդրանիկի երկու վաշտերի դեմ: Ռոպէ առ րոպէ հարձակում էր սպասվում: Անը պահեստի ուժ չունեինք: Ցերեկվա ժամը 4-ի եւ 5-ի միջեւ թուրքերի շարքերում խառնաշփոթություն է նկատվում, միաժամանակ երեւում է, որ նոյն ձախ թեւում Անդրանիկի զինվորները արագ հարձակման անցնելով, թուրք զինվորներին հարկադրում են նահանջել, միաժամանակ թուրքական Բորչաշլու գյուղից դուրս մղելով բնակչությանը: Սեր ձախ թեփից բավական քիով թուրք զինվորներ ստիպված ազատում են իրենց գրադեցրած դիրքերը, ձգտելով օգնության հասնել նահանջող զինվորներին:

Լուսնը Շեռնողությունին.

— Առաջին հայկական ջոկատը իրեն դրսեւորեց որպես լիովին կազմավորված գորամաս: 1915 թվականի ապրիլի հիշարժան 15-18-ին Մուղանացուղի (Դիլմանի) մոտ, որտեղ Խալիլ բեյի կոնստանդնուպոլիսյան ընտիր գորամասը զարնվեց մեր գործերի ամրությանը: Այստեղ Անդրանիկը դրսեւորեց իր բոլոր հատկանիշները ոչ միայն փառահեղ կերպով պաշտպանելով իրեն հանձնարարված մարտական տեղամասը, այլև հանդես բերելով եռանդ մեր հակագրությունը:

... Այդ մարտին մասնակցած կամավորներից ամեն մեկը կարող է հպարտությամբ ասել՝ Անդրանիկի հրամանատարությամբ ջոկատը փառով մասնակցեց Մուղանացուղի տակ մղվող նշանավոր կովին. որում Կովկասը փրկվեց թշնամու Ներխուժումից<sup>2</sup>:

Այն ճակատամարտին, որի մասին ասվեց, Անդրանիկն սպասում էր եւ հեղինք էր նախապատրաստում իր զինվորներին: Այդ կետում ավարտվում էր երթը պարսից երկրով եւ սկսվելու էր ընթացքը թուրքական աետության հայկական ճամփաներով, որոնք տանելու էին դեպի Խորքը, ուր Վանա ծովն էր ու Վանը. Բիթիսն էր ու Մուշը:

1 «ՊԿԱ. ֆ. 370. գ. 1. գ. 77: Ապահով է հետաքրություն մի քափ ականա մեջբերություն բանցած են անկանա բանցած բանցած ին ոճական ու շարականա առաքություններ ունեալու և հանդի լինելու առանձական կառարված որոշ կրծառամեռ պատճառով»: 2 «ՊԿԱ. ֆ. 370. գ. 1. գ. 76:

հրաման հղել: Կարգապահության էր կոչ արել, անձնվեր քաջության եւ խնդրի հայրենասիրական ու բարոյական վեհության խոր ըմբռնման: Չորրորդ ամիսն է, գրել էր նա, որ մենք ուսւաց մեծ բանակի հետ մեծ ու սուրբ պարտը ենք կատարում: Աղջեւում մեր հայրենիքն է, որն սպասում մեջ իր ազատությունն է տենչում:

Լա մարտիկներին ու հրամանատարներին կոչ էր անում վեմ ըմբռնումով մոտենալ իրենց խնդրի կատարմանը, դրսեւորելով ոչ միայն անձնուրած քաջություն, այլև բարոյական վեհություն եւ անաղարտ մաքրություն: Չեր ուզենա, որ հայ զինվորները խաղաքականության նկատմամբ իրենց վերաբերությունը ցուցաբերելիս օրինակ վերցնեն քուր զինվորներից ու հրամանատարներից: Թե արյունահեղ կորիզների ժամին այս բարոյախոսական պատգամը որպանով ճիշտ էր ու տեղին ուզմարվեստի տեսակետից, դա ուրիշ հարց է, բայց փաստը փաստ է:

Կամավորները սահմանն էին անցնում: Գիտեր Անդրանիկը, որ խորն է նրանց զայրույթը բարբարուների նկատմամբ: Բայց նա ուզում էր, որ մարտիկը բարբարոսի շարքը չփափ անմեղ թուրք բնակչությանը. Ներողամիտ լինի եւ հարգանք տածի կանանց ու երեխաների նկատմամբ էր որեւէ սխալ, անարժան մի արարով չարատապորի ազատարար զինվորը իր անունը: <Հիշեցնելով կամավորների ուզմաճակատ գնալու խնդիրները, Անդրանիկը հոչակում է. «Անհ թե որքան բարձր է, սուրբ է ու զաղափարական մեր ստանձնած գործը... Անհ այսպիսի տրամադրությունը անպայման պիտի առաջ բերի ամեն մի կամավորի մեջ այն գիտակցությունը, որ յուր սկսած գործը բարձր է, մաքուր է եւ սուրբ. եւ ինըն էլ նույն սկզբունքով առաջնորդվելով. պետք է բարձր պահի այն դրոշակը, որը պարզված է հայրենիքի ազատության համար, ոչ միայն կովի դաշտում, այլև մեզ շրջապատող օտարների առաջ եւս»<sup>1</sup>:

Բարոյականության եւ քաջաքարթության տարրական պահանջներն են սրանք, որոնցից Անդրանիկը հրամայում է, որ չեղովեն իր մարտիկները, որքան էլ թշնամին անողոք ու դաժան է եղել իրենց հարազատների նկատմամբ: Ընթերցել է, արդյոք, հային նույն այդ օրը բնաշնչող թուրք զինվորը այս բաները կամ լսել է, արդյոց, թե ինչ դաս է տվել իր զինվորներին այն Անդրանիկը, որին իր հրամանատարը պատկերել է որպես մի բարբարոսի եւ արյունուշտ հրեշի:

• Ուզմաճակատի այս հատվածում տեղակայված էր Նազարեբեկովի հրամանատարությամբ գործող սպամաստյան զորախումբը, որի կազմում ապրիլի 16-ից մտնում է նաեւ կամավորների 1-ին ջոկատը: Թուրքական բնական մի մասը, որ գտնվում էր Դիլմանի ճակատում:

1 «ՊԿԱ. ֆ. 121. գ. 2. գ. 109. թթ. 2-6:

օգնական ուժեր ստանալով հարձակվում է ոռւսական 8-րդ զինի Վրա. որը զոհեր տալով ստիպված է լինում նահանջել եւ դիրքեր գրավել Դիլմանի մոտակայի բարձրություններում: Այդ ժամանակ Նազարենովն ու Անդրանիկը հեռացիր են ստանում, որ թուրքերը Դիլմանը գրավել են: Առանց ժամանակ կորցնելու, Անդրանիկը ջոկատին իր գտնված վայրից առաջնորդում է դեպի Դիլման: Տեղ են հասնում գիշերով եւ դիրքեր բոնում թուրքական բանակի դեմ հանդիման, ուր 8-րդ զինի մնացած մարտիկներն եին սպասողական վիճակում: Սմբատի վաշտը Անդրանիկը նախատեսում է հակառակորդի աջ թերի դիմաց, կենտրոնում՝ Մեպուիի եւ Նիկոլի վաշտերը. իսկ Արտաշես Սույշյանի 3-րդ վաշտը որպես յուրայինների ճախակողմյան ուժ՝ թշնամու աջ կողմի ուղիղ դեմ հանդիման:

Կամավորները անհապաղ սկսում են դիրքեր փորել: Լուսաբացին Անդրանիկը վաշտապետերին ցուցում է տվել կրակ չքացել, քանի ուր թշնամին չմոտենա մինչեւ 400 մետր, եւ մինչեւ իր հրամանը չլինի:

Սուավոտյան վաղ կոիկը սկսել է: ճարճատել են հրացաններն ու գեղացիրները: Թուրքերը ուժեղ եին հատկապես իրենց աջ թերու, որտեղ ոռւսաց 8-րդ զինի զինվորների հետ-կողը կողեր Սույշյանի գլխավորած կամավորների 3-րդ վաշտն եր մարտի մեջ մտել: Կորուստեր տալով, թուրքերը ոչ միայն չեն նահանջում, այլև համառում են եւ հակառակներով ճնշում ոռւսական գորամասին: Վերջինս նահանջի տրամադրություն է դրսեւրում, երեւում է նրա կոիկն ընկճակած է եւ պարտվողական: Առավել եւս երբ թիկունցից թուրքերը համարում են ստանում եւ կովի աջակողմյան (կամ ոռւսների ճախակողմյան) այդ հատկածում նրանք բաժանվում են երեք մասի եւ ուժեղացնում արշավը ոռւսաց զինվորների եւ կամավորների վաշտի վրա: Անդրանիկը հեռադիտակով տեսնում է, որ իրենց պաշարման վտանգ է սպառնում: Այդ ժամանակ, ճերմակ ձին հեծած, նա օգնության է հասնում 3-րդ վաշտին: «Սուրը քաշեց, — հիշում է կովող զինվորը, — Եւ Արտաշեսի վաշտին հրաման տվապ՝ ոտքի՝ արշավել սվիսամարտի»: Զինվորների ոռւս-հայկական շղթան ոտքի է ենում եւ գրոհով առաջ անցնում, իրենց դիրքերից ետ մղելով եւ մարտի դաշտից մեծ կորուստներով դուրս քշելով թուրքերի ցաք ու ցրիկ շարքերը<sup>1</sup>:

Հաղթանակն այլեւս ապահովված էր: Դա միագումար աշխատանքի եւ խիզախության արդյունք էր. ե՛ւ ոռւս, ե՛ւ հայ մարտիկների քաջության ու նրանց ամրակուր մարտական համագործակցության, ոռւս հրամանատարության՝ կողմից մարտակարգի արագ փոփոխման

եւ կովի արվեստի կատարելագործման. որում պատշաճը պետք է մատուցել հրամանատարության փորձին ու հմտությանը:

Մենք անցել ենք դեպքերի նկարագրությանը: Ուրեմն, մեջ բերենք եւ այն, ինչ ժամանակին գրել է դեպքերին ականատես ու մասնակից սպան «Պատմական ակնարկ» օրագրական փաստաթղթում.

«Այդ պատմական մարտում հաջողությունը սկզբում թուրքերի կողմն էր. ոռւսական գորամասը սկսում է նահանջել, եւ նրա թիկունցում ծայր է առնում խուճապը, որը գեներալ Չենովուրովին հարկադրում է միջոցներ ձեռք առնել ստեղծված ծայրահեղ Վտանգավոր դրույթում փրկելու համար»<sup>1</sup>: Չարունակության մեջ մեզ ծանոթ անուն է եւ նրան վերագրվող դեր ու ընդունակություններ. որոնց հետ ընթերցողին ծանրացնելու համար հարկ ենք համարում առջև ում առանձին շարադրանք նվիրել: Իսկ կովի ընթացքն ու ելքը ըստ օրագրության հետեւյալ կերպ է. «Մարտը կրկնակի ուժով բորբոքվեց: Գնդապետ Նալգերի պոլտավյան հեծյալ կազակները մոլցին գրոհեցին թշնամու թեւերի եւ թիկունքի վրա, ճանապարհ հարթելով հետեւակայինների հարձակման համար»:

Եղել է Անդրանիկի ու նրա զինվորների հետ կողը կողքի կովող կես վաշտի հրամանատար կապիտան և. Կիսելովը, որն ամբողջ մարտը տարել է նրանց հետ միասին եւ տեղնուտեղը կիսել արյունահեղ կովի բոլոր հաջողություններն ու անհաջողությունները. որոնց ոչ մի տարրը նա չէր կարող մոռանալ ամբողջ կյանքում: Նա եւս հիշել ու հետեւյալն է գրել: Ապրիլի 18-ի վաղ առավոտից կես վաշտով ինքը կանգնած է եղել Դիլման քաղաքի Մերձական Սուլանցուղ գյուղի ձախակողմյան դաշտավայրում. դեպի ուր եւ ուղղված եր թուրքերի գլխավոր ուժերի հարձակումը. իսկ որվա երկրորդ կեսին, որոշ տեղաշարժ կատարելով. ձուկել է 12-րդ վաշտի հետ եւ կոիկը մղել նրա հետ միասին: Թուրքերը գնալով մոտենում են. լինում է մի պահ, որ Բորչաշվիլ գյուղի կողմից. շատ մոտիկից. շրջանցում են վաշտի ձախ թեւը: Կիսելովն այս կարծիքն է, որ մարտերի այդ հատվածում դիրքեր գրաված թուրքերի 7-րդ զինի վրա է դրված եղել ճակատամարտի ելքը վճռելու պարտականությունը. «Ես գիտի. — շարունակում է իր խոսքը և. Կիսելովը. — որ մեր ձախ թեւի ծայրում գտնվում եր հայկական ջոկատը: Նրան հանձնարարված էր իր հարձակումով թուրքերին ետ քաշել մեզանից: Իրոց ես ուրամանացած, որ մեր զորաշարժը հասակ իր նպատակին. հայկական ջոկատի վաշտերը թեւերից եւ նույնիսկ թիկունքից շըրջանցելով թուրքերին. արագործն մաքրեցին Բորչաշվիլ գյուղը, հեռանալով 12-րդ վաշտի առջեւում գտնվող իրենց դիրքերից: Արեւի

<sup>1</sup> «Պատմ. ֆ. 370. գ. 2. գ. 98: Պատմութեան հակոբ Հաղթանակական:

մայրամուտին մեր ձախ թերիս սպառնացող վտանգը վերացած էր. Եւ պարզ էր, որ այդ վայրում թուրքերի դրած խնդիրը չտվեց իրենց ակնկալած արդյունքը: Իսկ մենք դրանով ոչ միայն փրկեցինք մեր ձախ թերը, այլև ամբողջ մոլորածուույան դիրքը Եւ նույնիսկ շահեցինք ճակատամարտը: Անկասկած է, որ թուրքերի համար անսպասելի էր այդ հարձակումը, որը կատարվեց այնպիսի եռանդով ու համառությամբ, որ թուրքերը ստիպված էին թռնել իրենց Եւ վիրավորներին. Եւ փամփուշտներն ու գեները: Արագործն վրա հասած գիշերը հնարավորություն չտվեց, որ ժողովրդական հերոս Անդրանիկի գլխավորած հայկական ջոկատը 2արունակի իր սրբնթաց գրոհը... Բայց ջոկատի այդ կարճատեւ եռանդուս ճնշումն էլ բավական էր, որ ստամբուլյան գվարդիայի լավագույն գնդերը նահանջեին եւ մարտի դաշտը մնար Մեզ»<sup>1</sup>:

Ըստ հաշվումների հայկական ջոկատը կովում ունեցել է քառամեկ զոհ, այդ թվում մի վաշտապետի տեղակալ, եւ քառամեկ վիրավոր. որոնց թվում՝ երկու վաշտապետ: Ռուսական զորքերի հետ մրատեղ ճակատամարտում սպանվել է 8, վիրավորվել 14 սպա, իսկ շարքային գիևորներ, համապատասխանաբար. 169-ը Եւ 510-ը: 18-ը անհայտ կորել են<sup>2</sup>:

Հյուսիսում՝ Սարհղամիշում, հարավում՝ Դիլմանում ձախողվեց թուրքական հրամանատարության պալանը. Նվաճումներով մտնել Անդրկովկասի խորքերը, առաջ շարժվել դեպի Բաքու, որից հետո երիտրուրքերի գրգռված ախորժակը նրանց պիտի մղեր Կասպից ծովով առաջ դեպի Թուրանյան անապատները... Շիրականացան նաեւ թուրքական զորքերի ոկլմանյան խմբի հրամանատար Խալիլ թեյի փառաբանվելու ակնկալությունները: Պարտվելով բաց ճակատում, Խալիլը չզլացավ իր զորպարական տաղանդը ցուցադրել թիկունցում՝ անգեն հայ բնակչությանը կոտորելու ասպարեզում:

...Կամավորները անցնում էին թուրքական տերության սահմանը, որին ընդառաջ երեխազարայի հայոց բնաշնարի նահանգներն էին. Վան ծովակն եր ու հնագույն մայրաքաղաք Տոսպը, որ Վան եր դարձել, մոտակայքի ու հեռվի մյուս հայկական ու հայաբնակ քաղաքներով, նահանգներով, հարյուրավոր, հազարավոր հազարամյա գյուղերով, անհաշիկ եկեղեցական շինություններով, սեպակի հուշարձանների, մազաղաթյա ձեռագրերի, պատկերազարդ գրքերի մեծ քաղաքակրթությամբ:

<sup>1</sup> «Հայու. ֆ. 370. գ. 1. գ. 77. թ. 7. 2 ՀՀ ԴԿԱ. գ. 121. գ. 2. գ. 3. թ. 310: Խակառու (Ա. Դ. ֆ. 2543. գ. 1. գ. 1. թթ. 175-193: Անդրանիկ ռուսական դորամակ շապեկի առ թիվ 30-ին առ է պուրակ և այսուհետ առ ու ասկի 15-19-ի մարտեր թթացարն ապահով է 3-ը և կորի է սի հրացա: Ասկի 19-ին ընկատի մի գիւղոր ցե կա է 4 մի վիրավորվել 3-ը և կորի է սի հրացա: Ասկի 19-ին ընկատի մի գիւղոր ցե կա է ցուց: Խոը մի կորա վիրավորվել է հայ հրացա: Հի հացողությունը: Ան առ. թ. 370:»

\*  
Դարձյալ եղել է ընդուհմանսություն: Բայց Եւ մարտերի պատկերավոր ու ճշմարտացի նկարագրություն:

Սեպուհն ասում է, թե ապրիլի 17-ին ուսւները, «սարսափելիորեն ջարդվեր եւ անկարգործ փախեր էին» Ծահբախտի մոտ, Եւ որ նոյն օրը ուսւները մտել էին Դիլման, որտեղ գտնված ուսւսական 6-րդ գունդը եւս, չկարողանալով դիմադրել թուրքերին, «սմանապես ջարդվել է»: Երեկոյան Խոյից օգնական ուժերով, թղթանոթներով եկել, տեղ է հասել Նազարետկովը Եւ մարտական կարգի է բերել ուազմական ուժերը, որոնք նրա հրամանի համաձայն գրավել են Մուղանչուույի մոտակայքի լեռները, որտեղ եւ գիշերը փորել են իրենց խրամատները: Սեպուհի իմացածի համաձայն թուրքերն ունեցել են 16 հազար կանոնավոր զորք Եւ 8 հազար էլ «քուրդ ու պարսիկ անկանոն», իսկ ուսւները՝ 8 հազար զորք, չհաշված կամավորներին: Անդրանիկը նախապես, զստ Սեպուհի, զրոամասը դիրքավորելու համար մի տեղ է ընտրել, որը Սեպուհի կարծիքով հարմար չի գտնվել Եւ նրա խորհրդով խրամագրավորվելու տեղը փոխվել է:

Առավոտ վաղ կորիվն սկսվել է: Թշնամին իր ուժը կենտրոնացրել է ուսւսական զորքի աջ թեի վրա, որտեղ հայ կամավորներն էին: Այստեղ Սմբատը հերոսաբար վարում է իր վաշտի մարտը, իրար հետեւից հնձելով «թուրք զորաց շղթաները»: Նույնափիսի հերոսությամբ է կովել Եւ մարտը վարել վաշտապետ Արտաշեսը: Սակայն Վիրավորվում են թե՝ Սմբատը Եւ թե՝ Արտաշեսը, Երկուսն էլ կորիվների այն թեժ պահին, երբ գիևորներին խրոխտ «ուռայոն» ուժի են հասել Եւ առաջնորդել դեպի հակառակորդի թվով առավել ուժերը.

«Սար ու ձոր կը գոռային թղթանոթներու ահեղ որոտեն: Երկու կողմեն քանեն երեսուն թղթանոթ կրակ, կը փսխեին, քանեն երեսուն հազար հրացան կը պայթեին Եւ 20-30 զնդացիր գնդակ կը մաղեին օդին Մեզ: Շուխը, մուխը Եւ փոշին սյուներ կը կազմեին, իսկ թշնամի շղթաները տակավին կը կազմայիւծվեին Մեծ ուժեղ դիմադրություննես»:

Սեպուհը հայ կամավորների քաջությունն անառարկելի է համարում Եւ արժանի, որ ուսւաց պատմության գրքում հայ Եւ ուս գինական այդ երեայրությունը իր պատշաճ զնահատականին արժանանա: Այդուհաներձ, Սեպուհը չափավոր է Եւ արդարացի թե՝ իր գովասանի Մեզ Եւ թե՝ ավելորդ գովասանը շոայլելու իր խորհրդի զգո՞ւշ պետք է լինենք Եւ չափազանցելով չանդենք, թե կովի ծանրությունը հայերի ուսերին է ընկած եղել: Եվ իր հերթին պատշաճ հարգանքի խոսք Եւ ասում «աջ թեի ուսւ զրոամասի» հասցեին, գտնելով, որ նա «մեծ դեր խաղաց Եւ հրաշքներ գործեց»: Եվ սա այն դեպքում, երբ կովի ժամին նաեւ կամավոր գիևորներն են

զգացել, եւ այդ զգացումից գերծ չի մնացել նաեւ ինքը՝ վաշտապետ Սեպուհը, որ նույն այդ աջ թեկի ոռւս զորամասն է կոիվների գրեթ ամբողջ ընթացքում ամենից ավելի ծանր վիճակում եղել է, և նոյն տեղուն ընկնելով, մյուսներից շատ զոհեր տվել: Եկ մարտերի մեջ գտնվող այդ շղթայի գինվորից մինչեւ հրամանատար Նազարեթյան-Նազարեթնովը, ամենից ավելի նրա վիճակով են մտահոգված եղել եւ կովի եւքը դրանով չափել, սոսկումով տեսնելով նրա գրեթ լիովին օդակելս ու անելանելի դրությունը: Բայց Սեպուհը դա թուլություն ու թերություն չի համարում: Կանոնական ընկած առյուծի մեջ տեսնում է այն ուժը, որին թշնամուն մի կողմ քաշելու թեկուզ չնչին մի օգնությունը հնար կտար ծավալելու հր գրադեցրած բազուկները եւ գլխացարդ հարվածով խորտակելու թշնամու բոլոր հոկյերը.

«Դեռք է հիշենք հոս, որ մեր աջ թեկի ոռւս զորամասը մեծ դեր խաղաց եւ հրաշքներ գործեց: Ինչպես որ հայ կամավորներո կը կովեին գերազույն ոգեւորությամբ եւ կարհամարհեին խալի պեյի ստվարաթիկ զորագունդերը, նույնպես եւ ոռւս զորքերը կը մարտընչեն աննման արիությամբ»<sup>1</sup>:

Կամավորի այս խոստովանությունը ոռւս ժողովոդի նկատմամբ հայության անկեղծ բարեկամության հավաստիացումն է: Հայությունը հազար երանի կտար, եթե այդ հավաստիացումը խամրող ոչ մի բիծ չկինը ինչպես կոիվների այս օրերին, այնպես էլ հետագայում:

Եկ այնուամենայիկ այս ճշմարտախոսության համար երախտագիտության արժանի Սեպուհը իր տարերքի կաղապարից դուրս չի եկել: Երբ կամավորները ոռւս գինվորների հետ միատեղ իրենց հրացաններով եւ գնդացիններով հնձում էին թշնամու գինվորներին, սա որոնել ու չի գտել Անդրանիկին. «Ո՞ւր եր այդ միջոցին Անդրանիկի: Ի՞նչորէ չեինք գիտեր, ան մեր մոտց չեր եւ չտեսանք. Մինչեւ ուշ ատեն»: Կարծես թե Անդրանիկը էլ ուրիշ ոչինչ չի արել, բացի կովի թեժ ժամին անհայտանալը: Եկ հենց այդ ժամին էլ իրաման է ստացվել, որ կամավորները իրենց լրիկ կազմով պատրաստվեն հարձակումի: Անդրանիկը չկար ու չկար: Բայց այս մի զարմանքը Սեպուհի համար քիչ չեր, ավելացել է նաեւ երկրորդը, որը այս հրամանն էր. «Ի՞նչ հարձակում եւ ինչո՞ւ հարձակում», — հարցնում է նա, դարձայլ հաղթական կովի օրից տարիներ անց իր հուշերը գրելիս: «Արձակման հարկ չի՝ եղել զստ նրա, որովհետեւ քթնամու շղթան 1200 քայլից ավելի հեռու է գտնվել, երբ իրենց հրացանի գնդակները թշնամու դիրքերին չեն հասնի, իսկ նրանց գնդացիրները կինձեին իրենցը»: «Համենայն դեպս հարձակել են եւ զոհեր են


տվել ու վիրավորներ, որը եղել է, զստ նրա, միայն եւ միայն գրոհի կոչին ՚ի պատասխան «ուուայական» արշավի հետեւանքը: Երբ հայտնվել է Անդրանիկը, Սեպուհը նրանից շտապով իմացել է, որ այդ նա է, եւ այս էլ թշնամուն ահարեկելու համար, հարձակման հրաման տվել: Ուստի ինքը սկսել է բացատրել եւ պնդել, որ ուզմի կարգի համաձայն դա ճիշտ չէ ու սխալ է»:

Կարծիքները կարող են զանազան լինել, առավել եւս եթե տարբեր են տրամադրությունները: Անդրանիկի այս կոիվների օրագորության գրքում այն է ասվում, որ Զեղսողութովը հիացած է եղել ջոկատի կովով եւ իր օգնական Զինկելիչի միջոցով երկոտ է հղել Անդրանիկին. «Դու եւ քո զինվորներն եք իմ հույսը»: Զեղսողութովը Զինկելիչի միջոցով ստացել է Անդրանիկի ոչ ապակաս ոգեւորիչ պատասխան խոսքը. «Ես իմ զինվորներուս հետ պիտի կովիմ եւ պիտի չթողում, որ թշնամին մատ մը իսկ առաջանա. Եթե մեկ զինվոր իսկ կողքին կեցած ունենամ»:

Ի միջի այլոց, կոիվների օրագորության մեջ, որը կազմել է Անդրանիկի թիկնապահը, խոսվում է Անդրանիկի մարտական այս «փորձեռի» մասին, որոնք այսպես մոլեզնորեն քննադատում է Սեպուհը. «Ժամը 4-ին. — կարդում ենք այստեղ. — հրամանատար Անդրանիկ թշնամին շփոթեցնելու համար փորձեր ըրագ: Կեղծ ցուցեր կատարեց ձափի թեկի դաշտովք»<sup>2</sup>: Արյունքը, այս շարադրանքում, ի վերջո թշնամու փախուստն է: Անհա թե ինչպես տրամադրությունը եւս կարող է գնահատական թելադրել:

## ՀԱՐՈՒՏԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅՈՐԴ ՊՐԱԿՈՒ

<sup>1</sup> Սեպուհ. Եքը իմ տաքոն հ. Ա. Խ. 190-195:



## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՍՈՒԾԵՐԻ ԽՈՍՔ	5
1 ՇԱՄՊԻՆԿԱՐԱՀԻՆԱՐ: ՀԱՍՈՒՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԻՆԵՐԸ	7
2 ՀԱՅՐՈՒԿԸ ԿԱՄ ՖՐԱՎԱՀՆ	18
Ա Նախընտրելին քաղաքականն է եղել	18
Բ ճանապարհը տարավ դեպի ֆիդայական խմբերը	29
Գ Հայոցիկային կոհվերի ընկերներն ու ժամանակակիցները	55
3 ԳԼԽԱՎՈՐ ՀԱՅՐՈՒԿԱՊԵՏԸ	81
Ա Սպասողը անպատիծ չպետք է մնար	81
Բ Սասունի ընդիանուր հերոսամարտը	101
Գ Հայերի արյունահեղությունը ցարի ու սովորանի հաշիվներում Եւ դարձյալ տեղեկություններ Անդրանիկի մասին	130
Դ ճանապարհը տարավ երկրից դուրս	143
4 ԽԱՂԱՐ ՕՐԵՐ ԺՆԵՎՈՒՄ ԵՎ ԿԱԱԹԱՁՈՒՄ	153
5 ԹՈՒԹ-ԲՈՒԼԱՐԱԿԱՆ ԿՈՒՎԱԵՐԻ ԽԱՍՏԱԿԻՑԸ	192
6 ԱՌԱՋԻՆ ԱՇԽԱՐՀԱՍԱՐՏԻ ԿՈՎԿԱՍՅԱՆ ԾԱԿԱՑՈՒՄ	198
Ա Կամավորական խմբերի ձեզավորումը	198
Բ Առաջին յարտերը Եւ նահանջը	225
Գ Դիլմասի ճակատամարտը	260
Դ Կանը գրավելու Եւ հանձնելու օրերին	269
Ե Բաղեց Եւ Մուշ	315
Զ Նազարբեկով Եւ Անդրանիկ	
(Կամ՝ Թովման Նազարբեկանց Եւ Անդրանիկ Օզակյանց)	335
Է Հովսեփիանց Եւ Անդրանիկ	365
Ը Արածիե Եւ Անդրանիկ կամ՝ ինչո՞ւ Անդրանիկը	
Վերադարձավ ոազմաճակատից	375
Թ Զոկատը հրամանատարի վերադարձից հետո	404
7 ԲԱՌԱԹԱԿԱՆ ԱՍՊԱՐԵՉՈՒՄ ( Մարտ 1916թ. – Դեկտեմբեր 1917թ. )	410
8 ԴԻՎԻԶԻՆՅ ՀՐԱՄԱՆԱՏԱՐ ՆՇԱՆԱԿԵԼԵՍ ՈՒ ԳԵԼԵՐԱԼԻ ԿՈՉՈՒՄԸ ( Դեկտեմբեր 1917թ. – հունվար 1918թ. )	438
9 ՌՈԲԵՐԳԱԿԱՆ ԵՐՋՈՐԻՄԸ	460
10 ԱԼԵՋԱՆԴՐՈՎՈՂ ԶԱՎԱԼՈՂԻ ԴԻԼԶՈՒՄ	491
11 ԶԱՄԳԵԶՈՒՐ ԵՎ ԱՐՅԱՆ	528
Ա Երրորդ անցը Զուլֆայի կամրջով	528
Բ Մուտքը Կապան. Եւ Գորիս	556
Գ Արսիանում	566
Դ Դեպի Արցան	589
12 ԿԵՐՁԻՆ ԾԻԳԵՐԸ	629
13 ՍԱՀԲ	664
ԵԶՐԱՓԱԿՈՒՄ	674